Հայրենիք



ՈՒՅՈՒՅ

ԵՐԱՍԽԻ

Հոգի - Օգուտ - Աեպրեմբեր

ԷՋՄԻԱԾԻՆ

Պաշտօնական ամսագիր
Հայրապետական Աթոռոյ
Ս. Էջմիածնի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

1. Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնը 3
2. Մոսկվայի և Համայն Ռուսիոց Պատրիարք Ալեքսիի նրավիրագիրը 4
3. Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Գևորգ Զ-ի պատասխան-գրությունը 5
4. Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ի ողջույնի խոսքը Ռուսաց պրավոսլավ եկեղեցու ավտոկեֆալության 500-ամյա հոբելյանի առթիվ 6
5. Ռուսաց պրավոսլավ եկեղեցու ավտոկեֆալության 500-ամյա հոբելյանը 10
6. Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ի խոսքը «Վատիկանը և Պրավոսլավ եկեղեցին» հարցի քննարկման առթիվ 13
7. Տպավորություններ 15
8. ՏԱՍՍ-ի հաղորդագրությունները Ռուսաց պրավոսլավ եկեղեցու ավտոկեֆալության (ինքնուրույնության) 500-ամյակի տոնակատարության առթիվ 17
9. Հ. ԱԳՈՒԼՅԱՆ.— Նորին Վեհափառություն Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ի ուղևորությունը դեպի Մոսկվա Ռուսաց պրավոսլավ եկեղեցու ավտոկեֆալության 500-ամյա հոբելյանական տոնակատարություններին մասնակցելու համար . . 21
10. ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՂՐԻՄԵՅԻ.— Ռուսաց պրավոսլավ եկեղեցու ավտոկեֆալության (ինքնուրույնության) 500-ամյա հոբելյանը 27
11. Խաչատուր Աբովյան 34
12. Խաչատուր Աբովյանի մահվան 100-ամյակը 40
13. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.— Խաչատուր Աբովյանի մի անտիպ դամբանական հարը 56
14. Մայր Աթոռ 61
15. Հայաստանյայց եկեղեցին Սոֆյուռքի մեջ 62
16. ՎԱՉԳԵՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱԼՃՅԱՆ. Ռումանահայ թեմը երեկ և այսօր 66
17. Հայրենադարձության ուղիով 71
18. Ս. ՔՈԼԱՆՋՅԱՆ.— Ռումանահայ հայրենադարձի տպավորություններ 73
19. Հայրենի հարազատ հողի վրա 77
20. ԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ.— Իմ հուշերից 80
21. Օտարները հայերի և Հայաստանի մասին 86
22. Սովետական Հայաստանում 87
23. Գաղութահայ կյանք 96

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՑ Զ

ՎԵՀԱՓԱՌ ՍԻ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ

Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ
ԾԱՑՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Սեպտեմբերի 25-ին, Ս. Գևորգա տոնի ու Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ի անվանակոչության տոնի օրը, Մայր Տաճարում հանդիսավոր Ս. Պատարագ մատուցվեց:

Պատարագում էր Տ. Կարապետ Եպիսկոպոսը:

Ս. Պատարագից հետո, Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գևորգ Զ-ի անվանակոչության տոնի առթիվ հայրապետական մաղթանք կատարվեց ամբողջ Միաբանության մասնակցությամբ և հոծ բազմության ներկայությամբ: Մաղթանքից առաջ պատշաճավոր խոսք ասաց Գերաշնորհ Տ. Կարապետ Եպիսկոպոսը:

Միաբանության անդամները և ժողովուրդը Վեհափառ Հայրապետի աջն առնելով արժանացան նրա օրհնությանը:

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻԻ ՀՐԱՎԻՐԱԳԻՐԸ

ՁԵՐԴ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ՍՐՐԱԶՆԱԳՈՒՅՆ ՊԵՏ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՈՒՐԵՑՅԱԼ ԵՂԲԱՅՐ Ի ՏԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ

ԳՐԻՍՏՈՍ ՀԱՐՅԱՎ

Ռուսաց Պրավոսլավ Եկեղեցու ավտոկեֆալության 500-ամյակի կապակցությամբ, որը լրանում է այս տարի, Մոսկվայում սույն տարվա հուլիսին կայանալու են եկեղեցական հանդիսություններ, եվ դրա հետ միասին Պրավոսլավ Եկեղեցիների Պետերի ու Ավագների Խորհրդակցություն՝ կարեվոր համաեկեղեցական նշանակություն ունեցող մի քանի եկեղեցական խնդիրների շուրջը: Քննության են առնվելու հետեվյալ հարցերը — Վատիկանի ազրեսիայի մասին ընդդեմ Ուղղափառության, Անգլիքան ծեռնադրության (խիրոտոնիայի) վավերականության ճանաչման մասին, Էկումենիկական շարժմանը մասնակցելու մասին եվ ուրիշ հարցեր:

Մենք կցանկանայինք, որ մեր հանդիսություններին ու մեր Խորհրդակցությանը, որպես պատվավոր Հյուր, ներկա լինի եվ Ձերդ Վեհափառությունը:

Այս մասին անձամբ զեկուցելու համար ես Ձերդ Վեհափառության մոտ եմ ուղարկում Մոսկվայի Հոգեվոր ծեմարանի Վերատեսուչ—Կազանի Արքեպիսկոպոս Գերմոգենին եվ այդ նույն ծեմարանի Դոցենտ Դոկտուռովին, որոնք դրա հետ միասին Ձեզ կհաղորդեն եվ իմ տեսակետը մեր Եկեղեցիների միջեվ ավելի սերտ, եղբայրական հաղորդակցություն ունենալու ցանկալիության ու հնարավորության մասին:

Հուսով, որ մեր բարի ցանկությունները այս մասին կիրականանան, մնամ առ Ձերդ Վեհափառություն սիրով ի Քրիստոս

Մոսկվայում Ալեքսի Պատրիարք

12 Մայիս 1948 թ.



ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի ՊԱՏԱՍԽԱՆ—ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՌՈՒՍԱՑ ՊՐԱՎՈՍԼԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ՊԵՏ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈՅ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱԵՐԱՆՑԱԼ ԱԼԵՔՍԻՆ

Ստացանք Ձերդ Վեհափառության սիրալիր հրավիրագիրը, մատուցված Մեզ արժանահարգ պատվիրակության միջոցով, Ռուսաց Պրավոսլավ Եկեղեցու ավտոկեֆալության 500-ամյակի լրացման կապակցությամբ հառաջիկա եկեղեցական հոբելյանական տոնակատարություններին, որպես պատվավոր Հյուր, մասնակցելու մասին:

Խորին շնորհակալություններս հայտնելով հինավուրց Հայ Եկեղեցու ու նրա Պետի հանդեպ ցույց տրված այդքան մեծ պատվի համար եվ ուրախությամբ ընդունելով Ձերդ Սրբազնության այնքան սրտառուչ հրավերը, հայտնում ենք Մեր համաձայնությունը՝ ներկա գտնվելու կատարվելիք տոնակատարություններին: Քրիստոնեական սիրով մնամ Ձերդ Վեհափառության բարյացակամ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Գ. Զ.

29-ն Մայիսի 1948 թ.

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի ՈՂՋՈՒՅՆԻ ԹԼՍՔԸ ՌՈՒՍԱՑ ՊՐԱՎՈՍԼԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՎՏՈԿԵՖԱԼՈՒԹՅԱՆ 500-ԱՄՅԱԿ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ

ՁԵՐԴ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ, ԳԵՐԱՇՆՈՐՀ ՀՈԳԵՎՈՐ ԵՂԲԱՅՐՆԵՐ ԵՎ ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ՀՅՈՒՐԵՐ

Նորին Վեհափառություն Մոսկվայի և Համայն Ռուսիոց Պատրիարք Ալեքսին, Մեր սիրեցյալ եղբայրն ի Քրիստոս, բարեհաճել է Հայաստանյայց Ազգային Առաքելական Եկեղեցու Գետին հրավիրել Ռուս մեծ ժողովրդի և նորա հարազատ Պրավոսլավ Եկեղեցու ազգային-կրոնական անկախության հիգգիարյուրամյակի ա՛յնքան նշանակալից պատմական տոնախմբության:

Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք-Կաթողիկոսը իրավամբ ուրախ է, որ բախտավոր հնարավորություն է ներկայանում անձնապես հոգևոր հաղորդակցություն ունենալու Ռուսաց պրավոսլավ Եկեղեցու Գերաշնորհ Քահանայապետի, կրթված և լուսամիտ հոգևոր հովիվների և քրիստոսասեր աշխարհականների հետ:

Մենք ի սրտե ուրախ ենք նաև, որ երջանիկ առիթ է ներկայանում անմիջական հաղորդակցության և եղբայրական ողջագուրանքի այլ ուղղափառ եկեղեցիների և կրոնական համայնքների ականավոր պետերի ու արժանավոր ներկայացուցիչների հետ:

Ռուս մեծ ժողովրդի տարերային անհաղթելի կամքով, Մոսկովյան Ռուսիոց պայծառատես գերիշխանի քաղաքական իմաստությամբ և ուղղափառության հախանձախնդիր ռուս եպիսկոպոսների աստուածաշունչ որոշմամբ, 500 տարի առաջ, Կիևի և Համայն Ռուսիոց միտրոպոլիտ է ընտրվում հայրենի երկրի մեծ վշտակիր, Ռյազանի Եպիսկոպոս երանելագույն ԻՈՆԸ: Ռուսիոց միտրոպոլիտի որբազան գահը արժանավորապես և ըստ աստուածային կամաց գրավեց Գերաշնորհ ռուս եպիսկոպոս, բնարված ռուս եպիսկոպոսների կողմից, անկախ Պոլսո Հունաց Պատրիարքից և ազատ բյուզանդական կայսրների կեսարական ճավակնություններից:

Ռուսաց պրավոսլավ մեծ եկեղեցին, որ մինչ այդ էլ ժողովրդական էր ըստ հոգվո և ազգային ըստ գործառնության, հետ այսու դարձավ հաստատապես և անվերադարձ ավտոկեֆալ-ինքնուրույն՝ կանոնապես և անկախ՝ նվիրապետությամբ: Ընդմիշտ և իսպառ ազատվելով պետականորեն հիմնացունց, բարոյապես անկայուն և ուղղափառության հանդեպ անհաստատ Բյուզանդիոնից, Ռուսական պրավոսլավ եկեղեցին նոր ույժով և առավել վստահությամբ ձեռնամուխ եղավ ռուս ժողովրդի հոգևոր լուսավորության և բարոյական դաստիարակության, ռուս երկրի զարգացման և ամրապնդման, ռուս պետության անվտանգության ու հզորության փառապանծ գործին:

Այսօրվա պատմական հանդեսին, մեզանից յուրաքանչյուրի հոգեկան տեսողության առաջ, որպես կենդանի, պատկերանում են պայծառ կերպարները ռուս ժողովրդի մեծ վշտակիրների և Ռուսաց պրավոսլավ եկեղեցու սուրբ սխրագործների— միտրոպոլիտներ Պյոտրի և Ալեքսեի, Իոնի և Ֆիլիպպի, Գերմոգենի և Ֆիլարետի և այլ քահանայապետների ու հովիվների, որոնք իրենց լուսավոր միտքը, ազնիվ սիրտը, սուրբ հավատը, շերմ սերը, բարի կամքը ի սպաս դրեցին, իսկ ուրիշները նաև իրենց սուրբ կյանքը զոհեցին, բազմադարյան պայքարում Ռուս ժողովրդի հայրենահավատի, հայրենի երկրի ազատության, ռուս ժողովրդի ազգային

միության, ռուսական պետության քաղաքական հզորության և ուղղափառ հավատացյալ հոտի հոգևոր կրթության ու բարոյական կատարելության համար:

Չեն պակասել երբեք ռուսական սրբազան երկրում, մեր այնքան երջանիկ վերանորոգյալ Հայրենիքում, ժողովրդի հոգածուներն ու եկեղեցու սխրագործները: Այս պատմական հանդիսավոր ժամին անկասելի արձանանում է ժողովրդի վշտակրի և հոգևոր սխրագործի պայծառ կերպարը, որ սրբակենցաղ ապրել, ստեղծագործել, վառվել ու մարել է մեր օրերում և մեր մեջ, սրբազան կերպարը մեծ ծերունու, երջանկահիշատակ Հոր, Մոսկվայի ու Համայն Ռուսիոց Սերգիյ Պատրիարքի, որ իր կյանքով ու գործերով արժանացել էր ժողովրդի սիրույն, իշխանության հարգանքին. հիշատակն արդարոց օրհնությամբ հիշեսցի և երկնային երանության հավետ արժանասցի: Նաև հավերժ հիշատակ ժողովրդի վշտակիրներին և Ռուսաց պրավոսլավ եկեղեցու սխրագործներին:

Ազատագրվելով ցարական ինքնակալության շղթաներից և վայելելով կրոնական ազատության մեծ խարտիայի՝ ՍՍՌ Միության Կոնստիտուցիայի բոլոր անվեր պաշտպանությունը, ուղղափառ դավանության, ավետարանական ճշմարտության և արդարոց ու սխրագործաց ավանդներին հավատարիմ Ռուսաց եկեղեցին, որին ներկայումս գլխավորում է Ամենապատիվ Սրբազան Ալեքսի Պատրիարքը, իր բարձր առաքինություններով և ջերմ կրոնական նախանձախընդրությամբ ողջ ուղղափառ աշխարհին հայտնի է և համաժողովրդական հարգանքին արժանացած:

Ռուսաց պրավոսլավ եկեղեցին եռանդուն, արդյունավետ և ներշնչյալ աստուածաճաճոտ գործ է կատարում ժողովրդի կրոնական դաստիարակության անդաստանում, խաղաղ ստեղծագործական աշխատանքի ազնիվ ասպարեզում, հանուն իրավունքի և արդարության համար մղվող պայքարի դաշտում, հանուն ազատության ու դեմոկրատիայի, հանուն ամբողջ աշխարհի խաղաղության ու երջանկության, հանուն բոլոր ժողովուրդների ավետարանական սիրո ու քրիստոնեական եղբայրության:

Մենք, Հայաստանյայց հինավուրց Ազգային և Առաքելական եկեղեցու համաժողովրդական քվեով միաձայն ընտրյալ Պետս, Մեր հոտի անունից, ինչպես Սովետների մեծ երկրում երջանիկ ապրող, այնպես և արտասահմանում ողբերգական կյանքով պանդխտող և դարերով կարոտով տենչացող իր ջերմ սիրելի պատմական Հայրենիքին, այս խորհրդավոր ժամին, ի տես համայն աշխարհի, ամբողջ հոգով ու սիրով բացականչում ենք.

Փա՜ռք և պարծանք Ռուսաց պրավոսլավ մեծ եկեղեցուն:

Փա՜ռք ու պարծանք Մոսկվայի և Համայն Ռուսիոց մեծ Պատրիարքին, մեր ամենքիս սիրված սրբազան եղբոր Ալեքսիին:

Փա՜ռք ու պարծանք արժանավոր հովիվներին և համայն ուղղափառ քրիստոնյաներ գինվորյալ մանկանց:

Սոցիալական անարդարության, քաղաքական ռեակցիայի, հոգևոր խավարասիրության, ազգային ստրկացման և կրոնամոլ բշնամասիրության սև ույժերը չեն քնած: Տեսնելով ժողովրդների հերոսական պայքարը հանուն իրենց իրավունքի և արդարության, ազատության և երջանկության— նրանք, այդ սև ույժերը շարամտորեն նոր դավեր են նյութում և նորանոր շղթաներ կոփում զարթնած ապրող ժողովուրդների համար. Divide et impera հռոմեա-բյուզանդական ցեզարիստական քաղաքական այս ավանդը ներկայումս էլ մնում է որպես դեկավար ընկրգքունքը և հիմնական քաղաքական իմաստությունը միջազգային ռեակցիայի:

Ինչպես միշտ անցյալում, այնպես և ներկայումս, ռեակցիայի հակասովետական մութ ույժերը չեն մոռանում նաև Հայ եկեղեցին, ակնհայտ գիտակցելով, որ թվով համեստ, բայց հոգով արի ողբերգական-հերոսական հայկական ազգի բազմադարյան ազգային եկեղեցին դարերի ընթացքում վաստակել է և այժմ էլ վայելում է առաջավոր մարդկության հատուկ համակրանքը:

Մեր թշնամիները ստանոդ կերպով բարբառում են իբր թե Սովետական իշխանությունը և Ռուսաց պրավոսլավ եկեղեցին, ձեռնամուխ են լինում Հայ եկեղեցու անկախության ու ազգային ինքնուրույնության վերացմանը, և որ Մոսկվայում, այս եկեղեցական ժողովում, իբր թե ձևակերպվելու է Հայ եկեղեցու լուծարքը:

Մենք, Հայաստանյայց Ազգային Առաքելական եկեղեցու ծերունազարդ Հայրապետը և Գլուխը, չնայած տկարությանս, սիրով ընդունեցինք Մեր սիրեցյալ եղբոր ստանուչ ու սիրաշաղ հրավերը, որպեսզի Մեր անձ-

ճակաՀ ճերկայությամբ ու ելույթով այս մեծ ժողովում արտահայտեցինք Մեր խորին ու անկեղծ համակրանքն ու սերը հանդեպ Ռուսաց փառապանծ Եկեղեցու, Սովետական հզոր իշխանության և Ռուս մեծ ժողովրդի ու ի լուր ամենեցուն Մեր հայտարարությամբ մերկացնենք այդ նորաճերյուրյալ քաղաքական չարախոսությունը ուղղված Սովետական իշխանության և Ռուսաց ուղղափառ Եկեղեցու հասցեին և ի չիք դարձնենք Հայ պատմական Եկեղեցու հասցեին ուղղված չարամիտ ամբաստանությունն ու վիրավորանքը:

Հայ ժողովուրդը ընդունել է քրիստոնեությունը, որպես պետական կրոն, դեռ 303 թվին: Հայ բազմաչարչար ժողովրդի բազմադարյան պատմության ընթացքում Ս. Էջմիածնի Մայրագույն Գահոիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսին ողբերգական ու փառավոր մեծ բաժին է վիճակվել՝ լինել իր հավատացյալ հոտի ոչ միայն կրոնական-հոգևոր ղեկավարն ու ժողովրդական լուսավորության և ժողովրդի բարոյական դաստիարակության կազմակերպողը, այլ և պաշտպանը ազգային պետականության գաղափարի, պահպանողն ու ոգեշնչողը ազգային ազատագրական ավանդների և պաշտպանը Հայաստանի, Հայ Եկեղեցու ու Հայ ժողովրդի իրավանց: Էջմիածնի Աթոռ գաղափարի մեջ պատմականորեն միաձուլվել են վերոհիշյալ երկյակ գաղափար-նշմարտությունը— ազգային-կրոնական անկախության գաղափարը և ազգային-քաղաքական ինքնագիտակցությունը: Հայաստանի և Ս. Էջմիածնի ազգային Եկեղեցու ավելի քան 1500 տարվա պատմությունը, իր ողբերգությամբ ու հերոսությամբ, անընդհատ ու անհման մարտիրոսագրություն է: Անա այստեղ է պատմական գաղտնիքը և անսպառ ստրյուրը Հայ ժողովրդի և նույնիսկ նրա այլադավան փոքրամասնությունների, անձնվեր սիրո և նվիրվածության հանդեպ ազգային Եկեղեցու և Ս. Էջմիածնի նախամեծար Աթոռի:

Հայաստանի ու Հայ Եկեղեցու հազարամյա ողբերգական փառապանծ պատմությանը հայտնի են սարսռեցուցիչ հանցագործներ ու դաժան հալածանքներ: Ոչ միայն հեթանոս աշխարհը ու մոլեռանդ իսլամը, այլ և ավելի դաժան ու անխնա, հենված հզոր պետությունների ռազմա-ոստիկանական ույժերի վերա, հրով ու սրով, բիրտ դաժանությամբ հարձակվել են հայ ժողովրդի ու նորա ազգային անկախ եկեղեցու վերա հույն բյուզանդացիք և եգիպտ լատինացիք:

Քարք և պատիվ Ռուսական պրավոսլավ մեծ Եկեղեցուն, որ չնայած ցարական ինքնակալության ռուսացման քաղաքականության, երբեք չի հարձակվել հայ ժողովրդի խղճի ազատության, ազգային-եկեղեցական անկախության և նորա բազմադարյան սրբություն-սրբոց Էջմիածնի վերա:

Թող իմանան մոլեռանդ բանսարկուները և նոցա կուլիսային հերջնչողները, որ Սովետական մեծ Կոնստիտուցիայի հավատարիմ պաշտպանության ներքո նախամեծար Ս. Էջմիածինը ներկայումս ապրում է իր ազգային-կրոնական վերածննդի և ազատ բարգավաճման նոր դարաշրջանը:

Թող իմանան բոլոր հակասովետական, հակաուղղափառ ու հակահայկական հերյուրանքների սիրահարները, որ ազատագրյալ աշխատանքի մեր Երկրում չկան տիրող ու բերիրավ եկեղեցիներ, որ Սովետների երկրում եկեղեցին բաժան է պետությունից, որ բոլոր կրոնական համայնքները հավասար են օրենքի առաջ, որ ոչ մի եկեղեցի չի վայելում բացառիկ առավելություններ ու արտոնություններ, որ ազգային իրավասամանափակումները ու կրոնական հալածանքները հանդիսանում են ծանրագույն հանցագործություններ, ու յուր ավտոկեֆալությունն իրավամբ հարգող Ռուսական պրավոսլավ մեծ Եկեղեցին տածում է սրտառուչ, ազնիվ համակրանք առ Հայաստանյայց Ազգային Առաքելական Եկեղեցին, նորա կրոնական-նվիրապետական ինքնուրույնությունը և նախամեծար Ս. Էջմիածինը:

Անա այս փոխադարձ սրբազան վստահության, հարգանքի ու սիրո վերա է հիմնված զարգանում ու ամրապնդվում ճշմարիտ քրիստոնեական հոգևոր հաղորդակցությունը երկու ուղղափառ եկեղեցիների և եղբայրական ավետարանական բարեկամությունը Մեր քրիստոնյա հավատացյալ զավակների:

Հավերժ փառք մեծ և ազնիվ Ռուս ժողովրդին և նորա Պրավոսլավ Եկեղեցուն:

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ
ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻ

Այն տարվա հուլիս ամսին, Մոսկվայում, մեծ հանդիսավորությամբ ու շքեղորեն տոնվեց Ռուսաց պրավոսլավ եկեղեցու ավտոկեֆալության 500-ամյա հոբելյանը:

Հոբելյանական տոնակատարություններին մասնակցում էին պրավոսլավ բոլոր եկեղեցիների ներկայացուցիչները, որոնք Մոսկվա էին ժամանել թե՛ Բալկանյան, թե՛ Միջին ու Մերձավոր Արևելքի երկրներից և թե՛ այլ վայրերից:

Ուղիղ հինգ դար առաջ Ռուսաց պրավոսլավ եկեղեցու կյանքում պատմական խոշոր նշանակություն ունեցող դեպք տեղի ունեցավ— 1448 թվին գումարված եկեղեցական ժողովում Ռուսաց պրավոսլավ եկեղեցին իրեն ավտոկեֆալ— անկախ ու ինքնուրույն հռչակեց, եկեղեցու գլուխ ընտրելով ռուս միտրոպոլիտի:

Եվ ահա այդ նշանավոր տարեթվի 500-ամյակն է, որ տոնում է Ռուսաց պրավոսլավ մեծ եկեղեցին:

Ինչպես հայտնի է, քրիստոնեությունը Ռուսաստան մուտք է գործել 10-րդ դարում Կ. Պոլսից և այդ իսկ պատճառով էլ նորաստեղծ ու երիտասարդ Ռուսական եկեղեցին երկար ժամանակ կախման մեջ է գտնվել Կ. Պոլսի Մայր եկեղեցուց: Այլ կերպ լինել էլ չէր կարող. սկզբնական շրջանում, քանի դեռ նորաճաստատ Ռուսաց Դուստր եկեղեցին չուներ իր եկեղեցական-նվիրապետական օրենքները ու կանոնները, բնականաբար պետք է այդպիսի փոխ առներ Բյուզանդական եկեղեցուց, և այսպիսով հետևաբար ճանաչեր նաև Կ. Պոլսի տիեզերական պատրիարքի հոգևոր գերիշխանությունը ու ենթարկվեր նրա ղեկավարությանը: Սակայն, այլ էր իրադրությունը քրիստոնեություն ընդունելուց գրեթե հինգ դար հետո: Այդ երկար ժամանակամիջոցում Ռուսաց եկեղեցին աճել, հզորացել ու ամրապնդվել էր. նա ուներ արդեն սեփական թիվ կազմող սրբակենցաղ, բարեպաշտ հոգևոր հայրեր, բազմակողմանի զարգացման տեր, բարեկիրթ, իր հավատացյալ հոտի հոգևոր կարիքներին քաջատեղյակ ու կորովի հոգևոր հովիվներ, որոնք ի վիճակի էին իրենց ձեռքը վերցնելու եկեղեցու ղեկավարման գործը:

Արդ տեսնենք, որո՞նք էին այն պատմական նախադրյալները, որ Ռուսաց պրավոսլավ եկեղեցուն հնարավորություն ընձեռեցին 1448 թվականին իրեն անկախ ու ինքնուրույն եկեղեցի հայտարարելու:

Այդ նախադրյալները, որոնք պայմանավորեցին նրա ավտոկեֆալության հռչակումը, հետևյալներն էին.— նախ Ռուսաց պրավոսլավ եկեղեցին քրիստոնեության Ռուսաստան մուտք գործելուց մինչև 1448 թվականը ընկած ժամանակամիջոցում եկեղեցական-նվիրապետական տեսակետից այնքան էր աճել ու հասունացել, որ ամենայն

իրավամբ կարող էր ճանաչվել որպես ավտոկեֆալ, այսինքն անկախ ու ինքնուրույն, եկեղեցի: Երկրորդ՝ նոր կազմակերպվող ռուսական պետականության քաղաքական շահերի տեսակետից ցանկալի չէր, որպեսզի Ռուսաց Եկեղեցին շարունակեր կախման մեջ մնալ Կ. Պոլսի Եկեղեցուց. այդ իսկ պատճառով էլ ռուս իշխանները, կռահելով որ կրոնական կախումը հղի է քաղաքական անակնկալներով, ոչ միայն հովանավորում էին Ռուսաց պրավոսլավ Եկեղեցու, իր անկախության համար մղվող, պայքարը, այլ և իրենք ակտիվ մասնակցություն էին ցույց տալիս այդ պայքարին, աշխատելով Ռուսաց Եկեղեցին հանել կախման վիճակից ու դարձնել այն լիիրավ, ազգային ավտոկեֆալ եկեղեցի: Երրորդ պատճառն էլ այն էր, որ բյուզանդական կայսրությունը, կանգնած լինելով կործանման անդնդի եզրին, իր օրհասական օրերն էր ապրում: Արևելքից արշավող թուրքերը սպառնում էին բյուզանդական երբեմնի հզոր պետության գոյությանը, դրա համար էլ բյուզանդական կայսրերն ու տիեզերական պատրիարքները ստիպված են լինում դիմելու Հռոմի պապերի օգնությանը: Հռոմի պապերը, ինչպես միշտ, այս անգամ էլ առիթը չեն փախցնում օգուտ քաղելու ստեղծված, իրենց համար նպաստավոր, իրադրությունից, և, որպես փրկագին, պահանջում են եկեղեցական միությունն ու Հռոմի պապի գերիշխանության ճանաչում: Այս պահանջները ընդունվում են և 1410 թվից մինչև 1453 թվականը (Կ. Պոլսի անկումը) Կ. Պոլսի տիեզերական պատրիարքական գահի վրա բազմել են սկսում պապի գերիշխանությունը ճանաչող ունիթոր պատրիարքներ: Այս վերջինների օրոք էլ Ռուսաց Եկեղեցու գլուխ ևս նշանակվում է ունիթոր միտրոպոլիտ: Այսպիսով ծայր է առնում ունիթորությունը և նույնիսկ Ռուսաստանի ունիթոր միտրոպոլիտ Իսիդորը ինքնագլուխ կերպով, առանց ռուս հոգևորականության ու հավատացյալ ժողովրդի կամքը հարցնելու, բյուզանդական կայսրի ու պատրիարքի հետ միասին Ֆլորենտինյան ժողովում ստորագրում է Հռոմի Եկեղեցու հետ միության պայմանագիրը, այսպիսով վտանգի տակ դնելով Ռուսաց պրավոսլավ եկեղեցու ինքնուրույն գոյության խնդիրը: Ռուսաց պրավոսլավ եկեղեցու միակ փրկությունը կայանում էր նրանում, որ նա, պապականության գիրկը չնետվելու և իր անկախությունը ապահովելու համար, անմիջապես խզեր իր կապերը Բյուզանդական Եկեղեցու հետ և հրաժարվեր բյուզանդական ունիթոր պատրիարքներին ենթարկվելուց: Եվ իրոք, Ռուսաստանում սկսվում է ուժեղ պայքար ծավալվել ունիթորության դեմ և ունիթոր միտրոպոլիտ Իսիդորը հարկադրված է լինում փախուստի դիմել: Անա այս իրադրությունը ևս խոշոր չափով ազդում է Ռուսաց Եկեղեցու իր անկախության համար մղած պայքարի վրա ու արագացնում նրա ավտոկեֆալ եկեղեցի հռչակելու գործը:

Այսպիսով Ռուսաց պրավոսլավ Եկեղեցու անկախության ու ինքնուրույնության անհրաժեշտությունը թելադրվում էր այդ եկեղեցու ներքին անմամբ ու հզորացմամբ, ռուսական պետականության կազմավորմամբ և պապի գերիշխանությունը ճանաչելուց խուսափած լինելու հանգամանքով:

Ռուսաց պրավոսլավ Եկեղեցին, իր հազարամյա գոյության ընթացքում, խոշոր դեր է խաղացել իր հայրենի երկրի կրոնա-բարոյական, հասարակական-կրթական ու քաղաքական կյանքում: Ռուս վեհանձն, մեծահոգի, ողջախոհ, սգնվամիտ, առաքինի ժողովրդի շատ սերունդներ իրենց կրոնա-բարոյական դաստիարակությունը ստացել են հարազատ եկեղեցու ծոցում:

Ռուսաց Եկեղեցուն խորթ են եղել և այսօր էլ խորթ են, Հռոմի Եկեղեցուն և նրա փառատենչ պետերին հատուկ, եկեղեցական գերիշխանություն հաստատելու ճավակնոտ ձգտումները. նա ճանաչել ու ճանաչում է ինքնուրույն եկեղեցիների իրավունքները և կողմնակից է եկեղեցիների ազատ համագործակցությանը: Ռուսաց Եկեղեցին գործել ու գործում է քրիստոնեական ոգու համաձայն. քրիստոնեական բարոյական նորմաները նրա համար ուղենիշ աստղեր են հանդիսացել և նա իր գործունեության ընթացքում միշտ էլ ղեկավարվել ու ղեկավարվում է քրիստոնեական վարդապետության տանդարտ սկզբունքներով: Հավատարիմ քրիստոնեական սիրո, եղբայրության, համերաշխության ու խաղաղության ճնավանդ վեհ սկզբունքներին, նա այսօր էլ իր բողոքի ճուժկու ձայնն է բարձրացնում, երբ տեսնում է, որ Հռոմի Եկեղեցին, մոռացության մատնելով քրիստոնեական վարդապետության գե-

բագույն սկզբունքները, վերածվել է համաշխարհային ռեակցիայի մի ոստանի, որտեղից քրիստոնեական սիրո, եղբայրության, համերաշխության ու խաղաղության փոխարեն ամեն օր ատելության, եղբայրասպանության, գժտության ու մարդկային անռելի մի նոր սպանդի ստեղծման կոչեր են հնչում: Այսօր երբ Ռուսաց եկեղեցին, իր շուրջը համախմբելով բոլոր պրավոսլավ եկեղեցիները, հանուր մարդկության կոչ է անում պայքարել պատերազմի հրձիգների դեմ հանուն ժողովրդների միջև տևական խաղաղության ստեղծման, Հռոմի պապը, մի նոր համաշխարհային սպանդի կազմակերպման այդ մոլի ջատագովը, պատերազմի մեծ ու փոքր հրձիգների առջևից ընթացող այդ մոլեռանդ ջանակիրը, հիստերիկ կոչեր է անում մի նոր խաչակրաց արշավանք սկսելու Սովետական Միության ու նոր դեմոկրատիայի երկրների դեմ:

Հայ եկեղեցին չի կարող անմասն ու դիտողի դերում մնալ, երբ Հռոմեական եկեղեցու կողմից կոպիտ կերպով ոտնահարվում են քրիստոնեական վարդապետության ամենաարդարագույն, նվիրական ու ավանդական սկզբունքները, երբ Հռոմի պապը մարդկային նոր նախճիրներ է նյութում, աշխարհակործան նոր պատերազմներ հրահրում, պատերազմի ասածուն երկրպագում ու խնկարկում, Մի՞թե վայել է քրիստոնեական «եկեղեցու պետին» մշտամրմունջ աղոթքներով Ամենաբարձյալից խաղաղություն հայցելու փոխարեն, օրհներգներ կարդալ հանուն մարդկային դիակույտերի լեռնացման, մարդաշատ քաղաքների մոխրացման, բազմահազար գյուղերի անէացման, որբերի այրիների, խեղանդամների բազմացման և մարդկային քաղաքակրթության ոչնչացման:

Ո՛չ, քրիստոնեական վարդապետության, քրիստոնեական եկեղեցու ոգուն դեմ է, երբ Եկեղեցու պետը ստանձնում է պատերազմի մուներիկի դատապարտելի դերը:

Հայ եկեղեցին չի կարող հանդուժել պատերազմի փառաբանությունը քրիստոնեական եկեղեցու արքազան բեմերից և նրա պետի կողմից, նա կողմնակից է ժողովուրդների միջև հարատև խաղաղության հաստատման, քրիստոնեական սիրո, եղբայրության, համերաշխության թագավորման: Հայ եկեղեցու տեղը խաղաղասեր եկեղեցիների շարքումն է և նա, իր ձայնը միացնելով պրավոսլավ խաղաղասեր եկեղեցիների ձայնին, կոչ է անում հայ հավատացյալներին պայքարել պատերազմի հրձիգների դեմ հանուն մշտատև խաղաղության ու հանուր մարդկության երջանկության:

Խաղաղասեր եկեղեցիների բշնամիները ընդհանրապես և Հայ եկեղեցու բշնամիները մասնավորապես, ստանոդ զանազան լուրերով, հերյուրանքներով հգնում էին Հայ եկեղեցին հեռու պահել մնրձեցումից պրավոսլավ խաղաղասեր եկեղեցիների հետ:

Սակայն իզուր են բշնամու նողկալի փորձերը. Հայ Եկեղեցին երախտապարտ է և՛ ռուս մեծ ու մեծանոգի ժողովրդին և՛ Ռուսաց ազատախոհ եկեղեցուն, եկեղեցի, որ քույր եկեղեցիների սուվերեն իրավունքները հանաչելով ու հարգելով, խարազանում, անարգանքի սյունին է գամում պատերազմի հրձիգներին ու բարձր ծածանում քրիստոնեական եղբայրության, խաղաղության արքազան դրոշը:

Աշխարհում և՛ ոչ մի ժողովուրդ այնպիսի երախտիք չունի հայ ժողովրդի նկատմամբ, ինչպիսին ունի ռուս ազնիվ ժողովուրդը. ռուս քաջարի ժողովրդի օժանդակությամբ հայ ժողովուրդն ու Հայ եկեղեցին փրկվեցին պարսկա-տաճկական բռնություններից. ռուս ժողովրդի օգնությամբ էր դարձյալ, որ փրկվեցին կործանման անդնդի եզրին կանգնեցված հայ ժողովրդի բազմատանջ բեկորները, և ռուս ժողովրդի օժանդակությամբ է, որ այսօր հայ ժողովուրդը Սովետական Հայաստանում, խաղաղավետ պայմաններում, իր երջանիկ կյանքն է կերտում և աստանդական եղբայրներին ու քույրերին իր գիրկն ընդունում:

Ավտոկեֆալության 500-ամյա հոբելյանի առթիվ Հայ Եկեղեցին, Նոյան տապանակիր բիբլիական Արարատ արքազան լեռան ստորոտում վեր խոյացած քրիստոնեական հավատի ամենահինավուրց օջախ սուրբ էջմիածնից, իր ջերմագին ողջույնն է հղում Ռուսաց պրավոսլավ քույր մեծազոր եկեղեցուն և աղոթում է նրա հարատևության, բարգավաճման ու ծաղկման համար:

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի ԽՈՍՔԸ „ՎԱՏԻԿԱՆԸ ԵՎ ՊՐԱՎՈՍԼԱՎ ԵԿԵՂԵՑԻՆ“ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԹԻՎ*)

ՁԵՐԴ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ, ԳԵՐԱՇՆՈՐՀ ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅՐԵՐ ԵՎ ՊԱՏՈՒԱՐԾԱՆ ՀՅՈՒՐԵՐ

Քրիստոնեական եկեղեցին տիեզերական-միասնական է in spiritualis *և* charitas in omnibus:

Ճշմարիտ քրիստոնեական և տիեզերական-եկեղեցական հաղորդակցություն պահպանելը միմյանց հետ՝ յուրաքանչյուր ճշմարիտ հավատացյալ քրիստոնեի սուրբ պարտքն է, որ կենսագործելի է միայն և միայն Քրիստոսի ավետարանի եղբայրական սիրո, համբերատար հոգու, կրոնական համայնքների փոխադարձ վստահության շնորհիվ և տեղական եկեղեցիների ազատության ու անկախության իրավունքի փոխադարձաբար ճանաչման ու իմաստուն կանոնները ճշտությամբ և աղնվորեն պահպանելու շնորհիվ— unitas in necessariis et libertas in dubcis:

Տիեզերական-եկեղեցական հոգևոր հաղորդակցության այս իդեալին դարավոր նենգամիտ թշնամի է եղել և է այսօր Հռոմեական-կաթոլիկ Եկեղեցին, իր «Արտաքո կաթոլիկ եկեղեցվո չիք փրկություն» սկզբունքով, բացառիկ միահեծանության քաղաքականությամբ, անհամբերատար ոգով, Վատիկանի վեհապետի անսխալականության սրբապիղծ դոգմայով, «նպատակը արդարացնում է միջոցը» եզուիտական մորալով, ինկվիզիցիայով ու ինդուլգենցիայով (թողության թղթերով), ինդեկսներով ու սիլլաբուսներով և տիեզերական եկեղեցական գերիշխան միապետ ճանաչվելու հակաքրիստոնեական պահանջներով։

Ահա սոքա են պատմական ավանդները, կրոնական դավանանքները և բարոյական սկզբունքները այն եկեղեցու, որ հանդգնություն ունի ձգտելու տիեզերական եկեղեցական-նվիրապետական առաջնության և կանոնական-դավանական ուղղափառության։

Աշխարհի խոշորագույն կալվածատեր ու բանկիր, կապիտալիստ ու գաղութասեր Հռոմեական-կաթոլիկ Եկեղեցին, իր Վատիկան կեդրոնով, վաղուց դադարել է ազատ քրիստոնեական համայնք լինելուց և դարձել է հզոր ու ամենուրեք գործող սոցիալ-քաղաքական մի կազմակերպություն, հետադեմ-նվաճողական մեծ պետության ախտավոր բոլոր հատկանիշներով ու այլ պարագաներով։ Ուստի և պայքարել Հռոմեական-կաթոլիկ Եկեղեցու և նորա նվիրապետական-քաղաքական կեդրոն Վատիկանի դեմ, յուրաքանչյուր ճշմարիտ քրիստոնյա հավատացյալի և եկեղեցական-կրոնական համայնքի սուրբ պարտքն է։

Հայ ժողովուրդը, հրնթացս իր բազմադարյան հերոսական պայքարի ընդդեմ բազմաթիվ նենգ ու դաժան թշնամիների, դարբնել է իր հարազատ ազգային-առաքելական եկեղեցին— դավանանքով ինքնուրույն, կանոններով անկախ, կազմակերպությամբ ժողովրդական (դեմոկրատիկ) և պատմական վիճակի բերմամբ ազգային։ Հայ Եկեղեցին, սակայն, միաժամանակ, միշտ և ամենուրեք, ճանաչել է յուրաքանչյուր տեղական եկեղեցության 1948 թ. հուլիսի 9-ի պլենար նիստում քննության է առնվել «Վատիկանը և Պրավոսլավ Եկեղեցին» հարցը։ Սույնը հանդիսանում է Վեհափառ Հայրապետի արտասանած ճառը այդ հարցի քննարկման ժամանակ։

---

*) *Ռուսաց պրավոսլավ եկեղեցու ավտոկեֆալության 500-ամյա հոբելյանական հանդիսությանց զուգընթաց Մոսկվայում տեղի է ունեցել պրավոսլավ եկեղեցիների պետերի խորհրդակցություն, որի նիստերին մասնակցել է Վեհափառ Հայրապետը։ Այդ խորհրդակ-*

ցու ու կրոնական համայնքի ազատության և անկախության սուրբ ու անկապտելի իրավունքը, որպես միակ անհրաժեշտ պայմանն ու ճշմարիտ ավետարանական հիմքը ընդհանուր քրիստոնեական հոգևոր հաղորդակցության և ազատ, անկախ ու իրավահավասար եկեղեցիների ապագա տիեզերական եղբայրակցության։

Հենց այս ազգային առաքելական եկեղեցու դեմ են զինվել ու նրան հարվածել լատինները, խաչակրաց արշավանքների օրերից սկսած, դարեր շարունակ և հատկապես մեր օրերում զորացրել են այդ հարձակումը այն երկրներում, ուր աղքատության ճիրաններում և իրավազուրկ վիճակում ժամանակավորապես ապրում ու պանդխտում են հազարավոր անտուն-անտեր գաղութահայերը, մոլեռանդ պանիսլամիզմի և պանօտտոմանյան արյունաթաթավ բռնապետության այդ զոհերը։

Օգնության և փրկության շողոքորթ ու հրապուրիչ սին խոստումների շռայլում մի ժողովրդի նկատմամբ, որը, դարեր շարունակ շրջապատված լինելով դաժան ու անխընա թշնամիներով, միշտ և անընդհատ գզգզվել է արյունռուշտ բռնակալների վայրագ հրոսակախմբերի կողմից, ահա սա է. եղել լատին եկեղեցու նախնական տակտիկան Հայ հերոսական ժողովրդի հանդեպ։

Հռոմեական-կաթոլիկ Եկեղեցին կանգ չառնելով ոչ մի բանի առաջ և չարհամարհելով ոչ մի միջոց, կեղծ-հրապուրիչ խոստումներից, եզուիտական խորամանկ ու ճկուն ագիտացիայից, նենգ մեքենայություններից (ինտրիգներից), առատաձեռն կաշառքներից զատ դիմել է նաև «ուղղակի գործողությանց»— արյունաթաթավ բռնությանց։ Հայ հոգիներ որսալու համար հռոմեական քահանայապետները հենվել են ոչ միայն Ֆրիդրիխ Բարբարոսայի թիկնապահ ջոկատների ու վարձկան զորամասերի, ոչ միայն Նապոլեոն երրորդի ու Ֆրանց Եոսիֆի նենգ դիպլոմատիայի, այլ և պարսից շահերի ֆարրաշների ու թուրք սուլթանների ենիչերիների վերա։

Մեր օրերում էլ, արաբական Արևելքի ու Միջին Ասիայի հայ տարագիրների բնակավայրերում, Սովետական Միության ու Սովետական Հայաստանի, Հայ ժողովրդի ու Հայ ազգային Եկեղեցու դեմ գործում է հակասովետական գործառնությանց մեջ փորձառու կարդինալ Աղաջանյանը, որը ծնվել է Ախալցխայում և 1919—1921 թվերին պապական Փոխանորդ է եղել Վրաստանում։ Պիոս ԺԲ-ի այս սիրելի կարդինալը հայտնապես հանդես է գալիս ընդդեմ Հայ ժողովրդի Հայրենադարձության մեծ ու մարդասեր գործի և Թուրքիայի կողմից բռնատիրված հայկական վիլայեթները Հայկական Սովետական Հանրապետությանը կցելու արդար պահանջի։

Հայրենիքի կարոտը քաշող հայ տարագիրներին կազմալուծել կրոնապես և դիմազրկել ազգայնապես— ահա կարդինալ Աղաջանյանի ծրագիրը։

Հռոմեական-կաթոլիկ Եկեղեցուն կրոնական հավատորսության համար հարկավոր են մուրացիկ ու իրավազուրկ, հույսի ու լույսի հեռանկարներից զուրկ և տառապանքի ենթակա մասսաներ։ Նույն այդ մուրացիկ և իրավազուրկ մասսաները պետք են նաև Մերձավոր Արևելքի նավթի մագնատներին ու ստրկական աշխատանքի վարձակալներին— ահա սրանք են Հռոմեական-կաթոլիկ Եկեղեցու և նորա հավատարիմ սպասավորի հակասովետական ու հակահայկական ագիտացիայի նպատակները։

Հայ Ժողովրդի ու նորա ազգային եկեղեցու հավատարիմ զավակները, Ս. Էջմիածնի Տայրագույն Պատրիարք-Կաթողիկոսի գաղութահայ աշխարհը ներկայացուցիչները, անձնվիրաբար պայքարում ու պաշտպանում են ազգային եկեղեցու ազատությունն ու անկախությունը և տարագիր ազգայինների Հայրենադարձության սրբազան իրավունքը։

Հայ Ժողովուրդը, իր տառապալից ու ողբերգական դարավոր անցյալում, շատ բան է տեսել և, սակայն, միշտ էլ հերոսաբար պաշտպանել է իր կրոնական ազատության և ազգային-եկեղեցական անկախության նախածին սրբազան իրավունքը։ Հռոմեական-կաթոլիկ Եկեղեցուն, չնայելով նորա տնտեսական ու քաղաքական հզորության և որոշ պետությունների կողմից նորան ցույց տրվող բացարձակ օգնության, երբեք չի՛ հաջողվել և երբեք էլ չի՛ հաջողվի հանել Հայ Ժողովրդին իր ազգային-առաքելական անկախ եկեղեցու ծոցից։

Ռուսաց պրավոսլավ Եկեղեցու այս մեծ ժողովում, ուր հրապարակավ հավատացյալ Ռուս մեծ Ժողովրդի առողջ մտքի ու մաքուր խղճի հեղինակավոր և հուզումնալից ձայնն է հնչում, թո՛ղ հնչի նաև հնագույն Հայ ազգային-առաքելական Եկեղեցու ձայնը հանուն սուրբ ավետարանի հոգևոր եղբայրության, ի նշան տիեզերական եկեղեցիների ու կրոնական համայնքների իրավահավասարության և ի բողոք Վատիկանի հակաքրիստոնեական եկեղեցական-քաղաքական նվաճողական-ագրեսիվ քաղաքականության։

ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Պրավոսլավ եկեղեցու ավտոկեֆալության 500-ամյա հոբելյանական տոնակատարության առթիվ)

Մոսկվայի և Համայն Ռուսիո Ամենապատիվ Ալեքսի Պատրիարքը, հատուկ պատվիրակության միջոցով, հաճել էր Մեզ հրավիրել՝ ներկա լինելու Պրավոսլավ եկեղեցու ավտոկեֆալության (անկախության) 500-ամյա հոբելյանական տոնին և այդ առթիվ կազմակերպված խորհրդակցությանց։

Նորին Սրբության հրավերը հաճությամբ ընդունեցինք և Մեր շքախմբով ներկա եղանք հիշյալ հանդեսին ու խորհրդակցությանց։

Հանդեսը, որին նախագահում էր Սրբազան Պատրիարքը, իր վեհությամբ ու խելացի կազմակերպությամբ, ինչպես և Սրբազան նախագահը, իր տակտով և խոհուն ղեկավարությամբ, խորը տպավորություն թողեցին Մեզ և ամբողջ ժողովի վերա և ներշնչեցին ժողովականներին քրիստոնեական սիրո և եղբայրության վեհ զգացմունք ու մարդասեր ոգի։

Խորհրդակցությանց նյութերն էին հետևյալ զեկուցումները.

ա) Վատիկանն ու Պրավոսլավ Եկեղեցին.

բ) Անգլիքան եկեղեցու նվիրապետության և ձեռնադրության խնդիրը.

գ) Պրավոսլավ Եկեղեցու տոմարը.

դ) Էկումենիկական շարժումն ու Պրավոսլավ Եկեղեցին.

Զեկուցումները կազմված էին գիտական հմտությամբ և կատարելապես օբեկտիվ ու կրում էին քրիստոնեական ոգու դրոշմ, որոնք մեզ դեպի վեհություն առաջնորդեցին և հոգեպես մխիթարեցին։

Հոբելյանական հանդեսի օրերին Մեր կատարած այցելությունները պրավոսլավ ճարտարարվեստ ու հոյակապ տաճարները Մեր մեջ սքանչանքի ու հիացմունքի զգացումներ զարթեցրին, իսկ այնտեղ տեղի ունեցած սուրբ պատարագներն ու եկեղեցական արարողությունները, զուգակցված խմբական գեղարվեստական ներդաշնակ երգեցողությամբ, ունկնդիրների մեջ կրոնական վեհ զգացմունքներ հարուցին և պահ մի աշխարհից կտրելով հոգով վերացրին ու անհոմի դիրկը նետեցին։

Հոբելյանական հանդեսի տոնակատարությանց առթիվ Մեր լսած հոգևոր համերգը և Մոսկվայի ու Լենինգրադի Մեր այցելած բազմապիսի թանգարանները, գրադարանները, հոյակապ կառուցվածքները և հատկապես Մոսկվա ու Վոլգա գետերը միացնող հիասքանչ ջրանցքը իր շլյուզներով անջնջելի տպավորություն թողեցին ու մեծ հիացմունք պատճառեցին Մեզ, հանդիսանալով Սովետական գեղարվեստի ու գիտության վերելքի բարձր աստիճանի ապացույցներ։

Մեր այցելությունը հատկապես Լենինգրադի Պաշտպանության թանգարանը ուրախալի առիթ է հանդիսանում նշելու և արձանագրելու Սովետական ժողովրդի անձնազոհությունը ու հերոսությունը, որի շնորհիվ գերմանական ֆաշիզմի դեմ մղած պատերազմում նա պատվով պաշտպանեց իր ազատությունը ու անկախությունը և հաղթանակով դուրս գալով այդ պատերազմից, չտեսնված կարճ ժամանակամիջոցում վերականգնեց, ի

թիվս այլ փլատակների, իր երկրի երկու փառապանծ քաղաքները՝ մայրաքաղաք Մոսկվան և ինդուստրիալ կեդրոն Լենինգրադը։

Հոբելյանական հանդեսի առթիվ հրավիրյալների հյուրընկալությունը, որ կազմակերպել էր Պրավոսլավ Եկեղեցու Պատրիարքարանն ու հոգևորականությունը, ռուս մեծ ժողովրդի հոգուն հատուկ բացսրտության, մարդասիրության ու քրիստոնեական եղբայրական սիրո դրոշմն էր կրում և ամեն գովեստից բարձր էր, և որ հավետ անմոռաց հիշատակ կմնա մեր մեջ։

Փառք և պատիվ Ռուս մեծ պրավոսլավ Եկեղեցուն, որի քրիստոնեական դաստիարակության շնորհիվ Պրավոսլավ Եկեղեցու հոգևորականությունն ու ժողովուրդը քրիստոնեական կրոնի սիրո վեհ զգացմունքի դրոշմն են կրում իրենց հոգում և կենսագործում այն կյանքի մեջ։*)

ԳԵՎՈՐԳ Զ
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

29 հուլիս 1948 թ.

Մոսկվա

*) Սույն տպավորությունները, որ մի քանի լեզուներով հաղորդվել են ռադիոյով, հանդիսանում են ՍՍՌՄ Ռադիոկոմիտեի թղթակցի հետ Վեհափառ Հայրապետի ունեցած զրույցի բովանդակությունը։ Միաժամանակ սույն տպավորությունները հանձնվել են Ռուսաց Եկեղեցու Պատրիարքարանի պաշտոնական ամսագրի խմբագրությանը՝ հրապարակելու համար։



ՏԱՍՍ-Ի ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՑ ՊՐԱՎՈՍԼԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՎՏՈԿԵՖԱԼՈՒԹՅԱՆ (ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ) 500-ԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ՌՈՒՍԱՑ ՊՐԱՎՈՍԼԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ռուսաց Պրավոսլավ եկեղեցու ավտոկեֆալության (ինքնուրույնության) 500-ամյակի տոնակատարության կապակցությամբ Մոսկվայի և համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի հրավերով սույն տարվա հուլիսի 3-ից մինչև հուլիսի 8-ը ժամանակամիջոցում Մոսկվա են ժամանել.—

Վրացական եկեղեցու ներկայացուցիչներ — Պատրիարք-Կաթողիկոս Կալլիստրատը, Ուրբնիայի միտրոպոլիտ Մելքիսեդեկը, Քութայիս-Գայենաթի միտրոպոլիտ Եփրեմը, ավագ քահանաներ Ա. Սավչովը, Խ. Դեվդարիանին և ուրիշներ.

Սերբիական եկեղեցու ներկայացուցիչներ— Պատրիարք Գավրիիլը, Սկոպլեի միտրոպոլիտ Իոսիֆը. Բրանիչևի եպիսկոպոս Բենիամինը և ուրիշներ.

Ռումինական եկեղեցու ներկայացուցիչներ— Պատրիարք Յուստինիանը, Կրայովի արքեպիսկոպոս Փիրմիլյանը, Կյուժի եպիսկոպոս Նիկոլայը, Բուզեուի եպիսկոպոս Անթիմը, Բուխարեստի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետի ռեկտոր ավագ քահանա Պ. Վենտիլեսկուն և ուրիշներ.

Բուլղարական եկեղեցու ներկայացուցիչներ— Բուլղարիայի էկզարխ՝ Սոֆիայի միտրոպոլիտ Ստեփանը, Պլովդիվի միտրոպոլիտ Կիրիլը, Սլիվենի միտրոպոլիտ Նիկոդիմը, վարդապետ Մեֆոդիյը, ավագ քահանա Վ. Շպիլերը և ուրիշներ.

Կոնստանտինոպոլսի եկեղեցու ներկայացուցիչ— Կոնստանտինոպոլսի (Տիեզերական) Պատրիարքի Եվրոպայի էկզարխ— Փիատիրի միտրոպոլիտ Գերմանոսը.

Անտիոքի եկեղեցու ներկայացուցիչներ— Լիբանանի միտրոպոլիտ Իյիան, Հոմսի միտրոպոլիտ Ալեքսանդրը և վարդապետ Վասիլին.

Ալբանական եկեղեցու ներկայացուցիչներ— Կորչայի հեպիսկոպոս Պախսին, քահանաներ Յանի Բիստոն, Լազար Կոպոմին և ուրիշներ.

Լեհական եկեղեցու ներկայացուցիչներ— Բելոստոկի և Բելսկու արքեպիսկոպոս Տիմոֆեյը, Բրեսլավլի եպիսկոպոս Միխայիլը, ավագ երեց Ի. Կովալենկոն, քահանաներ Ե. Նաումովը, Ա. Կալինովիչը։

Եկեղեցական տոնակատարություններին մասնակցելու համար Մոսկվա են ժամանել նաև Մոսկվայի Պատրիարքի արտասահմանյան ներկայացուցիչները.

Արևմտյան Եվրոպայի էկզարխ՝ միտրոպոլիտ Սերաֆիմը, վանահայր Դիոնիսին և ավագ քահանա Ա. Սերգեենկոն.

Չեխոսլովակիայի էկզարխ՝ Պրագայի ու Չեխիայի արքեպիսկոպոս Եվլոգիերիը, ավագ քահանա Գ. Նովակը, վանահայր Մեֆոդիյը և էկզարխատի գործերի կառավարիչ Բ. Չերկեսը.

Միջին Եվրոպայի էկզարխ՝ Վիեննայի արքեպիսկոպոս Սերգին և վարդապետ Արսենին.

ԱՄՆ-ի էկզարխ՝ Նյու-Յորքի արքեպիսկոպոս Մակարին և ավագ քահանա Ի. Դզվոնչիկը.

Բուլղարիայում ռուսական համայնքների կառավարիչ արքեպիսկոպոս Սերաֆիմը՝ Պանտելեյմոն վարդապետի հետ միասին.

Հարավսլավիայում ռուսական համայնքների կառավարիչ ավագ քահանա Ի. Սոկալը՝ ավագ քահանա Վ. Նեկլյուդովի հետ միասին.

Չինաստանում ռուսական հոգևոր միսսիայի ներկայացուցիչ վարդապետ Գավրիիլը.

Հոլանդիայում ռուսական հոգևոր միսսիա-

յի պետ վարդապետ Դիոնիսին և Միսսիայի քարտուղար վան Եպենհայզենը։

Ալեքսի Պատրիարքի հրավերով Մոսկվա է ժամանել նաև ամենայն հայոց Պատրիարք-Կաթողիկոս Գևորգ Զ-ը՝ Նախիջևանի եպիսկոպոս Կարապետի և այլ անձանց ուղեկցությամբ։

Մայրաքաղաքի օդանավակայանում և երկաթուղային կայարաններում ժամանողներին դիմավորել են Կրուտիցկիի և Կոլոմենսկի միտրոպոլիտ Նիկոլայը, Լենինգրադի և Նովգորոդի միտրոպոլիտ Գրիգորին, Կիևի և Գալիցիայի միտրոպոլիտ Իոհաննը, թեմական հովվապետները, ավագ երեց Ն. Կոլչիցկին և մայրաքաղաքի հոգևորականությունը։

ՍՍՌՄ Մինիստրների Սովետին կից ռուսաց պրավոսլավ եկեղեցու գործերի խորհրդի կողմից ժամանողներին դիմավորել են խորհրդի նախագահի տեղակալ Ս. Կ. Բելիշևը և խորհրդի անդամներ Գ. Տ. Ուտկինը ու Ի. Ի. Իվանովը։

ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ ՅՈՒՍՏԻՆԻԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ռումինական պրավոսլավ եկեղեցու Պատրիարք Յուստինիանը Մոսկվա ժամանելուց հետևյալ հայտարարությունն արեց.—

Նորին Վեհափառություն Պատրիարք Ալեքսիի հրավերին պատասխանում եմ խորհուրդ ուրախությամբ, մանավանդ, որ երկրորդ անգամն է ինձ մեծ բախտ վիճակվում այցի գալու մեր բարեկամ ու դրացի ՍՍՌՄ երկրի այնքան սիրելի հողը։

Մենք, գլխավորելով մեր պատվիրակությունը, որը բաղկացած է Փիրմիլիան արքեպիսկոպոսից, Կրայովայի Միտրոպոլիտից, Բուզեուի եպիսկոպոս Անթիմից, Կլուժի եպիսկոպոս Նիկոլայից, ավագ քահանա Պետր Վինտելեսկուից, Հոգևոր ճեմարանի ռեկտորից, ավագ քահանա Սիմեոն Նյագայից և բժշկականության դոկտոր Օվիդիու Մարինայից, եկել ենք, որպեսզի մեր մասնակցությունը բերենք ռուսաց պրավոսլավ եկեղեցու ավտոկեֆալության 500-ամյակի եկեղեցական տոնախմբություններին և մյուս պրավոսլավ եկեղեցիների Պետերի հետ միասին մասնակից լինենք այն խորհրդակցությանը, որը, հուսով եմ, բարեհաջող հետևանքներ կունենա մեր եկեղեցիների ու ժողովուրդների միջև սիրո, խաղաղության և եղբայրական միության ավետարանական պրավոսլավ ոգու ամրապնդման համար։

Միաժամանակ, դրա հետ միասին ես առանձնահատուկ երջանկություն եմ համարում ինձ համար ռուսաց եկեղեցուն և ողջ պրավոսլավ ռուս ժողովրդին հաղորդելու մեր ռումինական պրավոսլավ եկեղեցու աղոթալից օրհնությունը և մեր ժողովրդի սիրո ողջույնը ու անկեղծ հարգանքները ՍՍՌՄ բարեկամական ժողովրդների մեծ ղեկավարներին։

ԱՎՏՈԿԵՖԱԼ ՊՐԱՎՈՍԼԱՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Մեր թղթակիցը իրազեկ դարձավ, որ ավտոկեֆալ եկեղեցիների պատրիարքները և ներկայացուցիչները, որոնք մասնակցում էին եկեղեցական տոնախմբություններին ռուսաց պրավոսլավ եկեղեցու ավտոկեֆալության 500-ամյակի առթիվ, քննարկել են համաեկեղեցական մի շարք հարցեր և ընդունել դրանց վերաբերմամբ համաձայնեցված որոշումներ։

Խորհրդակցության ընթացքում քննության առարկա են հանդիսացել հետևյալ հարցերը.

ա) Վատիկանը և պրավոսլավ եկեղեցին.

բ) Էկումենիկական շարժումը և պրավոսլավ եկեղեցին.

գ) Անգլիքան եկեղեցական քահանայապետության մասին.

դ) Եկեղեցական օրացույցի մասին.

Առաջին հարցի առթիվ միաձայն բանաձև է ընդունվել, որով դատապարտվում է Վատիկանի գործոն դերը «նոր պատերազմի հրահրման և ընդհանրապես համաշխարհային դեմոկրատիայի դեմ նրա մղած քաղաքական պայքարի գործում»։

Հռոմի պապերը ամիսներ եղել են «այս աշխարհիս հզորների կողմը և ընթացել նրանց դեմ թույլերի ու շահագործվողների։ Այսպես է և ներկայումս— Վատիկանի գործունեությունն ուղղված է ընդդեմ աշխատավորների շահերի։ Վատիկանը— դա կենտրոնն է ժողովուրդների, հատկապես սլավոնական ժողովուրդների, շահերի դեմ ուղղված միջազգային ինտրիգների. դա միջազգային ֆաշիզմի կենտրոնն է»։

«Բոլոր քրիստոնյաները, առանց ազգի ու դավանանքի խտրության, չեն կարող չխարազանել Վատիկանի այդ քաղաքականությունը, որպես հակաքրիստոնեական, հակադեմոկրատական և հակաազգային»։

Բանաձևի մեջ ընդգծվում է, որ խորհրդակցությունը կտրուկ կերպով տարբերու-

թյուն է դնում կաթոլիկ եկեղեցու քահանայապետության, Հռոմի պապի գլխավորությամբ, և Վատիկանի հանցագործություններին անմեղսակից հավատացյալ կաթոլիկների մասսաների դիմաց։

Պրավոսլավ եկեղեցիների վերաբերմունքը այսպես կոչված էկումենիկական (տիեզերական) շարժմանը հարցի առթիվ խորհրդակցությունը լիակատար միասնականությամբ ընդդեմ արտահայտվեց էկումենիկական շարժման ժամանակավոր կենտրոն— Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կողմից 1948 թվի օգոստոսին Ամստերդամ քաղաքում հրավիրվելիք առաջին Գլխավոր Ասամբլեային մասնակցելուն, քանի որ այդ շարժումը հետապնդում է, գլխավորապես, քաղաքական, հակադեմոկրատական, բայց ոչ եկեղեցական նպատակներ։

Միաժամանակ խորհրդակցությունը ընդունեց «Դիմում ամբողջ աշխարհի քրիստոնյաներին» ուղղված, որով կոչ է արվում պայքարել հանուն խաղաղության և ընդդեմ պատերազմի հրձիգների։

Օրակարգի մնացած հարցերի նկատմամբ նույնպես միասնական համաձայնեցուցիչ որոշումներ են ընդունվել։

Խորհրդակցության բոլոր որոշումները ստորագրել են.—

Մոսկվայի և համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսին,

Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Կալլիստրատը,

Սերբիական Պատրիարք Գավրիիլը,

Ռումինական Պատրիարք Յուստինիանը,

Բուլղարիայի Էկզարխ՝ Սոֆիայի միտրոպոլիտ Ստեփանը,

Ալեքսանդրիայի և Անտիոքի պրավոսլավ եկեղեցիների կողմից, պատրիարքներ Քրիստաֆորի և Ալեքսանդրի լիազորությամբ, Էմեսի միտրոպոլիտ Ալեքսանդրը,

Ալբանական պրավոսլավ եկեղեցու կողմից՝ Կորչայի եպիսկոպոս Պահսին,

Լեհական պրավոսլավ եկեղեցու կողմից՝ Բելոստոկի և Բելսկու արքեպիսկոպոս Տիմոֆեյը,

Չեխոսլովակիայի պրավոսլավ եկեղեցու կողմից՝ Պրագայի և Չեխիայի արքեպիսկոպոս Ելևֆերիյը։

ԱՎՏՈԿԵՖԱԼ ՊՐԱՎՈՍԼԱՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԳԼՏՆԸՎԵԼՈՒ ԱՌԹԻՎ

Ռուսաց պրավոսլավ եկեղեցու ավտոկեֆալության 500-ամյակի առթիվ հուլիսի 8-ին սկսված եկեղեցական տոնակատարությունները ավարտվեցին հուլիսի 18-ին։ Բացի այն պատվիրակություններից, որոնց ժամանման մասին հաղորդվել է հուլիսի 8-ին, հետագայում ժամանել է Հունական եկեղեցու պատվիրակությունը՝ Կավալայի միտրոպոլիտ Քրիզոստոմոսի գլխավորությամբ և Կոնստանտինոպոլսի եկեղեցուց լոացուցիչ ժամանել են Ռոդոսի միտրոպոլիտ Տիմոֆեյը ու ավագ երեց Կոնստանտին Մարոտայկիսը։

Հուլիսի 8-ին եկեղեցական տոնակատարությունների բացումը տեղի ունեցավ Բոգոյավլենսկու պատրիարքական տաճարում աղոթքով, որին ներկա էին տոնակատարությունների առթիվ ժամանած բոլոր եկեղեցական պատվիրակությունները. դրանից հետո Սոկոլնիկիի Վոսկրեսենսկու տաճարում կայացավ հանդիսավոր նիստը, որը բացվեց պատրիարք Ալեքսիի ներածական ճառով։

Ռուսական եկեղեցին ողջունեցին— Կոնստանտինոպոլսի պատրիարքի էկզարխ՝ Փիատիրի միտրոպոլիտ Գերմանոսը, Անտիոքի Եկեղեցու անունից՝ Էմեսի միտրոպոլիտ Ալեքսանդրը, Վրաստանի պատրիարք-կաթողիկոս Կալլիստրատը, Սերբական պատրիարք Գավրիիլը, Ռումինական պատրիարք Յուստինիանը, Բուլղարական էկզարխ՝ Սոֆիայի միտրոպոլիտ Ստեփանը, Ալբանական եկեղեցու անունից՝ Կորչայի եպիսկոպոս Պահսին, Լեհական եկեղեցու անունից՝ Բելոստոկի և Բելսկու արքեպիսկոպոս Տիմոֆեյը։

Ռուսական եկեղեցին ողջունեց նաև ամենայն հայոց պատրիարք-կաթողիկոս Գևորգ Զ-ը։

ՍՍՌՄ կառավարության անունից ողջույնի խոսքով հանդես եկավ ՍՍՌՄ Մինիստրների Սովետին կից ռուսաց պրավոսլավ եկեղեցու գործերի Խորհրդի նախագահ Գ. Գ. Կարպովը։

Նիստին որոշում ընդունվեց ողջույնի հեռագիր հղել Սովետական Կառավարության Ղեկավար Ի. Վ. Ստալինին։

Եկեղեցական պատվիրակությունները Մոսկվայում գտնվելու ժամանակամիջոցում մասնակցել են եկեղեցական արարողություններին, ինչպես պատրիարքական տաճարում, նույնպես և Մոսկվայի մյուս տաճարներում. նրանք դիտել են մետրոն, թանգարանները, պատկերասրահները և ուղևորություն են կատարել Մոսկվայի անվան ջրանցքով։

Ի պատիվ ժամանած պատվիրակություն-

ների Ալեքսի պատրիարքի կողմից հուլիսի 12-ին ճաշկերույթ է տրվել։

Հուլիսի 15-ին տեղի է ունեցել տոնակատարությունների առթիվ բոլոր ժամանակների ընդունելություն Խորհրդի նախագահ Գ. Գ. Կարպովի մոտ։

Հուլիսի 16-ին պատրիարքի կողմից բոլոր պատվիրակությունները հրավիրվել էին հոգևոր համերգի, որը տեղի ունեցավ Մոսկվայի Պետական կոնսերվատորիայում։

Հուլիսի 18-ին տեղի ունեցավ հանդիսավոր մաղթանք Տրոիցե-Սերգիևյան մենաստանում և եկեղեցական տոնակատարությունների փակում։

Հուլիսի 19-ին և 20-ին պատվիրակությունները, ըստ իրենց արտահայտած ցանկության, մեկնեցին Լենինգրադ, Կիև, Թբիլիսի։

ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ՊՐԱՎՈՍԼԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ ՅՈՒՍՏԻՆԻԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսաց պրավոսլավ եկեղեցու ավտոկեֆալության 500-ամյակի առթիվ նրա տոնակատարություններին ներկա գտնվելուց հետո Ռումինական եկեղեցու Պատրիարք Յուստինիանը Մոսկվայից մեկնելուց առաջ ՏԱՍՍ-ի թղթակցին հանձնեց հետևյալ հայտարարությունը.—

«Գողնելով Մոսկվան, մենք առաջին հերթին մեր խանդավառությամբ լի մտքերն ուղղում ենք Մեծ Ստալինին և նրա արժանավոր աշխատակիցներին։ Նրանց վիթխարի գործունեությունը վերականգնման բնագավառում հաջողությամբ գարգանում է հանուն Սովետական Միության ժողովուրդների դաստիարակության, առողջության, լավագույն կյանքի ու երջանկության։ Մոսկվայում մեր գտնվելու 15 օրվա ընթացքում, ինչպես և այն 15 օրերին, որոնց ընթացքում մենք այցելեցինք Միության զանազան մարզերն ու քաղաքները, մենք համոզվեցինք, որ սովետական ժողովուրդների ղեկավարների ամբողջ հոգսը ուղղված է երկրի աշխատավորների բարձր կենսամակարդակի ստեղծման ու ապահովման կողմը։

Մենք մեր երկիրն ենք վերադառնում հիացած սովետական ժողովուրդների ստեղծագործ աշխատանքի վերելքով, լի հոգևոր նվերներով, որ ստացանք պրավոսլավ եկեղեցու պետի հետ ունեցած տեսակցությունից և Սովետական Միության ողջ հոգևոր դասից ու հավատացյալ ժողովրդից, որը օգտվում է դավանանքի լիակատար ազատությամբ։

Նորին Սրբազնագույն Պատրիարք Ալեքսին և ռուսաց պրավոսլավ եկեղեցու բոլոր ղեկավարները վայելում են հավատացյալ ժողովրդի սերը և Երկրի Կառավարության հարգանքը։

Այն սիրայիրության ու սիրո հանդեպ, որով շրջապատել էին մեզ հոգևոր դասն ու հավատացյալ ժողովուրդը, և անձամբ մեր ու ռումինական պրավոսլավ եկեղեցու պատվիրակության անդամների նկատմամբ տածված ուշադրության հանդեպ, մենք իսկապես զգացված ենք և մեր գոհունակությունն արտահայտելով հավաստիացնում ենք նրանց մեր եղբայրական սիրո, մեր անկեղծ բարեկամության, ինչպես և երիտասարդ Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի հավատացյալ ժողովրդի անկեղծ բարեկամության առկայության նկատմամբ։

ՅՈՒՍՏԻՆՅԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔ Ռ. Ժ. Ռ.

Մոսկվա, 3 հոկտեմբեր 1948 թ.

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ ՄՈՍԿՎԱ՝ ՌՈՒՍԱՑ ՊՐԱՎՈՍԼԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՎՏՈԿԵՖԱԼՈՒԹՅԱՆ 500-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Այն տարվա մայիսի 28-ին Ս. Էջմիածին ժամանեց Ռուսաց պրավոսլավ Եկեղեցու Սրբազնագույն Պատրիարք Ալեքսիի պատվիրակությունը՝ Նորին Ս. Օծություն Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ին Մոսկվա հրավիրելու, որպես պատվավոր հյուր, Ռուսաց պրավոսլավ Եկեղեցու ավտոկեֆալության 500-ամյա հոբելյանական տոնակատարություններին ներկա գտնվելու համար։

Ռուսաց պրավոսլավ Եկեղեցու ավտոկեֆալության 500-ամյա հոբելյանական հանդիսավոր տոնակատարություններին մասնակցում էին ոչ միայն Սովետական Միության բոլոր վայրերից ժամանած եկեղեցական պատվիրակությունները, այլ և արտասահմանյան բոլոր պրավոսլավ եկեղեցիների պատվիրակությունները։

Տասն օր տևող ժողով-հանդիսություններին Նորին Վեհափառությունը մասնակցում էր ոչ թե որպես անդամակից, այլ որպես բարձրաստիճան պատվավոր հյուր, հրավիրված Մոսկվայի և Համայն Ռուսիո Սրբազնագույն Պատրիարք Ալեքսիի կողմից, ի նշան այն խորը հարգանքի, որ Ռուսաց պրավոսլավ Եկեղեցու Պետը տածում է հանդեպ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, հանդեպ ինքնիշխան և վեհիրավ Ս. Էջմիածնի ու նրա Ազգընտիր Աթոռակալի։

Նորին Վեհափառությունը սիրով ընդունելով Ռուսաց պրավոսլավ Եկեղեցու Պետ Պատրիարք Ալեքսիի հրավերը և գրավոր համաձայնություն հայտնելով այս մասին, բարոյական պարտականություն համարեց, իր իսկ ներկայությամբ Ռուսաց Եկեղեցու այդ նշանակալից տարեթվի նշմանը, փոխադարձ հարգանքը մատուցել Ռուսաց պրավոսլավ Եկեղեցուն ու նրա Արժանընտիր Պետին։

Վեհափառ Հայրապետը հուլիսի 1-ին շքախմբի ուղեկցությամբ գնացքով Երևանից Մոսկվա մեկնեց։ Նորին Ս. Օծության շքախմբի կազմի մեջ մտնում էին Նոր-Նախիջևանի ու Բեսարաբիայի թեմի Առաջնորդ Տ. Կարապետ Եպիսկոպոսը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Ստեփան Կամսարականը և Գերագույն Հոգևոր Խորհրդի ու Վեհի անձնական քարտուղար Հովհաննես Ագուլյանը։

Նորին Վեհափառությունը հուլիսի 2-ին շքախմբի ուղեկցությամբ հասավ Թբիլիսի, որտեղից, կարճատև դադարից հետո, գիշերվա ճեպընթացով շարունակեց իր ուղևորությունը։ Այդ նույն ճեպընթաց գնացքի միջազգային վագոնով, Վեհի հետ միասին, Մոսկվա էր ուղևորվում, եկեղեցական տոնակատարություններին մասնակցելու համար, նաև Վրաց Կաթողիկոս Կալլիստրատը՝ իր շքախմբի հետ։ Նորին Վեհափառությունը դեռ նոր էր տեղավորվել իրեն հատկացված կուպեում, երբ Վրաց Կաթողիկոսի ներկայացուցիչը ներկայանալով հայտնեց, որ Նորին Վեհափառություն Վրաց Կաթողիկոս Կալլիստրատը ցանկանում է տեսնվել Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ։ Քիչ անց կուպե մտավ Վրաց Կաթողիկոս Կալլիստրատը և եղբայրակից ազգերի երկու ծերունազարդ հայրապետները ողջագուրվեցին կարոտա-

կեզ։ Հուզիչ էր տեսնել երկու ալեզարդ հայրապետների միմյանց նկատմամբ ունեցած անկեղծ զգացմունքների արտահայտությունը և գուրգուրալից վերաբերմունքը։ Ջնայած իր 82-ամյա հասակին և հյուծված առողջության, Վրաց Կաթողիկոսը միանգամայն կայտառ, զվարթ, կատակասեր ու լավ զրուցակից է։ Այնուհետև նրանց հանդիպումները և անուշ զրույցները շարունակվեցին ամբողջ ուղևորության ընթացքում մինչև Մոսկվա հասնելը։

Ճեպընթացը հուլիսի 4-ի առավոտյան հասավ Լոստով։ Նոր Նախիջևանի եկեղեցիների քահանաներն ու եկեղեցական խորհուրդների անդամները կայարան էին եկել Նորին Վեհափառության տեսությանն արժանանալու համար։ Նորին Վեհափառությունը հաճեց ընդունել նրանց իր վագոնում։ Ողջույններից հետո Վեհափառ Հայրապետը օրհնելով Նոր-Նախիջևանի հայ հավատացյալներին, հորդորեց հավատարիմ ծառայել Հայ Եկեղեցուն ու Հայրենիքին։ Վեհի Ս. Աջը առնելուց հետո քահանաներն ու եկեղեցական խորհուրդների անդամները գոհ սրտով և ուրախ տրամադրությամբ թողեցին վագոնը։ Ճեպընթացը թափով պոկվեց տեղից և շարունակեց իր ճանապարհը դեպի Մոսկվա։

Այդ և հաջորդ օրերին ճեպընթացը սլանում էր Հայրենական Մեծ Պատերազմում հավերժ փառքի պսակի արժանացած մի շարք քաղաքների, ավանների ու գյուղերի միջով, որոնք կարճատև ժամկետում բուժելով անարգ թշնամու հասցրած վերքերը ապրում էին լիարյուն կյանքով։

Հուլիսի 5-ն է։ Ճեպընթացը ուրախ սուլոցով մոտենում էր Մոսկվային։ Մի պահ ևս, և ահա նա կանգ է առնում հսկա կայարանում։

Նախապես տեղեկացած լինելով Վեհափառ Հայրապետի Մոսկվա ժամանման մասին, նրան դիմավորելու համար կայարան էին եկել միտրոպոլիտ Նիկոլայը, շրջապատված բազմաթիվ եպիսկոպոսներով ու աշխարհականներով, ինչպես նաև Մոսկվայի հայ հավատացյալ համայնքը՝ իր քահանայի առաջնորդությամբ։

Երբ Վեհափառ Հայրապետը վագոնից ցած էր իջնում, կինոնկարահանները և լուսանկարիչները սկսեցին անմիջապես ժապավենի վրա առնել նրա Մոսկվա ժամանման տեսարանները։

Թարի գալուստի բարեմաղթություններից ու ողջույններից հետո Նորին Վեհափառությունը իր ուղեկիցների ու դիմավորողների հետ միասին առաջնորդվեց կայարանի հատուկ հանգստասենյակը։ Այստեղ Մոսկվայի հայ հավատացյալ համայնքի անունից թարի գալուստի ու ողջույնի ուղերձի ընթերցումով հանդես եկավ Տ. Խաչատուր քահանա Տեր-Հարությունյանը։ Վեհափառ Հայրապետը իր շնորհակալությունը հայտնելով Մոսկվայի հայ համայնքին, օրհնեց նրան։ Ուղերձի ընթերցմանը ներկա էին Վրաց Կաթողիկոս Կալլիստրատը՝ իր շքախմբով և ռուս բարձրաստիճան հոգևորականությունը՝ միտրոպոլիտ Նիկոլայի գլխավորությամբ։

Ապա միտրոպոլիտ Նիկոլայի կարգադրությամբ Կրասնոգարի թեմի Առաջնորդ Ցլավիան Սպիսկոպոսը Վեհափառ Հայրապետին, իր շքախմբի հետ միասին, առաջնորդեց «Մոսկվա» մեծ հյուրանոցը, ուր նախապես Նորին Վեհափառության համար առանձնացված էր «լյուքս» տիպի համար, բաղկացած երեք սենյակից՝ իր բոլոր հարմարություններով։ Շքախմբի անդամների համար ևս առանձնացված էին առանձին-առանձին համարներ։

Հոբելյանական տոնակատարությունների ծրագրով նախատեսված էր հուլիսի 1—7-ը Մոսկվայի տեսարժան վայրերը դիտելու համար էքսկուրսիաներ կազմակերպել այն պատվիրակությունների համար, որոնք Մոսկվա կժամանեն մինչ պաշտոնական հանդեսի բացման օրը՝ հուլիսի 8-ը։ Վեհափառ Հայրապետը իր տրամադրության տակ երկու օր ուներ այդ էքսկուրսիաներին մասնակցելու համար, բայց նա հաճեց դրա փոխարեն այդ ժամանակամիջոցն օգտագործել մի շարք պաշտոնական այցելություններ կատարելու համար։

Հուլիսի 6-ին, ցերեկվա ժամի 1-ին, Վեհափառ Հայրապետը, իր շքախմբի ուղեկցությամբ, Ռուսաց Պատրիարքարանում այցելեց Մոսկվայի և Համայն Ռուսիո Սրբազնագույն Պատրիարք Ալեքսիին։

Պատրիարքարանի մուտքի մոտ սպասող լուսանկարիչները նկարահանեցին Նորին Վեհափառության ժամանման տարբեր մոմենտները։ Պատրիարքարանի գավթում Վեհափառ Հայրապետին ընդառաջ եկավ և դահլիճ առաջնորդեց միտրոպոլիտ Նիկոլայ Կրուտիցկին։ Մի պահ անց դահլիճ է մտնում Նորին Վեհափառությունն Պատրիարք Ալեքսին, որը Վեհափառ Հայրապետի հետ ողջագուրվելուց հետո մտերմական զրույցի ընթացքում հետաքրքրվում է Վեհի առողջական վիճակով, նրա ուղևորության և Մոսկվայում նրա համար ստեղծված հարմարությունների գոհացուցիչ լինելու հանգամանքներով և այլն։ Վեհափառ Հայրապետը ևս իր հերթին հետաքրքրվում է Պատրիարքի առողջական վիճակով, արևշատություն մաղթելով

նրան։ Տասնհինգ րոպե տևող այս պաշտոնական տեսակցությունից հետո Վեհը հրաժեշտ է տալիս Ռուսիո Պատրիարքին և իր շքախմբով այցելության գնում ՍՍՌ Միության Մինիստրների Սովետին կից Ռուսաց պրավոսլավ Եկեղեցու գործերի Խորհրդի նախագահ Գ. Գ. Կարպովին։ Թե՛ նախագահի և թե՛ Խորհրդի պատասխանատու աշխատակիցների հետ տեղի ունեցած հանդիպումն ու զրույցը ջերմ ու մտերմական էր։

Պաշտոնական այս այցելություններից հետո Վեհափառ Հայրապետը վերադառնում է հյուրանոց։

Հաջորդ օրը, հուլիսի 7-ին, Նորին Վեհափառությունը այցելում է ՍՍՌ Միության Մինիստրների Սովետին կից կրոնական պաշտամունքների Խորհրդի նախագահ Ի. Վ. Պոլյանսկին։ Այս հանդիպմանը ներկա էր Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետ-ին կից Հայ եկեղեցու գործերի Խորհրդի նախագահ Ս. Ն. Հովհաննիսյանը։

Հուլիսի 8-ը հոբելյանական հանդեսի պաշտոնական բացման օրն էր։ Այդ օրը, ցերեկվա ժամը 11-ին, Պատրիարքական Տաճարում տեղի ունեցավ մաղթանք։ Մաղթանքին ներկա էին Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Զ-ը, Կ. Պոլսի Տիեզերական Պատրիարքի ներկայացուցիչ միտրոպոլիտ Գերմանոսը, Վրաց Կաթողիկոս Կալիստրատոսը, Սերբիայի Պատրիարք Գավրիիլը, Ռումինիայի Պատրիարք Յուստինիանը, Բուլղարիայի էկզարխ՝ Սոֆիայի միտրոպոլիտ Ստեփանը, Անտիոքի Պատրիարքի ներկայացուցիչ միտրոպոլիտ Ալեքսանդրը, Ալբանիայի միտրոպոլիտ Պախսին, ժամանած բոլոր պատվիրակությունների անդամներ, ինչպես նաև բազմաթիվ այլ միտրոպոլիտներ, արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ, մաղդասետներ, քահանաներ և աշխարհականներ։ Մաղթանքը վերջացավ ժամը 12 անց 30 րոպեին. այնուհետև Պատրիարքարանում տեղի ունեցավ մեծ շքեղությամբ կազմակերպված ընդունելություն-նախաճաշ։

Երեկոյան ժամը 5-ին Սոկոլնիկիի Վոսկրեսենսկի տաճարում տեղի ունեցավ հոբելյանական հանդեսի բացումը։ Բացման ջերմ ճառով հանդես գալով Ս. Պատրիարք Ալեքսին ողջունեց Ռուսաց պրավոսլավ եկեղեցու ավտոկեֆալության 500-ամյա պանծալի հոբելյանը և հարատևություն մաղթեց Պրավոսլավ եկեղեցուն։ Նա միաժամանակ իր ջերմագին շնորհակալությունը հայտնեց բոլոր նրանց, որոնք Մոսկվա են ժամանել Ռուսաց պրավոսլավ եկեղեցու նշանակալից հոբելյանը պանծացնելու համար։

Պատրիարքի բացման խոսքից հետո ելույթ ունեցավ ՍՍՌ Միության Մինիստրների Սովետին կից Ռուսաց պրավոսլավ եկեղեցու գործերի Խորհրդի նախագահ Գ. Գ. Կարպովը, որը կառավարության և Խորհրդի անունից ողջունեց Ռուսաց պրավոսլավ եկեղեցու նշանակալից տոնը։

Այնուհետև ողջույնի ճառերով հանդես եկան Կ. Պոլսի Պատրիարքի ներկայացուցիչ միտրոպոլիտ Գերմանոսը, Սերբիայի Պատրիարք Գավրիիլը, Բուլղարիայի էկզարխ՝ Սոֆիայի միտրոպոլիտ Ստեփանը, Ռումինիայի Պատրիարք Յուստինիանը, Ալբանիայի միտրոպոլիտ Պախսին և ուրիշներ։

Ողջույնի ճառով հանդես եկավ Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոսը։ Վեհափառ Հայրապետի ճառը ևս ունկնդիրների կողմից լսվեց մեծ ուշադրությամբ ու հետաքրքրությամբ։ Պրավոսլավ եկեղեցիների պատվիրակությունները առանձին հարգանք էին տածում Նորին Վեհափառություն Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդեպ. ուրախալի էր նրանց համար տեսնել պրավոսլավ եկեղեցիների համաձայնության ընտանիքում Հայ Եկեղեցու Պետի հանդես գալը։

Ողջույնի ճառերից հետո լսվեց Մոսկվայի Հոգևոր ճեմարանի դոցենտ Ն. Ի. Մ-ովսյանի զեկուցումը՝ «Ռուսաց պրավոսլավ Եկեղեցու ավտոկեֆալության 500-ամյա հոբելյանը» թեմայով, որով և ավարտվեց հոբելյանական հանդիսավոր նիստը։

Հուլիսի 9-ին և 10-ին Սոկոլնիկիում տեղի ունեցան խորհրդակցության պլենար նիստերը, ուր մի շարք զեկուցումներ լսվեցին հետևյալ խնդիրների շուրջը.

ա. Վատիկանը և Պրավոսլավ Եկեղեցին.

բ. Անգլիքան Եկեղեցու նվիրապետության մասին.

գ. Եկեղեցական օրացույցի մասին.

դ. Էկումենիկական շարժումը և Պրավոսլավ Եկեղեցին.

Վերոհիշյալ խնդիրների առթիվ որոշումներ ընդունելու համար ընտրվեցին չորս հանձնաժողովներ, որոնց հանձնարարվեց համաաստուսխան բանաձևեր մշակել։

Հուլիսի 10-ին, Երկրորդ պլենար նիստում, բոմանդակայից ճառով հանդես եկավ Նորին Վեհափառություն Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որը խոսեց Վատիկանի և նրա Հայ Եկեղեցու հանդեպ վարած քաղաքականության մասին։ Վեհափառ Հայրապետը թեև շատ հակիրճ կերպով, բայց զորավոր փաստերով դիմակազերծ արեց Հռոմի պապ Պիոս 12-րդի հակաքրիստոնեական, ռազմա-

տենչ քաղաքականությունը, պարսավեց Հռոմի Եկեղեցու կողմից օրինականացված հավատորությանը և հատկապես ծանրացավ կարդինալ Աղաջանյանի հայադավ ու հականերգաղթ գործունեության վրա՝ նշավակելով հայրենադարձության դեմ ծառանալու նրա ողորմելի փորձերը։

Դժվար է նկարագրել այն խորը տպավորությունը, որ թողեց ոմնկնդիրների վրա Վեհափառ Հայրապետի այս ելույթը։ Նորին Վեհափառությունն Ռուսիո Պատրիարք Ալեքսին հատուկ շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին նրա արտասանած փայլուն ճառի համար։ Հուզիչ էր մանավանդ այն մոմենտը, երբ Անտիոքի Պատրիարքի ներկայացուցիչ ծերունազարդ միտրոպոլիտ Ալեքսանդրը, արցունքն աչքերին, մոտեցավ Նորին Վեհափառությանը և նրա աջը սեղմելով իր հիացմունքը հայտնեց, չմոռանալով միաժամանակ իր հարգանքը արտահայտելու տոկուն ու ազնիվ հայ ժողովրդի հանդեպ։ Այս առթիվ իրենց հիացմունքն ու համակրանքը արտահայտեցին նաև արտասահմանյան պատվիրակությունների մի շարք պետեր, ինչպես օրինակ Ռումինիայի Պատրիարք Ցուստինիանը և Բուլղարիայի էկզարխ՝ Սոֆիայի միտրոպոլիտ Ստեփանը։

Զատիկանց հաճելի էր տեսնել արտասահմանից ժամանած եկեղեցական պատվիրակությունների պատկառանքն ու համակրանքը Հայ Եկեղեցու և Ս. Էջմիածնի հանդեպ։ Առիթից օգտվելով Նորին Վեհափառությունը կարևոր համարեց անձնական կապերի ու մտերության ստեղծման սկիզբը դնել բոլոր քույր եկեղեցիների Պետերի հետ, այսպիսով նպաստելով Հայ Եկեղեցու ու Հայ ժողովրդի հանդեպ նրանց ունեցած բարյացակամ տրամադրությունների է՛լ ավելի խորացմանը։

Թե՛ Ռուսաց Պատրիարքությունը և թե՛ Սովետական կառավարության ներկայացուցիչները Նորին Վեհափառությանը ընդունեցին իր կոչման վայել հանդիսավորությամբ ու սրտառուչ սիրալիրությամբ, մեծապես ապահովելով Վեհափառ Հայրապետի հանգիստն ու առողջությունը և միաժամանակ բոլոր հնարավորությունները ընձեռեցին, որպեսզի թե Մոսկվայում և թե Լենինգրադում նրա համար օգտավետ ու ախորժելի անցնեն օրերը։

Մոսկվայի տեսարժան վայրերը դիտելու համար տոնակատարության ամբողջ ժամանակամիջոցում Պատրիարքարանը նախօրոք

Վեհափառ Հայրապետի ժամանումը Լենինգրադ

մշակված ծրագրով էքսկուրսիաներ էր կազմակերպել։ Տոնակատարությունների հետո էլ կազմակերպել էր հեռավոր էքսկուրսիաներ հետևյալ երեք մարշրուտներով— Լենինգրադ, Կիև, Թբիլիսի։

Այդ էքսկուրսիաներից Վեհափառ Հայրապետին հատկապես մեծ հաճույք պատճառեց Մոսկվայի անվան ջրանցքով կատարած զբոսանքը, որ տեղի ունեցավ հուլիսի 14-ին։ Այս ջրանցքը իր հոյակապությամբ, գեղեցկությամբ ու տեխնիկայի կատարելությամբ հավասարը չունի աշխարհում և հանդիսանում է սովետական մարդկանց ստեղծագործ մտքի վիթխարի կոթողներից մեկը։

Հոբելյանական տոնակատարության ծրագրի համաձայն, հուլիսի 14-ին, առավոտյան ժամը 10-ին բոլոր պատվիրակությունները հավաքվել էին Խիմկիի նավակայանը ու տեղավորվել շոգենավի վրա։ Խիմկիի նավակայանը լեփ-լեցուն էր բազմահազար հասարակությամբ, որը ուշի-ուշով ու մեծ հետաքրքրությամբ դիտում էր այդ արտասովոր հանդիսությունը-էքսկուրսիան։

Ժամը 10-ը անց 15 րոպեին ժամանում է Նորին Վեհափառություն Ռուսիս Պատրիարք Ալեքսին և տասը րոպեից հետո, ժամը 10-ը անց 25 րոպեին շոգենավը ջրանցքով առաջ է շարժվում։ Զբոսանքը պետք է տևեր 7—8 ժամ։ Ժամը 12—1-ը շոգենավի վրա հյուրերին նախաճաշ է տրվում։ Այնուհետև մի որոշ ժամանակ անց շոգենավը, 60 կիլոմետր ճանապարհ կտրելուց հետո, անցնում է առաջին շլյուզն ու կանգ առնում։ Շոգենավի առջևում ու հետևում բարձրանում են արհեստական պատնեշներ. ջուրն սկսում է արագ կերպով իջնել ու ամբարվել ջրանցքի այդ հատվածի կողքերին գտնվող հսկայական ջրամբարներում։ Ջրի նվազման զուգընթաց շոգենավն էլ սկսում է իջնել։ Այդ գործողությունը տևում է 15 րոպե, որից հետո վերացվում է շոգենավի առջևի պատնեշը և շոգենավը սկսում է առաջ սլանալ արդեն ութ մետր բարձրություն ունեցող ջրանցքի շարունակությամբ։ Մեկ-երկու կիլոմետր ճանապարհ անցնելուց հետո շոգենավը նորից դառնում ու քիչ առաջ անցած շլյուզին հասնելով նորից կանգ առնում։ Այս անգամ էլ տեղի է ունենում հակառակ գործողությունը. ջուրը դուրս հոսելու փոխարեն ներս է հոսում և դրա հետ զուգընթաց շոգենավը աստիճանաբար վեր է բարձրանում։ 15 րոպե տևող այս գործողությունից հետո վերաշը և շոգենավը սկսում է առաջ սլանալ արդեն ութ մետր բարձրություն ունեցող ջրանցքի շարունակությամբ։ Մեկ-երկու կիլոմետր ճանապարհ անցնելուց հետո շոգենավը նորից դառնում ու քիչ առաջ անցած շլյուզին հասնելով նորից կանգ առնում։ Այս անգամ էլ տեղի է ունենում հակառակ գործողությունը. ջուրը դուրս հոսելու փոխարեն ներս է հոսում և դրա հետ զուգընթաց շոգենավը աստիճանաբար վեր է բարձրանում։ 15 րոպե տևող այս գործողությունից հետո վերա-

Լենինգրադում. ի պատիվ պատվիրակությունների կազմակերպված ընդունելությանը Վեհափառ Հայրապետը բաժակաճառ է ասում։

նում է առջևի պատնեշը ու շոգենավը այս անգամ էլ արդեն ութ մետր բարձրացած լինելով սկսում է սլանալ դեպի Մոսկվա։ Պատվիրակությունների անդամները հիացած էին այդ հոյակապ կառուցումով ու հափշտակված դիտում էին սովետական տեխնիկայի սքանչելի կատարելությունը։ Ժամը 2-ը անց 30 րոպեին շոգենավի վրա փառավոր ճաշ տրվեց, որը տևեց մոտ երկու ժամ. հյուրերը և՝ ճաշում էին և՝ դիտում բնության իրար հաջորդող, մեկը մյուսից ավելի քան գեղեցիկ տեսարանները։

Ժամը 5-ին շոգենավը կանգ է առնում Խիմկիի նավակայանում։ Պատվիրակությունները շրանցքով կատարած զբոսանքի սքանչելի տպավորության տակ, գոհ սրտով Խիմկիի նավակայանից ավտոմեքենաներով ուղևորվում են դեպի իրենց հյուրանոցները։

Նորին Վեհափառությանը մեծ բավականություն պատճառեց նաև Մոսկվայի ու Լենինգրադի թանգարանների դիտումը և դրանց մեջ հատկապես Լենինգրադի պաշտպանության թանգարանը անշնչելի տպավորություն թողեց։ Այս թանգարանը պատկերում է Լենինգրադի 900-օրյա բլոկադայի բոլոր սարսափներն ու դժվարությունները և Լենինգրադցիների այդ սարսափների ու անլուր զրկանքների բովում կոփվող պողպատե կամքը, թշնամուն հաղթելու նրանց վառ հավատը։ Լենինգրադցիների լեգենդար սրխրագործությունները, անօրինակ անձնազոհությունները հավերժ փառքի պսակ հյուսեցին Հերոս քաղաքի համար։

Հոբելյանական տոնակատարությունների օրերին Վեհափառ Հայրապետը եղավ Մոսկվայի շատ տաճարներում, ուր մեծ բավականությամբ ունկնդրեց հոգևոր երաժշտությունն ու ներկա եղավ թե՛ Ս. Պատարագի և թե՛ եկեղեցական այլ արարողություններին։ Վեհափառ Հայրապետը հատկապես հաճելի տպավորություն ստացավ երգչախմբերի կողմից հոգևոր երգերի բարձրարվեստ ու անթերի կատարումից։

Վեհափառ Հայրապետին մեծ բավականություն պատճառեց նաև հոգևոր համերգի ունկնդրումը, որը կազմակերպել էր Պատրիարքարանը հուլիսի 16-ին, Մոսկվայի Պետական կոնսերվատորիայի մեծ դահլիճում։ Համերգին մասնակցում էին նաև սովետական ականավոր երգիչներ։

Հուլիսի 19-ին Նորին Վեհափառությունը իր շքախմբով էքսկուրսիայի մեկնեց Լենինգրադ, ուր մնաց երեք օր։ Այստեղ ևս Նորին Վեհափառությանը վայելուչ ընդունելություն ցույց տրվեց։

Ամեն գովեստից բարձր է այն հյուրասիրությունը, որ ցույց տրվեց հյուրերին հոբելյանական տոնակատարությունների ընթացքում։ Այդ հյուրասիրությունը կրում էր կնիքը անկեղծության, մարդասիրության ու քրիստոնեական սիրո, որոնք այնքան հատուկ են Ռուս մեծ ժողովրդի լայն հոգուն ու բաց սրտին։ Հատկապես պետք է հիշատակել Պատրիարք Այեքսիի կողմից հուլիսի 12-ին, ի պատիվ ժամանած պատվիրակությունների, տրված ճոխ ճաշկերույթը։

Ռուսաց Պատրիարքարանի երկարատև հյուրասիրությունը վայելելուց հետո հուլիսի 31-ին Վեհափառ Հայրապետը ճեպընթացով Մոսկվայից Երևան մեկնեց և բարեհաջող կերպով օգոստոսի 5-ին Ս. Էջմիածին ժամանեց։

Հ. ԱԳՈՒԼՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ՝ ՂՐԻՄԵԱՆ

ՌՈՒՍԱՑ ՊՐԱՎՈՍԼԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՎՏՈԿԵՖԱԼՈՒԹՅԱՆ (ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ) 500-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԸ

ուն տարվա հուլիսի 8—18-ը Մոսկվայում հանդիսավոր կերպով տոնվեց Ռուսաց պրավոսլավ եկեղեցու անկախության ու ինքնուրույնության 500-ամյա հոբելյանը։

Ռուսաց եկեղեցու այս փառահեղ հոբելյանական տոնակատարություններին ներկա էին և մասնակցում էին բոլոր պրավոսլավ եկեղեցիների ներկայացուցիչները։

Հոբելյանական օրերին Մոսկվա էին ժամանել Կոնստանտինոպոլսի տիեզերական եկեղեցու Պատրիարքի ներկայացուցիչ Ֆիատիրի միտրոպոլիտ Գերմանոսը, Անտիոքի եկեղեցու Պատրիարքի ներկայացուցիչ Էլեսի միտրոպոլիտ Ալեքսանդրը, Վրաց եկեղեցու Պատրիարք-Կաթողիկոս Կալլիստրատը, Սերբական եկեղեցու Պատրիարք Գավրիիլը. Ռումինական եկեղեցու Պատրիարք Յուստինիանը, Բուլղարական եկեղեցու ներկայացուցիչ Բուլղարիայի էկզարխ, Սոֆիայի միտրոպոլիտ Ստեփանը, Ալբանական եկեղեցու ներկայացուցիչ Պախի Եպիսկոպոսը, Լեհական եկեղեցու ներկայացուցիչ Բելոստոկի ու Բելսկու Արքեպիսկոպոս Տիմոֆեյը և ուրիշ շատերը։

Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսին նախօրոք հատուկ պատվիրակություն էր ուղարկել Ս. Էջմիածին՝ Նորին Ս. Օծություն Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Ջ-ին Մոսկվա հրավիրելու, որպես պատվավոր հյուր, Ռուսաց եկեղեցու հոբելյանական հանդիսությանց ներկա գտնվելու համար։

Նորին Սրբությունը հուլիսի 1-ին իր շքախմբով Երևանից մեկնելով Մոսկվա հասավ հուլիսի 5-ին։

Նորին Սրբություն Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի հրավերը և Վեհափառ Հայրապետի սիրահոժար համաձայնությունը ներկա գտնվելու Ռուսաց պրավոսլավ եկեղեցու 500-ամյա հոբելյանական տոնակատարությանը պատմական խոշոր նշանակություն ունի երկու քույր եկեղեցիների, հայ և ռուս եկեղեցիների միջև սերտ բարեկամություն ու հարաբերություն ստեղծելու տեսակետից։

Ռուսաց եկեղեցու ավտոկեֆալության 500-ամյա հոբելյանը տոնվեց մեծ հանդիսավորությամբ ու աննկարագրելի փառահեղությամբ։ Հոբելյանական տոնակատարությունները սկսվեցին Բոգոյավլենսկու պատրիարքական տաճարում տեղի ունեցած եկեղեցական արարողություններով։ Տոնակատարությունների ընթացքում Մոսկվայի մի շարք տաճարներում մաղթանքներ, գոհաբանական աղոթքներ, պատարագի արարողություններ տեղի ունեցան ժամանած հյուրերի և Մոսկվայի հոգևորականության մասնակցությամբ։

Հոբելյանական հանդիսավոր նիստի բացումը տեղի ունեցավ Սոկոլնիկիի Վոսկրեսենսկու տաճարում, որտեղ բացման ճառով հանդես եկավ Պատրիարք Ալեքսին։

Ռուսաց պրավոսլավ եկեղեցու 500-ամյա հոբելյանի կապակցությամբ ողջույնի ճառերով հանդես եկան Կոնստանտինոպոլսի Պատրիարքի ներկայացուցիչ Փիատիրի միտրոպոլիտ Գերմանոսը, Անտիոքի եկեղեցու

ներկայացուցիչ Էմեսի միտրոպոլիտ Ալեքսանդրը, Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Կալիստրատը, Սերբիական եկեղեցու Պատրիարք Գավրիիլը, Ռումինական Պատրիարք Նուատինիանը, Բուլղարական էկզարխ՝ Սոֆիայի միտրոպոլիտ Ստեփանը, Ալբանական եկեղեցու ներկայացուցիչ՝ Կորչայի Եպիսկոպոս Պահին, Լեհական եկեղեցու ներկայացուցիչ՝ Բելոստոկի ու Բելսկու Արքեպիսկոպոս Տիմոֆեյը և ուրիշներ։

Ողջույնի ճառով հանդես եկավ Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ը։

ՍՍՌՄ կառավարության անունից ողջույնի ճառով հանդես եկավ ՍՍՌՄ Միխիստրների Սովետին կից ռուսաց պրավոսլավ եկեղեցու գործերի Խորհրդի նախագահ Գ. Կարպովը։

Բոլոր ելույթ ունեցողները նշեցին Ռուսաց պրավոսլավ եկեղեցու այն խոշոր դերը, որը նա խաղացել է ռուս ժողովրդի կրոնա-բարոյական և հասարակական-քաղաքական կյանքում դարեր շարունակ։ Ելույթ ունեցողները միաժամանակ շմոռացան նշելու այն հանդուրժող քաղաքականությունը, որ վարել է Ռուսաց պրավոսլավ եկեղեցին տիեզերական պատրիարքի հանդեպ՝ ճանաչելով նրա առաջնությունը պրավոսլավ եկեղեցիների պատրիարքների մեջ։

Զերք բերելով իր անկախությունը Ռուսաց պրավոսլավ եկեղեցին չխզեց իր կապերը տիեզերական պատրիարքության հետ, որից նա իր հոգևոր մկրտությունն էր ստացել, այլ շարունակեց նրա հանդեպ պահպանել դուստր եկեղեցու հարաբերությունը և այդ հարաբերությունը, չնայած տեղի ունեցած մի շարք քաղաքական իրադարձությունների, շարունակվել է պահպանվել մինչև այսօր։

Հոբելյանական տոնակատարություններին զուգընթաց պրավոսլավ եկեղեցիների ներկայացուցիչները մի շարք եկեղեցական հարցեր քննարկեցին և դրանց վերաբերմամբ համապատասխան որոշումներ ընդունեցին։

Բ

Կիևի մեծ իշխան Վլադիմիրի օրոք, X դարում, քրիստոնեությունը Կ. Պոլսից մ-ատք է գործում Հարավային Ռուսաստան։ Տիեզերական պատրիարքը առաջինը հանդիսացավ, որ Կիև և Հարավային Ռուսաստանի մյուս քաղաքներն ուղարկեց հույն քարոզիչներ, քահանաներ և նշանակեց միտրոպոլիտ։ Նա միաժամանակ ռուսներին հասկանալի սլավոներեն լեզվով ժամակարգության գրքեր ուղարկեց, որպեսզի հեշտացրած լինի քրիստոնեական վարդապետության տարածումը ռուսների մեջ։ Պատմությունից հայտնի է, որ Հարավային Ռուսաստանում հեթանոսությունը համարյա առանց պայքարի տեղի տվեց քրիստոնեության առաջ և այստեղ հիմնվեց մի նոր քրիստոնեական եկեղեցի։

Շուտով նորահիմն Ռուսաց և Կ. Պոլսի եկեղեցիների միջև փոխադարձ կապերն այնքան են սերտանում, որ նրանց միջև ստեղծվում է դուստր և մայր եկեղեցիների փոխհարաբերություն. այդ կապերի սերտացումը վերջնականապես հանգում է Ռուսաց եկեղեցու լիակատար ենթարկմանը Կ. Պոլսի տիեզերական պատրիարքին։ Այսպիսով Ռուսաց եկեղեցու ղեկավարությունը անցնում է տիեզերական պատրիարքի ձեռքը, որը թե նշանակում էր ռուսաց եկեղեցու միտրոպոլիտներին, և թե ռուսական քրիստոնեական համայնքների համար եպիսկոպոսներ ու այլ հոգևորական պաշտոնյաներ ձեռնադրում։ Որպես կանոն պատրիարքը Ռուսաստան էր ուղարկում հույն միտրոպոլիտների, եպիսկոպոսների և այլ հոգևորական անձանց։

Հին դարերից, առաքելական ժամանակներից սկսած սրբազործված սովորություն էր դարձել, իսկ հետագայում էլ տիեզերական ժողովներում վավերացվել այն, որ առաքելական եկեղեցիների օժանդակությամբ առաջացած նորահիմն եկեղեցիները պարտավոր էին ճանաչել մայր եկեղեցու գերիշխանության իրավունքը և որպես նրա ֆիլիալը՝ ենթարկվել նրա իշխանությանը։ Առանց մայր եկեղեցու համաձայնության դուստր եկեղեցին իրավունք չուներ, իրեն անկախ հռչակելու։ Բացի այդ, տիեզերական պատրիարքները Քաղկեդոնի ժողովի 28-րդ կանոնի հիման վրա պնդում էին, որ Թրակիայից հյուսիս գտնվող երկրներում բնակվող քրիստոնյաները պարտավոր են ճանաչել միայն ու միայն Կ. Պոլսի տիեզերական պատրիարքի իշխանությունը և նրա եկեղեցապետական իրավունքը։ Այս հիման վրա էլ տիեզերական պատրիարքներն ու բյուզանդական կայսրները համարվում էին «Աստվածանից ընտրված հայր ամենայն քրիստոնեից», որոնք բնակվում էին թե Բյուզանդիայում, թե Փոքր Ասիայում, թե Իտալիաներում և թե նրանից հյուսիս գտնվող երկրներում։

Գ

Սկզբնական շրջանում, երբ ռուսաց պրավոսլավ եկեղեցին տակավին չուներ իր ինքնուրույն եկեղեցական կանոնադրությունն ու ժամակարգությունը, անշուշտ, նա պետք

է այդ բոլորը փոխ առներ Կ. Պոլսից և այսպիսով ճանաչելով նրա գերիշխանությունը ենթարկվեր նրա հրամաններին ու կարգադրություններին։ Պարզ է, որ նորահաստատ եկեղեցին անմիջապես չէր կարող միանգամից սահմանել նվիրապետության բոլոր օրենքներն ու կանոնները։ Ժամանակ էր պետք աճելու, հասունանալու և եկեղեցական-իրավական փորձ ու գիտություն ձեռք բերելու համար, որից հետո միայն կարելի կլիներ մտածել անկախության մասին։ Այդպիսի ուղիով են ընթացել բոլոր նորահաստատ եկեղեցիները, որոնք այնուհետև ժամանակի ընթացքում հասունանալով ու ամրապնդվելով դարձել են ինքնուրույն ու անկախ։

Պատմական տվյալները վկայում են, որ Կ. Պոլսի պատրիարքի իշխանությունը Ռուսաց պրավոսլավ եկեղեցու նկատմամբ միանգամայն անսահմանափակ է եղել. նրա էր պատկանում Ռուսաստանի համար միտրոպոլիտ նշանակելու իրավունքը. նա իրավունք ուներ նույնիսկ պաշտոնազրկելու ռուս հոգևորականության և ռուսական իշխանությունների կողմից ընտրված միտրոպոլիտին։ Ռուսաստանի միտրոպոլիտը յուրաքանչյուր տարի պատրիարքին որոշ հարկ էր վճարում։ Այս կամ այն անբաստանության դեպքում պատրիարքը իրավունք ուներ կրոնական գերագույն ատյանի առաջ կանգնեցնել Ռուսաստանի միտրոպոլիտին և բարձրաստիճան եպիսկոպոսներին։

Այսպիսով տեսնում ենք, որ Ռուսաստանի միտրոպոլիտները կատարյալ կախումն ունեին Կ. Պոլսի պատրիարքներից և ժամանակի ընթացքում այդ կախումն ավելի քան խորանում էր թուլանալու փոխարեն։ Տիեզերական պատրիարքները աշխատում էին իրենց զորեղ ազդեցության տակ պահել Ռուսաց պրավոսլավ եկեղեցին, որի համար էլ, որպես կանոն, Ռուսաստանի համար ոչ թե ռուս, այլ հույն միտրոպոլիտներ էին նշանակում, առանց հաշվի առնելու ռուս հավատացյալ ժողովրդի ցանկությունը։

Այս իրադրությունը տևեց մոտ 500 տարի։ Այդ ժամանակամիջոցում Ռուսաց պրավոսլավ եկեղեցին աճեց, հզորացավ ու ամրապնդվեց։ Բայց որքան Ռուսաց եկեղեցին պայծառանում էր ու ճոխանում, այնքան էլ տիեզերական պատրիարքները է՛լ ավելի աշխատում էին իրենց ձեռքում ամուր պահել Ռուսաց եկեղեցին և ռուսաց հոգևորականությանը։

Սակայն Ռուսաց պրավոսլավ եկեղեցու պատմության մեջ քիչ չեն դեպքերը, երբ Ռուսաց եկեղեցին ռուս իշխանների (կնյազների) աջակցությամբ կամ առանց այդ աջակցության ըմբոստացել է տիեզերական պատրիարքների իշխանության դեմ, ընտրել է իր միտրոպոլիտներին, որոնք, առանց տիեզերական պատրիարքների կողմից հաստատվելու, վարել են Ռուսաց եկեղեցու գլուխը։ Ռուս միտրոպոլիտներ Սուրբ Իլարիոնը 1051 թվականին և Կլիմենտ Սմոլյատիչը 1147—1155 թ. թ. առանց տիեզերական պատրիարքի համաձայնության ու հաստատման միտրոպոլիտներ դարձան միայն ռուս հոգևորականության ու ռուսական իշխանությունների համաձայնությամբ և հրաժարվեցին ճանաչել Կ. Պոլսի պատրիարքի իշխանությունը։ Ս. Իլարիոնի միտրոպոլիտ ընտրվելը պատրիարքը լռելյայն ընդունեց, որովհետև նա մեծ ժողովրդականություն էր վայելում և սրբի անուն էր վաստակել։ Ինչ վերաբերում էր Կլիմենտ Սմոլյատիչին, ապա վերջինիս պաշտպան է կանգնում մեծ իշխան Իզյասլավ Մստիսլավովիչը, որն ամեն կերպ աշխատում էր Ռուսաց եկեղեցին կտրել, անջատել բյուզանդականից և անկախ ու ինքնուրույն եկեղեցի դարձնել։

Այնուհետև մոնղոլների և թաթարների տիրապետության շրջանում (1240—1480) Ռուսաց պրավոսլավ եկեղեցին համարյա միանգամայն անկախ կերպով ընտրում էր իր եկեղեցու պետերին—միտրոպոլիտներին, քանի որ այդ ժամանակաշրջանում քաղաքական ու կրոնական կապերը խզված էին Բյուզանդիայի հետ։ Այսպես օրինակ, Կիրիլ III միտրոպոլիտը (1247—1280), Սուրբ Պետրոս միտրոպոլիտը (1308—1326), Սուրբ Ալեքսի միտրոպոլիտը (1354—1378), առանց պատրիարքի կողմից հաստատվելու, կառավարել են Կիևի ու համայն Ռուսաստանի միտրոպոլիան։ Հիշյալ միտրոպոլիտները իրենց առաքինի բարոյականությամբ, բարձր հեղինակությամբ, քաղաքական հեռատեսությամբ խոշոր դեր են խաղացել Ռուսաց եկեղեցու պատմության մեջ և անշուշտ չեն նմանվել Կ. Պոլսի պատրիարքի կողմից նշանակված հույն միտրոպոլիտներին։

Ահա հենց այս ժամանակաշրջանում էր, որ Ռուսաց պրավոսլավ եկեղեցին հատկապես ամրապնդվում է և այլևս կարիքը չէր զգում Բյուզանդիայի եկեղեցու կողմից նշանակվող հույն միտրոպոլիտների, քանի որ ինքն ուներ արդեն միանգամայն պատրաստված ու արժանավոր հոգևոր հովիվներ, որոնք, խորապես ըմբռնելով Ռուսաց եկեղեցու հոգևոր կարիքները, կարող էին ստանձնել միտրոպոլիտի պատասխանատու պաշտոնը։

XIV և XV դարերում բյուզանդական եկե-

զեցուց անջատվելու խնդիրը ավելի սուր կերպով է դրվում. այդ դարերի ռուս պետական ու եկեղեցական գործիչները պահանջում էին, որպեսզի Ռուսաստանն ունենա իր անկախ միտրոպոլիտն ու անկախ հոգևոր կառավարությունը։ Պարզ է, որ ռուս կնյազների ու բարձրաստիճան հոգևորականների այդ ձգտումը միանգամայն հակառակ էր ոչ միայն տիեզերական պատրիարքների, այլ և բյուզանդական կայսրների վարած քաղաքականության։ Ջունենալով կանոնական հիմք Ռուսաց եկեղեցուց անպայման հպատակություն պահանջելու համար, նրանք իրենց պահանջները հիմնավորում էին ավանդական սովորույթներով։ Ինչպես տեսանք, Ռուսաց եկեղեցու միտրոպոլիտ նշանակվում ու հաստատվում էին տիեզերական պատրիարքների կողմից. սակայն երբ իրադրությունը որոշ չափով փոխվում է և ռուս հավատացյալները իրենք են սկսում ընտրել իրենց միտրոպոլիտներին, պատրիարքներն իրենց իշխանությունը Ռուսաց եկեղեցու նկատմամբ չկորցնելու համար ստիպված են լինում դիմելու զարտուղի ճանապարհների. նրանք իբրև թե ընդառաջելով ռուս ժողովրդի ու իշխանության ցանկությանը, սկսում են հաստատել ռուս հավատացյալների կողմից ընտրված միտրոպոլիտներին։ Սակայն հաստատելով ռուս միտրոպոլիտներին տիեզերական պատրիարքները չեն մոռանում նրանց կողքին նստեցնել և իրենց կողմից նշանակված ներկայացուցիչներին, որոնք հսկողի դեր էին կատարում։ Պատրիարքի այս ներկայացուցիչները շատ հաճախ խառնվելով Ռուսաց եկեղեցու ներքին գործերին և իշխանություն բանեցնելով հաճախակի դժգոհությունների տեղիք էին տալիս, զայրույթ պատճառելով թե միտրոպոլիտին, թե կնյազներին և թե ժողովրդին։

Դ

XII դարից սկսած Ռուսաց պատմության հորիզոնի վրա փայլել է սկսում Մոսկվան։ Մոսկվայի մեծ իշխանները կատաղի պայքար մղելով թաթարների դեմ, աշխատում էին ոչ միայն ռուսական հողերը ազատագրել թաթարների լծից, այլ և իրենց ենթարկելով մյուս իշխաններին՝ ստեղծել կենտրոնացված զորեղ պետություն։ Սակայն այս բանը Մոսկվայի իշխաններին հաջողվեց իրագործել միայն XV դարում։

Պետական իշխանության կենտրոնը երբ Մոսկվան դարձավ, կարիք զգացվեց, որպեսզի Ռուսաց եկեղեցու միտրոպոլիտները ևս Կիևից փոխադրվեն Մոսկվա. բայց այդ տեղափոխությունից հետո էլ Ռուսաց եկեղեցու միտրոպոլիտները շարունակում են կրել Կիևի և համայն Ռուսաստանի միտրոպոլիտ տիտղոսը։ Մեծ իշխանները Ռուսաց եկեղեցու միտրոպոլիտի աթոռանիստ վայրը Մոսկվան դարձրին այն նկատառումով, որպեսզի նախ իրենց քաղաքական նպատակների համար օգտագործել կարողանան միտրոպոլիտների հեղինակությունը և մյուս կողմից էլ օգտվեն նրանց խելացի խորհուրդներից։ Այս երկու նպատակների համար էլ պատրիարքի կողմից նշանակված հույն միտրոպոլիտները պիտանի լինել չէին կարող։

Ռուսաց եկեղեցու անկախության հարցը հրամայողական պահանջ էր դարձել ոչ միայն նրա ներքին լիակատար աճման շնորհիվ, այլև մի ուրիշ իրադրության շնորհիվ։ Բյուզանդական կայսրությունը, շրջապատված արևելքից աճող օսմանցիներով, ծանր ու մղձավանջային օրեր էր ապրում։ Բյուզանդական կայսրությունը մեկը մյուսի ետևից կորցնում էր իր փոքրասիական երկրները և օսմանական բանակի օղակը սկսել էր ամուր կերպով սեղմել կայսրների երբեմնի փառավոր մայրաքաղաքը։ Այդ հուսահատ կացությունից ելք փնտռող բյուզանդական կայսրներն ու պատրիարքները իրենց հայացքներն ուղղել էին դեպի Հռոմ, Հռոմի պապից փրկություն սպասելով։ Իսկ Հռոմի պապերը գիտեին առիթն օգտագործել իրենց նպատակներին հասնելու համար։ Փրկություն աղերսողներին առաջադրվում է եկեղեցական միություն, հպատակություն Հռոմի եկեղեցուն և պապի ճանաչում որպես եկեղեցու գլուխ։ Հույները համաձայն էին ընդունելու այս պայմանները, միայն թե փրկվեր Բյուզանդիան ու կայսրությունը։ Եվ ահա սկսած 1410 թվականից մինչև Կ. Պոլսի անկումը (1453) բյուզանդական պատրիարքական գահը բարձրացան մի շարք ունիթոր պատրիարքներ, որոնք ճանաչեցին Հռոմի պապի գերիշխանությունը։ Դրանցից Հովսեփ II ունիթոր պատրիարքը, Փոտի միտրոպոլիտի մահից հետո, Կիևի և համայն Ռուսաստանի միտրոպոլիտ կարգեց ունիթոր Իսիդոր եպիսկոպոսին, մինչդեռ ռուս հոգևորականությունը ընտրել ու առաջադրել էր ի հաստատություն սրբակյաց Իոն եպիսկոպոսին։ Հույն, այն էլ ունիթոր, եպիսկոպոսը, բնականաբար, շատ վատ ընդունելություն գտավ Մոսկվայում թե մեծ իշխան Վասիլի Վասիլևիչի և թե ռուս բարձրաստիճան հոգևորականության կողմից։ Սակայն, ճարպիկ Իսիդորը, իր ճարտար լեզվով, գիտությամբ

ու վարվեցողությամբ շուտով կարողացավ գրավել մեծ իշխանի վստահությունը, բայց ոչ հոգևորականության, որը կասկածով ու վերապահությամբ էր նայում նրան ու չէր ուզում ճանաչել նրա իշխանությունը։ Այդ կասկածն ու անվստահությունն ավելի քան սաստկացավ, երբ Իսիդորը Ֆլորենտինյան ժողովում, բյուզանդական կայսրի ու պատրիարքի հետ միասին, ստորագրեց Հռոմի հետ միության պայմանագիր, առանց ռուս հոգևորականության գիտության ու համաձայնության։

Դա մի վտանգավոր քայլ էր հայկական պրավոսլավ եկեղեցու համար։

Ռուսաստանում սկսվեցին հայածանքն ու դատափետումը ունիթորների դեմ, և հատկապես Իսիդոր եպիսկոպոսի դեմ, որի հետևանքը եղավ Իսիդորի փախուստը Մոսկվայից Հռոմ։

Ունիթոր միտրոպոլիտների ղեկավարությունը Ռուսաստանում տևեց 12 տարի, Ռուսաց եկեղեցու ներսում առաջացնելով երկպառակություն ու անվստահություն։

Բյուզանդական կայսրն ու պատրիարքը ունիթոր դառնալով և պապի գերիշխանությունը ճանաչելով հույս ունեին բյուզանդական պետությունը փրկել կործանումից. սակայն այդ զոհողությունը չփրկեց դրությունը։ Կործանվեց Բյուզանդիան, Կ. Պոլիսն ընկավ բարբարոսների ձեռքը և քրիստոնեական հոյակապ տաճարը վերածվեց Այա Սոֆիա մզկիթի։

1441—1443 թվականներին, Բյուզանդիայի հոգևարքի օրերին, Մոսկվայի մեծ իշխան Վասիլի Վասիլևիչը երկու հրամարտակ-նամակներով դիմում է բյուզանդական կայսրին ու պատրիարքին. այս նամակներում մեծ իշխանը, ընդունելով հանդերձ, որ Ռուսաց եկեղեցին քրիստոնեական վարդապետությունն ստացել է Բյուզանդիայի տիեզերական օրթոդոքս եկեղեցուց, ինդրում էր երկուստեք խաղաղ համաձայնությամբ ճանաչել Ռուսաց եկեղեցու անկախությունը, իսկ ընտրված միտրոպոլիտին էլ ճանաչել որպես Ռուսաց եկեղեցու պետ։ Պատճառաբանվում էր նաև, որ հույն միտրոպոլիտները չեն հասկանում ռուսաց լեզուն և խորթ ու օտարոտի են նրանց համար ռուս ժողովրդի սովորությունները։

Սակայն այս երկու դիմումներն էլ անպատասխան մնացին պատրիարքի կողմից։

Հավանական է, որ Մոսկվայի մեծ իշխանը չբավարարվելով այս դիմումներով աշխատեր մոտիկ ապագայում գլուխ բերել Ռուսաց եկեղեցու անկախությունը, եթե դրան արգելք չհանդիսանային Մոսկվայի իշխանի և Գալիցիայի իշխան Դիմիտրու միջև ծագած երկարատև (1443—1448) ազգամիջյան կռիվները, որոնք պատճառ հանդիսացան Ռուսաց եկեղեցու անկախության իրագործման հետաձգմանը։ Ազգամիջյան այդ կռիվները վերջացան 1448 թվին Գալիցիայի իշխան Դիմիտրու թունավորմամբ, որից հետո երկիրը խաղաղվեց։

Այնուհետև Մոսկվայի մեծ իշխան Վասիլի Վասիլևիչը 1448 թվի դեկտեմբերի 15-ին հրավիրեց հոգևորականության բարձրաստիճան ներկայացուցիչների և իշխանների համաժողով, որտեղ և Կիևի ու համայն Ռուսաստանի միտրոպոլիտ ընտրվեց Իոն եպիսկոպոսը։ Այդ ժամանակվանից սկսած Ռուսաց եկեղեցու միտրոպոլիտները այլևս չէին դիմում տիեզերական պատրիարքին ու նրանից հաստատության շնորհում սպասում. միտրոպոլիտների ընտրությունը վավերացվում էր այդ նպատակով հրավիրված եկեղեցական համաժողովներում։

Ե.

Հինգ հարյուր տարի է անցել այդ նշանավոր տարեթվից։ Հետագայում միտրոպոլիտներին փոխարինեցին Ռուսաց եկեղեցու պատրիարքները՝ սկսած առաջին պատրիարք Գերմոգենից (1606—1612), Այս պատրիարքը իր ազգօգուտ գործունեությամբ մեծապես նպաստեց եկեղեցու ու ռուս ազգի հզորացմանը, սրբի անուն վաստակելով։ XVII դարի սկզբին լեհացիները այնքան հզորացան, որ Լիտվան գրավելուց հետո արշավեցին Մոսկվայի վրա. նրանք իրենց հետ բերում էին նաև Սուտ Դիմիտրուն, որին ներկայացնում էին իբրև Իվան Ահեղ (Գրոզնի) թագավորի որդին։ Ռուս բոյարներից ոմանք Սուտ Դիմիտրուն ընդունեցին որպես Իվան Ահեղի որդի և ռուսաց գահի օրինավոր ժառանգ, բայց մեծամասնությունը նկատելով, որ լեհացիները այդ պատրվակի տակ մտադիր են գրավել Ռուսաստանը, ընդդիմացավ և ապստամբեց ու սպանեց Սուտ Դիմիտրուն։ Լեհերը դրանից հետո մի անհաջող փորձ ևս կատարեցին և վերջապես 1610 թվին գրավեցին Մոսկվան։ 1611 թվի աշնանը ռուս ժողովուրդը ուժեղ պայքար ծավալեց լեհ հափշտակիչների դեմ։ Այս ազգային ինքնագիտակցության ու հայրենասիրական մեծ շարժմանը մասնակցեց նաև Գերմոգեն պատրիարքը, որն իր հայրենասիրական կոչերով կարողացավ նպաստել բոլոր հայրենասերների համախմբմանը։ Նրա հայրենասիրական կոչերին ջերմ կերպով արձագանքեցին այն ժամանակվա ռուս նշանավոր միտրո-

պոլիտներից Կազանի միտրոպոլիտ Եփրեմը, Նովգորոդի միտրոպոլիտ Իսիդորը, Ռոստովի միտրոպոլիտ Ֆիլարետը և ուրիշներ։ Պատրիարքի հայրենասիրական կոնդակները ի լուր ժողովրդյան ընթերցվում էին եկեղեցիներում։ Առաջացավ ժողովրդական մեծ շարժում Մոսկվան օտար զավթիչներից ազատագրելու համար։ Ժողովրդական այդ մեծ շարժման գլուխ կանգնեցին քաղաքացի Մինինը և զինվորական հրամանատար Պոժարսկին։ Սրանցից առաջինը զբաղվում էր շարժման նյութականն ապահովելու խնդիրներով, իսկ երկրորդը զինվորներ հավաքագրելու և օտար զավթիչներին Մոսկվայից դուրս վտարելու խնդիրներով։

Պատրիարք Գերմոգենն ինքը չտեսավ Մոսկվայի ազատագրումը, նա մեռավ ավելի շուտ, քան իրագործվեց լեհացիների պարտությունը և նրանց վտարումը Մոսկվայից։ Նրա հիշատակը ռուս ժողովրդի և եկեղեցու պատմության մեջ հավետ անմոռաց կմնա։

Ռուսաց եկեղեցու նշանավոր պատրիարքներից էր և պատրիարք Նիկոնը։ Սա խոշոր պայքար մղեց մի կողմից պետական իշխանության դեմ՝ եկեղեցական իշխանապետությունը ի մնաս բաղաքական իշխանության բարձրացնելու նպատակով և մյուս կողմից ռասկոլնիկների (անջատականների) դեմ, որոնք չէին ընդունում Նիկոնի ուղղումները ժամակարգական գրքերում։ Չնայած իր ըսկսած կատաղի հալածանքին, այնուամենայնիվ Նիկոնին չհաջողվեց իսպառ արմատախիլ անել ռասկոլնիկությունը։ Հնադավանները (старообрядцы) մնացին ու կազմեցին իրենց առանձին եկեղեցին ու նվիրապետությունը, իսկ քաղաքական իշխանության դեմ մղած պայքարը վերջացավ պատրիարք Նիկոնի կատարյալ պարտությամբ։

1666—1667 թվականների եկեղեցական ուխտահական համագումարը դատապարտեց Նիկոնի բռնած ընթացքը և բանադրեց ու աքսորեց նրան։

Միաժամանակ վերացվեց պատրիարքությունը և նրա տեղը հաստատվեց Ս. Սինոդ-կոլեգիալ վարչություն։ Պետության գլուխ կանգնած դարը, որպես՝ օծյալ, համարվեց նաև եկեղեցու պետ, ինքնիշխան տեր ու տնորեն։

Այս շրջանը հանդիսանում է Ռուսաց եկեղեցու պատմության ամենամռայլ ու վատթար դրությունը։ Ռուսաց եկեղեցու միտրոպոլիտներին, արքեպիսկոպոսներին, եպիսկոպոսներին ու այլ բարձրաստիճան հոգևոր անձանց աստիճանազրկում, աստիճանները բարձրացնում կամ դատապարտում էին Ս. Սինոդի դատախազ (պրոկուրոր) Պոբեդոնոսցևը կամ Սաբլինը։ Դա ռուս հոգևորականության համար հանդիսանում էր ամենաստորացուցիչ վիճակը։

Փետրվարյան ռևոլուցիան և նրան հաջորդող Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլուցիան ազատագրեցին Ռուսաց պրավոսլավ եկեղեցին սինոդական աստիճանավորների ձեռքից ու անկախ դարձրին նրան։

Ռուսաց պրավոսլավ եկեղեցին, ինչպես և մյուս դավանանքներին պատկանող կրոնական կազմակերպությունները, անջատված են պետությունից և կառավարվում են անկախ ոչ ինքնուրույն կերպով։ Ռուսաց պրավոսլավ եկեղեցին դարձյալ ունի իր պատրիարքը և նոր վերելք է ապրում։ Ներկայումս Ռուսաց եկեղեցին ունի բարձրագույն ու միջնակարգ դպրոցներ։ ցանց. այս դպրոցներում պատրաստվում են Ռուսաց եկեղեցու ապագա հովիվները, որոնք կոչված են պայծառազարդելու եկեղեցին։

Ռուսաց եկեղեցու 500-ամյա հոբելյանական տոնակատարությունների մասնակիցներիս համար հաճելի էր տեսնել Մոսկվայի եկեղեցիներում ոքանչելի եկեղեցական երգեցիկ խմբերը, որոնք իրենց երգերով հանդիսավոր մաղթանքների ու սուրբ պատարագների ժամանակ հոգեզմայլ վիճություն էին հաղորդում եկեղեցական արարողություններին։ Այդ երգեցիկ խմբերը բաղկացած էրն մեծ մասամբ Մոսկվայի հոգևոր դպրոցների սաներից։

Ռևոլուցիայի առաջին տարիներին Ռուսաց եկեղեցին զերծ չմնաց խմորումներից. Ռուսաց եկեղեցու ներսում էլ պառակտում տեղի ունեցավ։ Նոր, ազատ եկեղեցու պաշտպանները մեծ պայքար մղեցին ընդդեմ հին եկեղեցու պաշտպանների։ Սակայն, այդ պայքարն ապարդյուն անցավ, ռուս հավատացյալ ժողովուրդը անդրդվելի մնաց և հաստատակամորեն պաշտպան կանգնեց իր եկեղեցական հնավանդ սովորություններին։ Ներկայումս Ռուսաց եկեղեցու ներսում կա պառակտում մի այլ ուղղությամբ. արտասահմանյան որոշ թեմեր չեն ճանաչում Մոսկվայի և համայն Ռուսիո պատրիարքի իշխանությունը և ենթարկվում են տիեզերական պատրիարքին։ Ռուսաց եկեղեցու ներկա Պատրիարք Ալեքսին ամեն կերպ աշխատում է վերացնել այդ եռկապառակությունը Ռուսաց եկեղեցու ներսում և ապահովել նրա միասնականությունը։

Ռուսաց առաքելական եկեղեցու ավտոկեֆալության 500-ամյակի նշման ժամանակ ակնբախ կերպով դրսևորվեց պրավոսլավ ե-

կեղեցիների մեծամասնության միասնականությունը։ Պրավոսլավ եկեղեցին պատկառելի ույժ է ներկայացնում, նրա հավատացյալների թիվը հաշվվում է մոտավորապես 150 միլիոն։ Սա մի պատկառելի թիվ է, որի հետ չի կարող հաշվի չնստել Վատիկանը, այն Վատիկանը, որը տենչում է իրեն ենթարկել բոլոր քրիստոնյա համայնքները։

Ռուսաց եկեղեցու ավտոկեֆալության 500-ամյակի հոբելյանական ժողովներից մեկում խիստ քննադատության ենթարկվեց Վատիկանի բռնած դիրքը իրեն ոչ ենթակա քրիստոնեական մյուս համայնքների նկատմամբ։ Դատապարտվեց համաշխարհային քրիստոնեական պետություն ստեղծելու և բոլոր քրիստոնյաների վրա իր իշխանությունը տարածելու նրա ձգտումները։ Դատապարտվեց Վատիկանի հավատորսության փորձերը հատկապես Մերձավոր Արևելքի քրիստոնյաների մեջ. Վատիկանն իր բազմաթիվ միսիոնարների միջոցով ճիգ ու ջանք չի խնայում Մերձավոր Արևելքում պրավոսլավ եկեղեցուն հարող քրիստոնյաներին Հռոմի կաթոլիկ եկեղեցու գիրկն առնելու ուղղությամբ։

Խիստ դատապարտելի է հանդիսանում նաև այն երևույթը, երբ Վատիկանն աշխատում է օգտագործել հրեա և արաբ ժողովուրդների միջև ծագած պատերազմի հետևանքով Պաղեստինում առաջացած իրադրությունը և իր ձեռքը գրավել Երուսաղեմի ու Պաղեստինի այլ սրբավայրերի ուխտատեղիները։ Սրբատեղիներին տիրանալու իր այս ապօրինի ձգտումները Վատիկանն աշխատում է իրականացնել Պաղեստինի նկատմամբ քաղաքական շահագրգռվածություն ցուցաբերող որոշ մեծ պետությունների օժանդակությամբ։ Սակայն Մերձավոր Արևելքում պրավոսլավ եկեղեցին լի է վճռականությամբ Վատիկանի բազմապիսի ոտնձգությունների դեմ պայքարելու համար։

Իր ավտոկեֆալության փառապանծ 500-ամյակը բոլորած Ռուսաց պրավոսլավ եկեղեցուն ցանկանում ենք հարատևություն և պայծառություն առաջիկա իր առաքելության մեջ։

Հայրենի լուսաշող երկնակամարի տակ իր երջանիկ կյանքը կերտող հայ ժողովուրդը և նրա հետ միասին անծայրածիր Սովետական Միության բոլոր ժողովուրդները այսօր, մեծ սիրով ու հանդիսավորությամբ, նշում են տաղանդավոր հայ ժողովրդի հանճարեղ զավակ, հայ ազգային ինքնագիտակցության զարթոնքի մեծ ռանվիրա, կրակոտ հայրենասեր ու մեծ լուսավորիչ, հմուտ մանկավարժ ու մեծանուն գրող, հայ հոր գրականության ու աշխարհաբար լեզվի խիզախ հիմնադիր խաչատուր Աբովյանի մահվան 100-ամյակը:

Սակայն ի՞նչն է, որ Աբովյանին այսօր, նրա մահվանից մի դար հետո, սիրելի ու հարազատ է դարձնում սովետական հայրենասեր ու խաղաղասեր ժողովուրդներին և նրա մահվան 100-ամյակը նշվում է ո՛չ միայն հարազատ հայ ժողովրդի, այլ և եղբայրական շատ ժողովուրդների կողմից: Ի՞նչն է պատճառը, որ եղբայրական ռեսպուբլիկաների բերթերի, ամսագրերի էջերից այսօր հեզահամբույր մեզ է նայում Աբովյանը նուրբ թախիծը դեմքին, և նրա անունը ռադիոալիքների թևերի վրա տարածվում է մառախլապատ Բալտիկայից մինչ խաղաղակաների ափերը, գեղածիծաղ Սևանից մինչ բքաշունչ Նյուսիսային բևեռը: Ի՞նչով բացատրել, որ այսօր Աբովյանի անմահ երկերը, հնչում են ո՛չ միայն մայրենի լեզվով, այլ և ռուսերեն ու ուկրայներեն, վրացերեն ու ադրբեջաներեն, բելոռուսերեն ու ղազախերեն, ուզբեկերեն ու տաջիկերեն, էստոներեն ու լատվիերեն, և այլ շատ լեզուներով:

Աբովյանին սիրելի ու հարազատ դարձնողը հանդիսանում են համամարդկային, հումանիստական այն լուսամիտ ու լայնախոհ գաղափարները, որոնցով տոգորված է եղել նա, որոնց կրողն ու քարոզիչն է հանդիսացել նա մի դար առաջ, որոնցով հագեցված են նրա հիասքանչ երկերը: Աբովյանի վճիտ ու բյուրեղային հայրենասիրությունը, անսահման ժողովրդասիրությունը, կրքոտ ատելությունը հայրենիքի թշնամիների հանդեպ, ժողովուրդների եղբայրության, բարեկամության գերմ գաղափարները սիրելի ու հարազատ են դարձնում նրան:

Աբովյանը հանդիսացել է հայ ժողովրդի նվիրական իդեալների, ազատագրական տենչերի, ակնկալությունների, ըմբոստ ընդվզումների, յայն հորիզոններ ընդգրկող խոնարհի, հայրենասիրական վեհ զգացմունքների անզուգական արտահայտիչը:

Հայ ժողովրդի անհուն վշտերի ու լավագույն իղձերի մեծ երգիչ Աբովյանը, բարձր ծածանելով ազգային ինքնագիտակցության զարթոնքի դրոշը, Քանաքեռի արարատանայաց բարձունքի վրայից իր ժողովրդին ազատագրական պայքարի, ընդվզման հրավեր է

կարդացել և հայրենասիրական հրաբորբոք խոսքերով հրդեհել սրտերը մարդկանց:

Արովյանի հայրենաշունչ երկերը խոշոր ազդեցություն են հանդիսացել, ներդրված հայ ժողովրդի ազգային ինքնաճանաչման գործընթացի, նրա հայրենասիրական զգացմունքների դաստիարակման գործում: Մեծ հայրենասերը իր երկերով ջանացել է ոչ միայն վառ ու անմար պահել ժողովրդի սրտում հայրենասիրական, ազատագրական նվիրական զգացմունքները, այլ և խորացնել, նոր թափ ու ավյուն հաղորդել նրանց, նոր հունի մեջ ներառնել դրանք: Նա աշխատել է բորբոքել ազատատենչ ժողովրդի սրտի ընդերքում անբեղված հայրենասիրական կայծերը, հրդեհի փոխարկել և նրա հրեղեն ցոլքերով լուսավորել խոստումնալից գալիքի երջանկաբեր ուղիները:

Իր «Վերք Հայաստանի» վեպում Արովյանը չերմ հուզականությամբ ու մեծ կրքոտությամբ պատկերել է հայ ժողովուրդի ընդվզումը, նրա ազատագրական պայքարը: Հայ գրականության շողշողուն գոհարներից մեկը հանդիսացող այս վեպը համարձակորեն կարելի է դնել համաշխարհային հռչակ վայելող լավագույն գրական երկերի կողքին. նա անմահ երկ է, նա հնանալ, բառամել ու մոռացության մատնվել չգիտե: Նա գրված է մշտամորմոք ու վշտատոչոր սրտի վերքերից ծորող բոսոր արյունով, նրա մարգարտաշար ու գեղեցիկ էջերում ներդրված է ինքույթ հայրենասիրությամբ, չերմ ժողովրդասիրությամբ համակված մի մեծ սիրտ, որի բաբախումը չի կարող չզգալ վեպի սրտահույզ տողերի ընթերցողը:

Գիշերները, երբ, ծյունե սավանը վրան քաշած, խոր նիրհել է Արարատյան դաշտը, Քանաքեռի գյուղական մի խրճիթում, մոմի պլպլացող լույսի տակ, Արովյանը իր մեծ սիրտն է ներդրել այս հոյակերտ վեպի էջերում, ժողովրդական վնիտ ակնաղբյուրից բխող պարզ, անպաճույճ ու դյուրմբռնելի լեզվով շարադրելով հարազատ ժողովրդի վշտերն ու իղձերը, վերքերն ու երգերը: Լայն կտավի վրա, մեծ արվեստագետին հատուկ ճմռությամբ. Արովյանը սրտահույզ կերպով պատկերել է իր ժամանակի ազգային, հասարակական կյանքը՝ իր բոլոր ստվերաշատ ու լուսառատ կողմերով: Տարիներով նրա սրտում կուտակված հախուռն զգացմունքները հրաբխի պես ժայթքել, հեղեղի պես հորդել և զարդարել են այդ հոյակապ վեպի շքեղ էջերը:

Սիրո ու ատելության, կարեկցության ու ցասումի, ուրախության ու վշտի, հպարտության ու զայրույթի զգացմունքները մերթ ընդ մերթ իրար են հաջորդում, երբ այս անմահ վեպի ընթերցումով մխրճվում ես հայ ժողովրդի ծանր, անանդորր ու վշտաշատ անցյալի պատմության էջերի մեջ: Համակ հայրենասիրություն բուրող այս վեպի ընթերցողը չի կարող չարթենալ, չգերվել, չվարակվել ու չհամակվել Արովյանի սահման չճանաչող, անհուն ու անմիջական, սրտաբուխ ու անկեղծ, հրաբորբոք ու հուզական հայրենասիրությամբ: Անքասիր է նրա հայրենասիրությունը, զերծ ազգայնականության ու օտարատեցության մոլի ախտերից: Նրա հայրենասիրությունը լեռնաղբյուրի պես ջինջ է, լեռնագետակի պես ճստակ, զեփյուռի նման զերող: Մյուս կողմից անգուսպ ատելության, խորը զայրույթի ու ցասման զգացմունքն է պատում ընթերցողին՝ օտար բռնադատիչների, պարսիկների ու թուրքերի, դաժան լծի տակ հեծող հայ ժողովրդի կրած անլուր զրկանքների, հողկալի լկտիությունների, վայրագ բռնությունների սարսռեցուցիչ նկարագրությունները կարդալիս:

«Վերք Հայաստանի» վեպի էջերից Արովյանը կոչ է անում սիրել, ամենից վեր դասել հայրենիքը և ո՛չինչ չխնայել նրա համար.

«Շունչդ տո՛ւր, հոգիդ, բայց քո հայրենիք
Մի՛ տար թշնամյաց...

Ահա անծնվեր հայրենասեր Արովյանի նրջանաբանը:

«Վերք Հայաստանի» վեպը տասնյակ տարիներ շարունակ ոգևորության, ներշնչման աղբյուր է հանդիսացել հետագա սերնդների համար. նա հնչել է ազատագրական պայքարի շեփորի պես և հուզել ու վարակել իր բուռն հայրենասիրությամբ, իր անողոք ատելությամբ հայրենիքի թշնամիների հանդեպ: Այսօր էլ «Վերք Հայաստանի»-ն կոչ է անում նոր սերնդին իր ողջ էությամբ հայրե-

նիին նվիրվելու և նրա սրբազան սահմանները իր կրծքով պաշտպանելու: Այսօր էլ ընթերցողը անկարող է առանց խորը հուզմունքի կարդալ այս վեպը, այսօր էլ նրա հերոսները ապրում, շնչում, վիշտ ու ուրախություն են պատճառում ընթերցողին: Անա ինչ է ասում այս մասին ժամանակակից ռուս նշանավոր գրող Կ. Սիմոնովը.

«120 տարի է անցել այն իրադարձություններից, որոնք Արովյանը նկարագրում է իր «Վերք Հայաստանի» վեպում, բայց մինչև այժմ էլ հնարավոր չէ այդ վեպը կարդալ, գրված վիրավոր սրտի արյունով, առանց խոր հուզմունքի, առանց այն բանի, որ մերթ սիրո զգացմունքով համակված, մերթ ատելության զգացմունքով համակված, քո սեփական սիրտը կրծքում ավելի ուժեղ շքարախի:

120 տարի հետո ես մի բոլորովին այլ ժամանակի մարդ, որը խոսում է այլ լեզվով, ցանկանում եմ բռնել վեպի հերոս Աղասու ձեռքից, բռնել և բույլ չտալ, որ նա բարձրանա այն աստիճանակը, որտեղ նա գտնելու է իր մահը:

Ուրեմն ինչպիսի՞ ուժ պիտի ունենար գրողը, որպեսզի մեկ 100 տարի հետո ստիպեր այդպիսի հուզմունքով կարդալ այդ էջերը»:

Արովյանի մեծությունը նրա մեջ է կայանում, որ նա ոչ միայն ազատագրական պայքարի շեփորը հնչեցրեց ուժգին, ազգային ինքնագիտակցության զարթոնքի կոչ արեց, այլ և ուղեցույց փարոսի քարոզ լուսավորեց հայ ժողովրդի բախտի ուղիները: Յորիզմի մայլ ու դաժան իրականության, նրա գաղութարար քաղաքականության պայմաններում սնվում, նա իր խորաթափանց հայացքի լուսարձակով լուսավորելով գալիքի ուղիները, առաջինը հանդիսացավ, որ կարողացավ ճիշտ կանխազգալ ու կանխագուշակել, թե հայ ժողովրդի բախտը սերտորեն միահյուսված է ռուս ազնիվ ու մեծահոգի ժողովրդի բախտի հետ: Իր մեծ սիրտը հայ ժողովրդի պատմության խաչուղիներում լուսավառ ջահի պես պարզելով, նա կարողացավ ճիշտ կռահել, անսխալ մատնացույց անել հայ ժողովրդի փրկության, նրա երջանկաբեր ապագայի լուսաշող ուղիները: Երբ ռուսական հզոր օվկիանոսի ազատաբեր ալիքները Հայկական լեռնաշխարհին հասնելով նոր ու ընդարձակ հորիզոններ բացին հայ ժողովրդի առաջ, Արովյանը առաջինը, օրհնանքը շրթներին, սրտանց ողջունեց ռուսների մուտքը իր հայրենիք:

«Օրհնվի էն սհաթը, որ ռսի օրհնած ոտը հայոց լիս աշխարհը մտավ ու ղզլբաշի անիծած չար շունչը մեր երկրիցը հալածեց: Քանի որ մեր բերնումը շունչ կա, պետք է զիշեր ցերեկ մեր քաշած օրերը մտքներս բերենք ու ռսի երեսը տեսնելիս, երեսներիս խաչ հանենք, Աստծուն փառք տանք...»:

Եվ սա խոսքերն են ո՛չ միայն Արովյանի, այլ և պարսից անարգ լծից ազատագրված ողջ հայ ժողովրդի, որի խոսքերի հարազատ բարգմանիչն է հանդիսացել նա:

Արովյանի իղձն է եղել, որպեսզի հայ ու ռուս ժողովուրդների անկեղծ բարեկամությունը հաստատուն ու անսասան լինի: Երկու ժողովուրդների բարեկամությունը սիմվոլիկ կերպով նա արտահայտել է երկու քույր գետերին՝ Զանգվին ու «մեծ քույր Վոլգա»-ին նվիրած հետևյալ մարգարեական տողերում.

«Ես իմ Սևանի օրհնության մաղթանքները, ես իմ սուրբ Մասիսի հայրական ողջույնը կտանեմ, կմատուցեմ իմ սիրելի քրոջը և կբերեմ քեզ նրա ավետաբեր ողջույնը: Բացեք ձեր հակատը, ցնծացեք հավիտյան, իմ քաղցր քույր Վոլգան միշտ կենդա ձեր հարը: Ես իմ մտերմությունը ցույց կտամ նրան միշտ. նա իր քաղցրությունը կտա քեզ, իմ որդիներ: Այս անխզելի կապը, այս սրբազան սերը կմնա մեր մեջ հավիտյան»:

Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության մեծ՝ ջատագով Արովյանը սրբազան ավանդ է թողել իր ժողովրդին—անխախտ պահել հայ և ռուս ժողովուրդների դաշինքը, և միայն ու միայն այդ դաշինքի մեջ է տեսել նա հայ բազմատանջ ժողովրդի փրկությունը, նրա երջանկաբեր ապագան:

Եվ իրոք, Արովյանի մարգարեական կանխագուշակությունները այսօր չքնաղ իրականության են վերածվել, իրականություն, որի համար հայրենի լեռնաշխարհի նվիրական հողի վրա, սքանչելի բնության ծոցում իր այսօրվա երջանիկ կյանքը կառ, երբեմնի

Խաչատուր Աբովյան

բազմաշարշար, հայ ժողովուրդը պարտական է ռուս մեծ ժողովրդին, ժողովուրդ, որի օգնությամբ նա թե՛ փրկվեց անխուսափելի կորստից և թե՛ հնարավորություն ստացավ սովետական բարբարեի տակ, անդորր պայմաններում, եղբայրական ժողովուրդների համերաշխ ընտանիքում իր այսօրվա լուսաշող կյանքը կերտելու: Ռուս ժողովրդի եղբայրական օժանդակության շնորհիվ Աբովյանի վերածաշատ հայրենիքը փոխարկվել է խնդության երկրի, ուր նկատելի զարգանում, աճում ու փրթում են արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, գիտությունն ու կուլտուրան, արվեստն ու գրականությունը: Այսօր Հայաստանի թե՛ հոյակերտ, գեղեցկակառույց ու գործարանաշատ քաղաքներում, թե՛ բարեշեն, կուլտուրական ու բարեկեցիկ գյուղերում, թե՛ տրակտորաձեռ բերքաշատ դաշտերում ու մրգաշատ այգիներում երջանիկ կյանքն է հորդում ամենուրեք: Եվ կարծես Աբովյանի հետևյալ տողերը այսօր գրված լինեն.

«...ռուսաց մարդասիրության շնորհքը ապառաժն էլ կակղացրին, ու Հայաստանի չոլ, ամայի դաշտերն էսօր մարդաբնակ են դառել ու ռուսաց ազգի խնամքը վայելում, իրանց սուրբ աշխարքը կրկին շենացնում»:

Իր ժողովրդին անսահման սիրող մարդը միայն կարող էր տոգորված լինել նրա ապագայի նկատմամբ հմաներինակ վառ հավատով: Այսօր բազմահազար վտարանդի հայեր սփյուռքի բոլոր ծայրերից կարոտակեզ սրտերով հայրենիք են վերադարձել ու նրա հարազատ հողի վրա իրենց օջախները հիմնել դարձյա՛լ ռուս ազնիվ ժողովրդի օժանդակության շնորհիվ:

Բայց մեծ հումանիստ Աբովյանի սրտին թանգ էին ո՛չ միայն հայ և ռուս ժողովուրդների սերն ու բարեկամությունը, այլ և Ռուսաստանի բոլոր ժողովուրդների եղբայրական դաշինքը՝ հիմնված իրավահավասարության, փոխըմբռնման, փոխադարձ հարգանքի ու վստահության վրա. նա ցանկանում էր, որ Ռուսաստանի ժողովուրդները կազմեն համերաշխ մի ընտանիք և հարգվեն ամեն մի ազգի ազատորեն ապրելու, բարգավաճելու իրավունքները, գնահատվեն նրա կուլտուրական արժեքները: Այսօր իրականացած ենք տեսնում Աբովյանի այս իղձերը ևս:

Սակայն, դարերի ընթացքում շատ հալածանքների ու բռնությունների ենթարկված հայ ժողովրդի հանճարեղ զավակ, հումանիստ Աբովյանը չէր կարող չհետաքրքրվել հալածված ու անարգված մյուս ժողովուրդների վիճակով. նա խորը զայրույթով է արտահայտում «կուլտուրական» եվրոպացիների կատարած գազանությունների մասին Ամերիկայում, ուր նրանք անխնա հալածել ու ոչնչացրել էին տեղացի բնիկ ժողովրդներին.

«Քսան տարու միջում լուսավորյալ, քրիստոնյա, խաչապաշտ եվրոպացոց ոտը ոդորմելի Ամերիկա էնպես քանդեց, շնչեց, հողի հետ հավասարեց, որ հինգ-վեց միլիոն ազգերիցը՝ էսօր հազար հոգի էլ չեն մնացել, էն էլ սար ու ձոր ընկած, վայրենի գազանների պես են իրանց սև օրը լալիս ու կոտորվում»:

Աբովյանը հանդուրժել չէր կարող մանավանդ նեգրերի նկատմամբ գործադրվող վայրագ բռնությունները. խորը կարեկցությամբ արձանագրելով այդ իրողությունը, նա նզովքի խոսքեր է ուղղում կուլտուրական հորջորջվող անողոք ու ագահ մարդկանց հասցեին, որոնք շահաստացության անհագուրդ ծարավից մղված ամենաբիրտ կերպով ոտնահարում են նեգրերի մարդկային իրավունքները.

«Մարդի սիրտը կրակ է ընկնում ինչ ժամանակ լսում ես, թե էս լուսավոր եվրոպացիքը ինչ են բերել են խեղճ ազգի գլխին. որդին հորից խլել, աղջիկը մորից, մարը զավակներից, որ տանեն. իրենց փոքի ծարավը կշտացնեն:

Ախ ո՞վ էսպես բանն իմանա ու էսպես անողոք, ագահ մարդկանց գլխին նզովք չկարդա»:

Հարյուր տարուց հետո, այսօր մեծ հումանիստ Աբովյանի այս խոսքերը շոնդալից ապտակ են հանդիսանում ռասայականության, ազգերի դիսկրիմինացիայի ամեն գույնի ու տեսակի սատոր հեղինակների և քարոզիչների համար:

Աբովյանը նաև մեծ խաղաղասեր էր. նա

բողոքի իր հուժկու ձայնն է հնչեցնում տիրող հասարակարգի դեմ, հասարակակարգ, որտեղ բացակայում է ազգերի ու մարդկանց համերաշխ համագործակցությունը, որտեղ մարդը մարդու համար գայլ է, որտեղ թույլերը եզոփի մրմունջը շրթներին ոչնչանում, տրորվում են եզոներերի ոտների տակ, որտեղ անխուսափելի են աշխարհամարտ պատերազմները:

«Ազգերի ու մարդկանց մեջ ստեղծել են այնպիսի դրություն, որ մարդիկ կրունկով վառում են իրար, բրով կոտորում, ջրով խեղդում, իրար անիծում, հզովում ու կնխում»:

Մի դար առաջ Աբովյանի գրած այս խոսքերը կարծես այսօր գրված ու հստակագրված լինեն պատերազմի մեծ ու փոքր հրձիգներին, արնածոր դոլարի մոլի երկրպագուներին, արյան ծարավի իմպերիալիստական գիշատիչներին, միջազգային ռեակցիայի մուենտիկներին և նացիոնալիզմի ու ռասայականության գովերգուներին, որոնք զբաղված են մարդկային մի նոր ու ավելի զարհուրելի սպանդի նախապատրաստությամբ: Աբովյանը երազում էր տեսնել մարդկությունը ազատագրված փոխատելություն, թշնամություն ծնող մղձավանջից և մի համերաշխ ընտանիք կազմած: Նա անձնկությամբ գրել է. «Ա՜խ... ե՞րբ մեր կույր, խավար մտքի փարդեն կայատովի, որ... իրար սիրենք, իրար ընդունենք, ինչպես մի նոր որդի...»:

Աբովյանը մեծ ուշադրություն էր դարձնում հարազատ ժողովրդի կուլտուրայի աճի վրա. այդ նպատակին հասնելու համար նա առաջ է քաշում երկու խնդիրներ—նոր դպրոցի և նոր գրականության ու լեզվի հիմնադրման խնդիրները: Աբովյանը հայկական դպրոցական կյանքում մեծ բարեփոխություններ մտցնելով հանդիսացավ հայ մանկավարժության հիմնադիրը: Խորապես ըմբռնած լինելով գրականության կրիչ, դաստիարակիչ, առաջնորդիչ դերը, հմուտ մանկավարժ Աբովյանը ծեռնամուխ է լինում նաև հայ նոր գրականության ստեղծմանը: Աբովյանը մտահոգված էր, որ նոր գրականությունը նախ մատչելի, դյուրըմբռնելի լինի լայն խավերի համար. դրա համար էլ նա խիզախորեն վեր է պարզում նոր լեզվի դրոշը, դիմելով ժողովրդական գործածական լեզվի, աշխարհիկ լեզվի օժանդակության: Մյուս կողմից նա առաջ է քաշում նոր գրականության նոր բովանդակություն տալու խնդիրը. այս առթիվ նա գրում է, թե գրքի բովանդակությունն այնպիսին պիտի լինի, «որ կարդալիս մարդի սիրտը վառվի». և իրոք նա իր «Վերք Հայաստանի»-ն գրել է հավատարիմ մնալով այս նշանաբանին:

Աբովյանի գրական գործունեությունը շատ բազմակողմանի է եղել. նա գրել է վեպեր, բանաստեղծություններ, առակներ, ժողովրդական երգեր, բայաթիներ, զրույցներ, պատմվածքներ, դրամաներ, գիտա-բարոյախոսական, հրապարակախոսական, ազգագրական հոդվածներ, կազմել է դասագրքեր, մշակել մանկավարժական-մեթոդական ցուցումներ, գրի է առել հայկական, ադրբեջանական ու քրդական ֆոլկլորին վերաբերող նյութեր, կատարել է թարգմանություններ ռուս գրողներ Կռիլովից, Կարամզինից, Խեմնիցերից, Դիմիտրևից, ինչպես նաև Ռուսսոյից, Շիլլերից, Գյոթեից և նույնիսկ Հոմերոսից: Բազմաժանրությունը Աբովյանի համար ինքնանպատակ չի հանդիսացել, այլ միջոց ժողովրդական զանգվան խավերի հետ նրանց համար ավելի հարազատ արտահայտչական ձևերով խոսելու համար:

Աբովյանը հայ ժողովրդի հպարտությունն է:

Աբովյանի մահվանից հարյուր տարի հետո, այսօր ավելի քան ուժգին է հնչում նրա կոչը հարազատ ժողովրդին—սիրել ու ամեն բանից բարձր դասել հայրենիքը, սիրել մայրենի անույշ լեզուն:

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱՆԵՐ

Սեպտեմբերի 15-ին իր աշխատանքները սկսեց Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի գիտական սեսիան, որը նվիրված է հայ գրականության և աշխարհարար լեզվի հիմնադիր, մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի մահվան 100-ամյակին։

Գիտական սեսիան հանդիսավոր իրադրության մեջ, նեոտծական խոսքով բաց արեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ պրոֆեսոր Ա. Տերտերյանը։

— Գիտությունը, լեզուն, դպրոցը այն աղդակներն էին, որոնցով Խաչատուր Աբովյանը ծառացավ հին, ֆեոդալական հասարակության, խավառամտության դեմ,— իմ ներածական խոսքում ասում է պրոֆ. Տերտերյանը,— և իր այդ գործունեությամբ նոր դարագլուխ բաց արեց մեր ժողովրդի պատմության մեջ։

Աբովյանի մահվան 100-ամյա հոբելյանը այս օրերին մեզ հետ միասին մեծ շուքով նշում են Սովետական Միության բոլոր ժողովուրդները, որովհետև որպես մեծ լուսավորիչ ու ազգերի եղբայրության մեծ քարոզիչ, մեծ հումանիստ Աբովյանը բարձր է գնահատվում մեր հսոր պետության բոլոր ժողովուրդների կողմից։

«Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը» թեմայով գիտական սեսիայում զեկուցեց ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Մ. Մկրյանը։

— Խ. Աբովյանը,— ասում է զեկուցողը,— հայ նոր գրականության սկզբնավորողն ու հիմնադիրն է, նախ և առաջ 1840 թվին գրած իր «Վերք Հայաստանի» պատմական վեպով։ Այդ վեպը նախորդը չունենալով հայ գրականության պատմության մեջ, մի անգամից բերում էր ահագին նորություններ։

Իր բերած նորություններով «Վերք Հայաստանի» վեպը նշանավոր երևույթ էր ոչ միայն հայ գրականության մեջ։ Նա նշանավոր երևույթ էր նաև միջազգային գրականության ֆոնի վրա։ Վեպի գեղարվեստական հասարակական մեծության ամենակարևոր արժանիքներից. մեկը նախ և առաջ հանդիսանում է պատմական էպոխայի զարմանալի լայն ու խոր ընդգրկումը։

«Վերք Հայաստանի»-ն պատմական վեպ է և իբրև այդպիսին, նրա գեղարվեստական արժանիքը շատ մեծ է, որովհետև պատմականությունը, ռեալիզմը շատ ուժեղ է նրա մեջ։

Այդ վեպի քաղաքական-գաղափարական բովանդակության հիմնական էությունը հեղինակի վառ և անկեղծ հայրենասիրությունն է ու ժողովրդասիրությունը։ Խ. Աբովյանը ամբողջ էությամբ նվիրված է ժողովրդին, նրա ամբողջ մտածողության առարկան ժողովրդի սոցիալական և քաղաքական միճակն է։ Նա իր անձնական և հասարակական կյանքում, թե իբրև մանկավարժ, թե իբրև գրող, մի զեկավար իդեա է ունեցել՝ օգտակար լինել ժողովրդին։ Աբով-

յանի հայրենասիրության դեմոկրատիկ-ժողովրդական բնույթի լավագույն ապացույցներից մեկը այն զարմանալի լայնախոհությունն է, որ նա հանդես է բերում, երբ ստիպված է լինում արտահայտվել հարևան ժողովուրդների մասին։ Աբովյան հայրենասերի այրող ատելությունը ուղղված է պարսկական-խանական բարբարոսական տիրապետության դեմ, որը ցայտուն և հետևողական արտահայտություն է գտել վեպում։

Մեծ լուսավորչի քաղաքական հայացքների և «Վերք Հայաստանի» վեպի իդեալական բովանդակության մեջ հայրենասիրության և լուսավորականության հետ միասին մի սմբոլություն է կազմում նրա Ռուսաստանի և ռուս ժողովրդի նկատմամբ ունեցած վերաբերմունքը և խորհրդածությունները։ Աբովյանն առաջինն է ողջունել ռուսական զորքերի մուտքը և ռուս ժողովրդի ազատագրական միսիան Հայաստանում։

Գիտական սեսիայում «Աբովյանը և աշխարհաբարը» նյութի մասին զեկուցեց դոցենտ Գ. Սևակը։

Սեպտեմբերի 16-ին շարունակվեցին սեսիայի աշխատանքները։ Սեսիայի երկրորդ նիստի առաջին զեկուցումը նվիրված էր «Աբովյանը հայ նոր մանկավարժության հիմնադիր» թեմային։ Զեկուցումը կարդաց պրոֆ. Մ. Սանթրոսյանը։ Մանրամասն թվելով Խ. Աբովյանի մանկավարժական առաջադիմական հայացքները, զեկուցողը ցույց է տալիս, որ Աբովյանը ոչ միայն մշակում է մանկավարժական իր սիստեմը, այլև ստեղծում է իր դպրոցը, կազմում դասագրքեր ու ձեռնարկներ։ Ահա թե ինչու նա հայ նոր մանկավարժության հիմնադիրը դարձավ։

Սեսիայի վերջին զեկուցումը խաչատուր Աբովյանի աշխարհայացքի մասին կարդաց դոցենտ Ս. Բագյանը։

Այս նիստով համայնարանի սեսիան ավարտեց իր աշխատանքները։

❖❖❖

Սեպտեմբերի 22-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի 7-րդ գիտական սեսիան, նվիրված մեծ դեմոկրատ-լուսավորիչ Խ. Աբովյանի մահվան 100-ամյակին։

Բացելով սեսիան, ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Մ. Մկրյանն ասաց.—Հայ նոր գրականության հիմնադիր, մեծ դեմոկրատ-լուսավորիչ Աբովյանը Ավետիսյան ողջ իրականության ամենափայլուն և լուսավոր, դեմքերից մեկն է։ Նա հայ նոր մանկավարժության հիմնադիրն է, խոշոր լեզվաբան ու լեզվագետ, պատմաբան և ազգագրագետ, հրապարակախոս և հասարակական գործիչ։ Այս բոլորով հանդերձ Աբովյանը ահագին նորություններ բերելով դառնում է հայ նոր գրականության հիմնադիրը։

Ահա թե ինչու սովետական ժողովուրդը այսօր մեծագույն սիրով է հիշում Աբովյանին և անմահ պահում նրա անունը։

Այնուհետև զեկուցումով հանդես եկավ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ա. Ասատրյանը, որը բնութագրեց Աբովյանին որպես մեծ դեմոկրատ-լուսավորիչ։

Սեսիայի առաջին նիստն ավարտվեց Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի իդեալական բովանդակության մասին ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Էդ. Թոփչյանի զեկուցումով։

Սեպտեմբերի 23-ին, շարունակվեց սեսիան։ Առաջին զեկուցումով հանդես եկավ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Վ. Պարտիզունին՝ «Աբովյանը հայ-ռուս բարեկամության շատագով» թեմայով։

«Աբովյանի ստեղծագործության ժանրերը» զեկուցումով հանդես գալով Դ. Դեմիրճյանն ասաց, որ հայ նոր գրականության հիմնադիր Աբովյանը ստեղծագործել է բոլոր ժանրերով։ Նա տվել է լեգենդներ, առակներ, նովելներ, ժողովրդական վեպ և այլն։ Նրա մտահոգությունն էր տալ լայն կտավ և նրան հաջողվեց այդ։ Աբովյանի բուն սկզբունքը ժողովրդայնությունն էր և այդ նա արտահայտեց իր բոլոր ստեղծագործությունների մեջ։

Երրորդ զեկուցումով հանդես եկավ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ա. Ղանալանյանը։ «Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը» հարցի մասին խոսելիս նա նշեց, որ Աբովյանը հայ նոր գրականության առաջին մեծ հեղինակն է ըստ ժամանակի, որի գրական ստեղծագործությունները բազմակողմանի ու խորը կերպով կապված են ժողովրդի բանավոր ստեղծագործությունների հետ։

Խաչատուր Աբովյանը իր գրական գործունեությամբ խոշորագույն գործ է կատարել գրականությունը ժողովրդայնացնելու, այն լայն մասսաներին հասկանալի ու հարազատ դարձնելու համար։

Սեսիայի վերջին նիստում, որը կայացավ սեպտեմբերի 24-ի երեկոյան, լսվեց ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Դ. Այվազյանի զեկուցումը «Աբովյանը և ժողովուրդների բարեկամությունը» թեմայով։

Սրանով Գրականության ինստիտուտի գիտական 7-րդ սեսիան ավարտեց իր աշխատանքները։

Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրության դպրոցների գիտա-հետազոտական ինստիտուտն ավարտեց Խ. Աբովյանի մահվան 100-ամյակի կապակցությամբ հրավիրված գիտական սեսիան, որը նվիրված էր հայ մեծ լուսավորչի մանկավարժական հայացքների լուսաբանմանը։

Գիտական սեսիայում զեկուցումներով հանդես եկան պրոֆ. Մ. Սանթրոսյանը— «Խ. Աբովյանի մանկավարժական հայացքների քաղաքական և փիլիսոփայական հիմունքները», գիտական աշխատողներ Ս. Մովսիսյանը— «Խ. Աբովյանը բարոյական դաստիարակության մասին», Ս. Խուդոյանը— «Աբովյանի դիդակտիկ հայացքները» և Հր. Քարամյանը— «Խ. Աբովյանի դերը հայ դեմոկրատական-մանկավարժական մտքի զարգացման մեջ» թեմաներով։

Պրոֆ. Մ. Սանթրոսյանը, խոսելով Աբովյանի աշխարհայացքի մասին, ընդգծեց այն սերտ կապերը, որ նա ունեցել է ռուս անվանի մանկավարժների հետ։ Զեկուցողը նշեց Աբովյանի անձնական հանդիպման փաստը ռուս գրող-բանաստեղծ Ժուկովսկու հետ և Աբովյանի գրական ծանոթությունը ռուս առաջադեմ մտքի, Լոմոնոսովի, Կարամզինի, Դերժավինի, Կռիլովի ստեղծագործությունների հետ. Աբովյանը եռանդով ուսումնասիրել է ռուսաց լեզուն և գրականությունը։

Աբովյանը,— ասում է զեկուցողը,— մոտիկ հարաբերությունների մեջ էր գտնվում այրբեջանական մտածող Մ. Ֆ. Ախունդովի, Մ. Շաֆիի հետ։ Նա ծանոթ էր վրաց հասարակական գործիչ Չուբալիշվիլուն։ Ահա հենց այս ինտերնացիոնալ շրջապատն էլ Աբովյանի հասարակական-քաղաքական հայացքների ձևավորման համար մեծ նշանակություն է ունեցել։

«Խ. Աբովյանը բարոյական դաստիարակության մասին» նյութին է նվիրում իր զեկուցումը Ս. Մովսիսյանը։ Մինչ ռևոլուցիոն շրջանի հայ մանկավարժական մտքի պատմության մեջ,— ասում է նա,— բացառիկ տեղ է գրավում Խ. Աբովյանի մշակած բարոյական դաստիարակության սիստեմը։ Այդ սիստեմի շարադրանքը արտահայտված է Աբովյանի «Տիգրանի պատմությունը» կլասիկ աշխատության մեջ։

Բարոյական դաստիարակության հիմնական բովանդակությունը Աբովյանի մոտ հանդիսանում է հայրենասիրությունը, որը շաղկապված է դեպի մյուս ժողովուրդները ունեցած հարգանքի հետ։ Հենց սրանով էլ դրսևորվում է Աբովյանի ազգերի իրավահավասարության և համերաշխության իդեան։

Ըստ Աբովյանի, երեխայի բարոյական դաստիարակության բովանդակությունը պետք է կազմեն ջերմ հայրենասիրությունը, հումանիզմը, աշխատասիրությունը, կարգապահությունը և հաստատակամությունը։ Նրա բարոյական դաստիարակության հայացքների մի զգալի մասը համընկնում է ռուս ռևոլուցիոներ դեմոկրատ Բելինսկու հայացքներին։

Սեսիայում, իր զեկուցման մեջ խոսելով Խ. Աբովյանի դիդակտիկական հայացքների մասին, Ս. Խուդոյանը ասում է.— Աբովյանի ինքնատիպ մանկավարժությունը բազմակողմանի է և հարուստ։ Աբովյանի մոտ դաստիարակությունը և կրթությունը հանդես են գալիս միասնաբար, որպես միևնույն պրոցեսի տարբեր, բայց իրար հետ սերտ կապված ու միմյանց պայմանավորող կողմեր։

Հայ դեմոկրատական մանկավարժության զարգացման գործում չափազանց մեծ է Աբովյանի դերը,— ասում է Հր. Քարամյանը։

Աբովյանը հայ իրականության մեջ հանդիսացավ առաջին մանկավարժը, որ իր հայացքներով վճռականապես դուրս եկավ խայիֆայական դպրոցում գործադրվող մարմնական պատիժների դեմ։ Նրան հետևեցին և Նալբանդյանը, Աղայանը, Պողոսյանը, մանավանդ Աղայանը, որոնք հետևողականորեն շարունակեցին և զարգացրին Աբովյանի մանկավարժական ուսմունքը։

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐ

Խաչատուր Աբովյանի մահվան 100-ամյակի առթիվ Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի Պետական համալսարանում կազմակերպված է ցուցահանդես։ Սեպտեմբերի 15-ին տեղի ունեցավ ցուցահանդեսի բացումը։ Ցուցադրված նյութերը լուսաբանում

են մեծ լուսավորչի կյանքը, մանկության տարիները, նրա էպոխան. բաժիններից մեկը պատկերում է Աբովյանը Դորպատում։ Հետաքրքրական է «Գրական ժառանգություն» վերնագիրը կրող բաժինը, ուր ցուցադրված են հարուստ նյութեր Աբովյանի ստեղծագործություններից։ Ցուցահանդեսի կարևոր բաժիններից մեկն էլ «Աբովյանը աշխարհիկ վեպի հիմնադիր» բաժինն է, որտեղ իլյուստրացիաներով լուսաբանված են «Վերք Հայաստանի» վեպի վարիանտները և հրատարակությունները։

❁❁❁

Հայկական ՍՍՌ Պետական պատկերասրահում սեպտեմբերի 22-ին տեղի ունեցավ հայ նոր գրականության հիմնադիր, մեծ դեմոկրատ-լուսավորիչ Խ. Աբովյանի մահվան 100-ամյակի առթիվ կազմակերպված հոբելյանական ցուցահանդեսի հանդիսավոր բացումը։ Բացման ներկա էին մայրաքաղաքի գրականության, արվեստի, կուլտուրայի բնագավառների աշխատողներ, գրողներ, կերպարվեստագետներ, ուսանողներ և աշխատավորության այլ ներկայացուցիչներ։

Ցուցահանդեսի բացմանը ներկա էին նաև հոբելյանական հանդեսին հրավիրված եղբայրական ռեսպուբլիկաների դելեգացիաները, Մոսկվայից, Ուկրաինայից և այլ վայրերից եկած հյուրերը։

Ցուցահանդեսը բացեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի գիտական քարտուղար Ղ. Այվազյանը։

Մոսկվայի աշխատավորության ու գրողների անունից ողջույնի խոսք ասաց պրոֆ. Վ. Կիրպոտինը։ Նա համառոտակի կերպով բնութագրելով Աբովյանի անցած ուղին և դերը հայ նոր գրականության ու աշխարհիկ լեզվի հիմնադրման, ինչպես նաև նրա ծառայությունը հայ և ռուս ժողովուրդների բարեկամության ստեղծման գործում, նշեց, որ Աբովյանի երազներն այժմ իրականացված են շնորհիվ բոլշևիկների պարտիայի ու ընկեր Ստալինի անմիջական ղեկավարության։

Պրոֆ. Կիրպոտինը վերջում նշեց, որ Աբովյանի ստեղծագործությունների յուրաքանչյուր տողը արտահայտում է ռուս մեծ ժողովրդի և հայ ժողովրդի միջև բարեկամություն ստեղծելու ձգտումը։

Ուկրաինական Սովետական գրողների միության անունից ողջույնի ջերմ խոսք ասաց բանաստեղծ Մ. Տալալաևսկին։ Նա,

Քանդակագործ Ա. Տեր-Մարուքյանը իր արվեստանոցում (Փարիզ) կերտում է Խ. Աբովյանի հուշարձանը. այդ հուշարձանը ներկայումս կանգնեցված է Երևանի Աբովյանի հրապարակում։

ընութագրելով Խ. Աբովյանին որպես հայ ժողովրդի արժանավոր զավակի, ասաց, որ Աբովյանը ոչ միայն հայ ժողովրդի գրողն է, այլ և մեր՝ Ուկրաինայի պատվավոր գրողն է։

Հայաստանի Սովետական գրողների միության անունից ողջույնի խոսք ասաց Ստ. Ջորյանը։

Աբովյանը հայ ժողովրդի ձգտումն է դեպի ազատություն, լուսավորություն, նա եղել է մեր ազատության զանգը, Աբովյանը հայ ժողովրդի սիմվոլն է,— ասաց Ջորյանը։

Այնուհետև հյուրերը և ներկա գտնվողները մեծ հետաքրքրությամբ դիտեցին բովանդակալից ցուցահանդեսը։

❁❁❁

Երևանի Պետական Մանկավարժական ինստիտուտում սեպտեմբերի 15-ին բացվեց խաչատուր Աբովյանի մահվան 100-ամյակին նվիրված ցուցահանդեսը։ Սեպտեմբերի 20-ին ինստիտուտի ուսանողության և դասախոսական կազմի համար տեղի ունեցավ հանդիսավոր երեկո՝ Աբովյանի հոբելյանի առթիվ։

❁❁❁

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից կուլտուր-լուսավորական հիմնարկների գործերի ռեսպուբլիկական կոմիտեի գիտա-լուսավորական թանգարանը կազմակերպել է Աբովյանի կյանքը պատկերող շքեղ հրշիկ ցուցահանդես շրջանների համար։ Այդ առթիվ ռեսպուբլիկայի նկարիչները նկարել են Աբովյանի բնակավայրը, մանկության շրջանը, գրական գործունեությունը և մեծ հումանիստի կյանքի այլ կողմերը լուսաբանող նկարներ։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՆՈՐ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՎԻՐՎԱԾ Խ. ԱԲՈՎՅԱՆԻՆ

Խ. Աբովյանի մահվան 100-ամյակի կապակցությամբ Հայաստանի սովետական կոմպոզիտորներն ստեղծել են մի շարք երգեր, ռոմանսներ և խմբերգեր։

Վերջերս Կոմպոզիտորների միության մասսայական վոկալ-գործիքային ստեղծագործական սեկցիայում այդ ստեղծագործությունների նախնական ունկնդրման և քննարկման ընթացքում նշվեցին նրանց մեջ եղած թերությունները, որոնց շտկման վրա աշխատելուց հետո, սեպտեմբերի 17-ին Կոմպոզիտորների միության ստեղծագործական ընդլայնած ժողովում կատարվեցին սովետահայ կոմպոզիտորների Խ. Աբովյանին նվիրված լավագույն ստեղծագործությունները։ Լսվեցին Կ. Զաքարյանի, Վ. Արարատյանի, Վ. Տիգրանյանի, Մ. Աղաջանի և ուրիշների գործերը։ Աբովյանին նվիրված երգերը կատարեցին ժողովրդական արտիստ Նարա Տալյանը, վաստակավոր արտիստներ Ա. Տեր-Աբրահամյանը և Ա. Պետրոսյանը։ Նվագակցում էին դաշնակահարուհիներ Ա. Ազիզյանը և Ն. Տեր-Ղևոնդյանը։

Ցուցադրված գործերից կոմպոզիտոր Վ. Արարատյանի երգը, գրված Խ. Աբովյանի տեքստով («Աղասու սրտի տխրությունը»), աչքի է ընկնում իր տրամադրող և էմոցիոնալ մեղեդիայով։ Երաժշտությունը ելնում է բանաստեղծական տեքստի բովանդակությունից և չերմ անմիջականությունից։ Երգը գրված է կուպլետային ձևով։

Հաջող է կոմպոզիտոր Վ. Տիգրանյանի երգը՝ «Աչքս ճամփին» (ըստ Խ. Աբովյանի բայաթի-քառյակների)։ Կոմպոզիտորը ստեղծել է տեքստի հետ սերտորեն միաձուլված երաժշտություն, որը հուզում է ունկնդրին և տպավորվում հիշողության մեջ։

Կոմպոզիտոր Մ. Աղայանի գրած «Աղասու երգը» վառ է իր մեղեդիայով։ Կոմպոզիտորն օգտագործել է Լոռում տարածված ու երգվող ժողովրդական մեղեդիան և մշակել է այն։

Ստեղծագործական ընդլայնված ժողովում կատարվեցին նաև կոմպոզիտոր Կ. Զաքարյանի «Աղասի» օպերայի (ըստ Աբովյանի «Վերք Հայաստանի») երեք ֆրագմենտները —Նազլուի արիան, Աղասու երգն ու արիան։ Ցուցադրված ֆրագմենտները հետաքրքիր են իրենց բազմազան երաժշտական նյութով։ Ժողովը որոշեց Կ. Զաքարյանի «Աղասի» օպերան առաջիկայում ամբողջովին լսել և լայն քննարկման դնել։

Խ. Աբովյանի տեքստերի վրա վոկալ ստեղծագործություններ են հորինել նաև կոմպոզիտորներ Ա. Մանուկյանը, Վ. Ումր-Շատը, Տ. Ավետիսյանը։ Կոմպոզիտորներ Մ. Միրզոյանը և Ա. Տեր-Ղևոնդյանը իրենց

երգերը գրել են սովետահայ պոետներ Ս. Կապուտիկյանի և Մ. Կորյունի Աբովյանին նվիրված բանաստեղծությունների տեքստերի հիման վրա։

***

Սովետահայ կոմպոզիտորների Աբովյանին նվիրված հաջող գործերը կատարվեցին Աբովյանի մահվան 100-ամյակի կապակցությամբ կայացած հոբելյանական նիստի գրական-գեղարվեստական բաժնում։

***

Ռեսպուբլիկայի լավագույն գուսանները հայ մեծ լուսավորչի մահվան 100-ամյակի առթիվ իրենց գրած նոր երգերը ներկայացրին ժողովրդական ստեղծագործության տանը։

Գոռան Հավասին հանձնեց «Խաչատուր Աբովյանին» գրած իր երկու նոր երգը, Վերգին հանձնեց «Դաստան», գուսաններ Սերոբը և Եգորը հանձնեցին «Աբովյանին» գրած իրենց երգերը։

ԿԻՆՈ-ԱԿՆԱՐԿ

Երևանի կինոստուդիան պատրաստում է հատուկ կինո-ակնարկ՝ նվիրված Խ. Աբովյանի մահվան 100-ամյակին։ Այսպես օրինակ, դիտողը կտեսնի XIX դարի հուշարձաններ, նկարներ ու փորագրություններ, ստեղծագործել է Խ. Աբովյանը։



Դորպատի (Ներկայումս Տարտու, Էստոնական ՍՍՌ) համալսարանը, ուր ուսանել է Խաչատուր Աբովյանը

Ակնարկը, որը մեծ մասամբ նկարահանվելու է անվանի նկարիչների գեղարվեստական նկարներից, գրավյուրներից, արտացոլելու է այն դարաշրջանը, երբ ապրել ու որոնք պատկերում են Երևանի բերդի առումը և պարսիկների արտաքսումը 1827 թվին ռուսների կողմից։

Նկարահանվում են այն պատմական վայ-

բերը, որոնք կապված են մեծ գրողի կյանքի ու գործունեության հետ (Քանաքեռ, Երևան, Էջմիածին, Թբիլիսի, Դորպատ)։

Մեծ ուշադրություն է դարձվում Խ. Աբովյանի աշխատությունների, ձեռագրերի, «Վերք Հայաստանի» գրքի ու այլ երկերի ցուցադրմանը։ Կինո-ակնարկի եզրափակիչ մասը նվիրված կլինի ժամանակակից Հայաստանին։

Կինո-ակնարկում ցուցադրվելու են նաև մեր նկարիչների հետևյալ գործերը.— «Աբովյանի Արարատի գագաթը բարձրանալը», «Աբովյանի հանդիպումը ռուս բանաստեղծ Վ. Ժուկովսկու հետ», «Աբովյանը աշակերտների շրջանում», «Աբովյանը գյուղացիների շրջանում» և այլն։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏՈՒՄ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետը, հաշվի առնելով պարտիական, սովետական և պրոֆեսիոնալ կազմակերպությունների միջնորդությունը և նպատակ ունենալով հավերժացնել հայ նոր գրականության ու գրական նոր լեզվի հիմնադիր դեմոկրատ-լուսավորիչ Խաչատուր Աբովյանի հիշատակը, նրա մահվան 100-ամյակի կապակցությամբ որոշեց.

ա) Խաչատուր Աբովյանի անունով կոչել Երևանի Հայկական պետական մանկավարժական ինստիտուտը։

բ) Խաչատուր Աբովյանի անունով կոչել Էջմիածնի մանկավարժական ուսումնարանը։

գ) Երևան քաղաքում կանգնեցնել Խաչատուր Աբովյանի նոր հուշարձան։

դ) Սահմանել Խաչատուր Աբովյանի անվան ուսանողական 5 թոշակ—2 թոշակ Պետական համալսարանում, յուրաքանչյուրը ամսական 400 ռ., երկուսը Երևանի պետական Հայկական մանկավարժական ինստիտուտում, յուրաքանչյուրը ամսական 400 ռ. և մեկը Երևանի Ռուսական մանկավարժական ինստիտուտում, ամսական 400 ռուբլու չափով, ինչպես նաև ասպիրանտական մեկ թոշակ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Աբեղյանի անվան Լեզվի և գրականության ինստիտուտում՝ ամսական 600 ռուբլու չափով։

ե) 1948—1949 թվերին ավարտել Խաչատուր Աբովյանի երկերի լիակատար ժողովածուի հրատարակությունը 8 հատորով։

ԱԲՈՎՅԱՆԻ ՆՈՐ ՀՈՒՇԱՐՁԱՆ

Արվեստի վաստակավոր գործիչ, քանդակագործ Ս. Ստեփանյանը ներկայումս աշխատում է Խ. Աբովյանի հուշարձանի նախագծի վրա։ Նա այդ աշխատանքն սկսել է հունիսին և արդեն ավարտել է մի քանի էսքիզներ։ Վարիանտներից մեկը պատկերում է Աբովյանին՝ ծածանվող վերարկվով Զանգվի ափին կանգնած։ Աշխատանքի ընթացքում քանդակագործը ուշադիր կերպով ուսումնասիրել է Աբովյանի պորտրեները, մանրամասն ծանոթացել է կենսագրական ու մեմուարային նյութերի հետ։ Գրողի, բրոնզից ձուլված, երեք մետր բարձրությամբ արձանը դրվելու է գրանիտե պատվանդանի վրա, որը զարդարված է լինելու սյուներով և «Վերք Հայաստանի» վեպի զանազան էպիզոդները պատկերող բրոնզե բարելիֆներով։

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԻՄԱՆԿԱՐԻ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի մահվան 100-ամյակի առթիվ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Արվեստի գործերի վարչությունը հայտարարել էր գեղանկարչության, քանդակագործության և գրաֆիկայի գծով Աբովյանի լավագույն դիմանկարի մրցանակաբաշխություն։

Մրցանակաբաշխության ժյուրիին ներկա-

յացված էր գեղանկարչական, քանդակագործական և գրաֆիկական 35 աշխատանք։

Դիմանկարի կատարյալ նմանության շը-հասնելու պատճառով, առաջին կարգի մրցանակ չտրվեց ոչ մեկին։

Ժյուրիի որոշմամբ գեղանկարչության գծով «նախաշավիղ» դեվիզով ներկայացված աշխատանքի հեղինակ, նկարիչ Հով. Զարդարյանին հատկացվեց երկրորդ կարգի մրցանակ 15 հազար ռուբլի գումարով։ «Ցան» դեվիզով ներկայացված աշխատանքի հեղինակ, նկարիչ Էդ. Իսաբեկյանին հատկացվեց երրորդ կարգի մրցանակ 10 հազար ռուբլի գումարով, «Հրազգան» դեվիզով ներկայացված աշխատանքի հեղինակ, նկարիչ Ա. Բեքարյանին հատկացվեց երրորդ կարգի մրցանակ 10 հազար ռուբլի գումարով։ «Վերք» դեվիզով ներկայացված քանդակագործական դիմանկարի հեղինակ քանդակագործ Ն. Նիկողոսյանին հատկացվեց երկրորդ կարգի մրցանակ 10 հազար ռուբլի գումարով։ «Վերք» դեվիզով ներկայացված գրաֆիկական աշխատանքի հեղինակ Հր. Ռուխկյանը արժանացավ խրատանքի 4 հազար ռուբլի գումարի պարգևատրումով։

Խ. Աբովյանի դիմանկարը (երկրորդ կարգի մրցանակի արժանացած) գործ նկարիչ Հով. Զարդարյանի

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱՄԲՈՂՋ ԵՐԿԻՐԸ ՆՇՈՒՄ Է ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՍԱՀՎԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Սեպտեմբերի 16-ին Միությունների տան Սյունազարդ դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված հայ մեծ գրող Խ. Աբովյանի մահվան 100-ամյակին։

Նիստի նախագահության մեջ են գիտության ու գրականության գործիչներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, Սովետական Միության հերոսներ, Հայկական ՍՍՌ կառավարության անդամներ։

Դահլիճում հավաքվել են գիտնականներ, գրողներ, արվեստի աշխատողներ, ուսանողներ, մայրաքաղաքի ձեռնարկությունների ներկայացուցիչներ։

Նիստը բացեց գրող Բորիս Գորբատովը։

—Հարյուր տարի է անցել Խաչատուր Աբովյանի մահվան օրից,— ասաց Բ. Գորբատովը,— բայց նա այսօր ևս ապրում է բազմազգ Սովետական Միության ժողովուրդների հիշողության մեջ։ Ապրում են նրա գրքերը, ստալինյան էպոխայի կենարար արևի տակ ապրում ու ծաղկում է ռուս և հայ ժողովուրդների մեջ բարեկամությունը, որի մասին այնքան երազել է Խաչատուր Աբովյանը։

Խաչատուր Աբովյանի կյանքին ու ստեղծագործությանը նվիրված զեկուցումով հանդես եկավ պրոֆ. Գ. Աբովը։ Բնութագրելով պարսկական և թուրքական տիրապետության այն դարաշրջանը, երբ ապրում էր մեծ գրողը, զեկուցողը լուսաբանեց Աբովյանի դերը բազմադարյան ստրկությունից Հայաստանի ազատագրվելու գործում։

Երկրորդ զեկուցումը տվեց պրոֆ. Վ. Կիրպոտինը։

—Խաչատուր Աբովյանը,— ասաց նա,— հանդիսացավ հայ նոր գրական լեզվի նախահայրը։ Այդ իսկական ժողովրդական լեզվով գրվել է «Վերք Հայաստանի» վեպը, որը պատմում է ռուսների և հայերի համատեղ պայքարի մասին պարսկական խանների դեմ։ Այդ խոշորագույն ստեղծագործությունը մի ամբողջ դարաշրջան կազմեց հայ գրականության պատմության մեջ։ Աբովյանի ժամանակներից ի վեր հայ գրականությունը բռնում է ռեալիզմի ուղին։

—Խաչատուր Աբովյանը,— ասաց վերջում զեկուցողը,— հայ և ռուս ժողովրդի սիրո ու բարեկամության մունետիկն էր, մի բարեկամություն, որն այժմ սովետական տարիներին անխախտ է դարձել։

Տեղի ունեցած մեծ համերգին մասնակցեցին Մոսկվայի և Հայաստանի արտիստները։ Կատարվեցին հատվածներ Խաչատուր Աբովյանի երկերից, Հայաստանի ժողովրդական երգեր ու պարեր։

ՈՒԿՐԱՅԻՆԱՅՈՒՄ

ԿԻԵՎ, 20 սեպտեմբերի. — Սովետական Ուկրաինայի հասարակայնությունը պատրաստվում է լայնորեն նշելու հայ նոր գրականության հիմնադիր Խ. Աբովյանի մահվան 100-ամյակը։ Ուկրաինական ՍՍՌ Սովետական գրողների միության նախագահությունը ստեղծել է հոբելյանական հանձնաժողով։

Գեղարվեստական գրականության ռեսպուբլիկական հրատարակչությունը ուկրաիներեն լեզվով լույս է ընծայել հայ մեծ գրողի ընտիր երկերի մի հատորյակ։ Նրա մեջ զետեղված են «Վերք Հայաստանի» վեպը և գրողի բանաստեղծությունները, որոնց թարգմանությունը կատարել են Ստալինյան մրցանակի լաուրեատներ Մ. Ռիլսկին, Վ. Սոսյուրան, Ա. Մալիշկոն և ուրիշներ։

Գրական-գեղարվեստական ժուռնալները իրենց սեպտեմբերի համարներում հատուկ բաժիններ են նվիրում Խ. Աբովյանին։ Զետեղվում են հայ մեծ գրողի կյանքին ու ստեղծագործությանը նվիրված հոդվածներ, նրա բանաստեղծությունները թարգմանված ուկրաիներեն լեզվով։

Սեպտեմբերի 18-ին Ուկրաինայի գրողների դելեգացիան Կիևից մեկնեց Երևան, որտեղ սեպտեմբերի 23-ին նշվելու է հայ նոր գրականության հիմնադիր Խ. Աբովյանի մահվան 100-ամյակը։ Դելեգացիայի կազմի մեջ մտնում են Պ. Տիչինան (դելեգացիայի ղեկավար), գրողներ Ա. Իլչենկոն, Մ. Տալալաևսկին, Դ. Բելոուսը։ Դելեգացիան իր հետ տանում է Խ. Աբովյանի երկերի մի հատորյակը, հրատարակված ուկրաիներեն լեզվով, որը խմբագրել է բանաստեղծ ակադեմիկոս Պ. Տիչինան։

ԿԻԵՎ, 23 սեպտեմբերի.— Կիևի գրական հասարակայնությունը նշեց հայ գրականության կլասիկ Խ. Աբովյանի մահվան 100-ամյակը։

Ուկրաինայի Սովետական գրողների միության ակումբում երեկո տեղի ունեցավ։ Դահլիճում հավաքվել էին գրողներ, քննադատներ, ՈՒՍՍՌ-ի Գիտությունների Ակադեմիայի Գրականության ինստիտուտի աշխատողներ, կոմպոզիտորներ, ժուռնալիստներ։

«Խաչատուր Աբովյանի կյանքն ու ստեղծագործությունը» զեկուցումով հանդես եկավ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ս. Կրիժանովսկին։ Այնուհետև պոետները և գրողները կարդացին հայ գրականության կլասիկ Խ. Աբովյանի երկերի իրենց թարգմանությունները։ Վերջում համերգ տրվեց։

***

Խարկովի Կորոլենկոի անվան քաղաքային գրադարանում կազմակերպվել է մեծ ցուցահանդես Խ. Աբովյանի երկերի ու նրա ստեղծագործության վերաբերյալ գրականության։

Ուկրաինական ռադիոկոմիտեն կազմակերպել է Խ. Աբովյանին նվիրված գրական-երաժշտական հաղորդումներ։

ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

ԲԱԳՈՒ, 20 սեպտեմբերի.— Ադրբեջանի հասարակայնությունը լայնորեն նշում է եղբայրական Հայաստանի մեծ գրող Խ. Աբովյանի մահվան 100-ամյակը։ Կուլտուր-լուսավորական հիմնարկների գործերի կոմիտեն ռեսպուբլիկայի քաղաքներում, գյուղերում և նորակառույցներում կազմակերպել է ականավոր գրողի կյանքին և ստեղծագործությանը նվիրված դասախոսություններ ու զեկուցումներ։ Աշխատավորներին Աբովյանի կյանքի հետ ծանոթացնելու գործին ակտիվ մասնակցում են ռեսպուբլիկայի գրողները։ Գրողներ Ս. Այվազյանը, Դ. Գևորգյանը կարդացել են Աբովյանին նվիրված դասախոսությունների մի ցիկլ ռեսպուբլիկայի խանլարի, Շահումյանի, Շամախու, Կասում-Իզմայիլովի, Իսմայիլլի, Աղսուի և այլ շրջաններում։ Ռեսպուբլիկական թերթերում, ինչպես նաև Ստեփանակերտի, Կիրովաբադի թերթերում հոդվածներ են տպագրվում Խ. Աբովյանի կյանքի և ստեղծագործության մասին։ Հայերեն «Կոմունիստ» թերթում հրապարակվել են ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Գ. Անտոնյանի հոդվածները, որոնք բնորոշում են Աբովյանին, որպես Անդրկովկասի առաջադեմ գրողներից մեկը, որը շատ բան է արել հայ և ադրբեջանական ժողովուրդների բարեկամությունն ամրապնդելու համար։ Ազերնեշր հրատարակչությունը ադրբեջաներեն լեզվով տպագրության է պատրաստել Աբովյանի երկերի ժողովածուն, բանաստեղծ Օսման Սարիվելիի խմբագրությամբ, Ավազ Սադրխովի թարգմանությամբ։ Այդ ժողովածուի համար մեծ առաջաբան է գրել ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր պրոֆ. Միքայիլ Ռաֆիլին։

Բաքվի ձեռնարկություններում, ուսումնական հաստատություններում, կուլտուրայի պալատներում, ակումբներում, գրադարաններում տեղի են ունենում զեկուցումներ, գրույցներ։ Կազմակերպվել են Աբովյանի մահվան 100-ամյա հոբելյանին նվիրված ցուցահանդեսներ։ Աբովյանի մասին բազմաթիվ նյութեր պարունակող մեծ ցուցահանդես է կազմակերպել Ադրբեջանի Գիտությունների Ակադեմիան։ Գիտությունների Ակադեմիայի Գրականության ինստիտուտում և Նիզամիի անվան գրադարանում, Բաքվի մանկավարժական ու ուսուցչական ինստիտուտներում կազմակերպվել են դասախոսություններ հետևյալ թեմաներով՝ «Աբովյանը և ադրբեջանական գրականությունը», «Աբովյանի դերը հայ նոր գրական լեզվի զարգացման գործում», «Ինտերնացիոնալիզմը Աբովյանի ստեղծագործության մեջ»։ Քաղաքի գրադարաններում կազմակերպված ընթերցողների գրական կոնֆերանսներում քննարկվում է «Վերք Հայաստանի» վեպը։ Մեծ երեկույթ է պատրաստում Ադրբեջանի Սովետական գրողների միությունը՝ Աբովյանի կյանքին ու ստեղծագործությանը նվիրված զեկուցում է կարդալու հայերեն «Կոմունիստ» թերթի խմբագիր Համո Ամիրխանյանը։ Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Գ. Անտոնյանը հանդես կգա «Աբովյանը և ադրբեջանական գրականությունը» զեկուցումով։ Աբովյանին նվիրված իրենց բանաստեղծությունների ընթերցանությամբ հանդես կգան բանաստեղծներ Սուլեյման Ռուստամը, Մահմեդ Ռահիմը, Օսման Սարիվելին, Սամվել Գրիգորյանը, Համո Սահյանը, Մարիա Հակոբյանը և ուրիշներ։

Հոբելյանին նախապատրաստվում են նաև Լենինական Ղարարաղի ու Նախիջևանի ԱՍՍՌ-ի քաղաքներում ու գյուղերում։ Կուլտուրայի պալատներում, ակումբներում, դաշտակայաններում կարդացվել է Աբովյանի կյանքին ու ստեղծագործությանը նվիրված ավելի քան 150 զեկուցում։ Կիրովաբադի հասարակայնությունը կազմակերպում է գրական երեկույթ, որին կմասնակցեն գրողներ Ալեքսեր Ջհատայը, Ֆարիդա Ալյարբեկովան, Ադրբեջանական ու Հայկական դրամատիկ թատրոնների դերասանները։

***

Ազերնեշր հրատարակչությունը Խ. Աբովյանի մահվան 100-ամյակի օրերին լույս ընծայեց ադրբեջաներեն լեզվով Խ. Աբովյանի «Բանաստեղծություններ ու պատմվածքներ» ժողովածուն, որի հառաջաբանը գրել է Միքայիլ Ռաֆիլին։ Ժողովածուի մեջ տեղ գտած բանաստեղծությունների ու պատմվածքների թարգմանությունները կատարել են Ս. Ռուստամը, Օ. Սարիվելին, Մ. Ռահիմը, Ջ. Մամեդովը, Ի. Ռեմզին։

Երևանում, Խաչատուր Աբովյանի մահվան 100-ամյակին նվիրված հանդիսավոր նիստին պոետ Սամեդ Վուրգունը այդ ժողովածուն մատուցեց որպես նվեր Հայաստանի աշխատավորությանը Ադրբեջանի Սովետական գրողներից։

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

ԹԲԻԼԻՍԻ, 20 սեպտեմբերի.— Վրաստանի հասարակայնությունը եռանդուն կերպով նախապատրաստվում է նշելու հայ նոր գրականության հիմնադիր մեծ գրող Խ. Աբովյանի մահվան 100-ամյակը։

Վրաստանի հանրային գրադարանը, Ակակի Մերեթելու անվան գրական թանգարանը և Վրաստանի քաղաքների ակումբները, գրադարանները և այլ կուլտուր-լուսավորական հիմնարկներ կազմակերպել են Խ. Աբովյանի կյանքին և հասարակական ու գրական գործունեությանը նվիրված մեծ ցուցահանդեսներ։ Ռեսպուբլիկական «Մնաթոբի» գրական ամսագիրը հատուկ համար է նվիրում նշանավոր տարեթվին։ Մի շարք կենսագրական, գրականագիտական հոդվածներ են հրապարակում Վրաստանի գրական թանգարանի ալմանախը, ռեսպուբլիկական «Գրականություն և արվեստ» թերթը։ Վրաստանի Սովետական գրողների միության բրիգադան Գորիի, Զիաթուրիի, Գուրջիանիի և այլ շրջանների կոլխոզներում անցեկացրել Խ. Աբովյանի կյանքին և ստեղծագործությանը նվիրված զրույցներ։ Հայ գրականության կլասիկի մահվան 100-ամյակին նվիրված մեծ երեկույթ է կազմակերպվելու Վրաստանի Սովետական գրողների միության ակումբում։ Երևանում հոբելյանական հանդեսին մասնակցելու է Վրաստանի Սովետական գրողների դելեգացիան, որի կազմի մեջ մտնում են Շալվա Դադիանին, Իոսիֆ Գրիշաշվիլին, Ալեկո Միրցխուլավան, Մ. Սեյրանյանը և Մ. Ասլանյանը։

ՈՒԶԲԵԿՍՏԱՆՈՒՄ

ՏԱՇԿԵՆԴ, 20 սեպտեմբերի.— Սովետական ամբողջ երկրի հետ միասին ուզբեկական ժողովուրդը նշում է Խ. Աբովյանի մահվան 100-ամյակը։

Ուզբեկական ՍՍՌ Ալիշեր Նավոիի անվան Պետական հանրային գրադարանը կազմակերպում է հայ մեծ գրողի ստեղծագործությունների ցուցահանդեսը։ Ուզբեկստանի Սովետական գրողների միությունը հոբելյանի օրերին լույս է ընծայելու «Շարք Ցուլդուզ» գրական-հասարակական ամսագրի հերթական համարը։ Ամսագրում առաջին անգամ ուզբեկերեն լեզվով հրապարակվելու են Խ. Աբովյանի մի քանի բանաստեղծություններ։ Բանաստեղծությունների թարգմանությունը կատարել են ուզբեկական գրողներ Միրթեմիրը և Միրմուխսինը։ Ամսագրի նույն համարում հրապարակվում է Ա. Ոսկերչյանի մեծ հոդվածը հայ մեծ գրողի կյանքի և ստեղծագործության մասին։

Ռեսպուբլիկական թերթերը նշանավոր տարեթիվը նշում են Խ. Աբովյանին նվիրած հատուկ էջերով։

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ, ՆՎԻՐՎԱԾ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

Հայ ժողովուրդը օրինական հպարտության զգացումով էր նախապատրաստվում նշանակալից տարեթվին, իր լավագույն զավակներից մեկի, մեծ լուսավորչի և դեմոկրատի, հայ նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանի ողբերգական մահվան 100-ամյակին։

Նախահոբելյանական օրերը վերածվեցին հայ ժողովրդի կուլտուրայի իսկական տոնի, այն ժողովրդի, որի ազատության ու երջանկության համար այնքան անձնուրաց ու կրքոտ կերպով պայքարում էր Աբովյանը։ Այն, ինչի մասին երազում էր մեծ գրողը, դարձավ իրականություն։ Անծայրածիր Սովետական Միության ժողովուրդները, միաձուլված անխախտ սրբազան բարեկամությամբ, ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ, հայ ժողովրդի հետ միասին մեծարում են Խաչատուր Աբովյանի հիշատակը։

Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևան են հավաքվել հանդիսավոր տոնին մասնակցելու համար եղբայրական ռեսպուբլիկաների գրողները։ Հանդիսավոր նիստը սկսվելուց դեռ շատ առաջ ժողովուրդը հավաքվում է Լենինի շքանշանակիր օպերայի ու բալետի Սպենդիարյանի անվան պետական թատրոնի շենքի մոտ։

Դահլիճը լեփ-լեցուն էր։ Այստեղ հավաքվել են պարտիական, սովետական, կոմերիտական կազմակերպությունների ներկայացուցիչները, Սովետական Բանակի ռազմիկներ ու սպաներ, Երևանի գործարանների ու ֆաբրիկաների լավագույն ստախանովականներ, կուլտուրայի, գիտության, արվեստի ականավոր գործիչներ։ Բեմը տոնականորեն

զարդարված է։ Խորքում դափնյա պսակով եզերված մեծ լուսավորչի պորտրեն է դրված։

Նախագահության սեղանի շուրջն են Հայկական ՍՍՌ կառավարության անդամները, ռուս գրողներ Կ. Սիմոնովը, Ն. Տիխոնովը, ուկրաինական գրող Պ. Տիչինան, վրացական գրողներ Շ. Դադիանին, Ի. Գրիշաշվիլին, ադրբեջանական գրող Ս. Վուրղունը, լատվիական գրող Ֆ. Ռոպելնիսը, ռուս գրականագետ Վ. Կիրպոտինը, հայ գրողներ Ա. Խսահակյանը, Դ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Գ. Սարյանը, Հ. Սիրասը, Նկարիչ Մ. Սարյանը և ուրիշներ։

Հանդիսավոր նիստը բացում է Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ Ս. Կարապետյանը։

— Ընկերներ, թանկագին հյուրեր, լրացավ մեծ լուսավորիչ-դեմոկրատ, հայկական նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանի ողբերգական մահվան 100 տարին։ Մեզ հետ միասին այս նշանակալից տարեթիվը նշում են Սովետական Միության բոլոր ժողովուրդները։ Դժվար է գերագնահատել Աբովյանի ականավոր դերը ժողովրդի ինքնագիտակցության զարթոնքի գործում։ Մեծ գրողի գործունեությունն անցել է հետզհետե ուժեղացող հալածանքների պայմաններում։ Աբովյանի գրական հասարակական ամբողջ գործունեությունը ժողովրդի շահերին անձնուրաց կերպով ծառայելու մի փայլուն օրինակ է։

Նշելով Աբովյանի աննկուն կամքը հայ և ռուս ժողովրդների եղբայրական բարեկամությունը ամրապնդելու գործում, Ս. Կարապետյանը շարունակում է.

— 100 տարի առաջ իր նշանավոր «Վերք Հայաստանի» վեպում նա սրտի խորին կսկիծով ցանկանում էր իմանալ այն ուժը, որը փրկություն կբերի հայ ժողովրդին, նրան կվերածնի։ Նա չէր կարող այդ հարցին պատասխանել։ Այդ հարցին պատասխանում ենք մենք՝ նրա ժառանգորդներս։ Գտնվեց այն ուժը, որը վերածնեց հայ ժողովրդին։ Դա սովետական իշխանությունն է։

Լենինի-Ստալինի մեծ պարտիան Հայաստանին տվեց ուժ և առույգություն. նրան հասցրեց չտեսնված ծաղկման։

Թույլ տվեք Խաչատուր Աբովյանի մահվան 100-ամյակին նվիրված հանդիսավոր նիստը հայտարարել բացված։

Հնչում են Հայկական ՍՍՌ Պետական հիմնի հանդիսավոր հնչյունները։

Այնուհետև հանդիսավոր նիստի մասնակիցները հսկայական ոգևորությամբ ընտրում են պատվավոր նախագահություն։

Զեկուցման համար խոսք է տրվում բանաստեղծ Նաիրի Զարյանին։

Զեկուցողը մանրամասնորեն բնութագրելով Աբովյանի կյանքի փառապանծ ուղին, կանգ է առնում նրա գործունեության առանձին փուլերի վրա, բացահայտում է ռեակցիայի ուժերի հետ նրա ընդհարման պատճառները, որոնք մեծ լուսավորչին հանգեցրին ողբերգական մահվան։

— Սովետական Հայաստանի ժողովուրդները,—ավարտում է իր զեկուցումը Ն. Զարյանը,—սիրում և բարձր են գնահատում Խաչատուր Աբովյանի ժառանգությունը, որովհետև հայ կուլտուրայի պատմության մեջ Աբովյանը հանդիսանում է դեմոկրատական հոսանքի ամենալուսավոր կերպարներից մեկը։

Ինչպես անցյալի ժառանգության մեջ եղած ամեն մի կենսունակ ու լուսավորը, այնպես էլ Աբովյանը պատկանում է մեզ, սովետական ժողովրդին։

Իրագործվել է մեծ Լուսավորչի ազնիվ իղձը։ Հայ ժողովուրդը ստեղծել է իր ազատ և լուսավոր պետականությունը սովետական եղբայրական ժողովուրդների անպարտելի ընտանիքում ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ։

Զեկուցումից հետո ողջույնի ճառերով հանդես եկան ՍՍՌՄ Սովետական գրողների միության դելեգացիայի ղեկավար Կ. Սիմոնովը, Սովետական Ուկրաինայի գրողների դելեգացիայի ղեկավար Պ. Տիչինան, Վրաստանի գրողների կողմից Շ. Դադիանին, Ադրբեջանի գրողների կողմից Ս. Վուրղունը, Լատվիայի գրողների կողմից Ֆ. Ռոպելնիսը, «Վերք Հայաստանի» վեպի ռուսերեն թարգմանող Ս. Շերվինսկին։ Իր բանաստեղծության ընթերցումով հանդես եկավ Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ, Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ, բանաստեղծ Ի. Գրիշաշվիլին։ Պատասխան խոսքով հանդես եկավ Հայաստանի Սովետական գրողների միության նախագահ Ավետիք Իսահակյանը։

Ուկրաինայի և Ադրբեջանի գրողները նվեր էին բերել ուկրաիներեն և ադրբեջաներեն լեզուներով հրատարակված, Խաչատուր Աբովյանի ընտիր երկերի մի հատորյակները։

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի

Նախագահի տեղակալ Բ. Ասովածատրյանը հրապարակում է Խաչատուր Աբովյանի հիշատակը հավերժացնելու մասին Հայաստանի կառավարության որոշումը։

Ամբողջ դահլիճի բուռն, երկար չդադարող ծափահարություններ ներքո ընդունվում է ողջույն՝ ուղղված ժողովուրդների առաջնորդ մեծ Ստալինին։

Ընդունվում է ողջույն նաև Հայաստանի բոլշևիկների ղեկավար Գր. Հարությունյանի անունով։

Հայկական ՍՍՌ Պետական հիմնի հնչյունների ներքո Խաչատուր Աբովյանի մահվան 100-ամյակին նվիրված հանդիսավոր նիստը փակվում է։

Վերջում տեղի ունեցավ մեծ համերգ Երևանի արտիստական լավագույն ուժերի մասնակցությամբ։

***

Սեպտեմբերի 24-ին հանդիսավոր նիստի մասնակիցները այցելեցին Քանաքեռ գյուղը, որտեղ դիտեցին այն տունը, ուր ծնվել է հայ մեծանուն գրողը, և նրա անվան թանգարանը։

Այցելողների թվումն էին գրողներ Կ. Սիմոնովը, Ն. Տիխոնովը, Պավլո Տիչինան, Սամեդ Վուրգունը, Մեհտի Հուսեյինը, Վ. Կիրպոտինը, Ն. Զարյանը, Հ. Սիրասը, Գ. Բոյանը։

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ՆՇՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ՈՒ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ

ԼԵՆԻՆԱԿԱՆ, 20 սեպտեմբերի.— Քաղաքի աշխատավորությունը արժանավայել կերպով նշում է հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի հիշատակը։ Քաղաքի բանվորական ակումբներում, գրադարաններում և դպրոցներում կազմակերպված են Խ. Աբովյանի կյանքին ու գրական գործունեությանը նվիրված ցուցափեղկեր։

Քաղսովետի գործկոմի կուլտուրաբաժինը և Քաղաքական ու գիտական գիտելիքների տարածման ընկերությունը Տեքստիլ կոմբինատում, երկաթուղային հանգույցում ու քաղաքի մյուս հիմնարկ-ձեռնարկություններում պարբերաբար կազմակերպում են դասախոսություններ։

Քառամյա Մանկավարժական ինստիտուտում հայտարարված է Խ. Աբովյանի մասին ուսանողների գրած լավագույն ռեֆերատների մրցանակաբաշխություն։ Ինստիտուտը հրավիրում է գիտական սեսիա, նվիրված Խ. Աբովյանի կյանքին ու գրական-հասարակական գործունեությանը։

Ուսուցչի տան քառաձայն երգեցիկ խումբը հոբելյանի օրերին հանդես է գալու հատուկ ծրագրով։ Կոմպոզիտոր Վահան Ոմար-Շատը ձայնագրել է Խ. Աբովյանի մի քանի բանաստեղծությունները։

ԱԼԱՎԵՐԴԻ.— Կուլտուրայի տանը կազմակերպվել է ցուցահանդես նվիրված Խ. Աբովյանի մահվան 100-ամյակին։ Ցուցադրված են Խ. Աբովյանի ժամանակաշրջանին վերաբերող լուսանկարներ, գրականություն և այլ նյութեր։

Շրջկենտրոնի աշխատավորության համար կազմակերպվել են զեկուցումներ Աբովյանի կյանքի և ստեղծագործությունների մասին։

Շրջկենտրոնում, ինչպես նաև Ուզունլար, Թումանյան, Սանահին գյուղերի գրադարաններում կազմակերպվել են Աբովյանին նվիրված հատուկ անկյուններ, որտեղ առանձնացված են Աբովյանին վերաբերող գրքեր, նկարներ, թերթերում, ամսագրերում հրապարակված հոդվածներ, գրական քաղաքական նյութեր։

ԴԻԼԻՋԱՆ.— Կուլտուրայի տանը և քաղաքային գրադարանում ցուցահանդեսներ են կազմակերպվել նվիրված Խ. Աբովյանի բազմակողմանի գրական ու հասարակական գործունեությանը։ Դիլիջանում, Շամախյան, Կույբիշև, Գոշ և շրջանի մյուս գյուղերում հոբելյանական հանդիսավոր նիստեր են գումարվել նվիրված մեծ գրողի կյանքին ու գրական-հասարակական գործունեությանը։

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ.— Քաղաքային գրադարանում կազմակերպվել է Խ. Աբովյանին նվիրված ցուցահանդես։ Կուրթան, Լեչան և մյուս գյուղերի կոլխոզնիկների համար դասախոսություններ են կարդացվել Խ. Աբովյանի մասին։ Ստեփանավանում հանդիսավոր նիստ է գումարվել Աբովյանին նվիրված։

***

Ռեսպուբլիկայի աշխատավորությունը ամենուրեք նշում է Խաչատուր Աբովյանի մահվան 100-ամյակը։

Քաղաքներում— գործարաններում, հիմ-

նարկ-ձեռնարկություններում աշխատավորության համար կազմակերպված են զեկուցումներ, դասախոսություններ, զրույցներ Խ. Աբովյանի կյանքի և գրական գործունեության մասին։

Շրջաններում— կոլխոզներում, սովխոզներում լսվում են զեկուցումներ ու զրույցներ Աբովյանի կյանքի, գործունեության մասին։ Բոլոր շրջանային կենտրոններում, ինչպես և կոլխոզներում հրատարակված են պատի թերթերի հատուկ համարներ՝ նվիրված Աբովյանին։ Առանձին տեղերում — ակումբներում, կուլտ-լուսհիմնարկներում կազմակերպված են ցուցահանդեսներ, որտեղ ցուցադրված են Աբովյանի կյանքն ու գործունեությունը լուսաբանող նյութեր, հոդվածներ, պլակատներ, լուսանկարներ։

Շրջանային ռադիո-լիազորությունները առանձին հոդվածներ են հաղորդել Աբովյանի մասին։ Ռեսպուբլիկայի բոլոր դպրոցների ուսուցչության համար կազմակերպված են զեկուցումներ Աբովյանի կյանքի ու գործունեության մասին։ Դպրոցներում բոլոր դասարանների աշակերտության համար կազմակերպված են զրույցներ։ Դասարանական և ջոկատների պատի թերթերի առանձին համարներ են լույս ընծայված. կազմակերպված են Աբովյանին նվիրված ցուցահանդեսներ։

Աբովյանի բյուստը, որը դրվելու է Արագածի գագաթին։

Ա. Միկոյանի անվան Պատանի հանդիսատեսի թատրոնը Խ. Աբովյանի հոբելյանը

Աբովյանի Արարատի գագաթը բարձրանալը (երրորդ կարգի մրցանակի արժանացած)

Գործ՝ նկարիչ Էդ. Իսաբեկյանի

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից ֆիզկուլտուրայի և սպորտի ռեսպուբլիկական կոմիտեն հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի մահվան 100-ամյակի առթիվ կազմակերպում է ալպինիստական արշավ դեպի Արագածի գագաթը։

Վերելքին մասնակցելու են 40 մարդ։ Նրանք Երևանից դուրս են գալու սեպտեմբերի 25-ի առավոտյան, իրենց հետ տանելով Խ. Աբովյանի բյուստը։

Ա. Գազազյանի «Խաչատուր Աբովյան» պիեսի բեմադրությամբ։ Պիեսը նվիրված է մեծ գրողի կյանքին ու գրական գործունեությանը։ Պիեսը բեմադրել է արվեստի վաստակավոր գործիչ Տ. Շամիրխանյանը։ Պիեսի երաժշտությունը գրել է կոմպոզիտոր Գ. Եղիազարյանը։ Պիեսի պրեմիերան տեղի ունեցավ սեպտեմբերի 23-ին։

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԵՐԵԿՈ ԱԲՈՎՅԱՆԻ ԾՆՆԴԱՎԱՅՐՈՒՄ

Աբովյանի հոբելյանական օրերին հանդիսավոր ու զուգված տեսք ունի Քանաքեռը։ Նրա բնակիչները օրինական հպարտության զգացմունքով նշում են նշանակալից տարեթիվը՝ իրենց մեծ հայրենակից, հայ նոր գրականության ստեղծող Խ. Աբովյանի մահվան 100-ամյակը։

Քանաքեռը անճանաչելի կերպով կերպարանափոխվել է սովետական իշխանության տարիներին։

Նախահոբելյանական օրերին քանաքեռցիները մի առանձին սիրով բարեկարգել են այն հռչակավոր տնակը, որտեղ ծնվել է մեծ գրողը։ Այդտեղ ստեղծված Տուն-թանգարանը հարստացել է նոր նյութերով ու էքսպոնատներով, որոնք արտացոլում են մեծ դեմոկրատ լուսավորչի կյանքն ու գործունեությունը։

Քանաքեռի տոնական զարդարված ակումբում հոբելյանի նախօրյակին՝ սեպտեմբերի 22-ին հավաքվել էին կոլխոզնիկներ, կոլխոզնիկուհիներ, պարտիական ու սովետական կազմակերպությունների ներկայացուցիչներ, որպեսզի նշեն Աբովյանի մահվան 100-ամյակը։

Այդտեղ, մեծ գրողի ծննդավայրն են ժամանել եղբայրական ռեսպուբլիկաների ներկայացուցիչները։ Նախագահության սեղանի շուրջը նստած են Ն. Տիխոնովը, Պ. Տիշինան, Վ. Կիրպոտինը, Մ. Տալալաևսկին, Գ. Բելոուսը, Ս. Իլլենկոն, բանաստեղծուհի Վ. Զվյագինցևան, Ստ. Զորյանը, Ա. Հովսեփյանը, Գ. Աբովը, Աբովյանի ժառանգները։

Հանդիսավոր երեկոն բացեց աշխատավորների դեպուտատների Կոտայքի շրջսովետի գործկոմի նախագահ Մ. Հարությունյանը։

Խաչատուր Աբովյանի կյանքին ու գործունեությանը նվիրված զեկուցումով հանդես եկավ Հայաստանի Սովետական գրողների միության քարտուղար Հր. Քոչարը։

Այնուհետև ողջույնով հանդես է գալիս բանաստեղծ Ն. Տիխոնովը, որին ջերմորեն դիմավորում են ժողովականները։

— Ինձ հուզում է այն հանգամանքը,— ասաց Ն. Տիխոնովը,— որ ես գտնվում եմ մեծ Սրովյանի հայրենիքում և հնարավորություն ունեմ ձեզ ողջունելու ՍՍՌՄ Սովետական գրողների միության անունից։ Աբովյանը կոչ էր անում հաստատել հայ ժողովրդի սրբազան բարեկամությունը ռուս ժողովրդի հետ։ Նրա իղձն իրականացավ։

Ուկրաինական դելեգացիայի անունից հանդես եկած բանաստեղծ Մ. Տալալաևսկին ողջունելով Աբովյանի հայրենակիցներին, մեծ ոգևորությամբ արտասանեց իր բանաստեղծությունը, որը նվիրված է ուկրաինական և հայ ժողովրդի ստալինյան բարեկամության գաղափարին։

Աբովյանին նվիրված իրենց բանաստեղծությունների ընթերցումով հանդես եկան նաև ուկրաինական բանաստեղծ Դ. Բելոուսը և բանաստեղծուհի Ս. Կապուտիկյանը։

Քանաքեռ գյուղի Օրջոնիկիձեի անվան կոլխոզի նախագահ Մ. Մուրադյանի և մեծ գրողի թոռան որդի Ալբերտ Աբովյանի ելույթից հետո հանդիսավոր նիստը փակվում է։

Վերջում տեղի ունեցավ մեծ համերգ Հայֆիլհարմոնիայի ուժերով։

ԱԲՈՎՅԱՆԻ ՏՈՒՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

ՔԱՆԱՔԵՌ.— Խաչատուր Աբովյանի մահվան 100-ամյակի առթիվ ավարտված է Տուն-թանգարանի և նրա շրջակայքի բարեկարգումը։ Ասֆալտապատված են տուն տանող փողոցները, ճանապարհների երկու կողմերում տնկված են ծառեր, կանաչապատված է արձանի շուրջը, հղկված են Տուն-թանգարան տանող ճանապարհի մոտքի կամարները, հիմնականում ավարտված է դիտահրապարակի կառուցումը։ Նորոգված է Տուն-թանգարանի ջենքը, այստեղ կազմակերպված է ցուցահանդես, որտեղ ցուցա-

դրված են Աբովյանի կյանքն ու գործունեությունը պատկերող գրաֆիկ աշխատություններ, պլակատներ։ Տուն-թանգարանի պատին ամրացված է հուշատախտակ՝ Աբովյանի բրոնզե բարելիֆով։ Թանգարանի ցուցահանդեսը հարստացված է նոր էքսպոնատներով։ Մի քանի յուղաներկ նկարներ ու գրաֆիկ աշխատանքներ ներկայացնում են մեծ լուսավորչի կյանքի ու գործունեության հիմնական մոմենտները, ինչպես օրինակ, Աբովյանի «Վերք Հայաստանիս»-ից բարեկենդանի նկարագրությունը, «Աբովյանը Աշտարակում», ըստ Պողոշյանի հուշերի, Աբովյանը ժողովրդական բանահյուսություն հավաքելիս, նաև ադրբեջանական մեծ մրտածողներ Մ. Ախունդովի և Միրզա Շաֆիի հետ, Աբովյանը իր գրվածքը կարդում է իր աշակերտներին, նրա հանդիպումը ռուս մեծ բանաստեղծ, մանկավարժ Ժուկովսկու հետ, Աբովյանի առակներից շատ իլյուստրացիաներ։



Աբովյանի Տուն-թանգարանը



Գ. ՀՍՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎ ՅԱՆԻ ՄԻ ԱՆՏԻՊ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ՃԱՌԸ

Հայ նոր գրականության հիմնադիր Խ. Աբովյանը հարուստ գրական ժառանգություն է թողել, սակայն մինչև վերջին ժամանակներս նրա գրական այդ ժառանգության մի մասը տակավին ընթերցասեր հասարակության լայն խավերի սեփականությունը չէր դարձել։

Նախատովետական շրջանում լուրջ ուշադրություն և գիտական ուսումնասիրության չի արժանացել հայ մեծ լուսավորչի թողած գրական ժառանգությունը։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո միայն անհրաժեշտ ուշադրությունը դարձվեց մեծանուն գրողի թողած գրական ժառանգության վրա։ Հրատարակվեցին Աբովյանի մի շարք երկերը, հավաքվեցին, ուսումնասիրվեցին ու լույս ընծայվեցին նրա կյանքին ու գործունեությանը վերաբերող զանազան արխիվներում պահվող գրեթե բոլոր փաստաթղթերը, հիմք դրվեց նրա գրական ժառանգության գիտական ուսումնասիրությանը— աբովյանագիտությանը։ Լույս են ընծայվել Աբովյանի կյանքին ու ստեղծագործություններին վերաբերող մի շարք գիտական լուրջ ուսումնասիրություններ, առանձին մենագրություններ ու բազմաթիվ հոդվածներ։ Աբովյանի որոշ գրվածքներ լույս են տեսել մի քանի հրատարակությամբ և մեծ տիրաժներով, սակայն անմիջապես ըստվել են։

Աբովյանը օգտվել է գրեթե գրական բոլոր ժանրերից, սակայն, ներկա հոդվածում մեզ հետաքրքրում է միայն դրանցից մեկը, որը վերաբերում է ողբերգ կամ դամբանական ճառ գրելուն։ Այս ժանրը հին պատմություն ունի և անցյալում հայ գրականության մեջ շատ է գործածվել։ Այս ժանրին պատկանող գործերի կարելի է հանդիպել Աբովյանի թե՛ չափածո և թե՛ արձակ գրվածքների մեջ։ Դեռ Դորպատում ուսանելու առաջին տարում նա իր պրոֆեսորի մահվան առթիվ գրել է հետևյալ ողբերգը. «Սուգ ի վերայ մահուան սիրելւոյն իմոյ և ուսուցչի Վալտէրի։ Ի գիշերին, ուր ես պահապան եղէ նմա ի սենեկի իւրումս։ Մի այլ վարիանտում վերնագրված է. «Ողբ ի վերայ դագաղի սիրելւոյն իմոյ Վալտէրի, 1831 սեպտ. 14 Դերպտ»։

Հայրենիքից ստացվող դառնակսկիծ լուրերից մխացել է Աբովյանի գերզգայուն սիրտը և նա այդ լուրերին արձագանքել է ողբերգերով։ 1834 թվի նոյեմբերի 21-ին նա դառնորեն ողբերգել է իր «բազմերախտ դաստիարակի. սիրելի հոր և քաղցր բարեկամիս» մահը։ 1836 թվին հայրենիք վերադառնալուց նա ճանապարհին կանգ է առնում Նոր Նախիջևանում, ուր մայիսի 15-ին այցելության է գնում իր բազմերախտ ուսուցչի՝ Ալամդարյանի շիրիմին. այստեղ Աբովյանը հոծ բազմության առջև մի դամբանական ճառ է ասում, թվելով Ալամդարյանի բարեմասնությունները, որից հետո գրում է իր «Ի վերայ դամբարանի բազմերախտ ուսուցչի իմոյ Յարութիւն վարդապետի Ալամդարեանց ի 1836 ամի ի 15 մայիսի ի Նոր Նախիջևան» բանաստեղծությունը։

Իր հարազատ ժողովրդի լուսավորության դործին ծառայելու վեհ գաղափարներով տոգորված Աբովյանը հայրենիք է վերադառնում. սակայն այստեղ բազմաթիվ խոչընդոտների է հանդիպում և երկար թափառումներից ու մտորումներից հետո, սոսկ գոյությունը պահպանելու համար, ստիպված է լինում արքունական ծառայության մտնել կամ ինչպես ինքն է գրում՝ «Ստիպեալ ի չքաւորութենէ մտի ի պաշտօն արքունական, զոր ո՛չ երբեք կամէիր։ Նրա միակ մխիթարությունը եղել է այն, որ կարողացել է

մասնավոր պանսիոն հիմնել և այստեղ անկաշկանդ կերպով կիրառել մանկավարժական իր նորագույն մեթոդները։ Աբովյանը իրեն ամբողջապես նվիրել է պանսիոնի աշակերտներին. նա նրանց համար թե՛ հոգատար խնամող հայր է հանդիսացել, թե՛ մտերիմ ղրուցակից մեծ ընկեր։ Աբովյանը աշակերտներից անբաժան է եղել. շատ հաճախակի նա մի սեղանի շուրջ աշակերտների հետ ճաշի է նստել, միասին զբոսնել, ամեն քայլափոխի բավարարել նրանց հարցասիրությունը, ուսման սեր ներարկել նրանց մատաղ սրտերում, տոգորել հայրենասիրական վեհ գաղափարներով։ Բավարացի գիտնական Մորից Վագները, մի քանի անգամ այցելելով Աբովյանի պանսիոնը, հիանալի հուշեր է թողել աշակերտների հետ նրա ունեցած փոխհարաբերությունների մասին։ Ահա ինչ է գրում նա. «Շատ անգամ գնացի այս դպրոցը ու հայ տղաների առաջադիմության վրա շատ զարմացա։ Տասը, տասնչորս տարեկան տղաները լավ կարդում ու գրում էին հայերեն, վրացերեն, թաթարերեն, ռուսերեն. գերմաներեն ու ֆրանսերեն։ Իրոք շատ զարմացա. գերմաներեն լավ շեշտելով էին խոսում և իմ առջև ուսուցչի գրել տված բաներից տեսա, որ գերմաներեն լեզվի կազմությունը լավ տեղյակ էին. իմ առջև Գյոթեի ու Շիլլերի գործերը կարդացին։ Ամեն անգամ այս դպրոցը գալիս և այս կայտառ տղաներին տեսնելիս մեծ ուրախություն էի զգում, մանավանդ նրանց բարեկամական ու ընտանեկան մտերմությունը, քաղաքավարությունն ու մարժությունն ինձ շատ էին ուրախացնում։ Իրենց ուսուցչին շատ սիրում էին, որովհետև թե՛ կրթության ու գիտության մեջ հառաջացնելու և թե՛ իրենց հանգստությունը հոգալու համար շատ փութում էր տանում։

Մայիսի տաք ոտերը հասնելուն պես պ. Աբովյանի հետ մեկտեղ Թիֆլիզից եկան նրա բոլոր աշակերտները ձիերով քաղաքից դուրս մեզ ուղեկցեցին։

Այս աշխույժ երիտասարդների տեսքը նորից ինձ ուրախություն բերեց, նրանք անբնակալելի վարժությամբ էին ձիեր խաղացնում։

Քուռ գետի մոտ, վերջին պարտեզներին հասնելուն պես բաժանվեցինք մեր ուղեկիցներից։

Պ. Աբովյանն իր աշակերտներին գերմաներեն լեզվով հորդորեց, որ ուման փույթ տանեն, որ դառնալու ժամանակ ինքն էլ ուրախանա։ Մեկ-մեկ ամենի ձեռքը թոթափեց, հետո բարեմաղթության ձայներ բառնալով, որոնք մեր ետևից երկար ժամանակ դեռ լսվում էինք*)։

Իր աշակերտների հանդեպ ունեցած անհուն սիրո և խորը վշտի արտահայտության արգասիք է հանդիսանում Աբովյանի «Բան ասացված ի վերայ դամբարանի սիրելի աշակերտին իմոյ Ղորխմազ Արղութեանի ի բերանոյ ընկերաց իրոց՝ որ վախճանեցաւ ի 24 մարտի 1840 ամի ի 15 ամի կենաց իրոց» սոսահույզ դամբանական ճառը։ Այս ճառը մինչև օրս անտիպ է մնացել։ Աբովյանի, Գրական թանգարանում պահվող, արխիվում պահպանվել է սույն ճառի սևագիր օրինակը, մինչդեռ Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական արխիվում վերջերս մեր կողմից հայտնաբերվել է նրա մեկ ուրիշ, ավելի պարզ գրված, օրինակը։

Իր այս ճառում գրագետությունը Աբովյանը դառնակսկիծ վշտով ողբացել է սիրելի աշակերտի վաղաժամ մահը։ Ճառը գրված է գեղարվեստական ավյունով, Աբովյանի գրչին հատուկ խորը հուզական շեշտերով ու պատկերավոր լեզվով։ Չնայած ճառը բարդ լեզվով է գրված, բայց նա այնքան վճիռ ու կերծ է խոշնաբանություններից և այնքան դյուրըմբռնելի, որ գրաբար չիմացողն անգամ կարող է հաճույքով կարդալ։ Ստորև բերում ենք Աբովյանի այդ դամբանական ճառն ամբողջությամբ։

ԲԱՆ
ԱՍԱՑԵԱԼ Ի ՎԻՐԱՑ ԴԱՄԲԱՐԱՆԻ ՍԻՐԵԼԻ ԱՇԱԿԵՐՏԻՆ ԻՄՈՅ ՂՈՐԽՄԱԶ ԱՐՂՈՒԹՅԱՆԻ Ի ԲԵՐԱՆՈՅ ԸՆԿԵՐԱՑ ԻՐՈՑ՝ ՈՐ ՎԱԽՃԱՆԵՑԱՒ Ի 24 ՄԱՐՏԻ 1840 ԱՄԻ Ի 15 ԿԵՆԱՑ ԻՐՈՑ

Ղորխմազ ցա՛ն. սիրելի, թանկագի՛ն, անմոռանալի՛ մեր բարեկամ։ Ո՞ւր այդպէս աճապարես փութով ի միջոյ մերմէ։ Ո՞ւր հեռանաս ի մէնջ այդպէս ծա՛նր, այդպէս անմոռնոյ։ Քո՞ է այս պատեհ եոկնատիպ, ընկե՛ր սիրելի, այսպէս դալկացեալ, դեղնեալ, թաղամեալ։

Քո՞ են այս ա՛չք սիրալիցք այժմ կպփուցեալք, փակեա՛լք, սքողեալք ի խոր քուն սնզարթուցանելի։ Քո բարեկամք բոլորիմք այժմ զքեզ, ցանկամք, կարօտիմք անոյշ անոյշ քո լեզուի, բայց աւա՜ղ մեզ, դու լռես, դու ո՛չ տաս մեզ պատասխանի։ Զայն բարեկամաց քոց այլ ո՛չ լինի քեզ լսելի, խան-

*) Հ. Մուրադյան— Ժամանակակիցները խոսում են Աբովյանի մասին, Երևան 1941 թ. էջ 19—20.

դաղատութիւնք նոցա այլ ոչ քեզ զգալի։ Արտասուքք և դու ո՛չ տեսանես, հառաչեմք, բայց դու ո՛չ լսես. մաշիմք և տոչորիմք անսփոփ, այլ դու երկնային իմն լուսով այլակերպեալ՝ ապախտ առնես զամենայն։ Դեռ երկար կամէաք վայելել զսէր քո, դեռ երկար փափագէաք անցուցանել ընդ քեզ զաւուրս ուրախարարս, բայց դու ընդէ՞ր այդպէս կանուխ կանուխ, մոռացար զմեզ. ընդէ՞ր ցանկաս վերաթեւել այդպէս վաղաժամ յաշխարհ հեռաւոր, ուր ո՛չ ոք ի մէնջ կարէ ուղեկից լինել քեզ։ Մեք եկաք յուղարկել զքեզ։ Բայց ո՞ւր, Ղորխմազ ջա՛ն։ Ո՛չ ի դաշտս և ի հովիտս զարդարեալս այժմէն երփներանգ ծաղկամբք։ Ո՛չ ի լերինս և ի ձորս, ուր բազմի՛ցս, բազմիցս հրճուէաք ի գիրկս զթառատ մօր մերոյ բնութեան։ Ուր ամենայն թուփ և տերև քև, մեզ ներշնչեր են հոգի անմահութեան։ Ո՛չ, ո՛չ, ի գուբ մթին տարտարոսի, ի չքադարանն ստուերականաց, ուր չոր ոսկորտիք և սառն գետնախշտի միա՛յն է լինելոց քնքուշ քո մարմնոյ տուն յափտենականութեան և հանգիստ իշխանի։ Ուր այլ ո՛չ ճառագայթեսցի ի դէմս քո հրաշագեղ՝ արեգակն առաւօտեան, այլ ո՛չ զուարթացուցէ զսիրտ քո մաքուր, ցօղն երեկոյան։ Ուր սքանչելազարդ այս կամար երկնային, դալարազուարճ այս լերինք լուսազգեստք՝ փակեալ. աւա՜ղ յափտեան փակեալ մնասցեն ի սուրբ քոց հայեցուածոց։

Սիրտք մեր տոչորին, աոիք մեր գայառեն ի մտաբերելն զայս։ Մթթէ այսպէս կա՞րճ էր լինելոց ժամանակ ընկերութեան մերոյ։ Մթթէ այսպէս սո՞ւղ և փառանցուկ բոլոր յոյս մեր և մխիթարութիւն։ Մթթէ բարեկամութիւն մեր և աշխարհ այդքան ծա՞նր համարեցիր, զի ընտրեցիր քեզ զայլ աշխարհ, զայլ բարեկամս։ Այս այն տաճարէ՝ սիրելիդ մեր յորս ընդ քեզ միաշունչ ի տունչեան և գիշերի վերառաքեաք ի բարձունս զաղերս օրհնութեան։ Այս այն վայրք են բախտաւորք, յորս ի սուրբ ընկերութեան քում ձեռն ի ձեռն շրջէաք, ի միասին խնդայաք, անմեղ սրտիւ զուարճանայաք, յուսալով ի բազում ամս, ի բոլոր կեանս վայելել ընդ քեզ զայս՝ որ սքանչելի, զայս ուրախութիւն անխառն։ Բայց ա՞խ դու հատեր, խզեներ զայս ամենայն յոյս մեր և ակնկալութիւն։ Զի՞նչ այս պատկառելի լռութիւն ի ոչմս քո հրեշտակային։ Գիտեմք, սիրելի՛դ մեր, գիտեմք զի հեզութիւն և պարկեշտութիւն, առաքինութիւն և համեստութիւն յամենայն կեանս քո փայլէին միշտ ի դէմս այս քո մաքուր։ Գիտեմք զի նոքա միա՛յն էին յատկանիշ բարուց քոց բառեսնունդ՝ ազնիւ քում հասակի զարդք, նովիմբք գրաւիցեր զմեզ այսպէս ջերմ սիրով։ Քո՝ և ի նախանձելի աւուրս ընկերութեան մերոյ ամսք էին բարք, քաղցր՝ բնութեան, անխարդախ՝ սիրտ, դիւրին՝ շարժմունք, սիրելի՝ վարք։

Մանր ինչ զրոյց, խօսք ինչ դառն օտար էին ի հեզահամբոյր քումմէ սուրբ բերանոց։ Վիրաւորեալ ի մէնջ դու ո՛չ վշտանայիր, կրել ի մէնջ զցաւ ինչ՝ դու կրկին անյիշաչար հոգւով, անխառն սիրով՝ լի երկնային քաղցրութեամբ դառնայիր առ մեզ միւս անգամ, սիրէիր զմեզ։ Խանդաղատէիր զմեզ իբրև եղբայր համամայր, միթէ զայս ամենայն քաղցրութիւն, զայս ամենայն սէր յայն սակս միայն ցուցեր մեզ, զի այժմ այսպէս և ևս տանջեսցես և մաշեսցես զմեզ չարաչար։ Միթէ դառն էր քեզ ի գիրկս մեր, զի ընտրեցեր զխորս զայս երկրի քեզ բնակարան ստուն և սոսկալի։ Միթէ անհաճոյ էր քեզ մեր ընկերութիւն, զի այժմ կամիս ընկերանալ ցնցից և որդանց։ Քո առոյգ մարմին, քո աշխոյժ հասակ նոցա անկուշտ որովայնի, նոցա սոսկալի ժանեա՛ց արժան համարիցեր տալ ի կերակո՞ւր։ Թէ ո՛չ ի մեզ, ի ծաղկեալ քո պատանեկութեան զիա՞րդ ո՛չ խնայիցեր։

Ղորխմազ ջա՛ն։ Ե՞րբ կարծէաք ի քէն զայդպիսի խստասրտութիւն։ Զի՞նչ տեսանիմք։ Ցնո՞ւրք են այս երազոյ։ Ո՞ւր համբերեն աչք մեր տեսանել զքեզ յայսորինակ տկարութեան։ Բարեհամբոյրդ ի բարեկամս որպէս ո՛չ խնայեցեր դո՞նէ ի մայր քո տարաբախտ ի քոյրս քո վշտալիցս։ Ի կեանս քո նորածաղիկ յընկերս քո խղճալիս, ոչ սիրէաքն և պաշտէաքն զքեզ։ Զքե՞զ կամեն յափշտակել ի մէնջ որդիք խաւարեան ողորմ, այլ և ո՛չ բարեկամութեան անգամ զօրէ օգնել քեզ և ոչ սէրն անգամ մարթանայ յետս դարձուցանել զքեզ։ Մեր զկեանս մեր պատրաստէաք զոհել վասն քո, մեք զմահ անգամ խնդութեամբ կրէաք վասն սիրոյ քո սուրբ։ Բայց աւա՜ղ, իզուր ամենեքեան։ Որ հրաւիրեն զքեզ՝ բուն է իշխանութիւն նորա, անընկճելի կամք նորա, անհամոզելի վճիռ նորա։ Ընդ քեզ ի հուր և ի ջուր քաղցր էր մեզ մտանել, բայց այժմ ձեռն ահարկու խորտակէ զամենայն ընդիմութիւն, բեկանէ զամենայն զօրութիւն, ի բաց վարէ զմեզ մատնանիշ իմն սպառնալեօք։ Որպի՞սի քուն հանգիստ թեւաքողէ զքեզ։ Որպի՞սի մեղմութիւն անմեղ փայլի ի պատկերս քո լուսափայլս։ Այլ աւա՜ղ, արեգակն առաւօտեան զարթուցանէ զամենայն առարածս, կենդանաւորէ զամենայն բնութիւն, և արև քո սիրայի աճապարէ՝, անհետանայ ի մո՛ւտս անդնդոց։ Դարունն կենսատու ներշնչէ ընդ ամենայն տիեզերս զնո՛ր աւետիս յարութեան և դալարազուարճ ծաղիկ քո կենաց՝ ցամաքեալ՝ ընդարմացեալ, խորշակահար եռեալ՝ թառամի՝ այդպէս տարաժամ։ Բնութիւն համայն

երգէ զերգս խնդութեան բարձրելոյն զօրութեանց և մեք պատրաստեմք ողբերգել զմահ սիրելւոյդ։ Ո՞վ դառնութեանս, երկինք և երկիր պատմեն զսքանչելիս Աստուծոյ։ Համայն արարածք վերերգեն զսէր նորա անբովանդակելի, բայց զի՞նչ այս ծանր վճիռ սոսկալի, զոր նախասահմանութիւն կնքեաց ի վերայ մահկանացուաց առ ի ստացումն երկնային իւրոյ արքայութիւն։

Բայց ո՛չ, Ղորխմազ ջա՛ն, ո՛չ մեք զքո սուրբ հոգի ո՛չ կամիմք ծանրացուցանել այսօրինակ տրտնջանօք։ Գիտեմք, զի լուսեղէնք շրջափարեն զքեզ, գիտեմք, զի ընդ անմարմնոց և երկնատրաց պարառեալ վերասլանայ այժմ հոգի քո անմեղ։ Գիտեմք, զի նո՛ր աշխարհ, նո՛ր յոյս, նո՛ր կեանք այժմ բացեալ երևին քեզ, բիւրիցս երջանիկ, բիւրիցս հոգեզմայլ, ի անմահական խնդութեամբ, քան աշխարհ մեր վշտալից։ Գիտեմք, զի հայրն երկնաւոր բացեալ զգիրկս իւր սիրով, ընդառաջէ քեզ ընդունել զքեզ յորդէդրութիւն իւր անզրուական զառաքինիդ և զարդարդ և ծնողի քո գորովագութք, քո հայր պատուական, քո մա՛յր քնքուշ, որք վաղուց հեռացեալ ի քէն, կարօտամաշ սպասէին քոմդ ցանկալի տեսութեան, որք որբացուցեալ զքեզ թողեն զքեզ աստէն ի վիշտ և ի կսկիծ անպատմելի, այժմ բացեալ զգիրկս ի հեռաստանէ, դիմին ընդ առաջ քո արտասուալից խնդութեամբ, ամփոփել զքեզ ի ծոց իւրեանց, գգուիլ զքեզ, ողջագուրել զքեզ, արգահատել զքեզ վասն ամենայն դառնութեանց կրելոց ի քէն յայսմ աշխարհի, խընդակից լինիլ ընդ քեզ յայսմհետէ երանաւէտ արքայութիւն։

Քաջ զգամք, զի ժպիտ նոցա միայն ծնողական փոխանակեսցէ քեզ զամենայն բարեկամս քո և սիրելիս, ի գիրկս նոցա ջերմին այլ ո՛չ յիշեսցես զմեզ։

Այլ ո՛չ իշխեմք արժան համարել զմեզ երջանկահրաշ քոմդ ընկերութեան. հրեշտա՛կդ լուսեղէն, բայց կարեմք արդեօք սաստել սրտի մերում խոցոտեալ, զի ուր և դիմեսցուք այսուհետև, ուր և շրջեսցուք, քո պատկեր սխրալի կենդանասցի ի միտս մեր։ Անոյշ քո լեզու յայն գորովական հնչեսցի ի մեր լսելիս, իսկ տեսութիւն քո սուրբ՝ ա՜խ յափտեան, յափտեան փակի ի մէնջ, յափտեան մնասցո՛ւք կարօտ սիրելի քոմ ընկերութեան։

Ստուեր քո միայն շրջեսցի առ միօք։ Երազի միայն գուցէ բախտաւորեսցեն զմեզ մերթ ընդ մերթ զքոյդ տեսանել կերպարան ցանկալի։ Վշտալից ընկերակի՛ցք իմ, այս բարեկամ մե՛ր է, որ այսպէս անկեալ կայ առաջի մեր՝ անշունչ, անբարբառ։ Այս սիրելին է մեր՝ քաղցրաբարոյն Ղորխմազն, հեզն, անարատն, պարկեշտն և ջերմ մեր ընկեր։ Կամի տալ մեզ զվերջին բարեա՛ւ մնայն, այլ աւա՜ղ լռեալ է դայլայլակ քաղցրաբարբառ նորա լեզուի։ Զվերջի՜նն կամի գրկել զմեզ, փարել զմիօք, այլ ա՜խ ձեռք նորա այլ ո՛չ զօրեն։ Լացցո՛ւք և ողբասցո՛ւք ուրեմն, զի այս արտասուի մեր միայն կարեն հատուցանել նմա այժմ զայն ամենայն տրիտուր բարեկամութեան, զորս ա՛յնքան վայելեցաք ընդ նմա և ի նմանէ յերջանիկ աւուրս կենցաղակցութեան մերոյ և կենդանութեան նորա։ Կամի՜ ցանկա՛յ խնդրել զներողութիւն, մեք տացո՛ւք նմա զի շրթունք նորա գեղեցիկք՝ փակեալ կան այժմ երկնային իմն լռութեամբ։ Զայս միայն մնայ մեզ ի պատկառելի յայսմ վայրկենի ի վերջին նորա յայսմ ուղի տարանձիգ՝ տալ նմա ի նշան բարեկամութեան։

Տացո՛ւք նմա ուրեմն զհամբոյր սիրոյ և վերջին հրաժարման, յորմէ ա՜խ յափտեան զրկիմք, զոր յափտեան այլ ո՛չ տեսանիցիմք։ Նա ո՛չ կամէր այսպէս փութով թողուլ զմեզ, նա այսպէս կանուխ ո՛չ ցանկայր բաժանել ի մէնջ, դուք քաջ գիտէք, թէ որպէս ջերմ էր սէր նորա առ մեզ, որպէս հաւատարիմ և հաստատ բարեկամութիւն նորա անկեղծ. բայց աւա՜ղ վշտացս և նախասահմանութեան վերին նախանձեալ յառաքինական նորա կեանս, եբարձ զնա ի մէնջ այսպէս տարաժամ, զի անփո՛րձ մնասցէ սիրտ նորա արդար ի բազմածուփ վտանգաց անկայուն այսր կենցաղոյս։ Եկեսցէ՛ գարուն, կրկին եկեսցէ, ծագեսցեն բազում առաւօտք, այլ սիրելին մեր Ղորխմազ ո՛չ ևս գտանիցի ի միջոտ մերում։ Ո՛չ ևս վայելեսցուք այսուհետև զանխառն նորա ընկերակցութիւն, ո՛չ ևս ծիծաղեսցին կրկին հրեշտակային նորա դէմք յուրախութիւն մեր և ի զուարճութիւն։ Ընկալ ուրեմն փոշի՛ թանկագին, ընկա՛լ սիրով Ղորխմազ ջա՛ն, զանկեղծ զայս ցաւակցութիւն սուրբ սիրոյ և մաքուր բարեկամութեան։ Սիրտք մեր ո՛չ կամին հեռանալ ի քէն, մեք ո՛չ կարիմք այդպէս միայն ուղարկել զքեզ զթանկագինդ հոգւոյ մերում, այլ զի՞նչ զի՞նչ կարիմք առնել տկար քո բարեկամքդ։

Կարի՞մք արդեօք՝ ասա մեզ՝ հակառակիլ անչարտելի օրինաց բնութեան, որում և մեքն կանուխ թէ անագան պա՛ղտիմք ենթարկիլ։ Երկինք և երկիր՝ անցցեն, այլ մոռանալ զքեզ՝ եղբա՛յր մեր, հոգի՛ մեր, սիրելի՛ մեր, ո՛չ, ո՛չ կարիմք բնաւ յիշատակ քո պաշտելի՝ անջնջելի՛ մնասցէ ի միտս մեր մինչև ցօր կատարածի աշխարհի։ Մինչև ցել ջնջոյ մերոյ, գերեզման քո սգապատում, ոսկերք քո և փոշի թանկագին սուրբ մնասցեն

մեզ միշտ. նոքա լիցեն մեզ պաշտելի արձա՛ն երկրպագութեան, զորս ծաղկամբք բոլորեսցուք, արտասուօք թացցուք, տկար լեզուաւ օրհնեսցուք և պատուեսցուք։ Անտի՛ խնկեսցուք առ քեզ ի կայանս աղաղոց զհառաչանս անխարդախ բարեկամութեան։ Զքո կարօտութիւն քարինքս այսոքիկ անլեզուք տայցեն մեզ, որք զքեզն այժմ կնքեն զանմոռակալիդ մեր։ Հայեա՛ց ի մեզ ի բարձանց ի լուսեղէն քո օթևանէ, մինչ խոմբ սիրելեաց քոց աստանոր պարայածեալ զքոյդ վերակրկնեսցուք զանուն պաշտելի, զքոյդ տօնեսցուք զյիշատակ սխրալի։ Քո միայն ժպիտ քաղցրահամբոյր նկարադրեալ ի դէմս աստեղաց քարոզ եղեալ երանակա՛ն քո վիճակի, արգահատեսցէ, սփոփեսցէ՝ զսիրտ մեր ցաւագնեալ։

Ա՛ռ սիրելի, ա՛ռ ուրեմն զայս համբոյր վերջին, զորս կրկին ընկալցուք ի քէն ի կըրկին տեսութեան յերանաւէտ արքայութեան, ի բնակարանս արդարոց, յահեղափայլ ներկայութեան Հօրն երկնատրի, յորմէ արտասուօք աղերսիմք, յերեսանկեալ պաղատիմք՝ ընդունիլ զքեզ ի դասս արդարոց և սրբոց յարքայութեան իւրում երանաւէտ, որ ընտրելոցն և առաքինեացն է միայն պատրաստ։

Երթ, երթ ի խաղաղութիւն, հրեշտակն պահապան առաջնորդ լիցի քեզ յուղի քո անծանօթ։

Սլացի՛ր ի վեր աղամի՛դ մաքուր՝ ահա ամպք համայն զտեղի տան, և գունդք լուսէղինաց սաւառնին զքև, մեք լսեմք զձայն հոգենուագ երգոց, հոգի մեր տեսանէ զպսակ անթառամ ի գլուխ քո բոլորեալ։ Անուշահոտութիւն երկնային ի քիմքս մեր բուրէ, այս է վիճակ արդարոց, ո՞վ հիմերչանիկ հն նոքա, որք իբրև զքեզ անարատ մտին յաշխարհ և անարատ ելանեն աստի։ Եվ յերանութիւն յայդմիկ դու դեռ հայիս առ մեզ։ Լուսեղէ՛նդ մաքուր, դեռ ժպտի՛ս ի դէմս հողեղինացս անարժանից։ Ո՞վ, քաքտեսցեն՝ բոլոր ոսկերք մեր, սպառեսցի՛ մեր շունչ, եթէ ո՛չ և ի մուտս գերեզմանի զքոյդ յիշեսցո՛ւք զանուն տօնելի։

Զուտա՛ց ուրեմն յանզրաւելին յայն խնդութեան,
Զոր հողածնացս փակ է աստ աչն աճատրին։
Անդ ի կայանս հոգեղինաց fn բնակութիւն
Քա՛ղցր լիցի ինչ, fան ստուերական այս ձոր մթին։

Երազական և մեր սուղ կեանք փութով անցցի.
Ուր վերհեմեալ ի թևս թեթևս ի գիրկս fում,
Զfե՛զ խնդրեսցո՛ւf, զfեզ զմայլեսցուf ի մի հոգի,
Ի մի սէր, մի վիճակաև մաճ և անտրտում։

Մի fեզ լալիf մեր՝ մի աղէտf սրտատոչորf
Սաճր բուեսցեն։ Դու արքեսցես զայն մինչ առ fեզ
Դիմեսցուf մեf։ Ցայնժամ այս վիշտ հոգեբորբոf
Ի ցնծութիւն դարձցի, կրկին երբ տեսցուf զfեզ*)։

*) ՀՍՍՌ Գեղարվեստի կենտրոնական արխիվ, ֆոնդ № 2, գործ № 2443, թերթ 17—22։



ՄԱՅՐ ԱԹՈՌ

Վեհափառ Հայրապետը հուլիսի 1-ին ուղևորվեց Մոսկվա՝ Ռուսաց պրավոսլավ Եկեղեցու ավտոկեֆալության 500-ամյակի հոբելյանական տոնակատարություններին մասնակցելու համար։

Վեհափառ Հայրապետին ուղեկցող շքախմբի կազմի մեջ մտնում էին— Նոր Նախիջևանի ու Բեսարաբիայի թեմի Առաջնորդ Տ. Կարապետ Եպիսկոպոսը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Ստեփան Կամսարականը և Գերագույն Հոգևոր Խորհրդի ու Վեհի անձնական քարտուղար Հովհաննես Ագուլյանը։

***

Նորին Վեհափառությունը օգոստոսի 5-ին շքախմբի ուղեկցությամբ բարեհաջող կերպով Մոսկվայից ժամանեց Մայր Աթոռ։

***

Օգոստոսի 6-ին Մայր Աթոռ այցելեց լատվիացի պիոներների մի մեծ խումբ։ Պիոներները մեծ հետաքրքրությամբ Տաճարը ու նրան կից Թանգարանը դիտելուց և իրենց հուշատետրերում գրանցումներ անելուց հետո վերադարձան Երևան։ Թե Տաճարում և թե Թանգարանում պիոներներին բացատրություններ էր տալիս թանգարանապետ Տ. Սահակ ծայրագույն վարդապետը։

***

Օգոստոսի 15-ին, Վերափոխման տոնի օրը, Մայր Տաճարում հանդիսավոր Ս. Պատարագ մատուցվեց։

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Պատարագում էր Գերաշնորհ Տ. Կարապետ Եպիսկոպոսը, որը և հավուր պատշաճի քարոզ խոսեց։

Տաճարը լիքն էր երկսեռ բազմությամբ։

***

Սեպտեմբերի 12-ին, Խաչվերացի տոնին, Մայր Տաճարում Ս. Պատարագ մատուցվեց։

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Պատարագում էր Գերապատիվ Տ. Սուրեն Եպիսկոպոսը։

Հավուր պատշաճի քարոզ խոսեց Գերապատիվ Տ. Կարապետ Եպիսկոպոսը։

Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ և հոծ բազմության ներկայությամբ երեկոյան Մայր Տաճարի շուրջը կատարվեց Խաչվերացի թափորը։

***

Սեպտեմբերի 25-ին, Ս. Գևորգա տոնի և Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնի օրը, Վեհարանում ընդունելություն-հյուրասիրություն տեղի ունեցավ։ Հյուրերը իրենց բաժակաճառերով առողջություն ու արևշատություն մաղթեցին ծերունազարդ կորովի Վեհափառ Հայրապետին և մեծ գոհունակությամբ ունկնդրեցին Վեհափառ Հայրապետի խրատական ու իմաստալից խոսքերը։

***

Սեպտեմբերի 29-ին Երևանից Մայր Աթոռ ժամանեցին ֆիզիոլոգների, բիոքիմիկոսների և ֆարմակոլոգների անդրկովկասյան համագումարի (Երևանում) մի խումբ մասնակիցներ, որոնց թվում Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի մի շարք ականավոր գիտնականներ։

Եղբայրական երեք ռեսպուբլիկաների գիտնականները մանրամասն դիտեցին Տաճարն ու նրան կից Թանգարանը։ Այցելուներին ռուսերեն լեզվով բացատրություններ էր տալիս լուսարարապետ Տ. Սահակ ծայրագույն վարդապետը։

Այցելուները ցանկություն հայտնեցին տեսնվելու Վեհափառ Հայրապետի հետ։ Վեհի համաձայնությունն ստանալուց հետո այցելուները Տ. Սահակ ծայրագույն վարդապետի առաջնորդությամբ Վեհարանում ներկայացան Վեհափառ Հայրապետին։ Այնուհետև Ծաղկյա դահլիճն ու Վեհարանը դիտելուց հետո նրանք հրաժեշտ առան Վեհափառ Հայրապետից ու մեկնեցին Երևան։

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՄԵՋ

Ստորև տալիս ենք Կիլիկիո Հայոց Կաթողիկոսության պաշտոնական ամսաթերթ «Հասկ»-ի թիվ 5-ում տպագրված «Ստեղծենք նոր Կիլիկիան» խորագրով խմբագրական նոդվածի այն մասը, որ վերաբերում է Տ. Գարեգին Շնորհազարդ Կաթողիկոսի երեք տարվա գործունեության համառոտ նկարագրությանը:

ԽՄԲ.

Այսպես, մոտավոր պատկերը տալով մեր նյութական կացության, անցնինք այս երեք տարվա գործունեության համառոտ ներկայացման։

1. Մեր առաջին գործն է եղել եղբայրական և սերտ հարաբերություն զարգացնել Կիլիկիո և Մայր Աթոռների միջև։ Անձամբ և եպիսկոպոսներով ու աշխարհիկ պատգամավորներով մասնակցել ենք Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության։ Պատմական, կարևոր մի երևույթ էր այս, որի մասին չենք կամենում երկարել, հասկանալի համարելով ինքնըստինքյան։ Ապա նույնչափ եղբայրական հարաբերություն ենք աշխատել մշակել Կիլիկիո և Երուսաղեմի Աթոռների միջև։ Ամերիկայից մեր Աթոռը գալու ժամանակ և ապա անցյալ ամառ վեց շաբաթվա ներկայությամբ, մեր վայելած հյուրասիրությունը Տ. Կյուրեղ Պատրիարքի կողմից, Ս. Պատրիարքի և Միաբանության ցույց տված աջակցությունը Մեր գիտական աշխատությունների մեջ, վեր էր ամենայն ակնկալությունից և սիրալիրությունից։ Մեր հոբելյանի կատարումն այնտեղ, երկու Աթոռների և Միաբանությունների ամենաջերմ հայտարարն էր։

2. Անցնելով մեր ներքին գործերին, առաջին հերթին Մեր ուշադրության կեդրոնն է եղել ԴՊՐԵՎԱՆՔԸ կամ մեր Ժառանգավորաց Դպրոցը։ Դեռ ևս Ամերիկայից Մենք նյութական օգնություն ենք հասցրել Աթոռին և այստեղ գալուց հետո էլ կանգ չենք առել որևէ նյութական և բարոյական դժվարության առաջ, Դպրեվանքի ուսման մակարդակը բարձրացնելու։ աշակերտների թիվը 23 էր, բարձրացրել ենք 40—45-ի, հրավիրել ենք նոր մասնագետ ուսուցիչներ, մինչև իսկ անցյալ տարի ինքներս դասախոսել ենք Գրչության Արվեստը՝ վերջին դասարանի սարկավագների և ուսանողների համար, շաբաթական մի պահով. լրացրել ենք պակաս դասարանների թիվը իրար անընդհատ հաջորդությամբ. հնարավորություն ենք ստեղծել մեր սարկավագների և նորընծա աբեղաների համար ընդարձակելու իրենց մրտավոր պաշարը և հմտությունը անգլերեն ու ֆրանսերեն լեզուների մեջ. մեկն էլ երաժշտության է հետևել երաժշտական դպրոցում։ Ներկա ուսումնական տարվա մեջ չունեինք ընծայարանի կամ մասնագիտականի առաջին դասարանը, որովհետև միայն երկու սարկավագ ունեինք այդ դասարանի համար. Դպրեվանքի Տեսչության հետ խորհրդակցելով, օգտակար համարեցինք նրանց Ամերիկյան Համայսարան ուղարկել անգլերեն լեզվի մեջ հմտանալու՝ շաբաթական 18 ժամով, ինչպես հիշեցինք վերև։ Մեր նորընծա աբեղաներին չկարողացանք Ֆրանսիական Համալսարանն ուղարկել, ինչպես մեր ցանկությունն էր, տեխնիկական պատճառներով, բայց իրենց ավարտական ճառերի պատրաստության հետ, շարունակեցին գործնական վարժություններ մեզ հետ։

Նախանցյալ և անցյալ տարիների ընթացքում մի մի հոգի ուղարկել ենք Ամերիկա և Բելճիքա գործնական աստուածաբանության և բյուզանդագիտության մեջ մասնագիտանալու. հնարավորության սահմանների մեջ պիտի աշխատենք շարունակելու այս գործը, որպեսզի Դպրեվանքի համար հետզհետե պատրաստենք մասնագետ ուսուցիչներ և գիտական աշխատավորներ՝ Միաբաններից։

3. Հիմնել ենք ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՍԱՐԱՆ, ուր այլ և այլ նյութերի մասին կատարվել են դասախոսություններ, որոնցից երկուսը մեծ հանդեսներ. առաջինը նվագահանդես՝ Կաթողիկոսարանի Օրման նվիրված, ուր ա-

ռաջին անգամ երգվել է Նվագակցությամբ՝ Հ. Պերպերյանի «Եկեղեցին Հայկական» օրատորիումը. իսկ երկրորդը պիտի լինի Խաչատուր Աբովյանի հիշատակին։ Երեք տարվա ընթացքում կատարվել են 22 դասախոսություններ Միաբանության և ուսուցչական խմբի անդամների մասնակցությամբ. ընդհանուր բացառությամբ, որի պատճառը անձրևները կամ վատ եղանակներն են եղել, լսարանը միշտ լիքն է եղել հոծ բազմությամբ։ Այս գործը նույնպես հարատև պիտի դառնա, դարձնելով այն ժողովրդական դաստիարակության մի հաստատություն։

4. ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ըստ հնարավորության աշխատել ենք կանոնավորել. մեր Միաբաններից երկուսը՝ Տ. Գնել և Տաճատ վարդապետները քարոզիչ էին Մարաշի և Ն. Հաճընի եկեղեցիներում և կրոնի ուսուցիչ նրանց դպրոցներում. այս տարի նույն գործը շարունակում է միայն Գնել Տ. վարդապետը, մյուսը դուրսը պաշտոնի գնացած լինելով։ Բայց մեր Միաբանության անդամները շարունակ քարոզչության են գնացել և պատարագել Բեյրութի այլ և այլ եկեղեցիներում, նաև ուրիշ վայրերում։ Կաթողիկոսն էլ յուր հովվապետական պարտքի թելադրությամբ քարոզել է վանքում, Բեյրութի եկեղեցիներում և թեմերում, երբ այնտեղ է եղել։ Բնականաբար, երբ մեր Միաբանների թիվը ավելանա, այս գործն էլ կդառնա ավելի ընդարձակ և կարգավորյալ։

5. Ունինք ամիսը մի անգամ ՌԱԴԻՈ ԺԱՄ. խոսում են միաբանները և երբեմն ուսուցիչները։ Նույնիսկ Կաթողիկոսը Մննդյան և Հայտնության Տոնի պատգամը հաղորդեց հավատացյալ ժողովրդին այս միջոցով, նաև կոնդակի վերածելով եկեղեցիներում կարդալու համար։ Խոսելիքները նախապես ընտրվում և գրվում են Ս. Կաթողիկոսի գիտությամբ. Ժողովրդական լսարանի քարոզչության հետ, այս էլ ժողովրդի հետ խոսելու միջոցներից մեկն է։

6. Ունինք և ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ՝ Անթիլիասի հայ ընտանիքների համար։ Մախքի մի մասը հոգում է Բարեգործականը։

7. Ունինք Կիրակնօրյա դպրոցների Հաստատությունը մեր թեմերի մեջ, որ հիմնված է մեր նախորդների օրով։ Մենք այս հաստատության տալիս ենք կարևոր նշանակություն. մեր մատաղ սերունդը հնարավորություն պիտի ունենա ավելի հրահանգվելու եկեղեցական պաշտամունքի և կրոնական բարեպաշտության մեջ։ Հրավիրված է իբրև ղեկավար. այս գործի մեջ փորձառություն և հմտություն ձեռք բերած Պ. Լ. Ջենյանը Ամերիկայից։ Նորան օգնական է նշանակված Հայիպում Պ. Գ. Ներսոյանը, նույնպես փորձառու այս գործի մեջ։ Պ. Ջենյանի գալուց հետո այս հաստատությունը յուր դերը ընդարձակել է մեր թեմերում. ինքն էլ ուսանողների և ծնողների համար հաճախ դասախոսություններ է կարդում։ Առայժմ նյութական ամենից կայուն միջոցները հայթայթվում են մեր ամերիկյան բարեկամների կողմից, առանց մեր թեմերի վերա ծանրանալու։ Տպագրել ենք երկրորդ անգամ նույն աղբյուրներով Բարեգեն Կաթողիկոսի «Քրիստոնեական»-ը իբրև օժանդակ դասագիրք ուսուցիչների համար։

Լիբանանի բարի օրինակին հետևում են Եգիպտահայերս։ Տիկնանց Միությունը Առաջնորդ Պ. Մամբրե Արքեպիսկոպոսի հովանավորությամբ, լծված է այս գործին. նրանց խնդիրքով Պ. Ջենյանին ուղարկեցինք մի երկու շաբաթով Եգիպտոս, որպեսզի գործը ավելի կանոնավոր և հաստատուն հիմքերի վերա դնե։

8. Կազմակերպել ենք տարեկան ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ Համագումարներ, որոնց նպատակն է ուսուցիչներին իրար բերել և առիթ ստեղծել մտքերի փոխանակման, ծրագրի և դասավանդման միատեսակ եղանակներ ստեղծելու։ Կարդացվում են մանկավարժական բովանդակությամբ դասախոսություններ, ցուցմունքներ են տրվում երիտասարդներին այս կամ այն առարկայի ուսուցման եղանակի մասին։ Մշակվել են Դպրոցական Ուսման ծրագիրը և վարչական կանոնները և հոկտ տարվա փորձի համար հաստատվեց Կեդրոնական Վարչության կողմից։

9. Մեր կարևորագույն հաստատություններից մեկն էլ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆն է. դեռ ևս ոչ շատ ճոխ, բայց և ոչ բոլորովին աղքատ. ունինք վեց հազարի չափ հայերեն և օտար լեզուներով գրքեր։ Անձնական մատենադարաններ ունինք մենք և Դերենիկ Եպիսկոպոսը, փոքր չափով նաև ուրիշ Միաբաններ, որոնք հետզհետե պիտի անցնին մայր մատենադարանին։ Նյութականի պակասության պատճառով դեռ հնարավորություն չունինք կարգավորյալ կերպով հարստացնելու մեր մատենադարանը, բայց ստանում ենք նվերներ, ուղարկվում են նաև «Հասկ»-ի խմբագրության անունով կամ Կաթողիկոսի անունով նոր լույս տեսած գրքեր։ «Հասկ»-ի հետ փոխանակությամբ կամ Կաթողիկոսարանի անունով նույնպես ստացվում են բազմաթիվ թերթեր և պարբերականներ, որ մեր հին ընտացվածքի հետ լավ ժողովածուներ կդառնան ապագայում։ Բացի դորանից ունինք դիվանական մնացորդներ և հետզհետե կա-

վելյան կաթողիկոսների և Միաբանների անձնական դիվանները։

Բայց մեր ամենամեծ պակասն այդ կողմից մատենադարանի հարմարավոր շենքն է։ Երանի թե Աստուած մեզ մի բարերար ուղարկեր այդ պակասը լրացնելու։ Շենքի մի մասն էլ կհատկացնեինք ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ—ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ։ Արդեն քիչ քիչ նվերներով և գնումներով ձեռք ենք բերում գեղարվեստական նկարներ, ճնուելյուններ և գրամներ. եթե հայողվի մեզ հետզհետե ճոխացնել և դասավորել հարմարավոր շենքի մեջ, կունենանք փոքր ծավալով մի նոր հաստատություն, ժողովրդական դաստիարակության և մշակութային արժեքների հավաքման և պահպանության համար։

Մատենադարան և գիտություն, երկու իրար հետ զուգորդված գաղափարներ են և հաստատություններ. ամենամեծ գիտնականն իսկ առանց գրքերի նման է առանց զենքի զինվորի։ Ճշմարիտ է, դժվար կլինի այժմ մեր սպագրված գրքերի կողքին ձեռագրական հարուստ բաժին ստեղծել, բայց փոքր չափով անհնարին չէ նաև այդ, նվերներով և գնումներով. մանավանդ ունենք արդեն որոշ չափով ձեռագրներ Անթիլիասում, Կիպրոսում և Հալեպի Քառասնից Մանկանց եկեղեցում։ Այս բոլորի մերա ավելանենք Սրուանդզտի մեռաժողովությունը յուր ձեռագրական և մշակութային այլ հաստատություններով։

10. Մեր «Հասկ»-ը որ մինչև մեր դալը հրատարակվում էր եռեք տարի մի անգամ 16 երեսով, դարձրել ենք կանոնավոր ամսաթերթ, յուրաքանչյուր տետրակը 32 երեսից բաղկացած։ Կազմված է հատուկ խմբագրական մարմին, աշխատակցությամբ Միաբանության և Դպրեվանքի ուսուցչական խմբի անդամների։

11. Նոր լույս տեսավ մեր Հայագիտական տարեգիրքը՝ բաղկացած 250 մեծադիր երեսից, բազմաթիվ այլ և այլ խնդիրների կամ երևույթների գիտական լուծման նվիրված՝ հնագիտության, մանրանկարչության, ոսկերչական արվեստի հետ կապ ունեցող բազմաթիվ աատներներով։ Համառոտ ուժերով գիտական այս պարբերականի հրատարակությունը սկսնակությունն է մի ձեռնարկության, որ հուսով ենք, պիտի դառնա հարատև և նպաստն հայ գիտության զարգացման և հետզհետե դառնա հավաքարան հայ գիտական մտավորականության։

12. ՏՊԱՐԱՆ-ը նույնպես փոփոխության է ենթարկված. մինչև Մեր գալը տպարանը մի աշխատավոր ուներ, որ գրաշար էր, տպիչ և ամենայն ինչ. այժմ ունինք երեք գրաշար և մի տպող։ Ունինք և կազմատուն, որ նոր լույս տեսած գրքերը կարելուց զատ, կազմում է մատենադարանի գրքերը, աղատելով քայքայվելուց և փչանալուց։ Կազմատունն ունի երեք աշխատավոր։ Վաղուց է հետամուտ ենք մի նոր տպիչ մեքենա ձեռք բերել, որովհետև մերը հնամաշ է, շուտ շուտ ենթակա նորոգման և շատ փոքր մեր կարիքների համար. բայց ոչ Լիբանանում և ոչ շրջակա երկիրներում չէ հաջողվել գտնել։ Ամերիկայում մի բարեկամ հաստատություն ի մի է բերել հարկավոր գումարը. հույս ունինք մինչև աշուն պիտի ստանանք ավելի մեծ մեքենա, որով կարողանանք կրկնակի և եռակի ավելի մեծ գործ կատարել։

Ջնայելով մեր մեքենայի փոքրության և տկարության Հրատարակչական գործը առաջվա համեմատությամբ ավելի ծավալ է ստացել։ Հիշեցնենք ամսօրյա «Հասկ»-ի և Հայագիտական Տարեգրքի մասին։ Վերջին երկու տարիներում հրատարակվել են մեր ԴՈՒՊԻ ՈՅՍ ԵՎ ԿԵԱՆՔ-ը, Հրանդ Ամենի «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ»-ը, Հ. Պերպերյանի «ԱՇՈՒՂԱՍԱՆ ԵՐԳԵՐ»-ը, Բարոնեանի կատարածները «ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ»-ը, Մեր «ՏԱՐՍԱՑԻՃ ՕՐԲԷԼԵԱՆ ԵՎ ՄԻՆԱ ԽԱՔՈՒՆԻ ՍԵՐՈՒՆԴԸ»։ Մամուլի տակ է և մինչև մայիսի վերջը լույս կտեսնի հանգուցյալ Օշականի «Արևելյան բանաստեղծությունը և էսթետիկան», ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀՈՎՍԵՓԵԱՆ պիտի հայտնենք, որ այս հրատարակությունների ծախսերը հոգացված են դրսից, գրքերն էլ մնալով սեփականություն վանքին։ Կատարվել են և ուրիշ մանր մունր գործեր հատուցմամբ։

Բայց Մեր նպատակն է տպարանը դարձնել հետզհետե Գիտական-Մշակութային մի կարևոր հաստատություն, նաև որոշ չափով եկամուտի աղբյուր։ Առաջին հերթին տպարանի փոքր ինչ բավարար սարքավորում։ Ապա հրատարակության համար 5—8 տարվա առատ նյութ ունինք. նախ Մեր աշխատությունները. Ձեռագրական հիշատակարանների մեծ ժողովածու, առնվազն երեք հատոր. յուրաքանչյուրը 1000—1200 մեծադիր, քառածալ էջերով, դասավորված ժամանակագրական կարգով և լուսաբանված ծանոթագրություններով։ Հույս ունինք առաջին հատորը շուտով մամուլին հանձնել, որի տպագրության ծախսը ապահովված է Տեր և Տիկին Տիգրան Տատուրյանների կողմից, Նյու-Յորք։

Երկրորդ՝ Երզնկայի Մաքրանկարչական Դպրոցը 130-ից ավելի գունազարդ և սև պատկերներով, որի տպագրությունը հոգաց-

ված է մուսուլմանական բժիշկ Գ. Աստարճյանի կողմից. գունազարդ և սև կլիշեները պատրաստվում են և լույս կտեսնի այս տարվա ընթացքում։

Երրորդ՝ ձեռքի տակ է Օրբելեանների Նորավանքը և նորա դերը հայ արուեստի և մշակույթի պատմութեան մէջ։ Հարյուրավոր գունազարդ և սև մանրանկարչական, ճարտարապետական և քանդակագործության պատկերներով։ Կհուսանք տարվա վերջերին մամուլին հանձնել։

Չորրորդ՝ պատրաստ է և միայն փոքր լրացումների կարոտ Գրչուրեան Արուեստը Հայոց մէջ, որ պատմությունն է այդ արվեստի և նորա նշանավոր դպրոցների։

Հինգերորդ՝ Աստուածաշունչների ենարուզարդումը եվրոպական ազդեցությամբ ժէ դարում։

Վեցերորդ՝ Վաշուտեանց Իշխանական տոհմը։

Յոթերորդ՝ Մանրանկարչական Քարտեզ գունազարդ և սև հարյուրավոր պատկերներով։

Ութերորդ՝ Բնագիրներ և Ուսումնասիրություններ, որոնցից ոմանք առաջին անգամն են լույս տեսնում։

Իններորդ՝ Մանր յօդուածներ և ուսումնասիրություններ, բազմաթիվ։

Տ. Բարգեն Կաթողիկոսը պատրաստել է Ամկիւրիոյ և Կ. Պոլսի Ձեռագիրների ցուցակները, յուրաքանչյուրը ավելի քան 1000 մեծադիր էջերով։

Հակոբ Թոփճյանը պատրաստել է Արմաշի ձեռագիրների ցուցակը, Փառեն Եպիսկոպոսը՝ Կիպրոսի Ձեռագիրների ցուցակը։ Անկյուրիո և Արմաշի ցուցակները ունին առանձին արժեք, որովհետև այդ ժողովածուները զոհ են գնացել նախանցյալ պատերազմի բարբարոսություններին։

Դերենիկ Եպիսկոպոսը պատրաստում է քարոզների ժողովածու։

Այս համառոտ թվումը ցույց է տալիս, թե Անթիլիասի Աթոռը, միայն մի քանի տարվա հրատարակչությամբ, ինչպիսի՛ կարևոր գործ կարող է կատարել, եթե սարքավորված տպարան ունենանք և նյութական հնարավորություն մեր հրատարակչական ծրագիրը իրագործելու։

13. Երեք տարին շատ կարճ ժամանակ է Միաբանության թիվն ու որակը բարձրացնելու, բայց և այդ կողմից առանց ուրախության չենք մնացած։ Ձեռնադրված են հինգ նոր եպիսկոպոսներ, երեք նոր սարկաւագներ, չորրորդը պիտի շուտով ձեռնադրվի. անցյալ տարի ընդունված են երկու նոր սարկաւագներ, այս տարի հինգ, գուցե և ավելի, պիտի ընդունվեն, իրենց միջնակարգ ուսումը ավարտելով և ընծայարան անցնելով։ Երիտասարդ վարդապետների բարձր ուսման առաքման և սարկավագների զարգացման և հմտության նպաստավորման մասին խոսք եղավ արդեն։

Այս տեղեկություններն ու լուսաբանությունները պետք է որպես ցուցում համարվին, թե ի՛նչ է մեր հոգն ու նպատակը այս Աթոռի համար։ Մենք կամենում ենք, որ նա դառնա կրոնական-եկեղեցական կեդրոնի հետ՝ գիտության, արվեստի և մշակույթի կեդրոն, որ նոսն և գիտությունը, արվեստ և մշակույթ, մեզ մատչելի սահմանների մեջ, դաշնակցին միմյանց՝ բարձրացնելու այս ժողովրդի հոգևոր և մտավոր կյանքի մակարդակը։ Դորա համար պիտի ջանք մենք այս հաստատությունը դարձնենք նյութական հնարավորությունով և հոգեպես բնականոն տեսակ, զարգանալու և պտղաբեր դառնալու ամեն կերպով։ Մեր ազգերն է, որ Աստուած անհատ բարերարներ հարուցանե և հավաքական կազմակերպություններ ստեղծե, որպեսզի այս Հաստատությունը մի լուսավոր փարոս դառնա մեր ժողովրդի վերազարթումի մեջ։

Ձեռք ձեռքի տանք Աստուծո օրհնությամբ մեր նոգևոր Կիլիկիան ստեղծելու։

ՎԱՀԳԵՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱԼՃՅԱՆ

ՌՈՒՄԱՆԱՀԱՅ ԹԵՄԸ ԵՐԵԿ ԵՎ ԱՅՍՕՐ

Հայտնի է թե Անիի անկումեն հետո, ԺԱ և հաջորդ դարերու ընթացքին, հայերը գաղթեցին նաև դեպի Ղրիմ և անկե ալ դեպի Լեհաստան, ուր զորավոր գաղութներ հիմնեցին, կրոնական, մշակութային կենտրոն ունենալով Լվով (Լեմպերկ) քաղաքը։

ԺԳ և ԺԴ դարերուն, մեծ թվով հայեր Լեհաստանեն դեպի հարավ, դեպի Թրանսիլվանիա և Մոլտավիա իջան ու այդ հյուրընկալ հողերուն վրա հաստատուեցան, որպես առևտրականներ և արհեստավորներ։

Հայերու Մոլտավիա և Պուքովինա*) գալու թվականը ճշգրիտ հայտնի չէ, սակայն, ռումեն երկու մեծ պատմաբաններ՝ Բ. Պ. Հաժդեուն և Ն. Եորգա կհաստատեն թե համենայն դեպս ԺԴ դարու կեսին, այսինքն ռումեն իշխանության հիմնադրության շրջանին, հայերու ներկայությունը Մոլտավիոյ մեջ ստույգ է**)։ Ստույգ է նաև թե ԺԵ դարու սկզբին երեք հազար հայ ընտանիքներ ևս գաղթած են Մոլտավիա և օրվան ռումեն իշխան Ալեքսանդրու չել Պուն 1401-ին հատուկ հրովարտակով հայ եպիսկոպոսություն հիմնած է Սուչավա քաղաքի մեջ։ Մինչև 1401 թվականը Մոլտավիոյ հայ եկեղեցիները մաս կազմած են Լեհաստանի (Լվով) հայոց թեմին։

Հիշյալ հրովարտակը 1935-ին ռումեն գիտնական մը գտավ և հրատարակեց Պուքրեշի մեջ նույն տարին։

*) Պուքովինան կկոչվի Մոլտավիոյ հյուսիսային շրջանը, որուն կենտրոնը գտնվող Սուչավա քաղաքը մինչև ԺԵ դարու կեսին Մոլտավիոյ մայրաքաղաքը եղած է։

**) B. P. Hajdeu.— Istoria tolerantei religioase— 1868, p. 62-66;

N. Jorga.—Patru conferinte— p. 69:

Chose d'art arméniennes en Roumanie—1935, p. 7.

ԺԵ դարուն հայ համայնքներ եղած են Մոլտավիոյ հետևյալ քաղաքներուն մեջ—Սուչավա, Հոթին, Պոթոշան, Տորոհոյ, Վասլուի, Եաշ, Ռոման, Պաքրու, Ֆոքշան և Ջեթաթյա-Ալպը։

Հարավային Ռումանիոյ հայ գաղութները, այսինքն Վալախիոյ և Տոպրուճայի մեջ, հաստատված են ԺԷ դարեն սկսյալ և մանավանդ ԺԹ և Ի դարերուն, երբ Բրքահայ գաղթականներու մեծ խումբեր դեպի ռումեն երկիրը եկան։

Թրանսիլվանիոյ հայությունը, որ Մոլտավիոյ հայության հնությունը ունի, և անցյալին մեջ ազգային-եկեղեցական բացառիկ առանձնաշնորհումներ վայելած է, դժբախտաբար մայր եկեղեցիեն բաժնվելով ԺԷ դարու վերջերը ու միանալով Հռոմի եկեղեցվույն, տակավին կորսնցուցած է իր ազգային նկարագիրը և ձուլված է տեղացիներու մեջ։ Այսօր Թրանսիլվանիոյ մեջ հազիվ երեք-չորս հազարի հայություն մը կա, բոլորովին հունդարացած և հեռու ամեն հայկական ապրումե։

Թրանսիլվանիոյ հայության կեդրոնները եղած են Կերլա (Armenierstadt), Տումպրրվեն (Elisabetopol), Կեորկեն, Ֆուրմուասա և այլն։ Այս շրջաններու կաթոլիկ հայերը այսօր ալ թեմական կազմակերպություն մը ունեն, առաջնորդանիստ քաղաքը Կերլան ըլլալով։

Մոլտավիոյ մեջ ուրեմն, հայ թեմը կազմակերպուեցավ 1401-ին, առաջին առաջնորդը ըլլալով Հովհաննես անունը կրող էջմիածնական հայ եպիսկոպոս մը։ Առաջնորդական աթոռը, ժամանակ մը Սուչավայի մեջ մնալե վերջ, փոխադրված է Յաշ, ուր Հայր Այիշան 1500 թվականին ուրիշ Հովհաննես եպիսկոպոս մը կհիշե որպես առաջնորդ Մոլտավիոյ թեմին։ ԺԷ դարուն առաջնորդական աթոռը կրկին Սուչավա կփոխադրվի և կհաստատվի

«Ս. Աքսենթ» (Զամքա) հայոց վանքին մեջ։ Այստեղ կհիշվին Ղազարոս (1624) և Անդրեաս (1641) եպիսկոպոսները որպես առաջնորդ։ Ավելի ուշ, առաջնորդական պաշտոն կվարին Անտոն Սերքոյենց (1651), Հովհաննես Քարիմարենց (Քերիմովիչ) և Սահակ (1669) եպիսկոպոսները։ ԺԷ դարուն, Եղիա եպիսկոպոսի (1691) առաջնորդութենեն հետո, Մոլտավիո հայության թեմական կազմակերպության անկման շրջանը կսկսի, քաղաքական դեպքերու հետևանքով։

Հայտնի է միայն թե 1790-ին Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանց այցելու առաջնորդ եղած է Մոլտավիո հայ եկեղեցիներուն։

Թեև ԺԸ և ԺԹ դարերու ընթացքին թեմական կեդրոնական իշխանությունը գաղրած է գոյություն ունենալե, սակայն Մոլտավիո, Վալախիո և Տոպրուճայի բոլոր հայ եկեղեցիները շեն ու պայծառ վիճակի մեջ են ու ամեն համայնք իր քահանան ունի։ Ավելին, այս շրջանին է, որ բազմաթիվ հայ եկեղեցիներ կկառուցվին կամ կվերաշինվին։ Ամեն եկեղեցական համայնք վարչական ինքնավարությամբ կկազմակերպե իր ներքին կրոնա-ազգային կյանքը՝ եկեղեցիներու և դպրոցներու պահպանությամբ։ Պետք չէ մոռնալ թե ԺԹ դարուն Մոլտավիո մեջ գրեթե ամեն հայ եկեղեցական համայնք ուներ նաև հայկական վարժարանը։ Հայտնի եղած են այսպես Յաշի «Գալատաշ» վարժարանը, Ռոմանի «Մողոմոնյան» վարժարանը, Ֆոքշանի, Սուչավայի, Պոթոշանի, Թրկուօքնայի, Պուքրեշի և այլն դպրոցները, որոնց շենքերը այսօր ալ տակավին կմնան։

1850—1860 թվականներու շրջանը ռումանահայոց տեսակ մը վերածնունդի շրջանը եղած է մշակութային ու ազգային իմաստով։

1812-ին Պեսարապիան բաժնվելով Մոլտավիայեն միացավ Ռուսիո. 1813-ին ռուսական կառավարությունը հայոց առաջնորդություն կհաստատե Քիշինևի մեջ։ Գրիգոր եպիսկոպոս Զաքարյանց, Պեսարապիո նոր թեմի առաջին առաջնորդը, կհաջողի իր իշխանության ենթարկել նաև Մոլտավիո հայ եկեղեցիները։ Սակայն, այդ կապը կխզվի Զաքարյանց եպիսկոպոսի վախճանումեն հետո և ռումեն երկիրներու հայ եկեղեցիները կշարունակին մնալ առանց մնայուն առաջնորդի մինչև 1921 թվականը։

Ռումանահայ թեմը վերակազմելու փորձեր եղած են թե Ս. Էջմիածնի Մայր Աթոռի և թե մանավանդ Պոլսո Պատրիարքարանի կողմե. սակայն բոլոր այդ փորձերը դրական հետևանք չեն ունեցած։

Այսպես, Պոլսո Պատրիարքարանը 1839-ին Մոլտավիա և Վալախիա կհղե եպիսկոպոս վարդապետը, 1843-ին Գևորգ արքեպիսկոպոսը, 1880-ին, Խորեն արքեպիսկոպոս Նար-Պեյը, 1912-ին Գնել եպիսկոպոս Գալեմքյարյանը, բայց առանց իր նպատակին հասնելու։ Ոչ ոք չէ կրցած տեղական հայության հետ լեզու գտնել ու թեմը կազմակերպել։ Ռումանահայերը այդ շրջանին սիստեմատիկ կերպով մերժած են որևէ առաջնորդ ունենալ, սակայն միշտ ու անկեղծորեն հավատարիմ մնացած են Հայաստանյայց Եկեղեցվո բարձրագույն իշխանությանց կրոնա-դավանական և ազգային տեսակետեն։

1913-ին, մեծ պատերազմեն հետո, Պեսարապիան Ռումեն երկրին կցվելով, Քիշինևի առաջնորդությունը փոխադրվեցավ մայրաքաղաք, այսինքն Պուքրեշ ու այսպիսով է որ ռումանահայ թեմը կազմակերպվիլ սկսավ, իբր առաջնորդ ունենալով էջմիածնա միաբան Հուսիկ Ս. վարդապետ Զոհրապյանը 1921-են սկսյալ։ Սկզբնական շրջանին բավականին լուրջ դժվարությանց բախուելե վերջ,—որովհետև Մոլտավիո որոշ համայնքներ, Հաշը մասնավորաբար, չէին ուզեր առաջնորդի հեղինակության ենթարկվիլ, — ռումանահայ թեմը կազմակերպվեցավ շնորհիվ թրքահայ գաղթականության ներկայության, որ իր թվով մեծամասնություն կկազմեր թեմին մեջ։ 1928-ին հրատարակված դավանությանց օրենքով Հայ Եկեղեցին (Հայ-Գրիգորյան Եկեղեցի անունով) ռումեն պետության կողմե ճանչցուեցավ որպես ռումեն հողին վրա ապրած ու զարգացած պատմական եկեղեցիներեն մին, իսկ 1931 հուլիս 31-ին, բրոֆ. Նորկայի վարչապետության շրջանին, ռումեն խորհրդարանը հատուկ օրենք քվեարկեց Հայ Եկեղեցու թեմի ճանաչման և կազմակերպության, որ հրատարակվեցավ թագավորական հրովարտակով 30 օգոստոս 1931-ին։

Այս օրենքին հիման վրա թեմին առաջնորդը՝ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Զոհրապյան ռումանահայ թեմի առաջնորդ անվանվեցավ 27 հոկտ. 1931 թվակիր հրովարտակով։

Հուսիկ արքեպիսկոպոս Զոհրապյանի վախճանումեն ետքը (23 հոկտ. 1942) առաջնորդական-աթոռը թափուր մնաց մինչև 28 նոյեմբեր 1943, երբ առաջնորդական տեղապահ ընտրվեցավ Տ. Վազգեն վարդապետ Պալճյան և որպես այդպիսին վավերացուեցավ նույն տարվո դեկտեմբերի 21-ին նախարարական որոշումով։

***

Ռումեն հասարակական կյանքին մեջ հայերը կարևոր դեր խաղացած են թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական և թե՛ մանավանդ

մշակութային տեսակետեւ Անոնց տնտեսական դերը մեծ եղած է ԺԴ—ԺԵ դարերու ընթացքին, երբ հայ վաճառականներու ընդարձակ գործունեության շնորհիվ մեծապես օգտված է նորաստեղծ մոլտավական իշխանությունը տնտեսապես ու քաղաքականապես։ Իրոք, երբ Մոլտավիան ԺԴ դարու կեսին հիմնուեցավ որպես ինքնուրույն իշխանապետություն, ան փոքրիկ երկիր մըն էր հյուսիսային լեռնային շրջանին մեջ։ Ան տակավ մեծցավ ու տարածվեցավ դեպի հարավ ու դեպի արևելք, վաճառականական ճանապարհներու ուղղությամբ, ճանապարհներ, զոր հայերը բացին։

Այսպես է, որ ԺԶ դարու սկզբին մոլտավական տիրապետությունը հասավ մինչև Տնեսթր, մինչև Դանուբ ու Սև ծով։

Հայերը իրենց ծոցեն տված են նաև բազմաթիվ քաղաքական գործիչներ։

Ռումեն պատմությունը հայ ծագումով նշանավոր իշխան մը կարձանագրե Իոն վոտը Արմյանուլ կամ Իոն վոտը չել Գումբլիթ (1572—1574) անունով, որ կնշանակե Հովհաննես իշխան Հայր կամ Հովհաննես իշխան Ահարկուն։ Ան ռումեն պատմության մեջ հայրենասեր և ժողովրդանվեր մեծ իշխաններու կարգին դասված է, վասնզի Թուրքերու դեմ կատաղի կռիվներ մղած է հանուն ռումեն ժողովրդի ազատության և հերոսի մահով մեռած է պատերազմի դաշտին վրա։

Մոլտավիո մեջ շատ հայեր ազնվական տիտղոսներ ստացած են ու նախարարական պաշտոններու հասած և ռումեն ազատագրական շարժումներու մեջ որոշ դեր կատարած, մանավանդ ԺԹ դարուն։

Մշակութային գետնի վրա հայերը մեծ դեմքեր տված են ռումեն ժողովրդին, մանավանդ ԺԹ դարուն, որոնց մեջ նշանավոր են — Մանուկ պեյ Միրզայան, որպես հայտնի դիվանագետ, Վասիլե Գոնդա, ռումեն հայտնի փիլիսոփա և կրթական նախարար, Սիրու Հարեր, ռումեն դպրոցներու մեծագույն բարեկորոգիչը և հիմնադիրը համագործակցական շարժման։ Կարապետ Իպրիլյանու, հռչակավոր գրական քննադատ և գրական շարժման հիմնադիր, Գրիգորե Պուիֆլիու, մեծ իրավագետ, Հակոբ Պուիֆլիու, 1856—58-ի Մոլտավիո հայ վերածընունդի շարժման պարագլուխ։

Ի դարուն ռումեն կյանքի մեջ հայտնի դեմքեր են— Գրիգոր Թրանֆու-Յաշ, նախարար և հիմնադիր աշխատանքի նախարարության, բանակի զորավարներ՝ Զատիկ, Շահիմ, Այրոնովիչ, հմուտ երաժշտաբան Էմանուել Զոմաֆ, մեծ դերասան պետական թատրոնի՝ Յանֆու Բերբեսֆու, գիտուններ՝ բժիշկ Պակտասար և բժիշկ Յագուպովիչ, նկարիչ Պալթազար և այլն։

Կկարծվի նաև թե ռումեն մեծագույն բանաստեղծը՝ Միհաիլ Էմինեսֆու հայ ծագում ունի։ Ան ծնած է Լեհաստանեն Պոթոշան գաղթած Էմինովիչ անունը կրող ծնողներե։

Հին ռումանահայ հայտնի ընտանիքներու անուններ են՝ Փրունքուլ, Գաբրի, Կոյլավ, Կայինա, Պուիքլիու, Գարագաշ, Թրանքու, Քրեստյա, Պոկտան, Ջերքեզ, Սողոմոնյան, Ջիոմաք, Զատիկ, Շահիմ, Գոժոքար, Փոփովիչ, Յագուպովիչ, Մալխասովիչ, Մանուկևիչ, Հուտիկ, Ալաշ, Մելիք, Միսիր, Պուրտիա, Ֆերհատ, Պակտասար, Պալդազար, Նուպերտ, Իպրահիլյանու, Հաճիու, Մելիտոն, Ալիքնովիչ, Սամսոնովիչ, Նավասարդ, Թոնգևիչ և այլն։

Այսօր, սակայն, այս և ասոնց նման հարյուրավոր հին հայ ընտանիքներու հետքերը միայն կան հոս ու հոն։ Այս հին հայության վերջին երկու-երեք սերունդներու մեծագույն մասը բոլորովին ռումինացած են և մեզ համար կորսուած։ Անոնց թիվը հավանաբար տասնյակ հազարներու կհասնի։

ՌՈՒՄԱՆԱՀԱՅ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԱ ԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՆ ԱՅՍՕՐ

Մինչև 1940 թիվը ռումանահայ թեմը ուներ 23 եկեղեցական համայնք։ Պեսարապիո Սովետ Միության կցումով թեմեն բաժնուեցան Քիշինևի, Աքքերմանի (Չեթաթյա-Ալպը), Օրհեի, Պրլցի, Հընչեշտի և Իսմայիլի եկեղեցիները։ Իսկ Հարավային Տոպրուճայի Պուկարիո կցումով ռումանահայ թեմեն բաժնուեցան Սիլիստրեի և Պազարճիքի եկեղեցիները։

Այսօր Ռումանիո հայ թեմին մաս կկազմեն հետևյալ 15 եկեղեցական համայնքները.

1. Գամրեշի (Պուքարեստ) մեջ կրնակին շուրջ 8.000 հայեր։ Հայ եկեղեցին՝ «Ս. Հրեշտակապետք Գաբրիել և Միքայել» վերակառուցված է 1910—13-ին։ Նույն տեղին վրա հին եկեղեցին կար, որ 1781-ին կառուցված էր։

Համայնքը ունի սեփական գերեզմանատուն, ուր և կգտնվի «Ս. Գրիգոր Լուսավորիչ» մատուռը, շինված և համայնքին նվիրված Տիկ. Մալվինե Մելիքի կողմե։

Պուքրեշի մեջ եկեղեցական համայնքն ունի նաև հետևյալ մշակութային-բարեսիրական հաստատությունները.—

ա) Երկսեռ յոթնամյա վարժարան մը, ուր կաշակերտեն 142 տղաներ և աղջիկներ։

բ) «Տուտյանց»-ի անվան Հայ Մշակույթի Տունը՝ իր մատենադարանի և թանգարանի բաժիններով։ Այստեղ մեծ սրահին մեջ տեղի կունենան դասախոսություններ և հանդիսություններ։ Մատենադարանը ունի մոտ 10.000 հատոր հայերեն և օտար լեզուներով գրքեր, ձեռագրեր։

գ) Մերանոց՝ «Աննա Մելիք»-ի անվան հաստատության մեջ, հայ ծեր ու անպաշտպան կիներու համար։

դ) Բուժարան՝ «Գր. Տեշլիուն»-ի անվան։

ե) Խնամատար մարմին մը, որ հայ աղքատներուն նպաստ կբաժնե ամեն ամիս։

Այս բոլոր հաստատությունները իրենց հատուկ վարչությունները ունեն՝ նշանակված Պուքրեշի եկեղեցվո Թաղական Խորհուրդի կողմե և հաշվետու են անոր։

Պուքրեշի եկեղեցին ունի վեց կալվածք (շենքեր), որոնք վարձու տրված են։

Քահանաներ՝

Տ. Իգնատիոս ավագ քահանա Քիլիմյան

Տ. Մանուկ քահանա Յազճյան

Տ. Մամբրե քահանա Պեպերյան

Գավառներ այցելող՝ Տ. Հարությունն քահանա Հովսեփյան։

2. Գոնսթանցա. 1880-ին կառուցված «Ս. Աստուածածին» փայտաշեն. եկեղեցին 1942-ին այրվեց, և վարժարանի մեծ սրահը վերածվեցավ եկեղեցվո, ուր կանոնավոր կերպով տեղի կունենան բոլոր պաշտամունքները։

Հայոց թիվն է 1600։

Տեղվույն երկսեռ քառամյա վարժարանը 70 աշակերտ ունի։

Հայոց գերեզմանատունը կգտնվի ընդհանուր գերեզմանատան մեջ, առանձին հողամասի վրա։

Կալվածներու թիվն է 3 շենք։

Քահանաներ՝ Տ. Համազասպ ավագ քահանա Պետիկյան

Տ. Բարկեն քահանա Քերովբեյան։

3. Կալացը շուրջ 200 հայ բնակչություն ունի, մեկ եկեղեցի՝ «Ս. Աստուածածին» 1858-ին կառուցված և մեկ գերեզմանատուն։ Կալվածներ՝ 7 շենք։

Կհովվե Տ. Հովհաննես քահանա Գարիպյան։

4. Պրայիլա. 150 հայ բնակչությամբ։ Եկեղեցին՝ «Ս. Աստուածածին» 1837-ին կառուցված է։ Ունի նաև գերեզմանատուն։ Կալվածներ՝ 3 շենք։

Կհովվե Տ. Հովհաննես քահանա Գարիպյան։

5. Ռիբեշը. 48 հայ բնակչությամբ. եկեղեցի մը ունի «Ս. Կարապետ», 1852-ին շինված և 2 շենքեր՝ որպես կալվածք։

Պուքրեշեն կայցելե Տ. Հովսեփյան քահանան։

6. Պապատաղ. 31 հոգի հայեր կապրին։ Եկեղեցին, «Ս. Աստուածածին», կառուցված է 1897-ին։

Գոնստանցայեն կայցելե Տ. Բարկեն քահանա Քերովբեյան։

Կալվածներ՝ 2 շենքեր և 8 հեկտար վարելահող։

7. Թուլչայի մեջ կապրին 80 հոգի հայեր։ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» եկեղեցին կառուցված է 1885-ին։ Ունի 2 շենք որպես կալվածք։

Այցելու քահանա կերթա Պրայիլայեն։

8. Սուլինայի մեջ այժմ կբնակին 1—2 հայ ընտանիք։ «Ս. Աստուածածին» եկեղեցին 1857-ին շինված է։

9. Ֆոշան. մոտ 180 հայ բնակչությամբ, երկու եկեղեցիներ ունի, մեկը՝ «Ս. Աստուածածին» 1870-ին կառուցված, երկրորդը՝ «Ս. Գևորգ» ԺԷ դարուն կառուցված, որ այժմ կես ավերակ վիճակի մեջ է։ Սեփական գերեզմանատուն ունի մեկ մատուռով։ Կալվածներ՝ 9 շենք։

Քահանա՝ Տ. Արսեն Վարժապետյան։

10. Թրկու-Օֆնա. մոտ 80 հոգի հայ բնակչությամբ։ Եկեղեցին՝ «Ս. Աստուածածին» 1825-ին շինված է։ Գերեզմանատունը եկեղեցու բակին մեջ է։ Կալված չունի։

Տեղվույն հովիվն է Տ. Արտավազդ քահանա Սահակյան։

11. Իոման. 72 հոգի հայ բնակչությամբ։ Եկեղեցին՝ «Ս. Աստուածածին» 1609-ին կառուցված է։

Հայոց գերեզմանատունը քաղաքի ընդհանուր գերեզմանատան մեջ կգտնվի։

Տեղվույն հովիվն է Տ. Տաճատ քահանա Մելքոնյան։

Կալվածներ՝ 2 շենք և 8 խանութ բնակարաններով։ Շենքերեն մին եկեղեցվո բակին մեջ գտնվող նախկին հայ վարժարանի երկհարկանի մեծ շենքն է, որ այժմ զբաղեցված է ռումեն երկրորդական վարժարանի մը կողմե։

12. Գաֆրուի մեջ կբնակին 90 հայեր։ Եկեղեցին՝ «Ս. Հրեշտակապետք» 1848-ին կառուցված է։ Ունի մասնավոր գերեզմանատուն։ Կալվածներու թիվն է 5 շենք։

Այցելու հովիվ՝ Տ. Տաճատ քահանա Մելքոնյան։

13. Ցաշը այսօր 52 հոգի հայ բնակչություն ունի։ «Ս. Աստուածածին» եկեղեցին 1395-ին կառուցված է. ան վերանորոգված է 1782-ին և 1929-ին։

Ունի սեփական գերեզմանատուն՝ մեկ մատուռով։ Կալվածներ՝ 16 շենք։

Այցելու հովիվ՝ Տ. Տաճատ քահանա Մելքոնյան։

14. Սուչավան այսօր հազիվ 100 հայ բնակիչներ ունի իր շրջականերու հետ միատեղ։ Այստեղ կգտնվին երկու եկեղեցիներ և երկու վանքեր։ «Ս. Խաչ» եկեղեցին կառուցված է 1521-ին և վերանորոգված վերջին անգամ 1937-ին։ Այժմ լավ վիճակի մեջ է։ «Ս. Սիմեոն» եկեղեցին կառուցված է 1513-ին. այժմ կիսավեր վիճակի մեջ է. «Ս. Աքսենթ» (Զամքա) վանքը 1551-ին կառուցված է Սուչավա քաղաքին ծայրը, շատ գեղեցիկ դիրքով. այսօր գրեթե ավերակ վիճակի մեջ է։ Հոմեն պետությունը պատմական հուշարձան հռչակած է դայն։ «Ս. Աստուածածին» (Հաճկատար) վանքը կառուցված է 1512-ին Տոնավագ անուն հայ վաճառականի մը կողմե և մինչև այսօր մեծ համբավ ունի որպես ուխտատեղի։ Բազմաթիվ անգամներ նորոգված է և այսօր բավական լավ վիճակի մեջ կգտնվի։

Սուչավան ունի նաև հատուկ գերեզմանատուն մեկ մատուռով Բրունքուլ ընտանիքի կողմե շինված։

Կալվածներ՝ 51 հեկտար հող և 7 շենք։

Հովիվ՝ Տ. Գնել քահանա Մանտալյան։

15. Պորոշան. 110 հոգի հայ բնակչությամբ՝ շրջականերով միատեղ։

Եկեղեցիներ՝ «Ս. Երրորդություն»— կառուցված ԺԵ դարուն և վերանորոգված 1795-ին, «Ս. Աստուածածին»—կառուցված ԺԴ դարուն։

Գերեզմանատան մեջ կա մեկ մատուռ՝ «Ավետման» 1884-ին կառուցված։

Կալվածներ՝ երեք շենք։

Հովիվ՝ Տ. Մեսրոպ քահանա Պարոնյան։

Բացի այս 15 եկեղեցական համայնքներեն հայեր կապրին նաև Բլոեշտ (120 հոգի), Գրայովա (50 հոգի), Ճուրճովա (40 հոգի) և շուրջ 500 հոգի ալ զանազան քաղաքներու կամ գյուղերու մեջ ցրված։

Ռումանիո մեջ մեր եկեղեցվո պատկանող ընդհանուր հայության թիվն է շուրջ 12.000 հոգի։ Այս 12.000 հայերու 90%-ը նոր հայերն են, այսինքն 1895-են ասդին Թուրքիո կամ Թրքահայաստանի շրջաններեն եկածները։ Կան նաև շատ քիչ թվով կովկասահայեր։

Ըստ իրենց թվի մեծության կարելի է զանոնք դասավորել հետևյալ կերպով— ռոտոստոցիներ, քեմախցիներ, պոլսեցիներ, երզնկացիներ, Պրուսայի շրջանեն, կեսարացիներ, պուլկարահայեր, վանեցիներ, մրշեցիներ և այլն։

10 Հունվարի 1948 թ.
Պուքրե։

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՈՎ

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՀԱՅԵՐԻ ՆՈՐ ԽՄԲԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ԵՐԵՎԱՆ

Բաթումից Երևան ժամանեց Ռումինիայից Սովետական Հայաստան վերադարձող հայերի նոր խումբը։ Կայարանում նորեկներին դիմավորեցին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից արտասահմանյան հայերի ընդունման կոմիտեի, Վերաբնակեցման վարչության և Երևանի Քաղաքային Սովետի ներկայացուցիչները։

Ընդամենը ժամանել են 153 ընտանիք. թվով 540 մարդ։ Նրանք բոլորը տեղավորվելու են Երևանում և մերձակա ավաններում։ Եկվորների մյուս մասը, թվով 140 ընտանիք, որ Բաթումից Հայաստան է ժամանելու մոտ օրերս, տեղավորվելու է Լենինականում և Կիրովականում։

Քարավանի պետ, տնտեսական գիտությունների դոկտոր Ա. Տիրացյանը ՀՀԳ-ի թղթակցին հայտնեց.

— Անհուն շնորհակալությամբ մենք թողինք դեմոկրատական Ռումինիան. այժմ գտնվում ենք մեր Սովետական մայր Հայրենիքում, որի մասին այնքան երկար տարիներ երազել է մեզանից ամեն մեկը։ Բոլորս անխտիր լցված ենք մի ձգտումով աշխատել հարազատ հայրենիքի բարօրության համար, լծվել նրա սոցիալիստական վերելքի մեծ գործին։ Մեր երջանկությանը չափ ու սահման չկա։ Մեր առաջին, ամենաջերմ ու սրտաբուխ խոսքը հղում ենք սովետական հզոր կառավարությանը, ժողովուրդների իմաստուն առաջնորդ մեծ Ստալինին։

Նույն օրն էլ, հուլիսի 3-ին բոլոր եկվորները տեղավորվեցին իրենց հատկացված բնակարաններում։

(ՀՀԳ)

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՀԱՅԵՐԻ ՍԵԿՆՈՒՄԸ ԵԳԻՊՏՈՍԻՑ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ԳԱՀԻՐԵ, 22 օգոստոսի (ՏԱՍՍ).— Այսօր առավոտյան սովետական «Պոբեդա» ջերմանավը Աղեքսանդրիայի նավահանգստից մեկնեց Բաթումի։ Նավի վրա են գտնվում Եգիպտոսից Սովետական Հայաստան ուղևորվող երկու հազարից ավելի հայրենադարձ հայեր։ Նրանց մեջ կան բարձրորակ շատ բանվորներ, մեխանիկներ, բժիշկներ, ինժեներներ և այլ մասնագիտության տեր անձինք։ Սովետական նոր քաղաքացիների նավի վրա տեղավորվելը, որ տևել է երկու օր, տեղի է ունեցել մեծ խանդավառությամբ։

Հայրենադարձներին ողջերթ մաղթելու համար Գահիրեից և Աղեքսանդրիայից նավահանգիստ էին եկել մոտ 10 հազար հայեր։ Երկու օր շարունակ նրանք ծովափին կանգնած մնացել են առավոտից մինչև գիշեր։ Երբ նավի վրա տեղավորումն ավարտվեց, էփին կանգնած հսկա բազմությունը մեծ խանդավառությամբ երգել է Սովետական Հայաստանի հիմնը և ժամանակակից ռուսական ու հայկական երգեր։

ԵԳԻՊՏՈՍԻՑ ՀԱՅՐԵՆԻՔ ՎԵՐԱԴԱՐՁՈՂ ՀԱՅԵՐԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ԲԱԹՈՒՄԻ

Օգոստոսի 26-ին, երեկոյան Աղեքսանդրիայից՝ Բաթումի նավահանգիստը ժամանեց սովետական «Պոբեդա» ջերմանավը բերելով հայրենադարձ եգիպտահայերին։ Հայրենադարձներին դիմավորելու համար Բաթումիի նավամատույցն էին հավաքվել քաղաքի աշխատավորները, արտասահմանյան հայերին ընդունող Բաթումիի կայանի աշխատողները, նոր ժամանածների հարյուրավոր ազգականները, որոնք Սովետական Հայաստան էին դարձել մեկ տարի առաջ, և ուրիշներ։ «Պոբեդա» ջերմանավը բերել է 2.023 հայրենադարձ հայեր, որոնցից երեքը ճանապարհին, ջերմանավի վրա ծնված սովետական նոր քաղաքացիներ են։ Հայրենադարձ հայերի մեջ կան բարձրորակ շատ բանվորներ, էլեկ-

տրամեխանիկներ, ավտոմեխանիկներ, ինժեներներ, բժիշկներ, ուսուցիչներ և արհեստավորներ։ Օգոստոսի 27-ին, առավոտյան վաղ սովետական նոր քաղաքացիներն սկսեցին ափ իջնել շերմանավից։

Տեղի ունեցավ շերմ հանդիպում։ Ժամանողների անունից պատասխանելով դիմավորողների ողջույններին, գրող Վահրամ Արծրունին ասաց.—

— Այս օրը հանդիսանում է ամենաուրախալի, ամենաերջանիկ օրը մեր կյանքում։ Այսօր իրականացան մեր դարավոր իղձերը, օտար երկնքի տակ երկար ու տանջալից թափառումներից հետո մենք վերադարձանք մեր սոցիալիստական հայրենիքը։ Ոտք դնելով սովետական հողը, մենք նորից ու նորից բոլորիս սրտից բխող սիրո և խորին երախտագիտության մեր խոսքն ենք ուղղում մեր ժամանակի մեծագույն մարդուն, մեր հայր և ուսուցիչ մեծ Ստալինին, որը երջանկության ճանապարհ բացեց մեզ համար։

Խոստանում ենք մեր բոլոր ուժերն ու եռանդը նվիրաբերել Սովետական Հայաստանի, ամբողջ Սովետական Միության բարգավաճման գործին։

Օրերս բոլոր հայրենադարձ հայերը Սովետական Հայաստան կմեկնեն հատուկ գնացքներով։

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՀԱՅԵՐԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ԵՐԵՎԱՆ

Սեպտեմբերի 7-ին, հատուկ մարդատար գնացքով Բաթումիից Երևան ժամանեց այս տարի Եգիպտոսից հայրենիք վերադարձող հայերի առաջին խումբը թվով 222 ընտանիք։

Կայարանում ժամանողներին դիմավորեցին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Վերաբնակեցման վարչության և Երևանի Քաղաքային Սովետի ներկայացուցիչները. ինչպես նաև եկողների բաղմաթիվ հարազատները։

Ժամանողների ճնշող մեծամասնությունը արհեստավորներ են՝ մետաղագործներ, ջուլհակներ, կոշկակարներ, մեխանիկներ, ոսկերիչներ և ուրիշներ։

Մոտ օրերս սպասվում են Բաթումի ժամանած եգիպտահայերի մյուս խմբերը՝ թվով 373 ընտանիք։ Բոլոր 595 ընտանիքները (2023 մարդ) տեղավորվելու են Երևանում Լենինականում և Կիրովականում։

(229)

***

Սեպտեմբերի 12-ին մարդատար հատուկ գնացքով Երևան ժամանեց հայրենիք ներգաղթած եգիպտահայերի երկրորդ խումբը, 205 ընտանիք, թվով 630 մարդ։

Կայարանում հայրենադարձներին դիմավորեցին Վերաբնակեցման վարչության, քաղաքային ու ռայոնական սովետների ներկայացուցիչները և շատ աշխատավորներ։

Հայրենադարձները տեղավորվել են Երևան քաղաքում և Բերիայի շրջանում։

(229)

Ս. ՔՈԼԱՆՋՅԱՆ

ՌՈՒՄԱՆԱՀԱՅ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁԻ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ունիսի 15-ին, երեքշաբթի օր, երբ, Ռումանիո երբեմնի հայաշատ գրեթե բոլոր կեդրոնները այցելելե ու անոնց պատմական անցյալի շուրջ պրպտումներ կատարելե վերջ, Բուխարեստ վերադարձա, սրտի անհուն հրճվանքով մը տեղեկացա, թե տարիե մը ի վեր մեր գիշեր ու ցորեկ երազած Հայրենադարձի անզուգական գործի իրականացումը միայն մեկ քանի օրվա հարց դարձած է։ Ու ի՞նչ բարեբախտություն ինձ համար, որ հայրենադարձը փոխան շաբաթ մը առաջ կատարվելու, հետաձգվեր էր, կարծես հատկապես գոհացում տալու համար իմ հայրենաբաղձությանս։

«Հայաստանեան Ճակատ» հայրենասիրական կազմակերպության Բուխարեստի «Շահումյան» ակումբը, իր պարտեզով, ու Հայոց եկեղեցվո բակը, ինչպես և բոլոր ներգաղթողներու տները մեղուներու փեթակի վերածված են։ Յուրաքանչյուրը հև ի հև կպատրաստե իր սնդուկները և կաշխատի ժամ առաջ կազմ ու պատրաստ ըլլալ։

Հունիս 19-ին, շաբաթ, հայ հոծ բազմություն մը եկած ու լեցուցած է Բուխարեստի կայարանը... Ուր գիշեր է ու սիրելիներե բաժնվելու պահը մոտեցած... Ամեն կողմ հուզում ու խինդ, ծիծաղ ու արցունք, ի՞նչ փույթ թե կայարանը և ի մասնավորի անոր շրջակայքը մութի մեջ թաղված են այդ գիշեր... սիրելի ու մշտարթուն հոգիներ շուտով ոիրար կգտնեն ու կողջագուրվին։ Կան հայրենադարձներ ալ, որ թողած իրենց սիրելիները, բոլորովին մենակ կմեկնին. անոնց գերադանց հայրենասիրությունը հաղթած է ամեն ինչի։

Արդեն գիշերվա ժամը 2-ն է ու շոգեկառքի մեկնումի ժամը մոտեցած։ Իմ այդ բաժանման պահն է ու աննկարագրելի ծանր է այդ պահն ինձ համար— կբաժնվիմ բոլոր իմ հարազատ սիրելիներես՝ իմ ծնողքես ու նդրորմես. օր առաջ Հայրենիքիս նվիրվելու իմ անհուն փափաքը հաղթած է ամեն ինչի, սակայն, աչքերս արցունքներով լեցուն են... հայրս իր հայրենասեր ու ընկերվարական բանաստեղծի լարերը պահ մը մեկ կողմ թողած կհեկեկա... շուտով հայրենիքին մեջ հանդիպում կմաղթեմ ու կխնդրեմ, որ իր 50 տարվա գրական վաստակը հավաքե ու նվիրե իր սիրելի հայրենիքին։ Ու հիմա ալ իմ պաշտելի ու անբաժան մայրիկես է որ կբաժնվիմ ու ի՞նչ գոտեպնդում ինձ համար, երբ ան փոխան արցունքի կորով կներշնչե և առնական կեցվածքով կրսե թե «Ու ճշմարիտ մորդ է որ քեզ կհանձնեմ ու հաշորդ տարի դուն մեր միացման կամուրջը պիտի հանդիսանաս...»։

Ու... շոգեկառքը կսուրա... վերջին հրաժեշտի ու ողջերթի խոսքեր են, որ հովը կբերե մեր ականջներուն։ Ոչ մեկը չի քնանար այդ գիշեր, վագոնե վագոն կշրջինք մեր բարեկամներուն հետ. ժպիտ մը կա բոլորին դեմքին վրա, Արարատի փեշերեն հրնչող հայրենադարձի վսեմ ու անզուգական կանչը կախարդած է բոլորը։

Կիրակի օր, առավոտյան մեր շոգեկառքը կմտնե Քոնստանտա նավահանգիստը, ուր մեզ կսպասե սովետական ծովային հսկա «Պորեպա» շոգենավը։

Հունիս 21-ին, երեքշաբթի, ներգաղթողներու հոծ շոգենավին վրա բարձրանե ետքը նավ կելլեն հայրենադարձները, որմե ետքը կսկսի ողջերթի միթինկը. օրվա ճառախոսները մնց հետ նավին վրա են, իսկ մեր դիմաց բարավը լեցուն է հազարավոր հայեու բազմությամբ։ Ծովի մը կնմանի սիրելիներու այդ բազմությունը, որ տակավ առ տակավ կծավալի, կարծես իր կապույտին մեջ ընդգրկելու համար մեր այտերեն հոսած ու-

բախության արցունքները։ Հետզհետե խոսք կառնեն «Հայաստանեան Ճակատ» կազմակերպության Կեդրոնական Կոմիտեի նախագահ Վ. Դանիելյանը, Ներգաղթի Կոմիտեի նախագահ Ա. Ժամկոչյանը, Սովետ դեսպանատան հյուպատոս Ս. Էլչիբեկյանը, Քոնստանցայի քաղաքապետ Դումիտրու Բերբը նեսքուն, որ կդրվատե ռումեն և հայ դարավոր եղբայրության անխզելի կապը և հայ դաղթականներու ցուցաբերած հայրենասիրության ու աշխատասիրության եռանդը։ Ապա Լխոսի Ռումանահայ թեմի Առաջնորդական Փոխանորդ Վազգեն ծայրագույն վարդապետը, որ մաղթանքներ կընե ու բարի ճանապարհ կմաղթե հայրենադարձներուն։ 1000-ե ավելի ներգաղթողներու կողմե կխոսի Բուխարեստի Ազգային Վարժարանի նախկին տնօրեն դոկտ. Ա. Տիրացյան։

մեզ մեր սիրելիներեն, փոխարենը շուտով Սովետական մայր հողին արժանացնելու համար։ Բոլորն ալ հուզված են. նկատելի բացականչություններն ու թաշկինակի շարժումները... իմ ալ սիրելի եղբայրս քարափն է. հեռադիտակով վերջին նայվածք մ՚ալ ու այլևս զիրար չենք տեսներ... «Հայաստանեան Ճակատ» կազմակերպության կարգ մը ընկերներ մակույկները լեցված կուգան գեթ փոքր տարածության մը վրա մեզ ճամբելու. անդին քարափը լեցված բազմությունը գետի մը վերածված կհորդի դեպ նամահանգստի փարոսը, անգամ մը ևս դիտելու բուռն ցանկությամբ, սակայն, շուտով ամեն ինչ կանհետա մեր տեսողության դաշտեն։ Բայց անոնց կանչերը դեռ կշարունակեն հնչել մեր ականջներուն մեջ...։ Մենք ալ պիտի գանք հաջորդ տարի, ցտեսություն "Սովետական

Ռումանահայ հայրենադարձների մի խումբ Բարումի նավահանգստում

Քոնստանցայի երիտասարդության կողմե կխոսի Եր. Ղոնչեկյուլյան։ Հ. Քայսերյան ռումեն լեզվով կկարդա հեռագիր մը հայրենադարձներու կողմե ուղղված Ռումեն ժողովրդական Հանրապետության վարչապետ դոկտ. Պ. Գրոզայի։ Դարձյալ անկկարդա ռումեն ժողովրդին ուղղված ուղերձ մը։ Ապա Գ. Եդիգարյան կկարդա հեռագիր մը ուղղված Ռումանիո . Սովետ դեսպան Քաֆթարաձեին ու միթինկը կփակվի։

«Պորեդաս»-ն դանդաղ կսկսի հեռանալ-քարափեն, ժամանակավորապես բաժնելով

Հայաստանի մեջ»։ Մակույկներն ալ շուտով կբաժնվին մեզմե. անոնց մեջն են Սովետ դեսպանատան հյուպատոս Ս. Էլչիբեկյանը, «Հայաստանեան Ճակատ» կազմակերպության Կեդրոնական Կոմիտեի նախագահ Վ. Դանիելյանը, ինդհանուր քարտուղար Հ. Պապոյանը և շատ ուրիշներ։

Իրիկուն է.. հսկա «Պորեդաս»-ն կհեղքի ալիքները Սև ծովին. երկինքը իր ջինջ կապույտով ծովին միացած, կապտագույն աշխարհ մը կստեղծե մեր աչքերուն։ Շոգենավին բարձրախոսեն շարունակ հայկական

երգեր կհնչեն. մեր քարավանապետը, դոկտոր Ա. Տիրացյան, շրջելով խորհուրդներ կուտա ներգաղթողներուն։

Ու շոգենավը կսուրա գիշեր ու ցորեկ, մոտեցնելով մեզ հայրենի ափերին... Հունիս 23-ին, 44 ժամ ճամբորդելե վերջ, կհասնինք Բաթումի։ Առաջին անգամ ըլլալով ոտք կը-դնենք Սովետական ազատարար հողի վրա. շնորհակալության անհուն զգացմունքով լիցուն են մեր սրտերը, շնորհակալություն կը-մրմնջան մեր շրթունքները, շնորհակալություն Սովետ Միության հանճարեղ առաջնորդ, մեծ ուսուցիչ Գեներալիսսիմուս Ստալինին, որուն անհուն բարյացակամությամբ ծնունդ առավ ողջ հայոց պատմությունը։

Բաթումի մեջ նախընթացը չունեցող Հայրենադարձի մեծ գործ։

Ավելի քան շաբաթ մը մնացինք Բաթումի, արժանանալով Ներգաղթի Կոմիտեի հոգատար խնամքին։ Երևանեն հատկապես Բաթումի էր ժամաներ Սայաթ Նովայի անվան աշուղական անսամբլը, որ գրեթե ամեն գիշեր մեզ համար գեղեցիկ համերգներ կկազմակերպեր, ղեկավարությամբ ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստ Վ. Սահակյանի։ Կցուցադրվեին շարք մը գեղեցիկ շարժանկարներ, որոնց մեջ «Երկիր Հայրենիք» հրաշալի շարժանկարը։ Մեր տրամադրության տակ հատուկ ընթերցասրահ մը դրված էր՝ բազմաթիվ թերթերով ու գրքերով օժտված։ Ռումանահայ հայրենադարձներուն կողմե ևս սարքվեցավ կուլտուրական հանդես մը։

Երբ հայտնի դարձավ ամեն մեկ ներգաղթող ընտանիքի բնակեցման վայրը, սկսանք մաս մաս մեկնիլ դեպի մեր երազած Սովետական Հայաստանը։ Ես Հայաստան մեկնեցա Բ խումբին հետ, հուլիս 2-ին։ Գնացքը կսուրա Սովետ Վրաստանի գեղատեսիլ գաշտերուն կամ վրայեն։ Հաջորդ օրը գնացքը կսուրա Սովետ Հայաստանի անդնդախոր կիրճերեն և անմահ Հ. Թումանյանի սքանչելի Լոռին, իր վեհատեսիլ լեռներով ու սրընթաց լեռնագետակներով, մեզ առաջին բարի գալուստը կմաղթե։ Քիչ հետո կհասնինք Ալավերդի. հուզիչ էր այստեղ տեսարանը... բազմաթիվ հայրենակիցներ կդիմավորեն մեզ, որոնց



Ռումանահայ հայրենադարձները այցելում են Սևանա կղզին. նավի վրա առաջին պլանում Ս. Քալանջյանը

մեջ նաև 1946 թվին ներգաղթած ռումանահայ եղբայրներ ու քույրեր. հարազատներ զիրար կգտնին ու կողջագուրվին։

Հունիս 4-ին, առավոտյան կհասնինք Լենինական, հոս հոծ բազմություն մը խռնված է կայարան. մաս մը մեր խոմբեն վար կիջնե այս քաղաքը հաստատվելու համար։ Երկու ժամ հետո մեր շոգեկառքը կրկին կշարունակե իր ճամբան դեպի Սովետ Հայաստանի սիրտը։ Անհամբեր կսպասենք դարերուն նայող և հայ ժողովրդի խորհրդանիշը հանդիսացող Արարատը տեսնելու... երեկոյան դեմ մեզ կժպտա նվիրական Մասիսը՝ արևի ոսկեհյուս ճառագայթներով պճնազարդված... ի տես անոր «Հայաստան» երգի եղանակն է, որ հանկարծ կփորձեմ մրմնջել, բայց [illegible] կգլորվին այտերես ու ձայնս կսկսի կերկիրալ։

Ժամը ութին մոտ մեր դեմը կիլլե Սովետ Հայաստանի լույս քաղաք Երևանը, որ հեռուեն իսկ ցույց կուտա մեզ իր հրաշալիքները... վագոնները կլեցվին «Հեյ, ջան Երևան» երգի հնչյուններով։ Գնացքը ուրախ աղմուկով կսուրա գործարանների կողքեն և սուր սուլոցով իր մուտքը կազդարարե Երևանի գեղատեսիլ կայարանը։ Կայարանը լեփ-լեցուն է. մարդկային հոծ բազմություն մը եկած է մեզ դիմավորելու. կարմիր հսկա ժապավենի մը վրա կկարդանք. «Բարի գալուստ մեր հարազատ եղբայրներին ու քույրերին»։

Երկրորդ որն է մեր ժամանման՝ կքալենք Երևանի ասֆալտապատ ու լայնարձակ պողոտաներեն ու փողոցներեն և անհագ ու մեծ հպարտությամբ կդիտենք սովետական մեր եղբայրներու և քույրերու կառուցած վեհատեսիլ կոթողները։ Մեզ հմայմունք կպատճառեն Լենինի հսկա հրապարակն ու Լենինի հոյակապ արձանը, Շահումյանի հրապարակն ու Շահումյանի արձանը, Աբովյանի արձանն ու «Մոսկվա» սինեմայի շենքը, վարդագույն տուֆե կառուցված Կառավարական հրաշագեղ շենքը, Պետական օպերայի թատրոնի շենքը, Համալսարանի, Մատենադարանի, Հանրային գրադարանի, Գիտությունների Ակադեմիայի, Դրապալատի և այլ շենքերը, որոնք մինչ երեկ մեզ ծանոթ էին միայն նկարներու, գրքերու շնորհիվ. իսկ այսօր տեսա կոթողացած են մեր աչքերու առջև։ Մեր շուրջը կեռա կյանքը. Երևանը կնմանի հսկա փեթակի մը, ուր մեղվաջան աշխատանքը հսկայաթափ կծավալի. ան ամեն օր, ամեն ժամ կփոխվի, կարդիականանա։

Ռումանահայ հայրենադարձները հայրենի հողին վրայեն քալելով, գերագույն ուխտի մը իրականացումն է որ կզգանք։ Անիեն գաղթած ու ավելի քան ութ դար ռումեն հողին վրա ապաստան դտած հայրենասեր ու կորովի հայ ժողովրդի շատ սերունդներ անհետացան, հայրենիքի մորմոքող կարոտը սրտերուն մեջ։ Ի՞նչ փույթ թե հազարավորներ ալ զոհ գացած են ձուլումի և անոնց մտքին մեջ արդեն ոչ ևս է ձյունակատար Արարատը կամ Մայր Արարատը քայլամոլոր. ռումանահայ գաղութեն հայրենիք դարձած այս քարավանը ինքնին կհանդիսանա լավագույն պլակատը ռումանահայ հատվածի հայրենանվեր իղձերուն ու գերագույն ուխտերուն։ Մեր աստանդական պապերը հակատագրի բերմամբ, դարեր շարունակ ամենուրեք ենթակա կսկծալի թափառումներու, ապարդյուն մաքառումներու, չտեսան իրենց երազներու իրականացումը, իսկ անոնց հրջանիկ սերունդը, հայրենադարձները, այսօր հայրենի հողի վրա ջերմորեն կողջունենք սովետական մեր լուսապայծառ հայրենիքի սննդարարությունը վերելքը, մեր բոլոր ուժերն ու եռանդը ի սպաս դնելով անոր հարաճուն բարգավաճման ու ծաղկման դործին։

Ու երբ կխորհինք, թե հանուն հայրենիքի բարօրության մեր ճիգերու միախառնումը հայրենի հողի վրա ապրող մեր եղբայրներու ու քույրերու ճիգերուն հնարավոր դարձավ սովետական իրավակարգի շնորհիվ, երախտագիտության անհուն զգացումը կպատեն մեր սրտերը հանդեպ ժողովուրդներու հոգատար հայր մեծ Ստալինի, որուն ենք պարտական թե՝ մեր ծաղկուն հայրենիքի բարօրության և թե՝ մեր հայրենադարձության երջանկության պարգևման համար։



ՀԱՅՐԵՆԻ ՀԱՐԱՁԱՏ ՀՈՂԻ ՎՐԱ

ԲՆԱԿԱՐԱՆԱՁԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹԵՈՒՆ

Հայրենադարձների համար Կիրովականում կառուցվում են բազմաթիվ միահարկ ու երկհարկանի շենքեր 2500 քառակուսի մետր բնակելի տարածությամբ։ Մինչև սեպտեմբերի 1-ը այդ շենքերում տեղավորվելու է 120 ընտանիք։ Մի քանի օրից հետո շահագործման է հանձնվելու չորս բնակելի շենք։

***

Արտասահմանից Սովետական Հայաստան վերադարձած հայերի համար նոր Ջեյթուն, Կիրզա ավաններում, Կիրովի անվան գործարանի բանվորական թաղամասում, Քանաքեռի սարալանջում և մայրաքաղաքի այլ վայրերում կառուցվում են բնակելի բազմաթիվ շենքեր։

Բնակության համար շենքերն ունենալու են բոլոր տեսակի հարմարությունները։ Միահարկ շենքերն ունեն տնամերձ հողամասեր։

Շենքերի մեծ մասը շահագործման է հանձնվելու այս տարվա աշնանը։

***

Մայրաքաղաքի Սպանդարյան Ռայսովետի գործկոմի շինգրասենյակը Միկոյանի պողոտայի վրա, Գետառի ափին, ճարտարապետ Հ. Կիրակոսյանի նախագծով կառուցում է չորս հարկանի բնակելի նոր շենք հայրենադարձ հայերի համար։

Արթիկ տուփից կառուցվող այդ շենքի առաջին հարկի միջին մասում տեղավորվելու են զանազան խանութներ ու արհեստանոցներ, իսկ մնացած մասն ու հարկերը ունենալու են 2—4 սենյականոց 23 բնակարաններ՝ իրենց բոլոր հարմարություններով։

Կառուցման աշխատանքների վրա ծախսվելու է 940 հազար ռուբլի։ Շենքը լրիվ շահագործման կհանձնվի այս տարվա նոյեմբեր ամսի սկզբներին։

***

Արտաշատի շրջանում բնակություն հաստատած հայրենադարձ հայերի բնակարանների կառուցման համար գյուղբանկը 1946—47 թվերին և 1948 թվի անցած ամիսների ընթացքում բաց է թողել 6 միլիոն 337 հազար ռուբլու վարկ։ 1946—47 թվերին շրջանում կառուցվել և շահագործման են հանձնվել 395 նոր բնակարան։ Այս տարի պետք է կառուցվի 305 նոր բնակարան։

***

Դիլիջանի և Գոլովինո գյուղի միջև ընկած գեղեցիկ վայրում հայրենադարձ հայերի համար նոր ավան է կառուցվում։ Կառուցվող 35 միահարկ տներից 7-ը շահագործման կհանձնվեն մոտ օրերս։ Գետությունը ամեն տեսակի աջակցություն է ցույց տալիս սովետական նոր քաղաքացիներին կենցաղային բոլոր խնդիրներում։ Տուն կառուցելու համար ամեն մի ընտանիքի վարկ է տրվում 30 հազար ռուբլի։

***

Ախտալի շրջանի Աթարբեկյան, Ալափարս, Ֆանտան, Բժնի, Արզաքենդ գյուղերում հայրենադարձների համար բնակարաններ են կառուցվում։ Արդեն պատրաստ են

13 բնակարան, մնացած 12-ը շահագործման կհանձնվեն նոյեմբերի 7-ին։

Գյուղբանկի շրջանային բաժինը հայրենադարձներին վարկ է բաց թողել տներ կառուցելու և կովեր ձեռք բերելու համար։

Միայն ընթացիկ տարում բաց է թողնված մեկ միլիոնից ավելի ռուբլի։

Ախտա-Մաղկաձոր խճուղու վրա Գյումուշգէսի շինարարության վրա աշխատող հայրենադարձների համար կառուցվում է 40 բնակարան։

***

Հայրենադարձների համար Ստեփանավանում կառուցվում է 30 բնակարան։ Քաղաքի հիմնարկ-ձեռնարկները շինարարությանը մեծ օգնություն են ցույց տալիս ավտոմեքենաներ տրամադրելով քարի, ավազի, կրի ու անտառանյութի տեղափոխման համար։ Կառուցվող բնակարաններից 15-ը շահագործման հանձնվեցին օգոստոսին, իսկ մնացածները շահագործման կհանձնվեն սեպտեմբերին ու հոկտեմբերին։ Հայրենադարձների համար 52 նոր բնակարաններ էլ կառուցվում են շրջանի 19 գյուղերում, որոնք պատրաստ կլինեն տարվա վերջին։

***

Կիրովականի Քաղսովետը մեկ ու կես տարվա ընթացքում 253 հայրենադարձների հողամասեր է հատկացրել՝ տներ կառուցելու համար։ Մարքսի և Շահումյանի փողոցների վրա կառուցվում են 9 նոր շենքեր։ Մոտ ժամանակներս շահագործման կհանձնվեն գրեթխավոր փողոցի վրա կառուցված երկու երկհարկանի տուն։

Քաղաքի հարավ-արևելյան մասում հայրենադարձների համար կառուցվում են 180 տուն։ 75 նոր բնակարաններում անցկացված է էլեկտրալուսավորություն և դրված են ռադիո-բարձրախոսներ։

***

Երկու տարվա ընթացքում Արևելյան Արեշում մեծ թվով անհատական բնակարանների շինարարություն է կատարվել։ Այսօր հայրենադարձների 450 ընտանիք երջանիկ ապրում են իրենց սեփական հարկերի տակ։ Առաջիկայում Արևելյան Արեշը Երևանի սրինակելի և կուլտուրական մի արվարձանն է լինելու։

***

ՍԻՍԻԱՆ, 2 սեպտեմբերի.— Հայրենադարձների 30 ընտանիք ստացան նորակառույց բնակարաններ։ Ավարտված են 48 հայրենադարձների համար բնակարանների կառուցման քարային աշխատանքները։ Շուտով կսկսվի նաև 29 նոր բնակարանների կառուցումը։

***

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ, 16 սեպտեմբերի.— Հոկտեմբերյան քաղաքում հայրենադարձ հայերի համար կառուցվում է երկհարկանի բնակելի տուն։ Այդ տունն ունենալու է երկուսից-երեք սենյակից բաղկացած 12 բնակարան, իրենց բոլոր հարմարություններով։

Տունը շահագործման է հանձնվելու Հոկտեմբերյան տոնակատարությունների։

ՆՈՐ ԿԱՄԱՐԱԿ ԱՎԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Երևանի Քաղսովետի գործկոմը, ընդառաջելով արտասահմանից հայրենիք վերադարձած նախկին կամարակցիների ցանկություններին, որոշեց Նոր Զեյթուն և Կիրզա ավանների միջև ընկած տարածությունը հատկացնել նրանց՝ Նոր Կամարակ անունով ավան կառուցելու համար։

Մոտ 60 նախկին կամարակցիներ և «Արաքս» կոշկակարական արտելում ընդգրկված ավելի քան 30 տնտեսություններ, որոնք հայրենիք են վերադարձել Ֆրանսիայից, նոր ավանում կառուցելու են իրենց անհատական բնակարանները։ Արդեն առանձնացված են տնատեղերն իրենց տնամերձ հողակտորներով, տեղ-տեղ սկսված են կառուցման աշխատանքները։ Շինարարական մասսայական աշխատանքները կսկսվեն մոտ ժամանակներս։

ՋԵՅԹՈՒՆ ԱՎԱՆՈՒՄ

1947 թվի գարնանը, Երևանից երեք կիլոմետր հեռավորության վրա, Քանաքեռի բարձրավանդակից ոչ հեռու, սկսվեց Ջեյթուն ավանի կառուցումը։ Այդ ժամանակվանից սկսած այստեղ արդեն բարձրացել են հարյուրավոր բնակելի գեղեցիկ տներ։

Ավանի շինարարության վրա ծախսվել է 7,5 միլիոն ռուբլի։ Ավանում տեղավորվել են արտասահմանից հայրենիք դարձած մոտ 250 ընտանիքներ։ Նրանք տներ կառուցելու համար պետությունից մոտ 8 միլիոն ռուբլի վարկ են ստացել։

Ամեն մի ընտանիքի համար առանձնացված է 500—700 քառակուսի մետր տարածությամբ հողամաս— տան շինարարության, բանջարանոցի և պտղատու այգի տնկելու համար։

Նախատեսված է մինչև սույն տարվա վերջը ավանում էլեկտրական լուսավորություն անցկացնել, ջրմուղ կառուցել և դրպլոց ու ակոմբ բաց անել։

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ԳՈՐԳԱԳՈՐԾԸ

Նոր-Բայազետի գորգագործական արտելում հայրենադարձ Գ. Բազումյանը ձեռք է բերել արտադրական մեծ հաջողություն։ Նա ամսական մեկ քառակուսի մետրի փոխարեն գործում է երեք քառակուսի մետր էքսպորտային գորգ։ Լավագույն աշխատանքի համար նա հաճախ ստանում է դրամական և այլ արժեքավոր պարգևներ։

ԱԲՈՎՅԱՆԻ ՊՈՐՏՐԵՆ ԳՈԲԳԻ ՎՐԱ

Ժողովրդական ստեղծագործության նշանավոր վարպետ, գորգագործ հայրենադարձ Մ. Աբելյանը մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի մահվան 100-ամյակի առթիվ մի գորգ է գործել գրողի պորտրետով, որտեղ Խաչատուր Աբովյանը պատկերված է Արարատյան դաշտի ֆոնի վրա «Վերք Հայաստանի»-ն ձեռքին։

Այս աշխատանքը աչքի է ընկնում գորգագործության բացառիկ տեխնիկայով։

Մ. Աբելյանը իր աշխատանքը հանձնել է Հայաստանի Ժողովրդական ստեղծագործության տանը։ Գորգանկարը ցուցադրվելու է Խ. Աբովյանի մահվան 100-ամյակի առթիվ Ժողովրդական ստեղծագործության տանը կազմակերպված ցուցահանդեսում։

ՆԿԱՐԻՉ Ռ. ՇԻՇՄԱՆՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Անցյալ տարվա վերջերին Փարիզից Սովետական Հայաստան եկող հայրենադարձ հայերի խմբի հետ Երևան ժամանեց նաև նկարիչ Ռաֆայել Շիշմանյանը։ Չնայած դեռ մեկ տարի չի լրացել, ինչ Շիշմանյանը ապրում ու ստեղծագործում է Սովետական Հայաստանում, սակայն Հայաստանի Սովետական կերպարվեստագետների միությունը կազմակերպել է Շիշմանյանի աշխատանքների ցուցահանդես։

Հունիսի 29-ին Երևանի Նկարիչների տանը բացվեց այդ ցուցահանդեսը։ Ցուցադրված է Նկարչի աշխատանքներից 99 գործ, որոնցից 81-ը յուղանկար և 18-ը գրաֆիկական գործեր են։

Ցուցահանդեսի բացմանը ներկա էին մայրաքաղաքի աշխատավորության, արվեստի, գիտության բնագավառի աշխատողներ, ինտելիգենցիայի ներկայացուցիչներ։

Բացման խոսք ասաց Հայաստանի Սովետական կերպարվեստագետների միության պատասխանատու քարտուղար Ե. Հովհաննիսյանը։ Ողջույնի խոսք ասաց ռեսպուբլիկայի ժողովրդական նկարիչ Գ. Գյուրջյանը Նա ասաց, որ նկարիչ Ռ. Շիշմանյանի գործերից շատերը, ըստ իրենց կառուցվածքի, ավարտված ռեալիստական կտավներ են։ Նա հույս հայտնեց, որ նկարիչ Շիշմանյանը Սովետական Հայաստանում կստեղծի նոր ու առավել արժեքավոր գործեր։

Այնուհետև շնորհակալական խոսքով հանդես եկավ Ռ. Շիշմանյանը։

Այցելուների ուշադրությունը գրավեցին հատկապես «Հին կամուրջը», «Գետի ափերը անձրևից հետո», «Մովաքաղաքի ընդհանուր տեսքը», «Տեսարան բարձունքից», «Մովափնյա ժայռերը» և ուրիշ կտավներ։

ԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ

ԻՄ ՀՈՒՇԵՐԻՑ

ՊԵՐՃ ՊՈՌՇՅԱՆՑԸ

1879 թվականն էր, հունիս ամիսը։ Ես արդեն ավարտել էի Լազարյան ճեմարանի ուսման գիմնազիական դասընթացը և պետք է շարունակեի բարձրագույն ուսումս նույն ճեմարանի արևելյան լեզվաց լիկեոնում։

9—10 տարի կլիներ, որ չէի տեսել մորս. նա անհամբեր իմ տեսությանն էր սպասում և ես հուլիսին արդեն Աշտարակումն էի։

Ահա հենց այդ ժամանակ էլ ես առաջին անգամ հանդիպեցի ու ծանոթացա Պերճ Պոռշյանի հետ, որի իսկական անունն ու ազգանունը Հովհաննես Տեր-Առաքելյան էր, իսկ գյուղում հայտնի էր «Իվանուշկա» պարզ անունով։ Բացի նրանից, որ Պերճը իմ հորաքեռակիս՝ Տեր-Սիմոնի աշակերտն էր, մեր ու նրանց տների միջև մի «քավորական» մոտիկություն էլ կար. նրա հայրը՝ դերձակ Ստեփանը մեր տունը մշտական գնալ-գալ է ունեցել թե գործով և թե այնպես, բարեկամաբար. մերոնց ասելով ողորմած հոգին շատ ուրախ և կատակասեր, բայց ձեռապակաս մարդ է եղել։ Այս հանգամանքներն է՛լ ավելի նպաստում էին, որ մենք կարճ ժամանակամիջոցում մտերմանայինք ու սիրեինք միմյանց։ Այդպես էլ սիրով կապված մնացինք մենք մինչև վերջը, թեև միմյանցից հեռու էինք ապրում։

Պերճն այդ ժամանակները գրել էր արդեն իր «Սոս և Վարդիթեր»-ը (1860), «Կովածադիկ»-ը (1878) և սրանց շնորհիվ համբավի տիրացած, անուն ու ազգանունը փոխած գյուղ էր վերադարձել։

Երեք հոգի— ես, Պերճը և Հարությունենց Մնացականը (Բաղիշը) ամեն օր տեսնվում, երկար զրուցում, վիճաբանում էինք և ուրախ ու զվարթ ժամանակ անցկացնում։ Մեր տեսնվելու, հավաքվելու տեղը Բաղիշենց տունն էր, որը գտնվում էր գյուղի Բերդաթաղում, հին ու ավերակ «Միրանավոր» եկեղեցու մոտ, ձորաբաշին, որտեղից գեղեցիկ տեսարան էր բացվում դեպի Քասախ գետի անդընդախոր ձորը, հին կամուրջի և Ուլատիտիկի կողմերը։ Ապառաժների ծերին թառած տունը խորը ձորի վրա կախել էր ծիծեռնակի բուն իր պատշգամբը, որի տակից մի սառնորակ աղբյուր էր բխում ապառաժների ճեղքերից ու գլգլալով գնում, թափվում գետի մեջ. օգտվելով այդ հանգամանքից տընատերերը իրենց ուզած ժամանակը աղբյուրից սառնորակ ջուր վերքաշելու համար որոշ հարմարություն լին ստեղծել. պատշգամբից կախված Լր պարանի ծայրին ամրացված մի ջրաման, որը ծառայում էր այդ նպատակի համար։ Ամառվա շոգերին չկար ավելի սքանչելի բան, քան այդ սառնորակ ջրից օգտվելը։

Մեր խոսակցության և վիճաբանության առարկան այդ ժամանակ հանդիսանում էր գյուղում պետական դպրոց բաց անելու շուրջը ծագած վեճը, որի հետևանքով գյուղը երկու մասի էր բաժանվել— կողմնակիցների և հակառակորդների։ Հակառակորդների թվումն էին ինչպես Պերճ Պոռշյանը, այնպես էլ գյուղացիների մեծամասնությունը։ Պերճը կատաղի հակառակորդ էր պետական դպրոց բացելուն թե սկզբունքով և թե տընտեսական տեսակետից։ Նա ասում էր թե գյուղը վաղուցվանից ունի հայկական դրպրոց, որի ծախսերը դժվարությամբ է հոգում, իսկ երկրորդ դպրոց բացելուց էլ առաջինը պիտի փակվի, քանի որ գյուղը հնարավորություն չի ունենա երկու դպրոց պահելու։ Պետական դպրոց բացելու կողմնակիցների թիվը փոքր էր. որանց ղեկավարը հանդիսանում էր «Միկիտան Սաքո» կոչված տերտերը. այս անունը նրան տվել էր Պերճը, որովհետև նա քահանա ձեռնադրվելուց առաջ գինու խանութ էր ունեցել «Ղազախի շտաբումը»—Այդր-Գյոլ լճի մոտ։ Տերտերը մի ճարպիկ, գրագետ, աշքաբաց, բայց շատ էլ

փողասեր մարդ էր. նրան խոստացել էին նոր բացվելիք պետական դպրոցում կրոնի դասեր տալ, ինչպես նաև մի պատվո մեդալ։ Նա այցելում էր իր ծխականների տները և քարոզում հօդուտ նոր բացվելիք դպրոցի. «Լազարյան ճեմարան ինքը իր ոտքով մեր դուռն է եկել, իսկ մենք քացի ենք տալիս հիմարաբար...»,— ասում էր տեր հայրը։

Պերճը կստահեր էր Տեր Սարգիս Բզնունու այս առարքի համար։

Պերճն էր, որ ամեն օր գյուղի նոր լուրերն այս մասին մեզ էր հասցնում։ Մի օր էլ նա մեզ հայտնեց, թե ինքը՝ գավառապետ Խանաղովը «մախսուս» հենց այս գործի համար մեր գյուղը պիտի գա...

— Պետք է պատրաստվել, տղերք,— ասում էր Պերճը։

Ինչ պատրաստվելու բան կար, եթե մեր կարծիքը հարցնեին, մենք էլ մեր իմացածը կասեինք, այսինքն որ գյուղը երկու դպրոց պահել չի կարող, ինչպես ասում էր Պերճը։

Դրանից հետո անցավ մի երկու շաբաթ. մի օր էլ Պերճն ասաց, որ շշուկներ կան, թե էս օր կամ մյուս օրը Խանաղովը որտեղից որ է կերևա գյուղում։

Կիրակի օր էր. առավոտյան ժամ էինք գնացել Ս. Գևորգ Ամենափրկիչ եկեղեցին։ Պերճն էլ մեզ հետ էր. նա մեր ականջին շըշընչաց, թե արդեն եկել է։ Պատարագիչը տերտերացած «Միկիտան Սաքոն» էր, որը վատ չէր կատարում պատարագի արարողությունը. նրա ձայնը բամբ էր, իսկ աղոթքներն էլ այնպես էր արտասանում, որ երևվում էր, թե հասկանում է նրանց իմաստը։ Պերճն ասում էր, որ պատարագից հետո նա անպայման նշխարք կտանի աղային։

Երեկոյան յասաղուլ եկավ և ինձ թեյի հրավիրեց ունևոր Շահազիզենց «Քոռ Կարո»-ի տունը, որտեղ իջևանել էր գավառապետը։ Գնացի, բայց այնտեղ հանդիպեցի միայն Բաղիշին, Պերճը չկար. երևի նա հրավեր չէր ստացել, այլ հրավիրվել էինք միայն մենք, «անփորձ երիտասարդներս»։

Գավառապետը շատ սիրով ընդունեց մեզ. նա ինձ հարցրեց Լազարյան ճեմարանի մասին, հորեղբորս՝ Սմբատ Շահազիզյանի մասին ու գովեց նրա «վեհոնի վիշտը», իսկ Բաղիշին էլ հարցրեց նրա հորեղբայր Վեհապետյան Գևորգ արքեպիսկոպոսի մասին, որը հոգ էր տանում նրա ուսման գործին։ Գավառապետը մեր հին պաշտոնյաների տիպարով մի մարդ էր, օժտված խոսելու ու շարժվելու ձևերով։ Թեյ խմեցինք, գաթա անուշ արինք ու խորոված կերանք։ Վերջում նա, կարծես ի միջի այլոց, ավելացրեց, թե նահանգապետը Պետերբուրգից հրահանգ է ստացել, և մեզ էլ գրավոր հայտնել, որ սույն ուսումնական տարվա սկզբից հայ ու թուրք մեծ գյուղերում պետք է պետական դպրոցներ բացվեն և դրանց պահպանման համար միջոցներ հայթայթվեն։

Գեորգ Գոռշյան

— Էլ մեզ չեն հարցնում,— շարունակեց նա,— թե ուզում կամ չենք ուզում, հրաման է, պետք է կատարվի։ Բոլորը, ինչ որ այս մասին խոսվել ու արվել է գյուղում, մեզ հայտնի է։ Դուք լավ կարծիքների տեր եք, բայց դեռ անփորձ երիտասարդներ եք և անծանոթ պետության քաղաքականությանը, ուստի և կարող եք փորձանքի հանդիպել։ Գյուղից ձեր հեռանալու ժամանակն արդեն մոտենում է, դուք կերթաք և ձեր գործով կզբաղվեք ու կմոռանաք ամեն ինչ, բայց Պերճի գլուխը կարող է ցավել։ Այնպես, մի թեթև հասկացրեք նրան, որ մի առժամանակ թողնի ու հեռանա գյուղից, մինչև որ ամեն բան խաղաղվի, վերջանա։

Գավառապետը մեր վրա խելոք հայ պաշտոնյայի տպավորություն թողեց։ Եվ մենք էլ ընկերաբար մի թեթև հասկացրինք Պերճին ու նա էլ գլխի ընկավ։ Մենք դեռ Աշտարակումն էինք, երբ Պերճը թողեց գյուղը ու Թիֆլիս գնաց։

Այնուհետև հս Պերճին ժամանակի երկար ընդհատումներով էի հանդիպում մերթ Աշ-

տարակում, մերթ Հյուսիսային Կովկասի հանքային ջրերում, մերթ Նոր-Նախիջևանում։ Սակայն, անկախ մեր հանդիպումներից, ես միշտ էլ հետևում էի նրա գրական գործունեությանը։ Ու այդ հասկանալի պիտի լինի, որովհետև ես, համագյուղացի, բարեկամ ու կրտսեր ընկեր լինելով, նրա գրվածքներն իմ սրտին շատ մոտ էի ընդունում թե՛ նրանց լեզվի հարազատության և թե՛ ծանոթ միջավայրի վարք ու բարքի լուսանկարչական ճշտությամբ նկարագրված լինելու պատճառով, էլ չեմ խոսում այն մասին, որ նրա գրվածքները Աշտարակի կյանքից առնված լինելով, ոչ պակաս հետաքրքրում էին ինձ և իրենց բովանդակությամբ։ Ցավելով պիտի ասենք, որ նրա վեպերը, «Սոս և Վարդիթեր»-ից և «Կովածաղիկ»-ից հետո, սկսել էին հետզհետե կորցնել իրենց բարբառային հարազատությունը։ Գրական լեզուն, կարծես թե գալիս էր խեղդելու Աշտարակի ճկուն բարբառը։

Պերճ Պռոշյանցը Աշտարակի դպրոցի վարժապետ Շապուհ Շահնազարյանի և Մուշնու Ս. Գևորգ վանքի վանահայր Մելիքսեթի աշակերտն է եղել։ Ներսես կաթողիկոսը հավանելով Պերճի ուշիմությունը, 1852 թվին որդեգրում և ուղարկում է նրան Ներսիսյան դպրոցը. այստեղ Պերճը սովորում է Պետրոս Շանշյանցի տեսչության օրոք և վերամկրտվում ազգային ոգով, մի հատկություն, որը նա խստիվ պահպանում է մինչև իր կյանքի վերջին օրերը՝ թե՛ իր ուսուցչության տարիներին, պաշտոնավարելով Աշտարակում, Ագուլիսում, Շուշիում, Երևանում, Թիֆլիսում ու Հաշտարխանում, և թե՛ Երևանի թեմի դպրոցների տեսչության տարիներին։ Երանի թե նա իր գրվածքներում նույնպիսի համառությամբ ու խստությամբ պահպանած լիներ Աշտարակի հարազատ բարբառը, որը նրա վեպերի զարդն է կազմում։

Անցան երեք—չորս տարիներ... 1883 թվականն էր, ես ավարտել էի բարձագույն ուսմանս դասընթացը և հայրենիք վերադարձել՝ մի երկու ամիս հանգստանալու և ապա կյանքի հորձանքի մեջ նետվելու ու գործելու համար։ Ես այլևս նախկին անփորձ երիտասարդը չէի, ուսանողական կյանքի տարիներին շատ բան էի սովորել ու արդեն որոշ չափով հասկանում էի ցարական կառավարության քաղաքականությունը։ Գյուղում արդեն գործում էր պետական դպրոցը և երկու դպրոցներն էլ կողքկողքի հաշտ շարունակում էին իրենց գոյությունը։ Բզնունի Տեր Սարգիս քահանան ըստացել էր կրոնի խոստացված դասերը, իսկ թե մեդալ էլ ստացել էր, թե ոչ, դժվարանում եմ ասել։ Նա գնում գալիս էր ինձ մոտ ու ծածուկ ականջիս ասել էր, թե ինքը մի այնպիսի վեպ է գրում, որ պիտի նսեմացնի Պերճի բոլոր վեպերը։

Այդ ժամանակները Պերճը գյուղումն էր. 1880 թվին նա գրել էր արդեն իր լավագույն վեպը՝ «Հացի խնդիր»-ը. նրա հարգանքն ու պատիվը գյուղում էլ առաջվանը չէր, շատ էր բարձրացել. Ավչի Բաղդոյի նման ամբողջ օրը հրացանը ուսը ձգած մեն էր գալիս ու որս անում, և եթե կաքավ կամ դոլոն չէր կարողանում սպանել, գոնե ծիտ-միտ կամ ագռավ կարողանում էր ձեռք ձգել։

— Էդ անիծածն էլ եթե մի փոքր փափուկ միս ունենար... թե՝ չէ համով է, վատ չի,— ասում էր նա ագռավի մասին։

Ավչի Բաղդոն, այսինքն որսորդ Բաղդասարը, Բաղիշի հայրն էր, Ղարսից տնով տեղով Աշտարակ գաղթած Մարգար Հարությունյանի եղբայրը։ Բաղդոն քաջ մարդ է եղել։

Այս անգամ արդեն Պերճն էր իմ մոտ գընում գալիս. մի թեթև նախաճաշիկ՝ անելուց հետո դուրս էինք ընկնում, այդի ու ձոր ուտքի տակ տալիս։ Գյուղում մի բան չկար, որի մասին նա չիմանար, թե՛ պատմական հնություններ, թե՛ այլևն խաղողի տեղեր։

— Այս մեր Ս. Ականատեսի առուն է,— ասում էր նա,— այս մեր Հերերը, Դառաբավորը, Դոմշախրամը, Փոկաբերը, Խոջափլավի հին կամուրջը, Շահաղենց Ս. Սարգիս մատուռի ավերակը, Ավազգյոլը Տաշտաքարը, Ջիաբարը, Պիտինի նավարը Պատևելակոնդը, Էրամենց լիրը, Կատարի ղրոր և այլն, և այլն։

Մի օր էլ ես նրան տարա Ղըզլ-Թամուր—Աղթամուր գյուղը, որը պատկանում էր եղբորս աներոջը՝ Շահաղիդենց Հարությունաղային։ Այս գյուղը բարեբեր հողեր ու առատ ջուր ուներ, սակայն, այդ բարիքները չէին օգտագործվում, որի համար էլ գյուղացիները մնացել էին ձեռքերը ծոցին, խեղճ ու աղքատ։

Պերճը գյուղական հանդեսների սիրահար էր. նա սիրում էր ոչ միայն դիտել ու ծափահարել, այլ և անձամբ մասնակցել։ Նոր ու կանաչ այգիներից ցած, ձորում, գետի ափին սփռոց էին բաց արել ու կլոր-պար սկսել. մեր Պերճը ոչ միայն պարաշարքն էր մտել, այլ և պարագլուխը դարձել. նա այնպես էր խաղացնում թաշկինակը, երկու քայլ առաջ գնում, մի քայլ ետ ու տրորվում ուտքի վրա, կոտրատվում, որ ամենքի էշխն էր բերում։ Երգում էին աշխատանքի երգը.

Հո՜, եզր. հո՜
Ասուված հիշող,
Ասուված օրհնյալ
Հո՜, եզր. հո՜

Պարը գնալով աշխուժանում էր. Պերճը չտեսնված սիրով ու գեղեցիկ էր պարում. նրա ուրախ ու անհոգ օրերն էին, վանքում նրան լավ խոստումներ էին արել և նա շնչում էր լիակուրծք ու ապրում վառ հույսերով։

Մեր հիշած Ղըզլ-Թամուրը և Աղթամուրը, որոնցից առաջինը բուն գյուղն է, իսկ երկրորդը գյուղատեղը, ներկայումս բոլորովին վերափոխվել, բարեշինվել ու դարձել է մի մեծ, այգեշատ գյուղ— հայտնի Ոսկեվազը։

Տոնի կառավարիչ Կաղ Ներսեսը, որը խելոք ու առաջադեմ մարդու համբավ էր վայելում գյուղում, եկավ ու մեզ վերև հրավիրեց, ուր կանաչ այգիներից մեկում կալվածատեր Հարությունն աղան, ի պատիվ գյուղի համբաների, առատ կերուխումի սեղան էր պատրաստել և սպասում էին քահանային որ գա ու օրհնի սեղանը։ Մեզ այնպես թվաց, որ այս գյուղում գյուղացիները կալվածատիրոջ հետ հաշտ են ապրում, բայց հետո իմացանք, որ այգիների եկամտից կալվածատիրոջ հատուցանելիք տուրքի վերաբերմամբ վնաս է ծագել գյուղացիների ու կալվածատիրոջ միջև և գործը մինչև իսկ հասել է դատարան, ուր գյուղացիների ներկայացուցիչ Կաղ Ներսեսը շահել է գործը։

Իմ աշխատանքի անցնելու օրերը մոտենում էին. ինձ չէր հաջողվել ուզածս պաշտոնը գտնել իմ հայրենիքի սահմաններում, ես պետք է գնայի օտարություն, ճիշտ է մի մեծ ու շեն հայ գաղութ, բայց և այնպես օտարություն, ուստի և սիրտս տխուր էր։ Պերճը կամենալով մի վերջին անգամ էլ պատվել ու ուրախացնել ինձ, գտել էր հինգ հոգի սրտակից ընկեր տղերք և ձուկ որսալ տվել։ Նշնակված օրը ինձ մոտ գալով նրանք ասացին, թե պետք է գնանք Հանավանքի զուլալ աղբյուրի մոտ ձուկ վայելելու։

Գնում էինք ուրա՜խ ուրա՜խ, երգելով և յարուներս չափ ձգելով։ Պերճը միտն էր պահել ու երգում էր Ղըզլ-Թամուրի երգը.—

Հո՜, եկր, հո՜,
Աստված հիշյալ
Աստված օրհնյալ,
Հո՜, եգր, հո՜...

Դեռ Հանավանքի աղբյուրին չհասած. հնձվորներ տեսանք, որոնք գերանդիները մի կողմը դնելով, ձեռքերն ու երեսներն էին լվանում, որ նստեն և հաց անուշ անեն. աղջիկները գյուղից արդեն բերել էին տաք թանով սպասը։

— Բարի աջողում, տղե՛րք,— ասացինք մենք։

— Այ, Աստծու բարին, համեցե՛ք մի-մի դդալ տաք-տաք սպաս անուշ արեք։

Պերճը իսկույն իրեն ձիուց վայր նետեց, ինձ էլ վայր բերեց և ամենքս բոլորեցինք մեծ քերեղանի շուրջը. մի դդալը դարձավ երկու, երկուսը՝ երեք և այսպես շարունակ. քերեղանը տարան նորելու։ Ես վեր կացա նստածս տեղից՝ հիացած Պերճի ժողովրդասիրությունից. նա իր ժողովրդի հարազատ զավակն էր։

Այդ օրերից հետո շատ տարիներ անցան... Ես հեռու, Նոր-Նախիջևանում էի ապրում և զրկված էի Պերճի հետ հաճախ հանդիպելու հնարավորությունից. ոտով գլխով խրվել էի իմ դպրոցական գործերի մեջ։ Այդ տարիներին մեր ազգային դպրոցական կյանքում տեղի ունեցած երևույթների արձագանքներն էին հասել մեզ, և այն էլ աղոտ կերպով։ Օրինակ լսել էի, որ Պերճը դադարել է դպրոցական-կրթական գործունեությամբ զբաղվել և արդեն կենսաթոշակ է ստանում Ներսիսյան դպրոցից՝ ամսական հինգ ռուբլու չափ. լսել էի նաև, որ նա մեծ հաջողությամբ է տարել թեմական տեսչության իր պաշտոնը ևս, որ նա լիակատար հաջողությամբ իր պարզ, սիրուն ու ամենիս հասկանալի լեզվով աշխարհաբար է թարգմանել Մատթեոսի ավետարանը՝ արժանանալով դրա համար մագիստրոսի աստիճանի, որ Թիֆլիսում տոնվել է նրա հոբելյանը և այդ առթիվ նա պարգևատրվել է ութ հազարի չափ մի դրամարով, և այլն։

Երկար տարիներից հետո, երբ վերջապես պատահեցի Պերճին և ցանկացա ստուգել իմ լսածները նրա մասին, նա պատասխանեց, թե մոտավորապես բոլոր լսածներս ճիշտ են, բայց ինքը բոլորովին չի հիշում, որ երբևիցե իրեն այդքան գումար, որպես պարգև տված լինեն։ Հանդիպածս տարին, թվականը չեմ հիշում, գնացել էի Հյուսիսային Կովկասի հանքային ջրերը և իջևանել հայտնի Մակլայի ամարանոցում։ Հորեղբայրս՝ Սմբատը հանքային ջրերն էր եկել դեռ ինձնից առաջ։

Մի օր, անսպասելի կերպով, հանկարծ սենյակս է մտնում Պերճը։ Նա իհարկե այլևս նախկինը չէր— ծերացել էր, մազերը ալեխառնվել էին և կուզը մի փոքր դուրս էր ցցվել. բայց չնայած դրան, նա էլի Աշտարակի էն ուրախ, զվարթ, ասող, խոսող, ծիծաղող Պերճն էր։ Ես շատ ուրախացա հանդիպելու համար և մենք երկար խոսեցինք անցյալի ու ներկայի մասին։

— Երվանդ ջա՛ն, պետք է Սմբատի հետ միասին մի ճար անեք,— ասաց նա.— ընտանիքս բազմացել է, պահանջները, չեմ ասում շքեղության համար, այլ էական պահանջները, անհրաժեշտները խեղդում են ինձ, փարա չկա. ասում ես գրքերս, բայց

ո՞վ է մեզանում դին դնում դրանց, վող տալիս, մի արի տես, տանը կիսալուկ-կիտուկ թափված են մնացել։

Ես նրան խոստացա խոսել այդ մասին հորեղբորս հետ և նա հուսադրված գնաց։

Առատաձեռն էր Պերճը և հյուրասեր. պարկից ոչ հեռու, իր խոհանոցով հանդերձ մի վայելուչ սենյակ էր վարձել նա, որը կիրակի օրերը լիքն էր լինում ճաշի հրավիրված հյուրերով։ Մի կիրակի օր էլ ես ու հորեղբայրս Աշտարակի կողակով քաշվի ուտելու հրավիրված լինելով, գնացինք Պերճի մոտ. ուրիշ հյուրեր էլ կային։ Հորեղբորս անունը «գաստրոնոմ» էին դրել, սակայն, նրա կերածը պարզ, սովորական կերակուրներ էին. նա պահանջում էր, որ մ.ալն մթերքը թարմ լիներ, կամ, ինչպես ինքն էր ասում, «բարեմասն» լիներ։

Մատուցին կողակով քաշվին. հորեղբայրս փեշս քաշեց. կողակի աչքերը փոս էին ընկած, ասել է թե «անբարեմասն» էր։ Քաշվուց քիչ-միչ կերանք, բայց կողակը միայն քրքրեցինք։ Պերճը բարձր ծիծաղեց։

— Ի՞նչ ասեմ ձեզ պես աշտարակեցիներին,—ասաց նա։

Երբ դուրս եկանք, հորեղբայրս ասաց.

— Երթանք խորոված ուտենք։

1892 թվի մայիս ամսին կատարվել էր հորեղբորս՝ Սմբատ Շահազիզի ուսուցչության և գրական գործունեության շքեղ հոբելյանը. աշխարհի ամեն կողմից բազմաթիվ հեռագրական և գրավոր շնորհավորանքներ էին ստացվել, որոնց թվում և Պերճինը. սա մի սիրուն ու սրտառուչ շնորհավորանք էր, որ հոբելյարին հիշեցնում էր նրա հայրենի հարազատ Աշտարակը։ Այդ հոբելյանի հետևանքը եղել է «Աբովյան-Նազարյան» հայտնի գրական ֆոնդի կազմվելը։ Ես չէի մոռացել Պերճին տված իմ խոստումը և իր ժամանակին այդ մասին խոսել էի հորեղբորս հետ։ Այդ ֆոնդի տոկոսներից, Թումանյանի հետ միասին, ժամանակին իր լիակատար բաժինն է ստացել նաև իմ սիրելի բարեկամ Պերճը։ Մեր «Սմբատ Շահազիզի կենսագրությունը» գրքից բերում ենք այդ ֆոնդի պատմությանը վերաբերող հետևյալ տողերը։ «Ֆոնդի գումարը— 10.138 ռ. սկզբում հանձնված է եղել Թիֆլիսի Բարեգործական Ընկերության. ծրագիրը փոփոխված լինելով, վերստին ստացավ հիմնադիր Ս. Շահազիզը, որը տարին հինգ տոկոսով տալով, այսինքն 505 ռուբլին բաժանում էր նյութապես պակասավոր հայ գրականագետներին։ Ստացողների անվանացուցակից էլ երևում է որ ամեն տարի բաշխվել է 500 ռուբլի, ուրեմն յոթ տարվա մեջ (մինչև հիմնադրի մահը) 3.500 ռուբլի։ Նպաստ ստացել են 14 հոգի, որոնցից մի քանիսը 2—3 տարի շարունակ, մի քանիսն էլ 3—6 տարի (Հովհ. Թումանյան և Պերճ Պռոշյան). նպաստի ամենամեծ քանակը եղել է 200, ամենապակասը 50 ռ.»։

Վերջին անգամ ես Պերճին տեսա Նոր-Նախիջևանում, Ռոստովի հրեական ջարդերի ժամանակ։

Այդ ծանր օրերից մեկն էր. թեմական դպրոցի գիշերօթիկ աշակերտները մեծ դասամիջոցին նախաճաշում էին և ես էլ գտնվում էի սեղանատանը, երբ ինձ իմաց տվին, թե մի հիվանդ մարդ է եկել ու ինձ տեսնել է ուզում։ Դուրս եկա սեղանատնից. դեպի վերին հարկերը տանող մեծ սանդուխքի առաջ դրված երկար նստարանի վրա նստած էր հիվանդը, որը ինձ տեսնելուն պես դողդողալով վեր կացավ նստած տեղից և փսփսալով վազվզ։

Առաջին պահին ես չճանաչեցի նրան, այդ հիվանդին, այո՛, չճանաչեցի, որովհետև շատ տարիներ էին անցել և ես վաղուց չէի տեսել նրան. շատ էր փոխվել Պերճը, իմ սիրելի բարեկամս։ Աղքատիկ զգեստ, աղտոտ, խառնված մազեր, թորշոմած երես, մի տեսակ կուչ եկած մարմին։

— Այո՛, զարմանալի չէ,—ասաց նա,— այնքա՞ն բան է անցել գլխովս, կինս հիվանդ, ես անպաշտոն ու անթոշակ, ձեռքս՝ լիակատար պակասավոր... հույսս մնացել է դրսի հայությանը վրա։

Եվ նրա սիրտը լցվեց ու սկսեց արտասվել։

Սիրտ տվի, մխիթարեցի, տարա առանձնասենյակս, պատվիրեցի տաք-տաք սուրճ տալ, ուտելիք տալ, մինչև որ դասերը կվերջանային և ես կկարողանայի ազատ խոսել ու իմանալ թե՛ նրա Ռոստով գալու հանգամանքները և թե՛ «հույսս դրսի հայությանը վրա է» խոսքերի բուն իմաստը և ապա ձեռքովս եկածն անել։

Նա Ռոստովում իշխանել էր «Մարսել», նախկին «Մետրոպոլ», հյուրանոցում։

Նրա կինը հիվանդ էր, նրան սիրող, նրա բարի հրեշտակ կինը, Աննա Դոլգյանը, ղազարցի բժիշկ Մարտիրոս Դոլգյանի դուստրը, որի հետ նա կապված էր այնքան շերմ սիրով։ Բայց ինչու՞ պետք է անթոշակ մնացած լիներ, անպաշտոն... մտածում էի ես։

Մինչ ես աշխատում էի մի բան արած լինել նրա համար և գնում գալիս էի Բարեգործական Ընկերության նախագահի մոտ,

*) Տես մեր «Սմբատ Շահազիզի կենսագրությունը», էջ 28—29։

հանկարծ մի զայրացկոտ նամակ եմ ստանում նրանից, որտեղ նա գրում էր, թե մեռնում է, իսկ ես չեմ գնում տեսության։ Այդ նման էր Պերճին, նրա անհամբեր ընավորությանը, նրա շուտ վիրավորվող սրտին։ Ահա նրա այդ նամակը.

Երվանդ Շահազիզին
(Նոր-Նախիջևան)

1905 թ. հոկտեմբերի 18

Սիրելի՛ Երվանդ

Առողջ մարդի խոսքը բանի տեղ չդնելը ներելի է, ըստ չափու, իսկ հիվանդին անուշադիր լինելն ընչո՞վ բացատրենք։ Գիտեմ, որ պաշտոնյա ես, գիտեմ, որ ժողովներով գլուխդ խառն է, բայց եթե հոժարություն և կամք լինի, ամենայն դժվարություն կհարթվի։

Շնորհ արա խնդրեմ, այսօր, գոնե, ճա՞ից հետո հիվանդին այցելելով, ավետարանի պատվերը կատարած լինել։

Քույդ վշտալի Պերճ Պոռշյանց

Մի կիսահարբած կառապան գտա, որը համաձայնեց ոլոր-մոլոր փողոցներով հասցնել ինձ «Մարսել» հյուրանոցը։

Հյուրանոցում մի փոքրիկ, բայց վայելուչ սենյակ էր զբաղեցրել նա։ Ինքը պառկած բարձր տնքում էր, իսկ խնամողը, ինչպես ծանոթացրեց ինձ, իր՝ կրտսեր դուստրն էր, մի շենք ու շնորհքով հագնված աղջիկ։

Ես Պերճին բացատրեցի դրամի ստացման ուշացման և քաշքշելու պատճառը։ Ընկերության կանոնադրությամբ չէր թույլատրվում օտարներին օգնություն ցույց տալ, այլ թույլատրվում էր օգնել միայն և միայն նախիջևանցիներին։ Իհարկե կարելի էր միանվագ օգնություն ցույց տալ, բայց այդ դեպքում էլ բաց թողնվելիք գումարը շնչին կլիներ։ Չեմ հիշում թե որքան էր ստացել, երբ հետևյալ օրը ինքը անձամբ գնացել էր Ընկերության նախագահի մոտ. կարծեմ 150 ռուբլի է ստացել և այդ էլ նախագահի պատասխանատվությամբ։

Պերճը մտադիր էր անպայման արտասահման գնալ, որի համար պիտի կանգ առներ թե՛ Մոսկվայում և թե՛ Պետերբուրգում՝ ճանապարհածախս գտնելու համար։ Ես չկարողացա համոզել նրան, որ թողնի իր այդ մտադրությունը։

Իր հիվանդության մասին Պերճն ինձ ասում էր, թե դա դեղորայքով բուժելու հիվանդություն չէ, այլ Աշտարակում բուժվող հիվանդություն։

— Մի հանգիստ երթամ Աշտարակ, լոք տամ մեր առվի վրայից, մի բուռը ջուր վեր առնեմ, խմեմ, օխա՜յ ասեմ, և կբուժվեմ..., —ասում էր նա։

Այս վերջին տեսությունից հետո ես այլևս նրան չտեսա։ 1907 թվին լրագրերում կարդացի, որ նա Աշտարակ է գնացել։ Հոկտեմբերին վերադարձել էր Թիֆլիս ու այստեղ առանց կանգ առնելու մեկնել Բաքու, ուր և նոյեմբերին վախճանվել էր քաղաքային հիվանդանոցում։ Նրա աճյունը Բաքվից տեղափոխվել է Թիֆլիս և հողին հանձնվել Խոջիվանքի դերեզմանոցում։

ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ՏՈՔԹՈՐ ՐԱՊԵՐԹ ՈՒ. ՍԸՐԼ՝

Ծանոթ է ան ոչ՝ միայն ամերիկացիներուն, այլ նաև մեզի հայերուս։ Սիրելի է ան. նման հազվագյուտ անձերու, ոչ միայն իբրև անձ, նկարագիր ու իմացական շնորհներով օժտված մեկը, այլ նաև իբրև մին, որ այնքան գութով և քրիստոնեական սիրով կմոտենա մեր ազգային կյանքի իրագործումներուն։ Հարգելի տոքթոր Ռապերթ Ու. Սըրլը տերունական և առաքելական պատվերին լավապես գիտակցողն է մեր այս քիչիկ մը նյութապաշտ և մեքենայացած աշխարհի մեջ. իրեն համար նավատ ու գործ անբաժան ըմբռնումներ են։ Կհավատա ճշմարտապես մեր Հայ դատին իրավության ու կգործե այդ իրավությունը և իրավունքը իրականացնելու լուրջ ճիգով։ Անմարան կըրնանք այժմ ըսել, որ ան գործոն ատենապետն է Հայ Իրավանց Պաշտպան Ամերիկյան Եկեղեցական Հանձնախումբին։

Ու անշուշտ որ շահեկան է մեզի համար՝ լսել զինք իր մտածումներուն մեջ։

«Աշխարհի բոլոր ժողովուրդներու մեջ հայերը հերոսական ոգիով տոգորված ազգ մըն են։ Արդարև, ո՛չ մեկ ժողովուրդ կրցած է տոկալ հալածանքներու՝ այդքան երկար ատեն։ Ո՛չ մեկ ժողովուրդ այնքան հոգեին հարած է քրիստոնեական հավատքին, որքան հայերը՝ նույնիսկ արհավիրքի ու տառապանքի մշտատև օրերուն։ Ու ո՛չ մեկ ժողովուրդ այնքան անգթորեն անիրավուած է, որքան հայերը՝ առաջին համաշխարհային պատերազմի հաջորդող տարիներուն։

Մեկզմեկու ետեւ, Ուիլսըն, Քլեմանսո, Լլոյտ Ճորճ, Պրիան և Պալֆուր, Անգլիո Համայնքներու Տունը, Իտալիո Երեսփոխաններու Խորհուրդը, Միացյալ Նահանգաց Սերակուլտը և նույնիսկ ծերակուտական Կամ— որ օրինագիծ մըն ալ ներկայացուց— հայտարարեցին, թե Հայկական հողերը վերադարձվելու են և Հայաստան ազատ երկիր հռչակվելու է։

Նախագահ Ուիլսըն հավատարմորեն կատարեց իր հանձնառությունը, սակայն առաջադրված հողերը երբեք չտրվեցան Հայաստանի, որովհետև հիշյալ համաձայնագիրը մեռյալ տառ մը դառնալու կոչված էր։ Մյուս կողմե թուրքերը գրավեցին Կարսն ու Արդահանը՝ շարդելով բնակչությունը և տիրանալով լքյալ գույքերուն...։ Արևմտյան աշխարհի համար Հայկական հարցը թաղված էր...։ Հայաստանի մեկ տասներորդը միայն, իր մեկ միլիոնի մոտ բնակչությամբ, միացավ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություններու Միությանն։

Միացյալ Նահանգները, իբրև մեկ անդամը Միացյալ Ազգերու, պատեհությունը ունի վերարծարծելու Հայկական հարցը։ Քանի որ արդարություն պահանջվող հարց մըն է այս, և քանի որ հայոց կրած տառապանքներուն նախնական պատճառը իրենց քրիստոնյա ըլլալն էր, անտարակույս, Ամերիկայի քրիստոնյա եկեղեցիները իրենց ուժերը պիտի հայտնաբերեն ու միացնեն ի նպաստ Հայաստանի՝ հուսալով որ Ամերիկա ալ, իր կարգին, խնամյալ ձևով պիտի շատագովե Հայկական հարցի արդարությամբ լուծումը»։

(«Հայաստանեայց Եկեղեցի» *հունվար 1948 թ.*)

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԴՎԻՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության թանգարանի արշավախումբը, թանգարանի դիրեկտոր Կ. Ղաֆադարյանի ղեկավարությամբ, մեկ ամիս է ինչ վերսկսել է պեղումները Դվինում։

Արշավախմբին հաջողվել է բացել հնագույն քաղաքի գլխավոր հրապարակը և Կաթողիկե հռչակավոր եկեղեցու շրջապատը։ Հրապարակի վրա թագավորական պալատի և եկեղեցու մոտերքում գրված են եղել հոյակապ հուշասյուներ ու քարե զանազան խաչեր, որոնք պատկանում են 5-րդ դարի հայ ճարտարապետության լավագույն նմուշներին։ Հնագիտական խոշոր արժեք են ներկայացնում նոր հայտնաբերված մի քանի դամբարանների վրա գտնված հայերեն արձանագրությունները, որոնք պատկանում են մեր գրչության արվեստի առաջին օրինակներին։

Միջնաբերդում պեղումները շարունակվել են 9–13-րդ դարերի շերտերում, ուր հայտնաբերվել են բնակելի շատ շենքեր և գտնվել են գեղարվեստական տեղական ընտիր կերամիկայի հազվագյուտ նմուշներ։ Շուտով պեղման է ենթարկվելու միջնաբերդի 5-7-րդ դարերին պատկանող հողաշերտը։ Այդ պեղումների նպատակն է պարզել մարզպանական և արաբական Հայաստանի կուլտուրան։

Մոտ ժամանակներս պեղումների աշխատանքը կսկսվի քաղաքի կենտրոնական թաղամասում, Կաթողիկե եկեղեցուց դեպի հարավ գտնվող բլուրում, որի տակ կարող են գտնվել մեծ շինության ավերակներ։ Ընդարձակ պեղումներ են կատարվելու նաև քաղաքի հարավային սահմանները պարզելու նպատակով։

ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՄԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՀՈՒՇԱՐՁԱՆ ԿԻՐՈՎԱԿԱՆՈՒՄ

Կիրովականում կատարվող շինարարական աշխատանքների ժամանակ վերջերս գտնվել է ոսկյա մի թաս, զարդարված դեմ ու դեմ կանգնած առյուծների նուրբ բարձրաքանդակներով։ Թասի հետ միատեղ հայտնաբերվել են բրոնզյա դաշույն և կավե ամանների սև, փայլուն կտորներ։

Շինարարության ղեկավարությունը իր ժամանակին տեղեկացրեց այդ հայտնագործումների մասին։ Պատմական հուշարձանների սահմանության կոմիտեն և Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիան դադարեցնել տվեցին շինարարական աշխատանքները մինչև պեղում կատարելը։ Կիրովական ուղարկվեց հնագիտական արշավախումբ, որի կազմի մեջ մտնում էին Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Բ. Պիոտրովսկին, Հ. Եղիազարյանը ու Պետական պատմական թանգարանի դիրեկտորի տեղակալ Ա. Միրզոյանը։

Գտնված ոսկե թասը պատկանում է հնագույն թաղման, որի գերեզմանափոսի մակերեսը կազմում էր 30 քառակուսի մետր և ուներ 3,60 մետր խորություն։

Պեղումներից հայտնաբերված հարուստ նյութերը, որոնք հանձնված են Պետական պատմական թանգարանին, հնարավորություն են տալիս որոշելու թաղման ժամանակը՝ երկրորդ հազարամյակի կեսերը մեր թվականությունից առաջ, այսինքն մոտ 3400 տարի մեզնից առաջ։ Դա կուլտուրայի ամենահնագույն հուշարձաններից մեկն է՝ հայտնաբերված Հայաստանի սահմաններում։

Գերեզմանի մեջ շարված էին կավե քանդակագարդ և գունազարդ ամաններ. չորս ամանների բերանին դրված էին արծաթյա թասեր՝ զարդարված նուրբ փորագրություններով։ Ամանների վրա ընկած էին խոշոր և մանր եղջերավոր անասունների ոսկորներ, իսկ անկյունում գտնվում էր բրոնզե մեծ կաթսա՝ ոչխարի ոսկորներով։ Անասունները կրոնական ծիսակատարության հետևանքով հատկացվում էին թաղվածին որպես սնունդ։

Գտնված են մեծ քանակությամբ բրոնզյա հետաքրքիր առարկաներ՝ տապար-սակր, տեգի ծայր, դաշույն, դանակներ, ոսկյա և արծիթյոնի ուլունքներ, մանյակը կազմող ոսկյա խողովակներ և այլն։

Գերեզմանում մարդկային կմախք չհայտաբերվեց, որովհետև այն ժամանակ մահացած նշանավոր մարդկանց դիակն այրում էին։ Գերեզմանի մոտքի մոտ գտնվեցին երկու եզան կմախքի մնացորդներ։ Այդպես էր թաղման պատկերը։

Կիրովականի պեղումները մեծ նշանակություն ունեն Անդրկովկասի հնագիտության համար, նրանք լրացնում են Հայաստանի հնագույն կուլտուրայի պատմության բաց էջերից մեկը։ Այդ պեղումներն ընդարձակում են մեր գիտելիքների ծավալը Անդրկովկասի բավականին հին և բարձր կուլտուրայի մասին, որը ժամանակի տեսակետից նախորդում է Ասորական և Ուրարտական թագավորությունների կուլտուրային։

XIV ԴԱՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից ճարտարապետության գործերի Վարչության պատմական հուշարձանների պահպան կոմիտեի մե խումբ աշխատողներ Միկոյանի շրջանի Ամաղու գյուղում ձեռնամուխ են եղել Բուրտեւաշեն եռհարկանի հուշարձանի (1339) վերականգնմանը։

Ըստ ճարտարապետական զարդի այս հուշարձանը հանդիսանում է Հայաստանի միջնադարյան հարտարապետության լավագույն նմուշներից մեկը։

Հուշարձանի վերականգնման նախապատրաստական աշխատանքներն արդեն ավարտվել են։ Ներկայումս տեղափոխվում են անհրաժեշտ նյութերը։ Աշխատանքները ղեկավարում է ճարտարապետ Ա. Բալասանյանը։

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՀԱՅՏՍԲԵՐՈՒՄ

Միսիանի շրջանի Սառնակունք (Սայբալու) գյուղի կոլխոզնիկների երեխաները 1946 թվին դաշտում հայտաբերել էին հին արծաթ դրամների մի խոշոր հավաքածու։ Ներկայումս Հայկական ՍՍՌ Պետական պատմական թանգարանում դրանցից պահվում են 173 դրամ։ Նրանք ունեն երկու հազարամյակի հնություն։ Հավաքածուի արժեքը նրա բացառիկ բազմազանության մեջ է։ Հավաքածուի մեջ առչքի է զարնում հռոմեական և սելեֆտական (սիրիական) ծագմամբ դրամների գերակշռությունը։

Հավաքածուի մեջ մեր էրայից առաջ I և II դարերի դրամներ կան Հայաստանից, Ասորեստանից, Հռոմից, Մակեդոնիայից, Հունաստանից, Պարթևաստանից (Իրան) և ուրիշ պետություններից։

ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պետական պատմական թանգարանը նվեր է ստացել հին հայկական արծաթե և պղնձե դրամների հավաքածուներ։

Առաջին հավաքածուն ուղարկել է Հալեպից ուսուցիչ Օ. Ղանթարճյանը, որը այդ դրամները հավաքել է 25 տարվա ընթացքում։ Հավաքածուն պարունակում է XII—XIV դարերի Կիլիկիան Ռուբինյան հարստության ատեանում 104 արծաթե և պղնձե դրամներ։ Դրանց թվում կան Լևոն I, Հերթոմ I, Լևոն III և Լևոն IV թագավորների կողմից բաց թողնված դրամներ։ Այդ դրամների պատմությունը հետաքրքիր է նրանով, որ նրանցից շատերը հայտաբերվել են հայկական կիլիկյան պետության դրացի երկրներում— Հյուսիսային Սիրիայում, Պաղեստինում, որտեղ նրանք շրջանառության մեջ են գտնվել։

Երկրորդ հավաքածուն, որը պարունակում է 620 արծաթե դրամներ, ուղարկել է Բեյրութից Ա. Փոլաթյանը։ Այս դրամները հայտաբերվել են Անտիոքի արվարձանում մի կժի մեջ լցված։ Հավաքածվի հետ միասին ստացվել է սիստեմի ենթարկված ցուցակը և մի լիակատար գիտական աշխատություն այդ դրամների մասին, որ գրել է Լիբանանի բնակիչ դրամագետ Պ. Կարապետյանը։

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Երևան քաղաքի պատմության թանգարանի բաժինները ընդարձակվել ու լրացվել են նոր էքսպոնատներով։ Դրանց թվումն են՝ Նոր Բայազետի ու հին բերդի շրջանում գտնված 2000-ամյա հնությամբ անոթը, քաղաքի հատակագիծը, կազմված 1673 թվին

ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդենի կողմից, շենքերի մակետներ և այլն։ Թանգարանի երկրորդ բաժնում ցուցադրված են իրանական տիրապետության շրջանի էքսպոնատներ— Երևանում պատրաստված դրամներ, հին տնային իրեր, զենքեր, ինչպես նաև մեդալներ՝ պատրաստված ի պատիվ ռուսական զորքերի կողմից Երևանի գրավման 1827 թվին։

Երրորդ բաժինը նվիրված է ռևոլուցիոն շարժման սկզբնավորմանը Հայաստանում։ Այստեղ դրված է «Ս. Շահումյանը գործարանի բանվորների հետ» նկարը։ Այս բաժնում ցուցադրված են լուսանկարներ ու փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս քաղաքի բնակչության վատթար կացությունը դաշնակների տիրության օրոք։

Հաջորդ բաժնում ցուցադրված են Սովետական Հայաստանի մայրաքաղաքին վերաբերող նյութեր— ստալինյան հնգամյակների տարիներին կառուցված գեղեցիկ բազմահարկ շենքերի մակետներ, սոցիալիստական Երևանի կյանքը պատկերող դիագրամներ ու պլակատներ։ Այստեղ է դրված նկարիչ Ե. Սավոյանի «Ընկ. Ա. Միկոյանը և ընկ. Գ. Հարությունյանը Հայաստանի արվեստի ու գրականության գործիչների հետ» մեծադիր նկարը։

Թանգարանի սենյակներից մեկում պահվում է Ա. Գրիբոեդովի Հայաստանում լինելուն վերաբերող նյութերը։

ՆՎԵՐ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀԻՆ

Հայկական ՍՍՌ Պետական պատկերասրահը Ռումինիայից, քաղաքացի Բարակյանից, նվեր է ստացել կերպարվեստի երկերի մի հավաքածու՝ բաղկացած 1000 նմուշից։

Հավաքածուի մեջ կան հայտնի հայ նկարիչ Գ. Բաշինջաղյանի վրձինին պատկանող 7 նկար, ժամանակակից ռումին նկարիչների գործեր, Ռեմբրանդի երկու օֆորտ, հունական կերամիկա, հին պարսկական վազա, բրոնզից, հախճապակուց պատրաստված իրեր։

ՆԿԱՐԻՉ ՀՄԱՅԱԿ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Հայաստանի Պետական պատկերասրահը կազմակերպել է Հմայակ Հակոբյանի ստեղծագործությունների հետմահու ցուցահանդես։

Նկարիչ Հ. Հակոբյանը ծնվել է 1879 թվին, Տրապիզոնում։ Վեց տարեկան հասակում ընտանիքի հետ տեղափոխվել է Թիֆլիս, ուր 1885 թվին ընդունվել է Ներսիսյան դպրոցը աշակերտելով անվանի նկարիչ-մանկավարժ Հարություն Շամշինյանին։ 1891 թվին նա մեկնում է Մյունխեն ու ընդունվում Արվեստների ակադեմիայում։ Այստեղ նկարիչը արտադրում է գեղարվեստական արժեք ներկայացնող այնպիսի գործեր, ինչպիսիք են «Զկնորսը», «Անհայտ կնոջ դիմանկարը», մյունխենյան ու շվեցարական պեյզաժների շարքը և այլն։

1894 թվին ակադեմիան ավարտելով նա վերադառնում է Թիֆլիս ու մշտական բնակություն հաստատում այնտեղ։ Նրա ստեղծագործական բեղուն շրջանը տևում է մինչև 1920 թվականը, որից հետո առողջական վիճակը, հատկապես խանգարված տեսողությունը, նրան զրկում են նախորդներին հավասարարժեք գործեր արտադրելու հնարավորությունից։ Հակոբյանը մեռավ 1939 թվին։

Ցուցահանդեսը լրիվ պատկերացում է տալիս նկարչի անցած ստեղծագործական ուղու մասին։ Նրան հետաքրքրող աշխարհը հին Թբիլիսիի արհեստավորները, մանր առևտրականները, դինեգործները, շուտ կարողները, ջրկիրները, բեռնակիրները և ձրկնորսներն են, որոնց ճշմարտացի, հարազատ պատկերումով («Շիրախանա», Գինի լցնելիս», «Օժիտ են տանում») նա եզակի դեմք է։

Նրա դիմանկարային գործերից «Ինքնանկարը», «Նկարչի հայրը», «Ալեքոն», «Նկարչի քույրը ընթերցելիս» նկարները կարող են դասվել հայկական դիմանկարչական նշանակալից գործերի շարքը։ Արժեքավոր են նրա պեյզաժները, որոնց մեջ նա հաճախ տալիս է աշխատանքային պրոցեսներ («Վար», «Զկնորություն» և այլն)։ Հակոբյանը առավել վարպետ է նատյուր-մորտի մեջ։ Այստեղ նա իր տարրերքի մեջ է և տվել է գողտրիկ պատկերների մի ամբողջ շարք։

Հակոբյանը խանդավառությամբ ընդունեց սովետական կարգերի հաստատումը Վրաստանում և աշխատեց նորը ու նոր մարդկանց պատկերել։

Հմայակ Հակոբյանը հանդիսանում է մեր մոտիկ անցյալի արվեստի կարող ու առաջավոր ներկայացուցիչներից մեկը։

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ

Հայկական ՍՍՌ Պետական ձեռագրատան՝ Մատենադարանի գիտական աշխատողները մեծ աշխատանք են տանում հնագույն ձեռագրական հուշարձանների ուսումնասիրման բնագավառում։

Պատմական գիտությունների դոկտոր Ա. Աբրահամյանը տպագրության է պատրաստել XII դարի աստղաբաշխ-պոետ Հովհաննես Սարկավագի աշխատությունների ժողովածուն։ Գիտական աշխատող Ա. Մնացականյանը տպագրության է պատրաստում XII դարի մի պոեմ «Երուսաղեմի գրավման մասին»։ Պատմական գիտությունների թեկնածու Լ. Խաչիկյանը ուսումնասիրում է միջնադարի օրենսգրքերը և եկեղեցական կանոնների ժողովածուն։

ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

Սովետական Միության թատերական հասարակայնությունը նշում է հայ մեծ ողբերգու Պետրոս Ադամյանի ծննդյան հարյուրամյակը։ Նա հայ բեմում ստեղծել է շեքսպիրյան մի շարք կերպարներ։

Մոսկվայում լույս է տեսել Պետրոս Ադամյանին նվիրված հոդվածների մի ժողովածու, որը գաղափար է տալիս ականավոր արտիստի ստեղծագործական դեմքի մասին։ Ժողովածուի առանձին հոդվածներ նրան բնութագրում են որպես գրական գործչի և նկարչի։ Ժողովածուի մեջ մտցված է Պետրոս Ադամյանի նամակագրությունը իր հայրենակից, ռուսական նկարչության կլասիկ Այվազովսկու հետ, որին նա իր հայացքներն է հայտնում կերպարվեստի զանազան հարցերի առթիվ։

Հայ պոեզիայի կլասիկ Հովհաննես Թումանյանը, բանաստեղծ Մատուրյանը և ուրիշներն իրենց բանաստեղծություններում դողերգել են Ադամյանի հիանալի խաղը։ Դրանք ևս մտցված են ժողովածուի մեջ։

Հայկական ՍՍՌ Թատերական թանգարանի նախաձեռնությամբ կազմված է և հրատարակվելու է «Ադամյանի ստեղծագործությունների ժողովածու», որի մեջ տեղ են գտնելու դերասանի բանաստեղծությունները, քննադատական հոդվածները, նրա «Անկոհյուրը» վիպակը։ Այս ժողովածվում զետեղված են նաև նրա գունանկարչական, մատիտանկար և պնակների՝ վրա չինական տուշով կատարված գործերը։ Դրանցից հիշատակության արժանի են ինքնանկար գործերը՝ Ադամյան—Օթելլո, Ադամյան—Համլետ, Արքա— Լիր, Կորրադո և այլն։

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Վրացական ՍՍՌ Պետական արխիվում հայտաբերվել են հետաքրքիր նյութեր, որոնք լույս են սփռում ականավոր հայ դրամատուրգ Գաբրիել Սունդուկյանի կենսագրության վրա։

Ինչպես հայտնի է, Սունդուկյանը Պետերբուրգի համալսարանում սովորել է պետության հաշվին և այն ավարտելուց հետո պետք է վեց տարի ծառայեր Կովկասյան երկրամասի որևէ քաղաքացիական հիմնարկում։

Պետերբուրգի համալսարանը նա ավարտել է 1850 թվին՝ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածվի աստիճանով ու վերադարձել Թիֆլիս, ուր ծառայության է ձևակերպվել փոխարքա Վորոնցովի պաշտոնատանը՝ թարգմանչի պաշտոնով։

Բայց շուտով Վորոնցովի պաշտոնատան գանձապահ, աստիճանավոր Բելյաևի և Սունդուկյանի միջև ընդհարում է տեղի ունենում, ընդ որում ինքնասեր ու շիտակ Սունդուկյանը արտահայտվում է բացահայտ կերպով։

Այդ մասին իմանում է իշխան Վորոնցովը։ 1853 թվի դեկտեմբերի 7-ին նա գրում է իր պաշտոնատան դիրեկտորին. «Ինձ տեղեկություն է հասել, որ սույն տարվա ամռանը իմ պաշտոնատան վերակացվի կրտսեր օգնական տիտղոսավոր խորհրդական Սունդուկյանը պաշտոնական բացատրությունների ընթացքում թույլ է տվել իրեն հանդուգն ու պախարակելի արտահայտություններ անել ընդդեմ իմ պաշտոնատան բաժնի պետ և գանձապահ կոլլեգիական խորհրդական Բելյաևի»։

Ինչպես երևում են փաստաթղթերից, պաշտոնատան դիրեկտորը Սունդուկյանին կալանքի տակ է առել պաշտոնատան կից։

Ազատամիտներին ու գրականագետներին չհանդուրժող Վորոնցովը զայրացած հրամայում է իր պաշտոնատնից անմիջապես արձակել Սունդուկյանին և Դերբենտ ճամբել ծառայության՝ տեղի զինվորական նահանգապետի կարգադրության տակ։ Վերջինիս հանձնարարվել էր Սունդուկյանի նկատմամբ չթուլացող հսկողություն ունենալ և առանց

Վորոնցովի հատուկ կարգադրության թույլ չտալ նրան Դերբենտից որևէ տեղ գնալու։

Վորոնցովի հրամանն անմիջապես ի կատար է ածվում։ Սունդուկյանին մնում էր Դերբենտ ուղևորվել։

Գործի մեջ պահպանվել է դրամատուրգի մոր՝ Թինաթինի դիմումը, որով նա խնդրում էր թույլ տալ իր որդուն Թիֆլիս վերադառնալու։ Խնդրագրի վրա կա հետևյալ մակագրությունը. «Թողնել անհետևանք»։

Ուշագրավ է այն հանգամանքը որ Սունդուկյանին պաշտպան է հանդիսացել վրաց հայտնի պոետ Գրիգոր Օրբելյանին, որն այդ ժամանակ խոշոր զինվորական պաշտոն ուներ։ Անդրկովկասյան երկրամասի քաղաքացիական վարչության պետին ուղղված նամակում Օրբելյանին գրում է, որ մի քանի անգամ իր մոտ է եկել մայրը Գ. Սունդուկյանի, որին ինքը «անձամբ ճանաչում է որպես հիանալի երիտասարդ մարդու», և «բացատրելով իր ծայրահեղ վիճակը, շատ տեսակետներից, որը նա կրում է իր որդուն Դերբենտ ծառայության աքսորելու ժամանակվանից, խնդրել է Թիֆլիս տեղափոխել նրան...»։

Գրիգոր Օրբելյանին, որ գրականության մեջ և հասարակական կյանքում հայտնի էր իր ընդարձակ հայացքներով ու մարդասիրական ուղղությամբ, ջերմ կերպով միջնորդում է, որպեսզի Սունդուկյանին թույլտվություն տրվի աքսորից Թիֆլիս վերադառնալու։

Վերջապես, միայն 1855 թվի կեսերին Սունդուկյանին թույլ է տրվում Թիֆլիս վերադառնալ։

ԵՐԵԿՈ ՆՎԻՐՎԱԾ ԳՈՒՍԱՆ ՇԵՐԱՄԻ ՄԱՀՎԱՆ 10-ԱՄՅԱԿԻՆ

Հուլիսի 6-ին Գրողների տան դահլիճում տեղի ունեցավ երեկո, նվիրված հայ նշանավոր գուսան Շերամի (Գրիգոր Տալյան) մահվան 10-ամյակին, որը կազմակերպել էին Հայաստանի Սովետական Կոմպոզիտորների և Գրողների միությունները։

Երեկոյին ներկա էին մայրաքաղաքի գրականության, երաժշտության բնագավառի աշխատողները, գրողներ, կոմպոզիտորներ և ինտելիգենցիայի այլ ներկայացուցիչներ։ Բացման խոսք ասաց պրոֆ. Հ. Մելիքյանը։ «Շերամի կյանքը և ստեղծագործությունը» թեմայով զեկուցեց երաժշտագետ Ա. Քոչարյանը։

Զեկուցումից հետո հուշերով հանդես եկան Դ. Դեմիրճյանը, Ա. Տոնիկյանը։ Ավետիք Իսահակյանի հուշերը Շերամի մասին կարդաց Հր. Քոչարը։

Վերջում տեղի ունեցավ համերգ։ Գրական բաժնում հանդես եկավ Սունդուկյանի անվան պետական թատրոնի դերասանուհի Հ. Գարագաշը, որը արտասանեց Շերամի ստեղծագործություններից. երաժշտական բաժնում Հայֆիլհարմոնիայի Սայաթ-Նովայի անվան գուսանական անսամբլը կատարեց Շերամի գործերից։

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԳՈՒՆԱՎՈՐ ԿԻՆՈՆԿԱՐԸ

Հուլիսի վերջերին ՍՍՌՄ Կինեմատոգրաֆիայի մինիստրությունում տեղի ունեցավ հայկական առաջին գունավոր մուլտիպլիկացիոն կինոնկարի՝ «Կախարդական գորգ»-ի դիտումը։

Կինոնկարը ցուցադրվելու է համամիութենական էկրանների վրա։

«Կախարդական գորգ»-ը հեքիաթ է չորս մասից բաղկացած։ Սցենարիան կազմել են Լ. Ատամանյանը, Գ. Գրեբները և Ն. Կլադոն։ Կինոնկարի ռեժիսյորն է Կ. Ատամանյանը, նկարիչը՝ Ա. Կոջոյանը։

ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՏՎԵՑ ԻՐ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

Հուլիսի 19-ին Երևանի Սունդուկյանի անվան պետական դրամատիկ թատրոնում կայացավ հանդիսավոր նիստ՝ նվիրված Երևանի Թատերական ինստիտուտի առաջին շրջանավարտներին։

Մեր թատրոնն առաջին անգամ ստանում է թատերական արվեստի բարձրագույն կրթությամբ կադրեր՝ թվով 25 մարդ։

Վերջում շրջանավարտները ներկայացրին Գ. Սունդուկյանի «Էլի մեկ զոհ», Մ. Գորկու «Վասսա Ժելեզնովա» և Ա. Սոլոգուբի «Քընքույշ սրտից պատուհաս» պիեսներից մեկական գործողություն։ Հանդիսատեսները երիտասարդ դերասանների խաղը դիտեցին գոհունակությամբ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՈՒՄ

Հունիսի 22-ին Մոսկվայում բացվել էր կիրառական արվեստի և կերպարվեստի ինքնուս վարպետների համամիութենական ցուցահանդեսը, որտեղ ցուցադրված էին 1.100 էքսպոնատներ։ Հայաստանից այդ ցուցահանդեսում ցուցադրված էին 90-ից ավելի էքսպոնատներ։ Ինչպես մյուս եղբայրական ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի վարպետների ստեղծագործությունը արժանացել է մայրաքաղաքի թերթերի ջերմ դրվատանքին։ Ստորև բերում ենք այդ թերթերից հայ վարպետների ստեղծագործություններին վերաբերող հատվածները.—

«Իսկական վարպետության է հասնում վերջերս արտասահմանից հարազատ Հայաստան վերադարձած սովետական երիտասարդ քաղաքացի Մ. Աբելյանի աշխատանքը — պլաստ-մասսայի վրա կատարված փորագրությունը։ Սքանչելի է փղոսկրից միշակ խնձորի մեծությամբ հմտորեն պատրաստված գունդը։ Նրա մակերևույթի վրա փորագրված են 16 միութենական ռեսպուբլիկաների պետնիշները, իսկ սրանց ժանեկե թաղանթի տակը— Կրեմլի հրապարակը՝ նրա վրա վեր խոյացած Սպասսկի աշտարակով։ Այս աշխատանքի հեղինակն է երևանցի ծառայող Հ. Պողոսյանը» («Պրավդա»)։

«Ժողովուրդների առաջնորդ Ի. Վ.Ստալինի վսեմ կերպարը պատկերված է գորգի վրա, ըստ իր կոմպոզիցիայի մոնումենտալ մի գործ, որ հյուսել է տնային տնտեսուհի Ա. Մատինյանը։

Հ. Ստեփանյանը արծաթի վրա կատարած, իր գեղարվեստական վարպետությամբ սքանչելի, «Վերածնված Հայաստանը» փորագրության մեջ պատկերում է ընկեր Ստալինին ծաղկող, արևավառ Հայաստանի ֆոնի վրա, ստալինյան հնգամյակի տարիներին ստեղծված հրաշալի կառուցումներով։

Հ. Պողոսյանը փղոսկրի ամբողջական կտորից ոչ մեծ խնձորի չափի մի գունդ է պատրաստել։ Նրա մակերևույթը կազմում են 16 եղբայրական ռեսպուբլիկաների պետնիշները՝ դասավորված ՍՍՌՄ պետնիշի շուրջը։ Ներքևից գունդը օղակված է Սովետական Միության Պետական հիմնի տեքստը կրող դրոշներով։ Գնդի ներսում ՍՍՌՄ-ի քարտեզն է և նրա վրա նուրբ փորագրված Կրեմլյան աշտարակն ու ՍՍՌՄ ռելեֆ տառերը։ Այս գործը գրավում է իր նրբությամբ, արտիստականությամբ և այն սիրով կատարված աշխատանքով, որ հեղինակը ներդրել է նրանում։

1947 թվին հարազատ Հայաստան վերադարձած Գևորգ Զարգարյանը նուրբ ժանեկային փորագրությամբ սքանչելի արծաթե վազայի վրա հետևյալ մակագրությունն է արել. «Հարազատ Ստալինին վերստին հայրենիք վերադարձածից»։ Վազայի վրա պատկերված «Հազարան բլբուլ» թռչունը, որ ըստ ավանդության երջանկություն է խոստանում նրան, ով իրեն կգտնի, կտուցի մեջ մի մակագրված թիթեղ է պահում, որն ասում է, թե երջանկությունն ու հաղթանակը այնտեղ է, որտեղ Ստալինն է։

Զափազանց արտահայտիչ են ժողովրդական պոետներ Ջիվանու, Ջամբուլի, Սուլեյման Ստալսկու, Շոթա Ռուսթավելու, Սայաթ-Նովայի մեծ գեղանկարչական պորտրեները, որ ստեղծագործությունն են հանդիսանում ինժեներ Ն. Մելիք-Փարսադանյանի» («Իզվեստիա»)։

«Ցուցահանդեսի այն բաժինը, որը նվիրված է Անդրկովկասի ժողովրդների ստեղծագործությանը, թերևս ամենահետաքրքիրը և ամենից սիրով ու խնամքով մտածվածն է է ըստ էքսպոզիցիայի։ Առանձնապես լավ են Հայաստանի էքսպոնատները։ Այստեղ, ճըշմարիտ, կան ունիկումային իրեր։

Ինժեներ Կ. Ղուլարյանի ստեղծագործությունները պլաստմասսայից—թանաքամանի սարք, «Խ. Աբովյանի հիշատակին» արկղիկը ճարտարապետական դամբարանի տեսքով և ժողովրդական «Նարդի» խաղը ապշեցուցիչ են ոչ միայն կատարվածքի բարդությամբ ու գեղեցկությամբ, այլ և հոյակապ զարդանկարներով։

Իր գեղարվեստական արժանիքների տեսակետից սքանչելի է Փ. Ամետիսյանի «Կոմպոզիտոր Կոմիտասի պորտրեն» ձեռագործը։ Դեկորատիվ կոմպոզիցիայի մեջ ռեալիստական պորտրեի ներառման պրոբլեմը լուծված է շատ հաջող» («Սովետսկոյե իսկուստվո»)։

Ստալինյան մրցանակի լաուրեատ Պ. Սոկոլով-Սկալյան «Տրուդ» թերթում գրում է. «Շատ հետաքրքիր են փորագրական երկերը, որ ստեղծագործել են Հայաստանի նկարիչները։ Բովանդակալից է Սովետական Հայաստանում իրենց հայրենիքը գտած հայ հայրենադարձների ստեղծագործությունը։

Այսպես, Մ. Աբելյանը «Բերրություն-Երևան» փորագրության մեջ արտահայտում է իր երախտագիտական զգացումները վերստին գտած հայրենիքի հանդեպ։ Գեղեցիկ է փորագրությունը նրա «Անուշի հեքիաթը» պանոյի։ Գ. Զարգարյանը ներկայացրել է առավել բարդ ոսկերչական տեխնիկայի նմուշը-ֆիլիգրանային վազա»։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ

Սեպտեմբերի 20-ին Մոսկվայում սկսվեցին ժողովրդական կերպարվեստի և կիրառական արվեստի վարպետների համար կազմակերպված Համամիութենական 10-օրյա սեմինար պարապմունքները։

Այդ պարապմունքներին մասնակցելու համար Մոսկվա են մեկնել Հայաստանի ժողովրդական ստեղծագործության հինգ վարպետներ— ինքնուս նկարիչ Ա. Բաբայանը, ինժեներ-ռադիոտեխնիկ Կ. Ղուլարյանը, փորագրիչ Հ. Պողոսյանը, ոսկերիչ Հ. Ստեփանյանը և Հայկական ՍՍՌ ժողովրդական ստեղծագործության տան մեթոդիստ-խորհրդատու Գ. Էյրամջյանը։

Սեմինար պարապմունքների ընթացքում դասախոսություններ ու զեկուցումներ են կարդացվում ժողովրդական կերպարվեստի ու կիրառական արվեստի հետագա զարգացմանը նվիրված, ինչպես և տեղի է ունենում փորձի փոխանակություն։

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՇԱՐԺԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

ՍՍՌՄ Մինիստրների Սովետին կից Արվեստի գործերի կոմիտեն որոշել է կիրառական արվեստի և կերպարվեստի ժողովրդական ստեղծագործության Համամիութենական շարժական ցուցահանդես կազմակերպել։

Այդ ցուցահանդեսի էքսպոնատները ընտրվելու են ժողովրդական ստեղծագործության Մոսկվայում կազմակերպված Համամիութենական ցուցահանդեսից։ Շարժական ցուցահանդեսի էքսպոնատների թվում կլինեն Հայաստանի վարպետների— Հ. Պողոսյանի, Ա. Բաբայանի, Փ. Ավետիսյանի, Կ. Ղուլարյանի, Մ. Աբելյանի և մյուսների շատ գործերը։ Համամիութենական շարժական ցուցահանդեսը ցուցադրվելու է միութենական բոլոր ռեսպուբլիկաներում։

ԱՐՎԵՍՏԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՏՈՒՆ

Երևանում կազմակերպվեց արվեստի աշխատողների Տուն, որով մայրաքաղաքում ավելացավ կուլտուրական օջախներից մեկը։ Արվեստի աշխատողների Տունը հանդիսանալու է գեղարվեստական ինտելիգենցիայի ստեղծագործական ակումբը, որտեղ արվեստի աշխատողները՝ երաժշտագետները, կոմպոզիտորները, թատրոնական աշխատողները, կերպարվեստագետները, գրողները ոչ միայն պետք է լայնորեն շփման մեջ լինեն միմյանց հետ, այլև այստեղ պարբերաբար լսեն զեկուցումներ արվեստի, գրականության, երաժշտության հարցերի վերաբերյալ։

Այս Տանը կազմակերպվելու են գեղարվեստական երեկոներ, դիսպուտներ, դիսկուսիաներ արվեստի տարբեր բնագավառների գծով։ Բացի այդ, քաղաքական և գիտական գիտելիքների տարածման Հայկական ընկերությունը արվեստի աշխատողների համար սիստեմատիկ կազմակերպելու է դասախոսություններ տարբեր թեմաների շուրջ։

Արվեստի աշխատողների Տունը ունի ընդարձակ, լավ կահավորված դահլիճ, հանգստյան սենյակ, խաղասենյակ, դրադարան-ընթերցարան։ Այստեղ ստացվում են 50 անուն թերթեր և ամսագրեր։

Սեպտեմբերի 20-ին տեղի ունեցավ արվեստի աշխատողների Տան հանդիսավոր բացումը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՐՇԱՎԱԽՈՒՄԲ

Սեպտեմբերի 24-ին Երևան է ժամանել Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան Պետական համալսարանի արշավախումբը, որի կազմի մեջ մտնում են Մոսկվայի Պետական կենդանաբանական թանգարանի դիրեկտոր, բիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Տուրովը, բիոլոգիական գիտությունների դոկտոր Վ. Ցալկինը և գիտական աշխատող Լ. Տուրովան։

Արշավախմբի հիմնական նպատակն է—

ուսումնասիրել Հայկական ՍՍՌ-ի կենդանական աշխարհը, և առաջին հերթին որսորդական արժեք ներկայացնող գազաններն ու թռչունները։ Արշավախմբին առանձնապես հետաքրքրում են այն խնդիրները, որոնք կապված են կենդանիների այնպիսի կարևոր տեսակների պահպանման ու օգտագործման հետ, ինչպիսիք են վայրի խոյերը, լեռնային այծերը, այծյամները։

Արշավախմբի մասնակիցները այցելելու են Կիրովականի շրջանում Փամբակի արգելավայրը, Վեդու և Կարաբաղլարի շրջաններում Սարայբուլաղի արգելավայրը, Բասարգեչարի շրջանում (Գիլի լիճ) ջրային թռչունների արգելավայրը։

ՇԱՄՊԱՆ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԽԱՂՈՂԻ ՏԵՍԱԿՆԵՐ

Հայաստանի կոլխոզնիկները ձեռնամուխ են եղել շամպան պատրաստելու խաղողի— «ոսկեհատ», «մսխալի», «կախեթ» «արենի», «պինո-ֆրանսա», «պինո-շարդանե», «տորամիներ» և «կաբերնե» տեսակների աշնանային որթատնկմանը։ Խաղողի այս տեսակները աճեցվելու են Կոտայքի, Աշտարակի, Արտաշատի, Միկոյանի, Հոկտեմբերյանի, Վեդու, Իջևանի և Շամշադինի շրջաններում։ Տնկվելու են 1200 հեկտար տարածության խաղողի նոր այգիներ։

Սկսվել են նախապատրաստական աշխատանքները. այդ նպատակով առանձնացված հողամասերը մաքրվում են քարերից, պարարտանյութեր են տեղափոխվում, տնկաշարքերի համար ձողեր, լարեր են պատրաստվում և այլն։

Կոտայքի շրջանի Գառնի գյուղում ստեղծվում է 25 հեկտար տարածությամբ պետական տնկարան շամպան պատրաստելու խաղողի տեսակների որթատունկեր աճեցնելու համար։

ՄԵՐՁԱՐԵՎԱԴԱՐՁԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՏՆԿԱՐԱՆ

Իջևանի շրջանի Ուզունթալա գյուղում կազմակերպվել է մերձարևադարձային կուլտուրաների պետական տնկարան։ Երեք հեկտար տարածության վրա ոստերից աճեցնում են թզենու, նռնենու, յապոնական արմավենու և փշատենու տնկիներ։ Տնկարանը Շամշադինի, Ալավերդու և Հոկտեմբերյանի կոլխոզներին մերձարևադարձային կուլտուրաների տնկիներ է մատակարարում։

Այս շրջաններում մերձարևադարձային կուլտուրաները լրիվ հարմարվել են տեղական կլիմայական պայմաններին։ Այս շրջաններում ստեղծվում են մերձարևադարձային կուլտուրաների կոլխոզային տնկարաններ երեք հեկտար տարածությամբ։ Այս տարի Ուզունթալայի Պետական տնկարանը կոլխոզներին բաց է թողնելու 6 հազար տնկիներ։

ԱՐՏԵԶՅԱՆ ՋՐՀՈՐՆԵՐ

1945 թվին Հայկական երկրաբանական վարչությունը մեծ աշխատանք ծավալեց Արարատյան դաշտի ստորերկրյա ջրերի հետազոտման ուղղությամբ։ Խորը հորերի փորման միջոցով հայտնաբերվեցին նախկինում անհայտ ջրաբեր հորիզոններ։ Մի շարք տեղերում երկրաբանները հանդիպեցին 6—7 ջրաբեր հորիզոնների. դրանցից յուրաքանչյուրի դեբիտը հասնում էր մինչև մի քանի տասնյակ լիտրի մեկ վարկյանում։ Քիմիական անալիզը հաստատեց այդ ջրերի մասին եղած ենթադրությունները, ջրեր, որ տեղական բնակչությունը կարող է օգտագործել թե կենցաղային կարիքների համար և թե դաշտերի ոռոգման համար։ Արարատյան դաշտում և Արաղդայանի տափաստանում փորվել են արդեն մոտ 60 արտեզյան ջրհորներ։

Այս տարի երկրաբանական արշավախումբը Գ. Գուրգենյանի ղեկավարությամբ սկսել է մի այդպիսի ջրհորի փորումը. վերջերս փորված հորից խփել սկսեց ջրի շատրվանը. ջրի շատրվանի դեբիտը, միանգամայն բավարար է թե գյուղի բնակչության ջրամատակարարման և թե մի քանի հեկտար դաշտի ոռոգման համար։

ՍԿՍՎԵՑ ՈՍԿԵՊԱՐԻ ՀԻԴՐՈԿԱՅԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ, 20 օգոստոսի.— Սկսվեց Ոսկեպարի հիդրոկայանի շինարարությունը, որն ունենալու է 100 ձիու ուժի կարողություն։ Կայանն էներգիա է տալու Ոսկեպար, Բաղանիս, Ղոշղոթան, Կոթի և Դոստլու գյուղերին։ Հիդրոկայանը գործարկվելու է 1949 թվի հուլիսի 1-ին։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՇԵՆՔԵՐ

Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստրությունն այս տարի ռեսպուբլիկայի տարբեր շրջաններում կառուցում է առողջապահական հաստատությունների մի շարք շենքեր։

Կիրովականում արագ թափով շարունակվում է երկհարկանի հիվանդանոցի շենքի կառուցումը։ Արզնի սանատորիայում շարունակվում է 25 վաննա ունեցող շենքի կառուցումը։

Էջմիածնի շրջանի հայրենադարձների № 2 և Վեդու շրջանի հայրենադարձների նոր կյանք ավաններում կառուցվում են բուժարանների շենքեր, որոնք պատրաստ են լինելու այս տարի։

Ստեփանավանի շրջանում ավարտվելու վրա է մանկական հիվանդանոցի շենքը։ Կալինինոյում կառուցվում է հիվանդանոցի նոր շենք։

Այդ ամբողջ շինարարության վրա այս տարի ծախսվելու է մեկ միլիոն 660 հազար ռուբլի։

ԲԵՐԻԱՅԻ ԱՆՎԱՆ ՇՐՋԱՆՆ ԱՅՍՕՐ

Ռեսպուբլիկայի Բերիայի անվան շրջանն ստեղծվել է 1939 թվին։ Նախկին չոր «ղռեռիթ» տեղում կառուցվել է մի գեղեցիկ ավան՝ իր կուլտուրական հիմնարկներով և արդյունաբերական ձեռնարկություններով։ Օր ավուր փոխվում է շրջանի գյուղերի պատկերը։ 1939 թվին շրջանում ընդամենը կար 320 հեկտար խաղողի և 125 հեկտար պտղատու այգիներ։ Պարտիայի և կառավարության օգնությամբ խոպան «ղռերը» դարձան արգավանդ տարածություններ։ 1947 թվի վերջին խաղողի այգիների տարածությունը հասավ 1000 հեկտարի, իսկ պտղատու այգիներինը 660 հեկտարի։

Բերիայի շրջկենտրոնի կենտրոնական փողոցի վրա հայրենադարձների համար կառուցված տները

Ստալինյան նոր հնգամյակում Ստորին Զանգվի ջրանցքի, ինչպես և վերին ու ներքին Դալմայի ջրանցքների կառուցումն ավարտելուց հետո, էլ ավելի մեծ հեռանկարներ են բացվում այգիների ընդարձակման համար։ Միայն ընթացիկ տարում 100 հեկտարով ընդարձակվում է խաղողի և 70 հեկտարով պտղատու այգիների տարածությունը։

ԳԱՂՈՒԹԱՀԱՑ ԿՑԱՆՔ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՀՈՐ ՆԱՄԱԿԸ ՈՒՂՂՎԱԾ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ՎԵՇԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱ ԴԱՌՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հասկ»-ը գրեթե ամբողջությամբ հրապարակել է Երուսաղեմի Ս. պատրիարք Հոր՝ Ամեն. Տ. Կյուրեղ Բ-ի նամակը՝ ուղղված Մեծի Տանն Կիլիկիո Վեհափառ Հայրապետին: Ստորև բերում ենք այդ նամակը արտատպելով «Հասկ»-ից:

ԽՄԲ.

Արդարև շատ մտահոգիչ կացություն մը ստեղծված է բովանդակ Պաղեստինի մեջ և մենք մեր կրոնական հաստատություններով և ամբողջ ժողովրդով պաշարված ենք տագնապին արհավիրքներովը մեր բախտին լքված։

Ինչպես տեղեկացած եք մամուլի միջոցով, տագնապը օր՝ օրավուր կընդարձակվի՝ մահ ու ավեր տարածելով ամեն կողմ, գլխավորաբար մեծ քաղաքներու և գլխավոր կեդրոններու մեջ։ Հազարավոր մարդիկ ըսպանված և վիրավորված են, հիմնահատակ կործանած են նույնչափ բնակարանային բազմահարկ տուներ և հաստատություններ։ Խանգարված են երկրի ներքին բոլոր հարաբերությունները, ուտի և բնականոն կյանքը։

Պաղեստինահայերը գլխավոր քաղաքներու մեջ հաստատված ըլլալով՝ ծանրապես ազդված են։ Անոնցմե շատեր, իրենց բնակարաններու շուրջ պայթող դժոխային մեքենաներու և ռումբերու սարսափներեն խուճապահար, լքած են իրենց տունները և ըսուցվածքները ու իրենց զավակներով ապաստանած են մեր վանքերու և կրոնական հաստատություններու մեջ ամեն տեղ։ Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքը, Հրեշտակապետացը, Բեթղեհեմի, Ռեմլեի, Յոպպեի վանքերը լեցված են ամեն դասակարգի աղետյալներով։ Երուսաղեմի՝ վանքին ներքին և արտաքին թաղերու մեջ այլևս տեղ մնացած չլինելով ստիպված պիտի ըլլանք բակերու և անցքերու մեջ կանգնել փայտյա տնակներ՝ պատսպարելու գիշերվան հասնող աղետյալները։ Այս մեծածախս աշխատանքին ձեռնարկած ենք արդեն։ Վանքի բնակչությունը այժմ 1800 է. արտաքին թաղինը 700. հին և նոր քաղաքի զանազան թաղերու մեջ ունինք մոտ 2500 անձեր, անոնցմե շատեր պիտի ստիպվին վանք ապաստանել ուրիշ տեղ չգտնելով։ Երբ այս կացության առջև նկատի ունենանք գոյություն ունեցող մյուս բոլոր դժվարություններն ու անկարելիությունները, ապրուստի միջոցներուն խանգարումն ու անհետացումը, կենսամթերքի սղությունն ու պակասը, զանոնք հայթայթելու դժվարություններն ու վտանգները, որոշ գաղափար կազմած կըլլաք մեր այս օրվան կացության մասին. և (կըսեն թե) այս դեռ սկիզբն է երկանց։

Մեր ժողովուրդի դժբախտությունը ամոքելու համար մեր նախագահության տակ կազմած ենք խնամատարական մարմին մը հոգևորականներե և աշխարհականներե բաղկացած։ Երուսաղեմի մեջ հանգանակություն կատարած ենք և ցարդ ձեռք բերած Լ. Պ. 900 ոսկվո գումար մը, որ շատ շատ 1000-ի պիտի հասնի միայն։ Ասկե ավելին հույսը պիտի չկրնանք ունենալ, որովհետև մեր մի քանի ունևոր նկատվածները երկրեն հեռացած են և կամ դուրս գտնված ըլլալով չեն վերադարձած. իսկ բարեկեցիկներն ալ իրենց տուներեն և ինչքերեն զրկված ու անստուգության մատնված, զոհաբերություն ընելու տրամադրությունը չունին։ Դժբախտաբար Ս. Աթոռս ալ իր ամբողջ Միաբանությամբ նույն կացության և պայմաններուն ենթարկված ըլլալով՝ նույն դժվարություններու մեջ կգտնվի, բեռնավորված անակնկալ բազմապահանջ դրամական ծանր պատասխանատվություններով։

Երուսաղեմի նոր քաղաքամասի մեր նոր շենքերեն Սինեմա Ռեքս պայթուցիկներով կործանված է բոլորովին և վտանգած շրջակա շենքերը։ Այրված են մեր մեծ պանդոկի ներքևի յոթը խանութները իրենց բովանդակությամբ։ Պանդոկը, որ մեր գլխավոր հասույթներու աղբյուրներեն մին էր, պարապ է և վարձվելու անկարելիությանց մեջ։ Հրկիզված են մեր Հրեշտակապետաց

վանքի ետևի խանութներեն մի քանին։ Մեր կալվածքներու ապահովության համար ըստիպված ենք առժամյա պատեր կանգնել բաց տեղերուն առջև։ Բացի սովորական տուրքերեն, որոնք կառավարության կողմե կգանձվին ամբողջությամբ, անխափան կստիպվինք վճարել նոր ծնունդ առած տուրքերը։ Ասոնք և ասոնց հաջորդող վնասները անտանելի բեռներ կկազմեն մեր ուսերուն վրա։

Արվեստական այս դժբախտությանց վրա ավելացավ Գեթսեմանիի Ս. Աստուածածնա հնադարյան եկեղեցվո ամբողջական ջրհեղեղումը գիշեր ատեն հանկարծական տեղատարափ անձրևներով կազմված հեղեղներեն։ Խորտակվեցան գավթի մեր պատը, եկեղեցվո նորակերտ մուտքն ու դուռը և ինչ որ կար ներսը։ Ս. Կույսի դամբարանը և անոր առջևի մեր Հեթում թագավորի փափաքով կանգնված պատարագամատույց Ս. Սեղանը և հունաց և մեր մյուս բոլոր Ս. Սեղանները, իկոնները, պատկերները, ջահերը, կանթեղները, անոթները, պահարաններեր իրենց ամբողջ բովանդակությամբ։ Ասոնք բոլորը քայքայված ու անգործածելի դարձած են շաբաթ մը ամբողջ ջուրի և տիղմի մեջ մնալով, տիրող տագնապեն հառաջ եկած դժվարություններու երեսեն։ Տասը օրեն հալիվ կարելի եղավ պարպել ջուրն ու տիղմը քաղաքապետարանի և զինվորական ջրհաններով և հարյուրավոր մարդոց ձեռքերով։

Այս աղետը անուղղակի կերպով հառաջ եկավ ներկա անապահովություններեն։ Քաղաքապետարանի այն պաշտոնյաները, որոնք պարտականություն ունեին ձմեռային եղանակին հսկելու անձրևներու ջուրերու ջրուղիներու կանոնավորության, կերևի ի վիճակի չեն եղած իրենց աշխատանքը կատարելու, և ջրուղիներու փլուզումներեն ջուրերը մեր Գեթսեմանիի պարտեզը հավաքվելով մեր պատը կխորտակեն և հետո քառանկյուն պարապատ գավթի մեջ հավաքվելով հսկա ավազանի կվերածեն զայն։ Ջուրի ճնշումին չդիմանալով, Աստուածածնա եկեղեցվո նոր մեծ դուռը, որ 250 ոսկվո գումար արժած էր, կտապալի։ Նույնը կպատահի քովի լատինաց Առաքելոց եկեղեցվո դուռին և երկու եկեղեցիները մինչև իրենց առաստաղները ջուրով կլեցվին։ Այս ամենը հունվար 5-ի կես գիշերեն վերջ առավոտյան դեմ տեղի կունենան։ Մեր Գեթսեմանիի լուսարարը Աստուածածնա եկեղեցվո դրան ետև մեր փայտյա ննջարանին մեջ կըլլա, եկեղեցվո մեծ դուռի թավալգոր անկումի շառաչեն կարթնանա և մուտքի սյուներուն փարելով և հետո լողալով հրաշքով կազատի։

Ս. Աստուածածնա եկեղեցին միջազգային Ս. Տեղյաց մեջ կարևոր սրբավայրերեն մին ըլլալով, դարերով մեր և հունաց ընկերովի սեփականության տակ, անշուշտ անմիջապես պետք է վերահաստատվի իր նախկին վիճակին։ Այս կնշանակե հազարավոր ոսկիներու ծախք մը, որուն կեսը, ինչ որ ըլլա, պիտի վճարվի մեր կողմե։ Բացի ընկերովի եղած ծախքերու վճարումեն մեր վրա նվիրական պարտականություն կծանրանա վերահաստատել մեր առանձին սեփականություն եղող մասերը՝ արժանավայել և պատվավոր ձևով։ Այս ստիպողական անհրաժեշտ ու անխուսափելի ծախքերու շարանը մեր նվազած եկամուտներուն առջև ցույց կուտա Ձեր Ս. Օծության, թե պետք ունինք դուրսի մեր պատվական եղբայրներու օգնության՝ մեր ժողովուրդը փրկելու վերահաս վտանգներեն։ Պաղեստինահայությունը, առաջնորդությամբ Ս. Աթոռույս, անցյալ երեսուն տարիներու ընթացքին Սփյուռքի հայության մեջ օրինակելի դիրք պահած է։ Պատվավոր կերպով մասնակցած է ազգային ընդհանուր և մասնակի նյութական զոհաբերությանց և հետևաբար արժանի է ամեն օգնության։

Ըստ Խնամատարական Մարմնի մանրակրկիտ հաշիվներուն, մայիսեն-սեպտեմբեր եկարող հինգ դժնդակ ամիսներուն, լ. Պ. 7000 ոսկվո գումար մը պետք պիտի ըլլա Երուսաղեմի հայ կարոտյալները սովեն փրկելու։ Գրեթե նույնչափ գումար մը ևս անհրաժեշտ պիտի ըլլա Պաղեստինի մյուս շրջանի կարոտյալներու անհրաժեշտ սննդեղենը ապահովելու։ Ձեռք առած ենք բոլոր կարելի միջոցները կացության դարման տանելու, դիմած ենք առ որ անկ է և ակնդետ կսպասենք դուրսի օգնության։

Աղետյալները մեր հարկերուն տակ հավաքված ըլլալով մեր պատասխանատվությունը ծանր է և հրամայական։ Ձենք համարձակիր ուղղակի Ձենե օգնություն խնդրելու, նկատի ունենալով Ձեր ալ ծանր պատասխանատվությունները, բայց կխորհենք, թե Ձեր Ս. Օծության անսահման զթառատ սիրտը պիտի չվարաներ թելադրելու կարգ մը բախտավոր անձերու, որ եթե ոչ Ս. Աթոռույս, գոնե մեր ժողովուրդի ապահովության համար ընեին իրենց ազգասիրության թելադրությունները և փութով, որովհետև մայիս 15-են հետո դժվար և նույնիսկ անկարելի պիտի ըլլա ապահովել մեր կարոտելոց անհրաժեշտ պարենը։

ԿՅՈՒՐԵՂ Բ
ՊԱՏՐԻԱՐՔ Ս. ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

Տանն Կիլիկիո Վեհափառ Հայրապետը խորապես վշտացավ իմանալով պաղեստինահայության կացության դառն մանրամասնությունները և հատուկ կոնդակ հղեց Կիլիկիո թեմերի եկեղեցիներին, ինչպես և կոչեր հայ մամուլին, որպեսզի փութացնեն Սիրիայի և Լիբանանի հայության եղբայրական աջակցությունը պաղեստինահայության։

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ պաղեստինահայության դառն կացության մասին մոտեն տեղեկանալու և Իր հայրական վշտակցությունն ու մխիթարության օրհնասփյուռ խոսքը անձնապես մատուցանելու համար— Լուսարարապետ և Դրան Եպիսկոպոս Գերշ. Տ. Խորեն Սրբազան 6 մայիսի առտուն օդանավով մեկնեցավ Ամման, անկե անցնելու Երուսաղեմ։

Գերշ. Սրբազանը միասին տարավ Հ. Բ. Ը. Միության Եգիպտոսի Կեդր. Հանձնաժողովի կողմե Պաղեստինի հայ աղետյալներուն համար եղբայրորեն և գովելի արագությամբ տրամադրված 5.000 պաղեստինյան ոսկիի մեծագումար օժանդակությունը (շուրջ 50.000 լիբանանյան ոսկի), ինչպես նաև 55 կիլո ծանրությամբ դեղորայք՝ 1000 լիբանանյան ոսկի արժողությամբ, որուն կեսը՝ 500 լիբանանյան ոսկին ազնվորեն տրամադրված է Լիբանանահայ Օգնության Խաչի կողմե, իսկ մյուս կեսը՝ 500 լիբանանյան ոսկին առնված է Հ. Բ. Ը. Միության վերոհիշյալ գումարեն, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ։

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Ս. ԱՔՈՌԻ ԿՈՒԼՊԵՆԿՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Կյուլպենկյան Մատենադարանի հիմնարկությունը ինչպես ծանոթ է, փբրև գաղափար և գոյություն, կկապվի հոգելույս Դուրյան Պատրիարքի անուան։ Անշուշտ, որ հիշյալ Մատենադարանի հիմնարկութենեն առաջ գոյություն ունեին վանքեն ներս գիրքերու համար հատուկ սենյակներ, ուր գրքեր և թերթերու հավաքածուներ կպահվեին, բայց առաջին անգամ, առանձինն շենքով Մատենադարանի մը պետքը կերպարանք կստանա հմայքով ու շնորհքով օծուն Պատրիարքին Հիսնամյա Քահանայության Հոբելյանին ապիթով։

Կեդրոնական Հանձնախումբին կարևորագույն որոշումներեն մեկն էր, Հոբելյանին առթիվ հանգանակված ամբողջ գումարը հատկացնել Ս. Աքոռույս շրջափակին մեջ Մատենադարանի մը շինության, «Դուրյան Մատենադարան» անունով, հավերժացնելու համար գրքի և մտքի մեծ տարփավոր պատրիարքին հիշատակը։

Տեղի կունենա հանգանակությունը և ընդհանուր արդյունքը կհանգի 3613 պաղեստինյան ոսկիի, որ անբավական կմնար, իրականացնելու հիշյալ Մատենադարանի շինությունը։ Բայց բարեբախտաբար, այդ օրերուն Փարիզ կգտնվեր Թորգոմ Ս. Արքեպիսկոպոս Գուշակյանը, որուն դիմում կըլլար բերելու իր աջակցությունը ձեռնարկին բարվոք հաջողության։ Նորին Սրբազնությունը գաղափարը կունենա այս մասին դիմելու Վսեմաշուք Տիար Գալուստ Կյուլպենկյանի, և բարերարը վեհանձնորեն կըխոստանա ստանձնել ամբողջ ծախքը հիշյալ Մատենադարանի շինության, ի հիշատակ իր հանգուցյալ ծնողաց՝ Սարգսի և Տիրուհվոյ։

Ի լուր այս վսեմ ժեստին, Դուրյան Պատրիարք բարձրորեն կգնահատե այս վեհանձն հանձնառությունը, և կտնօրինե, որ Մատենադարանը, փոխանակ իր անվան, կոչվի բարերարին անունով. իսկ նախապես կատարված հանգանակության գումարով կազմվի հիմնադրամ մը, որուն արդյունքով կարելի ըլլա հրատարակել ոչ միայն կարևոր և օգտակար աշխատանքներ, այլ նաև Դուրյան Մրցանակի արժանացած հեղինակություններ, «Դուրյան Մատենադարան» մատենաշարի անվան ներքև։

Շենքին ամբողջական ավարտումեն վերջ, անոր պաշտոնական բացումը տեղի կունենա 23 հոկտ. 1932-ին, խանդավառ հանդիսությամբ մը, նախագահությամբ նորընտիր Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ Ս. Արքեպիսկոպոս Գուշակյանի։

ՇԵՆՔԸ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ

Մատենադարանը իբրև ճարտարապետական նկարագիր ամերիկյան և անգլիական նորաձև մատենադարաններու նմանությունը ունի։ Թե արտաքին և թե ներքին մասերով շատ պարզ է անիկա. բայց նույնքան տպավորիչ, լայնանիստ և ամրախարիսխ իր ձևով։ Ճակատին լայնքն է 18 մետր, խորությունը 23 և բարձրությունը 10 մետր։ Երկ-

հարկանի է։ Պատերուն վրա բացված են երկաթյա վանդակներով ամրացած քառանկյուն մեծ պատուհաններ։ Ունի երկաթաշեն մուտքի մեծ դուռ մը, որուն ճիշտ վերև հաստատված մարմարյա տախտակի մը վրա մետաղյա տառերով դրոշմված է հետևյալ արձանագրությունը.— «Գալուստ Կիլպէնկեան կառոյց զՄատենադարան Առաքելական Սրբոյ Աթոռոյս, վասն անմոռաց յիշատակի ճոր իւրոյ և մոր Սարգսի և Տիրուհւոյ Կիլպէնկեան, ի մեծարանս Յոթելիանի Յիսնամեայ Քահանայութեան Տ. Եղիշեայ Ս. Արքեպ.— ի Դուրեան Պատրիարքին Հայոց Սրբոյ Երուսաղէմի— ՌՅՀԹ— 1929»։ Ներսը՝ քառակուսի շքեղ սրահ մը։ Անոր երկու կողմերուն վանդակորմով բաժնված երկար նրբանցքներ, ուր զետեղված են գրքերը։ Մատենադարանը ունի նաև 8 մեծ ու փոքր սենյակներ։ Ավագ դրան մուտքին դիմաց կան երկու սենյակներ, որոնցմե մին կծառայե իբրև ընդունարան և մյուսը՝ իբրև կացարան մատենադարանապետին։ Մյուս սենյակները գլխավորաբար հատկացված են եվրոպական և հայկական թերթերու և պարբերականներու։

Իբրև ներքին կահավորում, պարզությամբ հանդերձ, ամեն ինչ արդիական է և ճաշակավոր։ Գրքերու իբրև գրադարան կծառայեն թվով 120 պողպատյա դարակներ, մասնավորապես ապսպրված Ամերիկայեն։ Այդ դարակները ապահովուած են կրակի դեմ և 3-ական մետր բարձրությամբ, մեկ մետր լայնքով ու 40 սմ խորությամբ են։ Յուրաքանչյուր դարակ ունի 5 բաժանումներ, աչք, որոնց ամեն մեկուն մեջ կզետեղվին միջին հաշվով 35 կտոր գրքեր։ Հետևաբար դարակ մը ամբողջ մատենադարանեն ներս, իր մեջ կրնա կրել 175—200 գրքեր։ Մատենադարանն ունի 20 հատ մեծադիր ազնիվ փայտե շինված աշխատության սեղաններ, որոնք զետեղված են մեծ սրահին, սենյակներուն և նրբանցքներուն մեջ։ Կան նաև 100 հատ կաշեպատ և 100 հատ խսիրե աթոռներ, որոնք մատենադարանին մեջ աշխատանքի պետքերեն զատ, լսարաններու և զանազան հավաքույթներու և հանդիսությանց առիթով կգործածվին։ Ավելորդ պիտի չըլլար ըսել նաև որ ամբողջ շենքին էլեկտրական սարքավորումը շատ կանոնավոր և գործնական ձևով է եղած։ Ընդհանուր առմամբ շենքը մինչև այսօր պահած է իր արդիական և նորաշեն նկարագիրը, և վանքի այն թաղամասին մեջ, ուր կգտնվի անիկա, կհանդիսանա ամենասիրուն և աչքի զարնողը։

ԳՐՔԵՐ, ԹԵՐԹԵՐ ԵՎ ԴԱՍԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Մատենադարանի գրքերուն թիվը կհասնի 29.000-ի։ Սկզբնական շրջանին հոն հավաքվեցան բոլոր հին ու նոր գրքերը և թերթերու հավաքածոները, որոնք զետեղված էին իբր գրադարան ծառայող վանքի զանազան սենյակներուն մեջ։ Ատոնց վրա ավելցան նաև հետզհետե գրքերը Դուրյան Պատրիարքին, որոնք թիվին հետ մեկտեղ ավելցուցին որակը մատենադարանի գրքերուն։ Այնուհետև հոն կփոխադրվին բոլոր հանգուցյալ եպիսկոպոսներու և վարդապետներու հազվագյուտ և արժեքավոր գրքերը։ Ասոնց վրա ավելցան նաև Գեր. Արշդիքն Զարլզ Պրիճմենի Ամերիկայեն բերած Ս. Գրոց մեկնաբանական, աստուածաբանական, կրոնա-եկեղեցագիտական և պատմական գրքերը։ Հոն փոխադրվեցան նաև քանի մը հազարի հասնող գրքերը Լուսահոգի Թորգոմ Պատրիարքին, որոնք տակավին կմնային ի Պատրիարքարան։ Իսկ այս բոլորեն զատ բարերարին բարեհաճ տնօրինությամբ, ամեն տարի իրմե մեզի ղրկված Լ. Պ. 150-ին Լ. Պ. 75-ը կգործածվի նոր հրատարակված գրքեր գնելու։ Գրքերու գնումը կկատարվի մասնավոր ընտրությամբ, որոնք կըլլան ուղղակի գնումով քաղաքիս հայտնի գրվաճառներեն կամ եվրոպական ծանոթ ոստաններեն եղած ապսպրանքով։

Տրված ըլլալով որ Կյուլպենկյան Մատենադարանը կրոնական հաստատության մը մատենադարանն է, հոն ամփոփված գրքերը առավելաբար ունին կրոնական նկարագիր։ Մեր Մատենադարանը շատ ճոխ է աստուածաբանական ամեն կարգի գրքերով, ունինք հին և արդի աստուածաբանության ընտրելագույն հեղինակներու գործերը։ Հետո իմաստասիրական բաժինը, իր ստորաբաժանումներով նույնքան ճոխ է և արդիական։ Հին ու նոր արդի իմաստասերներ և տեսություններ պարունակող գրքեր շատ ունինք։ Հանձնարարելի է լեզվագիտական և պատմական բաժինները։ Տկար են գրականությանց և մանավանդ զուտ գիտական բաժինները, որոնց զորեղացման համար կըտարվի մասնավոր ճիգ։

Այս տեղեկությունները կվերաբերին եվրոպական լեզվով գրքերու (անգղերեն, ֆրանսերեն, գերմաներեն), որոնք թիվով շուրջ 16.000 են։ Ասոնց կողքին ունինք հայերեն լեզվով գրքերու ամբողջ մը, որոնք թիվով

կկազմեն մնացյալը, շուրջ 18.000։ Հոն է մեր հին մատենագրությունը ամբողջ, իբրև գրական, թարգմանական, աստուածաբանական և զուտ կրոնական վաստակ։ Բավական ճոխ է մեր արդի գրականության բաժինը։ Հոն են մեր գրականության իշխաններ, փոքրերն ու միջակները։ Ընդհանրապես նոր հրատարակությունները նվեր կստանանք։ Ի հարկին կգնենք նաև ամբողջ շարքեր մատենաշարներու։ Կստանանք մեզի ծանոթ երկրներեն հրատարակված բոլոր թերթերը և գրական, մարզական, գիտական և կրոնական պարբերաթերթերը։ Անոնք կպահվին խնամքով, կկազմվին և կզետեղվին իրենց դարակներուն մեջ։

Մատենադարանը միջին հաշվով տարեկան կգնի 60—70 հատոր գրքեր, նվեր կստանա շուրջ 50 հատոր գրքեր, և տարեկան հրատարակության թիվով ալ ամսաթերթեր ու պարբերաթերթեր։

Մաշած գրքերը կկազմվին Ս. Աթոռույս կազմատան մեջ։ Այդ նպատակին համար Մատենադարանի պյուտճեին մեջ նշանակված է Լ. Պ. 50։ Տարեկան 100—150 գիրք կկազմվի և ուրիշ 50 մըն ալ զանազան նորոգությանց կենթարկվի։

Իսկ ինչ կվերաբերի գրքերու դասավորման, պետք է ըսել թե անիկա կատարյալ է և ամբողջական։ Եվրոպական գրքերն դասավորված են առանձինն և հայերեն գրքերը առանձինն։ Թե եվրոպական և թե հայկական գրքերուն յուրաքանչյուրն ունի երկու քարթեր, մին համաձայն նյութին և մյուսը ըստ հեղինակի։ Այս նպատակավ շինված են մասնավոր դարակներ, ուր թվական և այբուբենական հաջորդականությամբ դասավորված են յուրաքանչյուր գրքին համար զույգ և երբեմն ալ թիվով ավելի քարթերը։

Գալով թերթերուն, անոնք ևս տարվե տարի կդասավորվին և կկազմվին։ Հին հավաքածուներեն շատ պակասներ ունինք, կհուսանք զանոնք ևս ամբողջացնել։

Մատենադարանի սրահին մեջ հաճախ տեղի կունենան դասախոսական հավաքույթներ, որոնց կնախագահե միշտ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը։

ԱՅՑԵԼՈՒՆԵՐ

Մատենադարանի հիմնարկութենեն ի վեր միշտ անպակաս են եղած այցելուները։ Ունենք այցելությանց ոսկետոմար մը, ուր հանգամանավոր այցելուներ կհրավիրվին արձանագրել իրենց անունները։ Հոն կհանդիպինք անուններու բարձրաստիճան եկեղեցականներու, որոնք երբեմն պատրիարքներ և կաթողիկոսներ են։ Հոն կան անունները մեր մամուլի ներկայացուցիչներուն, ծանոթ գրագետներու, բանաստեղծներու և ազգային հին ու նոր գործիչներու և վաստակավորներու։ Եվրոպացիներեն կան անունները զինվորական բարձրաստիճան անձերու, կառավարիչներու, կուսակալներու, գիտնականներու և հայտնի գործիչներու։ Մատենադարանը կընդունի հաճախ նաև այցելությունը օտար վարժարաններու աշակերտությանց, առաջնորդությամբ իրենց տեսուչներուն։ Ս. Քաղաքիս մեջ գտնվող զանազան օտար Միաբանությանց անդամներ ևս հաճախ կայցելեն մեր Մատենադարանը։

ԹԱՆԳԱՐԱՆ

Մատենադարանի երկրորդ հարկին, արևմտյան թևին վրա կա ընդարձակ սենյակ մը, որ վերածված է թանգարանի։ Անշուշտ անիկա կգտնվի տակավին նախնական վիճակի մեջ։ Հոն ամփոփված են Ժառանգավորաց Վարժարանի ապակեդարաններու և վանքին զանազան մասերու մեջ գտնված հնագիտական արժեք ունեցող առարկաները։

ՏԵՍՈՒՉՆԵՐ

Կյուլպենկյան Մատենադարանի առաջին տեսուչը եղավ Տ. Կյուրեղ վարդապետ Իսրայելյան (Ս. Աթոռույս ներկա Պատրիարքը), որ մինչև իր լուսարարապետության շրջանը, 1939, ձեռնահասորեն վարեց գործը։ Իրն է պատիվը ներքին կահ կարասյաց, գրքերու դարակներուն պատշաճորեն և ճաշակավոր ձևով դասավորման գործը։ Վանքին գրադարան-սենյակներեն գրքերը ի մի հավաքելու և ապա նորաշեն Մատենադարանը փոխադրել տալու և հոն առժամյա դասավորումով մը այդ բոլոր գրքերը դարակներուն մեջ զետեղել տալու և հետո ալ Dewey գրությամբ ցուցակագրելու։ Շուրջ 16.000 եվրոպական գրքեր ըստ նյութի զատել, ապա զանոնք թվագրել, և պատրաստել անոնց յուրաքանչյուրին երկուքե ավելի քարթերը և ապա զանոնք մեքենագրել։ Այս ծանր ու

պատասխանատու աշխատանքին մեջ մեծ բաժին ունի նաև Դեր. Արշդիքն Զարլզ Պրիճմեն։

Տ. Կյուրեղ վարդապետի լուսարարապետ ընտրութենեն վերջ, իրեն կհաջորդի նախ Տ. Արթուն, ապա Տ. Գրիգոր վարդապետ Ոսկանյանը։ Տ. Գրիգոր վարդապետ կարգ մը փոփոխություններով գիտական դասավորման եղանակը պատշաճեցուց շուրջ 13.000 հայերեն գրքերու, որոնք ճիշտ եվրոպական գրքերու նման դասավորված են ըստ նյութի՝ թվագրված և պատրաստված համապատասխան քարթերով։

ՀԱՄԲԱՎԸ

Երկրորդն է մեր Մատենադարանը Ս. Փաղաքիս մատենադարաններուն, հրեական Համալսարանի Մատենադարանեն վերջ, իբրև շենք, իբրև թիվ, իբրև որակ, և մանավանդ դասավորման կատարելիություն, և ներքին կարգ և կարգապահություն։ Այս վկայությունը՝ վկայություն է Երուսաղեմի մատենադարաններու մասին խոսող անցյալները հրատարակված մեկ տեղեկաբեր հատորին, ուր գովասանքի և քաջալերանքի բառեր կան մեր Մատենադարանի մասին։ Բոլոր կրոնական Միաբանությունները կըճանչնան Կյուլպենկյան Մատենադարանը, աշխարհական օտար մտավորականներ իրարու կհանձնարարեն զայն, իրենց ուսումնասիրության իբրև աղբյուր։

ՕԳՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սկիզբեն ի վեր Մատենադարանը համարված է վանքին Մատենադարանը, այսինքն առավելաբար անկե կօգտվեն Միաբանության անդամները, ուսանող Սարկավագները, և Ժառանգավորաց սաները։ Բայց վերջերս նրբ մեր շուրջը տեսանք ծաղկումը երիտասարդության մը, որ մտածման ճաշակ ունի, Մատենադարանը որոշ չափով մատչելի եղած է այդ երիտասարդ տղոց ևս, և այսօր Միաբանության և մեր ուսանողներու կողքին, մեր Մատենադարանեն կօգտվին նաև ուսումնասեր աշխարհականները, իրենց մտքի պահանջքին գոհացում տալու համար։

Այս տեսակետով Կյուլպենկյան Մատենադարանը Ս. Հակոբյանց մենարանի մեկ անկյունեն կհայտնվի իբրև լույսի ամրոց մը, որմե ոչ միայն ամբողջ Միաբանությունը, այլ նաև մեր գաղութի լավագույն տարրերը կայծեր կընդունին իրենց ինչպես մտքին, այնպես ալ սրտին համար։

Կյուլպենկյան Մատենադարանի գոյությունը ավելի քան բարիք մըն է։ Եվ այդ բարիքին բարերարությունը հավերժաբար երախտագիտությունը կպարտադրե բովանդակ Միաբանության և մեր գաղութին, իսկ բարերարը և իր անունը մշտանորոգ կենդանությամբ մը միշտ ներկա են այս մենաստանեն ներս, իբրև մատենադարան և իբրև դաղափարական գեղեցկություն բովանդակ ազգին խղճմտանքին ալ մեջ։

«Երանի որ ունիցի յիշատակ ի Սիոն»։ Երանի մեր մեծանուն բարերարին, որ այսպիսի կոթողական հիշատակ մը ունի Հայ Սիոնի բարձունքին վրա։

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ
«Սիոն»

„ՀԱՑԵՐԸ ՈՒՈԼԼԵՍԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑ" ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԵԿԼԱՐԱՑԻԱՆ

ՆՅՈՒ-ՅՈՐՔ, 30 Հունիսի (ՏԱՍՍ).— «Հաչերը Ուոլլեսի ընտրության կողմնակից» կազմակերպությունը դեկլարացիա է հրապարակել, որով բոլոր ամերիկահայերին կոչ է անում մտնել Ուոլլեսի կողմնակիցների շարքերը։ Դեկլարացիայում մասնավորապես ասված է.

«Պրեզիդենտի պոստի համար Ուոլլեսի թեկնածության առաջադրումը չերմ արձագանք գտավ շատ ամերիկահայերի մեջ։ Մենք պաշտպանում ենք Ուոլլեսին, որովհետև համոզված ենք, որ խաղաղության ապահովման և հասարակ մարդու ծաղկման նրա ծրագիրը և դեմոկրատիայի նրա քաջարի պաշտպանությունը ծառայում են ամերիկյան ժողովրդի իսկական շահերին։ Մենք Ուոլլեսին պաշտպանում ենք նաև նրա համար, որ մենք կարծում ենք, որ Տրումենի դոկտրինեն հակասում է հայ ժողովրդի ձգտումներին, որի ներկայացուցիչները ներկայումս դաժանորեն կեղեքվում են Տրումենի դոկտրինայի համապատասխան սպառազինված թուրքական կառավարիչների կողմից։ Այդ դոկտրինայից հրաժարվելը բաղում դարերի ընթացքում մեր նախահայրերի փայփայած հույսերի իրագործման նախադրյալն է»։

ՀԱՅԿԱԿԱՆ ՊՐՈԳՐԵՍԻՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

ՆՅՈՒ-ՅՈՐՔ, 5 սեպտեմբերի (ՏԱՍՍ).— Սեպտեմբերի 4-ին 35 նահանգների դեպուտատներ հավաքվեցին Նյու-Յորքում «Ամերիկայի հայկական պրոգրեսիվ լիգայի» և «Ամերիկայի հայկական երիտասարդության» երեքօրյա տարեկան համագումարին մասնակցելու համար։ Համագումարում հռետորները կոչ էին անում պաշտպանել պրեզիդենտի պոստի համար Ռուզվելտի թեկնածությունը, կրկնապատկել ջանքերը խաղաղությունը պահպանելու համար մղվող պայքարում և աջակցել Միացյալ Նահանգների ու Սովետական Միության միջև բարեկամական հարաբերություններին։ Համագումարին ներկա են «Հայկական պրոգրեսիվ լիգայի» 75 դելեգատ, որոնք ներկայացնում են այդ կազմակերպության 57 բաժանմունքի մոտ 1500 անդամ և «Ամերիկայի հայկական երիտասարդության» 100 դելեգատ, որոնք ներկայացնում են այդ կազմակերպության ավելի քան 800 անդամ։ Համագումարի բացմանը ներկա էին 800 հրավիրված։

Առաջին նիստում հռետորները դատապարտեցին ռեսպուբլիկական և դեմոկրատական պարտիաների արտաքին ու ներքին ռեակցիոն քաղաքականությունը և հայտարարեցին, որ կպաշտպանեն պրոգրեսիվ պարտիայի խաղաղության ծրագիրը։

Այս ամիս Հայաստան մեկնելու պատրաստվող 300 հայրենադարձ հայերից 50 մարդու համագումարում հավաքվածները դիմավորեցին ջերմ օվացիաներով։ Հայրենադարձները երգեցին իրենց կողմից շարադրված մի երգ, որի մեջ հսկայական ուրախություն է արտահայտվում հայրենիք վերադառնալու առթիվ։

Ֆիլադելֆիայի հայ բանաստեղծ Սիտալը, բանալով համագումարը, հայտարարեց, որ հայրենադարձությունը հանդիսանում է ամբողջ աշխարհում հայ ժողովրդի վերջին տարիների պատմության մեջ խոշորագույն իրադարձությունը և նշեց, որ այդ հնարավոր է դարձել Հայաստանում սովետական ռեժիմի գոյության շնորհիվ։ Դատապարտելով պատերազմի հրձիգներին և ներկայումս անցկացվող հակասովետական կամպանիան, Սիտալը ասաց.— «Բոլոր ժողովուրդները պետք է հավերժ շնորհակալ լինեն սովետական ժողովրդից նացիստների ջախջախման համար»։ Այնուհետև Սիտալը հայտարարեց, թե ԱՄՆ-ի քաղաքականությունը, որը պաշտպանում է ամբողջ աշխարհի ռեակցիան, ոչ միայն ուժեղացնում է պատերազմի վտանգը, այլ և Միացյալ Նահանգներում առաջ է բերում ինֆլյացիա և սնանկություն։ Նա կոչ արեց վերադառնալ Ռուզվելտի քաղաքականությանը և սովետա-ամերիկյան համագործակցությանը։

Մյուս հռետորների մեջ էին «Հայկական պրոգրեսիվ լիգայի» նախագահ Բոհճելյանը, «Ռուզվելտին պրեզիդենտ ընտրելու համար ըստեղծված հայկական կոմիտեի» նախագահ Միրճանյանը և հայերեն լեզվով «Լրաբեր» պրոգրեսիվ թերթի խմբագիր Մարտենցը։ Հյուրերի կողմից հանդես եկավ կին գրող Աննա Լուիզա Ստրոնգը, որը դատապարտեց Տրումենին թուրքական ռեակցիոն կառավարությանը ցույց տրվող օգնության համար և կոչ արավ ստեղծել հայերի համար միասնական հայրենիք։

ՀԱՅԵՐԻ ԴԵՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ ԻՐԱՆՈՒՄ

ԹԱՎՐԻԶ, 4 հուլիսի (ՏԱՍՍ).— Թավրիզ ժամանող անձինք պատմում են այն կատաղի հալածանքների մասին, որոնց ենթարկվում են հայերը Իրանական Ադրբեջանում։ Ռեզայեի շրջանում կալվածատերերը խլում են խաղողի այգիները, անասուններն արածացնում են գյուղացիների ցանքսերում, ոչնչացնում են պտղատու այգիները։ Մեծ անկարգություններ են տեղի ունեցել Մուշավա գյուղում։ Դաշտային աշխատանքների դուրս չգալու համար բատրակներին ճիպոտով ծեծում են։ Մարգի շուկայում քարով ջարդել են հայ քահանայի գլուխը։ Հայ երիտասարդները մշտական սպառնալիքների են ենթարկվում վարձկան խուլիգանների կողմից։ Քաղաքացիական և ռազմական իշխանությունները ոչ միայն չեն ընդհատում հայերի դեմ կիրառվող հալածանքը, այլ ընդհակառակը, գործոն մասնակցություն են ցույց տալիս դրան։ Քաղաքացիական իշխանությունները Թավրիզում փակել են հայկական դպրոցները և ինքնակամ գրավել հայերին պատկանող դպրոցական շենքերը։

Հայ հասարակայնությունը վրդովված է կառավարության քաղաքականությունից, որը վիժեցնում է Իրանում ապրող հայերի մեկնումը Սովետական Հայաստան։

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

Լրացուցիչ ընդունելություն 1948—1949 ուս. տարվա Բ և Գ դասարանների և Ա լսարանի համար։

Ճեմարանի Բ դասարան ընդունվել կարող են միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի կրթություն ունեցող տղաները։

Գ դասարան ընդունվել կարող են միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի կրթություն ունեցող տղաները։

Ա լսարան ընդունվել կարող են միջնակարգ դպրոցավարտ տղաները։

Ճեմարանի դասարանական ու լսարանական բաժինները ընդունվել կարող են միայն 18-ից ոչ պակաս տարիք ունեցող տղաները։

Բ և Գ դասարան ընդունվողները ենթարկվում են քննության հետևյալ առարկաներից.—

Հայոց լեզու (բանավոր և գրավոր), ռուսաց լեզու (բանավոր), մաթեմատիկա (բանավոր և գրավոր), հայոց պատմություն, անգլերեն, գրաբար և Հայ Եկեղեցու պատմություն (վերջին երկուսը ըստ համապատասխան դասարանի համար պահանջվող ծավալի)։

Ա լսարան ընդունվողները ենթարկվում են քննության հետևյալ առարկաներից.—

Հայ Եկեղեցու պատմություն, գրաբար և անգլերեն։

Հոգևոր ճեմարանը գիշերօթիկ դպրոց է, սովորողներին տրվում է ձրի կրթություն և ամեն հարմարություն (սնունդ, անկողին, հագուստ, գրենական պիտույքներ)։

Դիմումներն ընդունվում են մինչև սեպտեմբերի 25-ը, ամեն օր ժամը 9—14-ը։

Դիմումի հետ պետք է ներկայացնել ա) ինքնակենսագրություն; բ) ուսման վկայական, գ) ծննդյան վկայական, դ) առողջության և ծալկի պատվաստման վկայական, ե) երեք լուսանկար (3×4)։

Քննությունները սկսվելու են սեպտեմբերի 25-ին։

Դիմումները տրվում են Հոգևոր ճեմարանի տեսչի անունով։

Հասցեն.— Էջմիածին, Հոգևոր ճեմարան (հեռ. 1—20)։

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀՈԴՎԱԾՆԵՐ ԹԵ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ԹԵ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ

ԷՋՄԻԱԾԻՆ, „ԷՋՄԻԱԾԻՆ" ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magasine „Etchmiadzin", Armenia, USSR

Պատվեր № 860

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ. և Հրատ. Վարչ. № 2 տպարան, Երևան